ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նոր շրջան

8

8-րդ դասարանի դասագիրք

Խմբագրությամբ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ

ՄԱՆՄԱՐ
MANMAR

2013

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72
Հ 282

Դասագրքի հեղինակներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս	Վ. Բարխուդարյան
Պատմական գիտ. դոկտոր	Պ. Չոբանյան
Պատմական գիտ. դոկտոր	Ա. Խառատյան
Պատմական գիտ. դոկտոր	Է. Կոստանդյան
Պատմական գիտ. թեկնածու	Ռ. Գասպարյան
Պատմական գիտ. թեկնածու	Ռ. Սահակյան
Պատմական գիտ. դոկտոր	Ա. Հակոբյան

Դասագրքի մեթոդական մասի հեղինակ՝ Աշոտ Ղուկասյան:

Հայոց պատմություն: Նոր շրջան 8 / Վ. Բարխուդարյան, Պ. Չոբանյան, Ա.
Հ 282 Խառատյան, Է. Կոստանդյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Ա. Հակոբյան.
-Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2013. - 192 էջ

ՀՏԴ 373.167.1: 941(479.25) (075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72

ISBN 978-9939-62-103-6

© Վ. Բարխուդարյան, Պ. Չոբանյան, Ա. Խառատյան, Է. Կոստանդյան,
Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Ա. Հակոբյան, 2013
© ՄԱՆՄԱՐ, 2013
© Դասագրքերի շրջանառու հիմնադրամ, 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատանի բարեկամներ, նախորդ տարում ավարտեցիք հայոց պատմության միջնադարյան փուլը: Այժմ ծանոթանալու եք հայրենի երկրի կյանքի բոլոր ասպարեզներում նոր առաջընթաց նշանավորող նոր դարաշրջանի (17-րդ դարի երկրորդ կես – 20-րդ դարի սկիզբ) իրադարձություններին:

Հայ ժողովուրդը ոտք դրեց պատմության նոր փուլը՝ զրկված լինելով իր պատմությունը ազատ ու անկախ կերտելու հնարավորությունից: Հայաստանը շարունակում էր մնալ սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի բռնակալական տիրապետության տակ: Երկիրը օտարի լուծը թոթափելու հրամայական անհրաժեշտության առաջ էր կանգնած: Հայաստանի ազատագրումը համակել էր ողջ ժողովրդին թե՛ հայրենիքում և թե՛ գաղթաշխարհում: Մի հանգամանք պարզորոշ էր՝ սեփական ուժերով անհնար էր թոթափել վիթխարի պետությունների լուծը, հետևաբար՝ Հայաստանի ազատագրումը կապվում էր դրսից ակնկալվող օգնության հետ: Հայ առաջադեմ գործիչները օտարի տիրապետությունից ազատագրվելու եղանակներ գտնելու որոնումների մեջ էին: Երկար դեգերելուց հետո հայ ազատագրական միտքը եկավ այն համոզման, որ երկրի ազատագրումը հնարավոր է Ռուսաստանի միջոցով: Ռուսական կայսրության՝ դեպի արևելք ծավալվելու ռազմաքաղաքական ծրագրերը համահունչ էին Անդրկովկասի ժողովուրդների՝ հայերի և վրացիների ազատագրական ձգտումներին:

Ամբողջ 18-րդ դարը դարձավ դեպի Ռուսաստան կողմնորոշվելու, նրա աջակցությամբ պարսկա-թուրքական լուծը թոթափելու, հայկական պետականությունը վերականգնելու հույսերի ու մաքառումների շրջան: Հայրենիքի ճակատագրով ապրող հայկական գաղութներում Ռուսաստանի հովանու ներքո հայկական պետականությունը վերականգնելու ծրագրեր մշակվեցին:

Ի վերջո, 19-րդ դարի առաջին տասնամյակներին ռուս-պարսկական պատերազմում տարած հաղթանակների շնորհիվ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին: Հայկական պետականությունը չվերականգնվեց, սակայն Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանը զարգանալու հնարավորություններ ստացավ: Այդ նույն շրջանում Ռուսաստանը հաղթանակ տարավ նաև Թուրքիայի նկատմամբ, սակայն Եվրոպայի խոշոր պետությունների հակառուսական դիրքորոշման հետևանքով Արևմտյան Հայաստանը չազատագրվեց: Մեր երկրի մեծագույն մասը մնաց Թուրքիայի տիրապետության տակ, ինչը կորստաբեր եղավ նրա հետագա ճակատագրի համար:

Անգամ ստեղծված դժվարին պայմաններում դարաշրջանի ազատաշունչ ոգին իր դրոշմն էր դնում ամբողջ հայ իրականության վրա: Հայության հավաքական կենտրոն դարձած Արևելյան Հայաստանում սկսեց աշխուժանալ տնտեսական կյանքը: Վիթխարի առաջընթաց ապրեցին գիտությունն ու ար-

վեստը: Կոստանդնուպոլիսն ու Թիֆլիսը դարձան հայ մշակույթի բեղուն կենտրոններ: Բացվեցին և արգասավոր գործունեություն ծավալեցին Լազարյան, Գևորգյան ճեմարանները, Ներսիսյան դպրոցը և մյուս կրթօջախները: Զարգացավ, լայն տարածում գտավ հարուստ ու բազմազան հայ պարբերական մամուլը: Հայ գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը, ինչպես և գիտությունը այնպիսի նվաճումներ ունեցան, որ հայկական փառքը տարածեցին աշխարհով մեկ:

Այդ ամենով հանդերձ՝ համազգային մտահոգության մշտական առարկա էր մեր ժողովրդի արևմտյան հատվածի աննախանձելի դրությունը: Հատկապես ռուս-թուրքական պատերազմների ժամանակ Արևմտյան Հայաստանը ազատագրելու կամ այնտեղ ժողովրդավարական բարեփոխումներ կատարելու հույսեր էին ծնվում: 1877-1878թթ. պատերազմում ռուսների վճռական հաղթանակը, հայկական տարածքների գրավումը իրական էին դարձնում այդ հույսերը: Սակայն Ռուսաստանի հզորացմանն ընդդիմադիր Եվրոպայի մեծ տերությունները, անտեսելով հայերի առաջարկ-խնդրագրերը, Թուրքիային վերադարձրին զենքի ուժով գրավված հայկական տարածքները: Ավելին՝ նրանք ի չիք դարձրին նախագծված բարենորոգումների ծրագրերը և արևմտահայության խնդիրը կամ Հայկական հարցը դարձրին սոսկ միջազգային դիվանագիտության ոլորտներում արծարծելու առարկա:

Իրերի նման ընթացքը խոր դժգոհություն ու հիասթափություն առաջ բերեց հայկական շրջաններում: Միաժամանակ ակնառու դարձրեց այն իրողությունը, որ ազգային հիմնահարցերը լուծելու միակ եղանակը սեփական ուժերին ապավինելն է և ոչ թե հզոր պետություններից, որոնք միայն իրենց շահերին են հետամուտ, խնդրագրերով արդարություն հայցելը: Ժողովրդին պայքարի կոչելու, նրան զինելու և զենքի ուժով ազգային իրավունքները պաշտպանելու հասարակական հասունացած պահանջը ծնունդ տվեց ազգային կուսակցություններին:

Թուրքիան, քաջալերված խոշոր պետությունների երկդիմի քաղաքականությունից, սաստկացրեց իր տիրապետության տակ գտնվող փոքր ժողովուրդների հալածանքները: 1890-ական թթ. կեսերին հզոր պետությունների աչքի առաջ սկսեց խաղաղ հայ բնակչության կոտորածներ, որոնց զոհ դարձավ շուրջ 300 հազար մարդ: Հայ ժողովուրդը, հիասթափություն ու ցավ ապրելով, համապատասխան դասեր քաղեց իր պատմական անցյալի դառն իրականությունից: 20-րդ դարի վերջերին, երբ բռնկվեց Ղարաբաղի ազատագրական պայքարը, նա չդիմեց հզոր պետությունների օգնությանը, հույսը դրեց իր վրա, միավորեց բոլոր ուժերը և դժվարագույն պայմաններում պատմական հաղթանակի հասավ:

Թուրքական իշխանությունները հայերի նկատմամբ շարունակում էին բռնատիրական վարքագիծը, դիմում վայրագ հալածանքների: Ժողովրդի ծոցից դուրս եկած նրա խիզախ զավակները՝ Արաբոն, Աղբյուր Սերոբը, Հրայրը,

Գևորգ Չավուշը, Քեռին, Անդրանիկը և մյուս հայդուկները, անձնազոհ պայքարով պաշտպանում էին հայրենակիցներին:

Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովուրդը մեծ ողբերգություն ունեցավ: Թուրքական կառավարող շրջանների կողմից բարբարոսական ձևերով իրականացված ցեղասպանությանը զոհ գնաց շուրջ մեկուկես միլիոն հայ: Բնակչության հոծ զանգվածների թվում մենք կորցրեցինք նշանավոր շատ գրողների, արվեստի ու գիտության տաղանդավոր գործիչների, ապագայի խոստումնալի երաշխիքներ ունեցող շատ ու շատ մանուկների: Ներկայումս աշխարհի շատ երկրներում դատապարտվում է խաղաղ բնակչության նկատմամբ գործադրված այդ ոճրագործությունը, որպեսզի այլևս նման հակամարդկային արարք, բարբարոսություն առհասարակ տեղի չունենա:

Ինչպես կտեսնենք, այդ արհավիրքներից հետո հայ ժողովուրդը կարողացավ ուշքի գալ, իր մեջ կենսահաստատ ուժ գտնել, ամոքել վերքերը, նայել առաջ և տնօրինել սեփական ճակատագիրը՝ ստեղծելով իր անկախ պետականությունը:

Վ. Բարխուդարյան

ԲԱԺԻՆ 1

ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

1 ԹԵՄԱ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII ԴԱՐՈՒՄ

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ

Ազատագրական պայքարի վերելքի նախադրյալները: XVII դարի երկրորդ կեսը Հայաստանի պատմության մեջ նշանավորվեց ազգային ազատագրական գաղափարախոսության ծավալմամբ:

Խաչքար

Հայաստանի ազատագրական պայքարի ծավալումն ուներ իր նախադրյալները, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ ներքին և արտաքին:

Ներքին նախադրյալների մեջ կարևորը հայ բնակչության ինքնագիտակցության մեջ դարեր առաջ կորցրած պետականության վերականգնման անհրաժեշտության զգացումն էր: Հայ իրականության մեջ գնալով առավել անտանելի էր դառնում օտարների ծանր լուծը, քանզի աստիճանաբար ավելի էին ծանրանում հարկերը և անօրինականությունները՝ չքավորության եզրին հասցնելով բնակչությանը:

Ազատագրական պայքարի նախադրյալների մեջ էական էր դավանանքի ու ազգային մշակույթի դերը: Օտար տիրապետության պայմաններում հայ ժողովուրդը մերժում էր օտարի հավատը՝ հաճախ գերադասելով մահը դավանափոխությունից: Ազգային ինքնագիտակցությունն ու արժանապատվության զգացումը Հայաստանի ազատագրության գաղափարի շուրջը միավորում էին ոչ միայն Հայաստանի բնակչությանը, այլև երկրից արտագաղթած և տարբեր երկրներում հանգրվան գտած ու համայնքներ ստեղծած բնակչությանը:

Արտաքին գործոնների մեջ է մտնում Հայաստանը նվաճած Օսմանյան կայսրության և Իրանի համեմատական թուլացման գործընթացը, որը ազատագրական պայքարի հաջողության հույսեր էր ներշնչում:

Կարևոր էին միջազգային հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները: Եվրոպական մի շարք երկրներ, որոնց ևս սպառնում էր օսմանյան պետությունը, առավել հզորանալով՝ պայքար էին սկսել Օսմանյան կայսրության դեմ: Հայաստանի ազատագրության գործում այդ երկրները դիտվում էին որպես հնարավոր դաշնակիցներ:

Կարևոր հանգամանք էր օսմանյան տիրապետության դեմ պայքարի ընթացքում հայ ժողովրդի հետ նաև հույների, ասորիների, վրացիների, քրդերի, եզդիների համատեղ հանդես գալու պատրաստակամությունը և խոստումը:

17-րդ դարի կամուրջ

Շարժման արևմտաեվրոպական կողմնորոշումը: Հռոմի պապական աթոռը և Ֆրանսիան ջանքեր էին գործադրում թուրքական լծի դեմ համատեղ հանդես գալու համար համախմբելու օսմանյան լծի տակ գտնվող ժողովուրդներին: Հայաստանի ազատագրումը եվրոպական երկրների օգնության հետ կապող հայազգի գործիչները իրենց հերթին կոչեր էին ուղղում Հռոմի պապին ու Ֆրանսիայի թագավորին՝ ուժեղացնելու Օսմանյան կայսրության դեմ պայքարը:

Հայաստանի ազատագրական ծրագրերի ու բանակցությունների ակտիվ մասնակիցներից էր հայազգի վաճառական մահտեսի Շահմուրադը: Նա ժամանել էր Փարիզ և հավաստիացրել ֆրանսիական արքունիքին, թե հայերը հույների հետ պատրաստ են ապստամբելու Օսմանյան կայսրության դեմ: 1683թ. հայկական պատվիրակության կազմում Շահմուրադը կրկին ժամանել է Փարիզ՝ բանակցությունները շարունակելու:

Հայազգի գործիչները բազմազան միջոցների էին դիմում Արևմուտքին համոզելու՝ հակաթուրքական գործողություններ սկսելու համար: Նրանք առաջարկում էին իրենց ծառայությունները: Արիստակես վարդապետը Հռոմի պապին գրած հայերեն նամակում առաջարկում էր իր ծառայությունները՝ պատրաստելու զենքի նոր տեսակ, որը սովորել էր Չինաստանում:

Քաղաքական իրադրության փոփոխությունները, սակայն, նպաստավոր չեղան Հայաստանի ազատագրման ծրագրերի իրականացման համար, իսկ Ֆրանսիան շուտով ստանձնեց Թուրքիային հովանավորելու քաղաքականություն:

Հայ քաղաքական ուժերը ստիպված էին հույսեր կապել հակաթուրքական այլ երկրների՝ Ավստրիայի, Հունգարիայի, Գերմանիայի ու Լեհաստանի հետ:

Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի պատվիրակությունը: Հայաստանի ազատագրության խնդիրը քննարկման առարկա էր ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Արևելյան Հայաստանի գործիչների համար: 1677 թվականին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը Էջմիածնում գումարում է գաղտնի ժողով, որտեղ քննարկվում է Հայաստանի ազատագրության հարցը: Ժողովին մասնակցում էին հոգևոր ու աշխարհիկ 12 գործիչներ: Ներկա էին Սյունիքի ու Արցախի մելիքները: Որոշվում է դիմել եվրոպական պետությունների օգնությանը: Այդ նպատակով կազմված պատվիրակությունը 1678 թվականի վերջերին, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ, հասնում է Կոստանդնուպոլիս՝ Եվրոպա անցնելու նպատակով: Մոտ երկու տարի մնալով Կոստանդնուպոլսում՝ Հակոբ Ջուղայեցին մահանում է, իսկ պատվիրակությունը վերադառնում է Հայաստան: Վերադարձի ուղին չի բռնում պատվիրակության հետ մեկնած 20-ամյա Իսրայել Օրին, որը Սյունիքի մելիք Իսրայելի որդին էր:

Հակոբ Դ Ջուղայեցի (1598-1680)

Հայաստանի ազատագրության Իսրայել Օրու ծրագրերը: Իսրայել Օրին Կոստանդնուպոլսից ուղևորվում է Իտալիա, իսկ այնտեղից անցնում Ֆրանսիա: Ֆրանսիայում նա մտնում է զինվորական ծառայության, ստանում սպայի աստիճան: Այնուհետև տեղափոխվում է Գերմանիա: Այստեղ կայսերընտիր իշխան Հովհան Վիլհելմի հետ քննարկում է Հայաստանի ազատագրության վերաբերյալ իր առաջարկները: Հովհան Վիլհելմը հետաքրքրվում է Իսրայել Օրու մտահղացումներով և խոստանում աջակցել:

Իսրայել Օրի (1659-1711)

Հովհան Վիլհելմի խորհրդով Օրին որոշում է վերադառնալ Հայաստան՝ տեղում իրավիճակին ծանոթանալու և բանակցություններ վարելու: Նա ժամանում է Հայաստան, լինում է Էջմիածնում, ապա ճանապարհվում Սյունիք: Սյունիքի մելիքների աջակցությամբ 1699թ. Անգեղակոթ գյուղում հրավիրվում է գաղտնի խորհրդակցություն: Այնտեղ վճռվում է լիազորել Իսրայել Օրուն՝ շարունակելու բանակցությունները ինչպես եվրոպական երկրների, այնպես էլ ռուսական իշխանությունների հետ: Այդ նպատակով մելիքներն իրենց կնիքներով և ստո-

բագրություններով հաստատված նամակներ են հանձնում Իսրայել Օրուն և նրան ուղեկցող կարգում Մինաս վարդապետ Տիգրանյանին:

Հովհան Վիլհելմին ուղարկված նամակում հայ մելիքները խնդրում էին արագացնել Հայաստան զորք ուղարկելը և հավաստիացնում, թե Հայաստանի թագավորությունը վերականգնելու համար իրենք պատրաստ են անմիջապես զինված ապստամբություն բարձրացնել: Ռազմական օգնության դիմաց մելիքները խոստանում էին Հովհան Վիլհելմին ճանաչել հայոց թագավոր:

Անգեղակոթի գաղտնի ժողովը

Վերադառնալով Եվրոպա՝ Իսրայել Օրին կազմում է Հայաստանի ազատագրության ծրագիր և ներկայացնում Հովհան Վիլհելմին, որը հայտնի է «Պֆալցյան ծրագիր» անվանումով: Ծրագիրը բաղկացած էր 36 կետից: Այնտեղ թվարկվում էին այն ուղիներն ու միջոցները, որոնք անհրաժեշտ էին Հայաստանից պարսիկներին վտարելու համար: Հովհան Վիլհելմը հավանություն է տալիս Իսրայել Օրու ծրագրին և առաջարկում գնալ Ֆլորենցիա ու Վիեննա՝ նրանց համաձայնությունը ևս ստանալու: Ֆլորենցիայում դուքսը խոստանում է զորք տրամադրել, սակայն Վիեննայի արքունիքում հրաժարվում են մասնակցել Հայաստանի ազատագրման գործին, քանի որ Թուրքիայի հետ 1699թ. արդեն կնքել էին հաշտության պայմանագիր:

Իսրայել Օրին համոզվեց, որ այդ պահին Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության դեմ պայքարում Հայաստանի համար հնարավոր դաշնակից կարող է լինել Ռուսաստանը:

Օրին Ռուսաստանում: 1701թ. ամռանը Իսրայել Օրին գալիս է Ռուսաստան և Պետրոս I-ին է ներկայացնում Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու իր ծրագիրը: Նախատեսվում էր կազմակերպել 25-հազարանոց բանակ, որի մի մասը՝ 10 հազարը, Հյուսիսային Կովկասից պետք է մտներ Վրաստան: Այնուհետև ռուս-վրացական զորքերին պետք է միանային նաև ապստամբություն բարձրացրած հայերի զինված ուժերը: Ենթադրվում էր Արևելյան Հայաստանը ազատագրել շատ կարճ ժամանակում, որովհետև թուլացած Պարսկաստանը չէր կարող դիմադրել այդ միացյալ բանակին: Պետրոս I-ը զբաղված էր Հյուսիսային պատերազմով, ուստի հուսադրում է Իսրայել Օրուն, թե կզբաղվի այդ հարցերով պատերազ-

Պետրոս I (1672–1725)

մի ավարտից հետո: Միաժամանակ, Պարսկաստանում և Անդրկովկասում տիրող իրավիճակին ծանոթանալու նպատակով, Պետրոս Ի-ը որոշեց դեսպանություն ուղարկել Պարսկաստան: Դեսպանության ղեկավար նշանակվեց Իսրայել Օրին, որին տրվեց ռուսական բանակի գնդապետի կոչում: Իսրայել Օրին, սակայն, նախ գնաց Եվրոպա և Հռոմի պապից ևս ստացավ պարսից շահին ուղղված նամակ, որտեղ խնդրվում էր հալածանքներ թույլ չտալ քրիստոնյա բնակչության նկատմամբ:

1708թ. Իսրայել Օրին դեսպանական խմբով ժամանեց Շամախի քաղաք, ապա եղավ Պարսկաստանի մայրաքաղաք Սպահանում և նույն թվականի կեսերին վերադարձավ Անդրկովկաս: Ռուսական դեսպանության ղեկավարի հայազգի լինելը Անդրկովկասում մեծ տպավորություն գործեց:

Ռուսաստան վերադառնալու ժամանակ Իսրայել Օրուն միացավ նաև Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան–Ջալալյանը: Աստրախանում 1711թ. Իսրայել Օրին անակնկալ մահացավ, իսկ Եսայի Հասան–Ջալալյանը վերադարձավ Արցախ:

Մեծ է Իսրայել Օրու գործունեության նշանակությունը ազատագրական պայքարում: XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի հայ ազատագրական շարժման զարթոնքը մեծապես կապված է նրա անվան հետ: Նա Հայաստանի ազատագրության հարցը դրեց գործնական հողի վրա, մարտական շունչ հաղորդեց քաղաքական բանակցություններին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է սկսել աշխուժանալ ազատագրական պայքարը: Որո՞նք են այդ պայքարի ծավալման ներքին և արտաքին նախադրյալները:
2. Փորձե՛ք գնահատել հայ գործիչների ջանքերը հակաթուրքական պայքարի կազմակերպման գործում:
3. Տեքստից դո՛ւրս գրեք տարեթվերը և կազմե՛ք ժամանակագրական աղյուսակ:
4. Ե՞րբ է հրավիրվել Էջմիածնի ժողովը և ո՞ւմ նախաձեռնությամբ: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Էջմիածնի գաղտնի ժողովը: Վերհիշե՛ք՝ նման նախաձեռնություն ո՞ր թվականին է եղել:
5. Ո՞վ էր Իսրայել Օրին, և ի՞նչ գիտեք նրա մասին: Փորձե՛ք բնութագրել նրան: Ե՞րբ է տեղի ունեցել Անգեղակոթի ժողովը և ի՞նչ հարցեր է քննարկել:
6. Քանի՞ կետից էր բաղկացած «Պֆալցյան ծրագիրը»: Ձեր կարծիքով՝ իրատեսակա՞ն էր Օրու «Պֆալցյան ծրագիրը»: Արդյոք եվրոպական երկրները իսկապես շահագրգռվա՞ծ էին Հայաստանի ազատագրությամբ:

7. Ինչո՞ւ է Իսրայել Օրին տեղափոխվում Ռուսաստան: Ի՞նչ եք կարծում՝ հնարավո՞ր էր Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության նոր ծրագրի իրականացումը: Եթե դուք լինեիք Օրու փոխարեն, ի՞նչ ծրագիր կներկայացնեիք ռուսական արքունիք:
8. Ինչպե՞ս եք գնահատում Իսրայել Օրու գործունեությունը հայ ազատագրական պայքարում:
9. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք «Պֆալցյան ծրագիր» հասկացությունը:
10. Լրացրե՛ք «Ազատագրական պայքարի աշխուժացումը» աղյուսակը:

Ազատագրական պայքարի գործիչը	Գործունեությունը	Նպատակը	Արդյունքները

ԹԵՍՏ

Նշե՛ք Իսրայել Օրու՝ Ռուսաստան գալու տարեթիվը.

1. 1677թ., 3. 1701թ.,
2. 1711թ., 4. 1699թ.:

1699թ. Պետրոս I-ին ուղարկած հայ մելիքների ուղերձից

«Մեր ներկայացուցիչ Մինաս վարդապետին Իսրայել Օրու հետ ձեզ մոտ ենք ուղարկում, որոնք լիովին տեղյակ են մեր վիճակին: Նրանց հետ ընդունած ձեր բոլոր որոշումները մեզ համար ընդունելի են... Եվ թող զորություն լինի ձեզ, որ հաղթենք մեր թշնամիներին, ինչպես հաղթեցինք շատերին, որպեսզի մեզ համար լույս ծագի ձեր տերությունից: Կխնդրենք և կաղաչենք, որ աստծո ողորմությամբ ազատագրեք մեր խեղճ ազգին, որը ենթակա է տարբեր պատահարների... Խնդրում ենք ձեր բարի կամքով ընդառաջեք մեզ և լինեք պարծանք մեր ազգի համար, քանի որ որևէ տեղից ոչ մի հույս չունենք... Մեր որոշումն է, որ մեր իշխաններով ու պարոններով հնազանդվենք ձեր մեծ թագավորությանը»:

1711թ. մարտի 2-ին Սենատին հղած Պետրոս I-ի հրահանգից

«Ընդլայնել առևտուրը Պարսկաստանի հետ և հայերին հնարավորին չափ սիրաշահել, արժանվույն կերպով նպաստել և շահագրգռել, որպեսզի հաճախակի այցելեն Ռուսաստան»:

2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Ռազմաքաղաքական իրադրությունը Հայաստանում և Անդրկովկասում 18-րդ դարի սկզբին: XVIII դարի առաջին երկու տասնամյակներին Պարսկաստանում դրությունը շարունակում էր վատթարանալ: Պարսկական լծի տակ

գտնվող ժողովուրդները, այդ թվում և հայերը, հարմար առիթի էին սպասում՝ թոթափելու պարսից տիրապետությունը: Պարսկական տիրապետության դեմ առավել եռանդուն էին գործում աֆղանները, որոնց հաջողվեց 1722թ. պաշարել և գրավել երկրի մայրաքաղաք Սպահանը: Ռուսաստանը որոշեց օգտագործել հարմար առիթը և գրավել Կասպից ծովի արևմտյան և հարավային տարածքները: Պետրոս I–ը այդ մասին տեղեկացրեց Վրաստանի թագավոր Վախթանգ VI–ին և խոստացավ օգնել նաև Վրաստանին: Վախթանգը որոշեց օգտվել հարմար առիթից և իր հերթին այդ մասին տեղեկացրեց նաև Արցախի հայ մելիքներին:

Հայ ազատագրական պայքարի առաջնորդները ստեղծված պայմաններում չէին կարող անտարբեր մնալ: Արցախում մելիքների կողմից հավաքվել էր ավելի քան տասներկուհազարանոց զորք: Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան–Ջալալյանի կոչով մոտ 10-հազարանոց միացյալ զորաբանակով մելիքներն ու հրամանատարները գնացին Գանձակի հարավային կողմում գտնվող Չոլակ հայկական ուխտավայրը: Նրանք Վախթանգ VI–ի բանակի հետ սպասելու էին Պետրոս I–ի զորքերի ժամանելուն:

Ռազմական ամրությունների (սղնախներ) կազմավորումը Արցախում: Քաղաքական խառնաշփոթությունից օգտվելով՝ լեզգիներն իրենց հերթին ասպատակում էին Շիրվանի և Արցախի բնակավայրերը: Այդ հարձակումներին դիմագրավելու համար Արցախի մելիքների զինված ջոկատները հաճախ միավորվում էին և միասնաբար դիմադրում թշնամուն: Ոգևորված ռուսական վերահաս արշավանքի լուրերով՝ Արցախի հայ բնակչությունը պատրաստ էր լիովին թոթափել օտարի լուծը: Ազատագրական պայքարին օժանդակելու համար Շիրվանի հայկական բնակավայրերից Արցախ ժամանեցին նաև ռազմական գործի հմուտ կազմակերպիչներ Ավան և Թարխան հարյուրապետներն իրենց համախոհներով: Արցախահայության պայքարին ակտիվորեն օժանդակում էր Գանձասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան–Ջալալյանը: Արցախում կազմակերպվեցին պաշտպանական ամրոցներ (սղնախներ), որոնցից առավել հայտնի էին Գյուլիստանի, Շոշի (Շուշի), Ավետարանոցի, Ջրաբերդի և Քարագլխի ամրոցները: Հայկական այդ ուժերը կարող էին վարել ոչ միայն պաշտպանական, այլև հարձակողական մարտեր:

Շուշիի բերդը (17-րդ դար)

Ռուսական զորքերի 1722թ. կասպիական արշավանքը: Պարսից շահին ապստամբներից պաշտպանելու պատրվակով Պետրոս I–ը 1722թ. արշավանք է կազմակերպում դեպի Անդրկովկաս: Դերբենդը գրավելուց հետո Պետրոս

I–ը, սակայն, անակնկալ վերադառնում է Աստրախան՝ զորքերի առաջխաղացումը դեպի Կասպից ծովի հարավային ափերը հետաձգելով հաջորդ տարվան:

Մոտ երկու ամիս սպասելուց հետո՝ նույն թվականի աշնանը, լուր ստացվեց Պետրոս I–ի՝ Դերբենդից վերադառնալու և արշավանքը հետաձգելու մասին: Վրացական բանակը վերադարձավ Թիֆլիս: Հայկական ուժերը, տուն դառնալով, ձեռնամուխ եղան Արցախի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Դավիթ–Բեկ (ծն. թ. անհայտ է–1728)

Թուրքական զորքերի ներխուժումն Անդրկովկաս: Պարսկական պետության թուլացումից փորձեց օգտվել նաև Թուրքիան: Աֆղանների կողմից Սպահանի գրավումը և ռուսների Անդրկովկաս արշավելը հարմար առիթներ էին նաև Պարսկաստանի վաղեմի թշնամի Թուրքիայի համար: Թուրքիան անհանգստացած էր Հայաստանում ազատագրական պայքարի ծավալմամբ և նպատակ ուներ ճնշելու հայ և վրաց ժողովուրդների ազատագրական շարժումները: Միաժամանակ նա ձգտում էր խոչընդոտել Անդրկովկասում Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը և անմիջապես ձեռնամուխ եղավ նվաճելու Պարսկաստանի արևմտյան նահանգներն ու Անդրկովկասը:

1723թ. հունիսին թուրքական բանակը ներխուժում է Թիֆլիս, գրավում քաղաքը և շարժվում դեպի Գանձակ: Վախթանգ 6–րդը հեռանում է Թիֆլիսից և մեծ շքախմբով անցնում է Ռուսաստան:

Անդրկովկասի ու Պարսկաստանի համար պայքարի ելած Ռուսաստանի և Թուրքիայի միջև մրցակցությունը կարող էր վերաճել ռուս–թուրքական նոր պատերազմի, որից, սակայն, երկուստեք փորձում են խուսափել: Երկար բանակցություններից և փոխադարձ մեղադրանքներից հետո նրանք, ի վերջո, 1724թ. հունիսի 12–ին Կ. Պոլսում կնքում են պայմանագիր, որը պետք է կարգավորեր նրանց հարաբերությունները: Այդ պայմանագրի համաձայն՝ Օսմանյան Թուրքիան ճանաչել էր մերձկասպյան շրջանների միացումը Ռուսաստանին, իսկ ռուսական կողմը Թուրքիայի տնօրինությանն էր թողել Շամախիից արևմուտք ընկած երկրամասերը: Պայմանագրի կնքումը ավելի ազատեց Թուրքիայի ձեռքերը՝ Անդրկովկասում լայնաճակատ հարձակման անցնելու համար:

Երևանի հերոսական պաշտպանությունը: 1724թ. գարնանը թուրքական բանակը ներխուժում է Արարատյան դաշտ և սկսում գրավել ու կողոպտել հայկական գյուղերը: Թշնամուն 40 օր դիմադրություն են ցույց տալիս Կարբի գյուղի բնակիչները: Նրանք համաձայնում են զենքը ցած դնել միայն այն պայ-

մանով, որ թշնամու բանակը չմտնի Կարբի: Թուրքական զորքը նույն թվականի հունիսին պաշարում է Երևան քաղաքը: Երևանի պաշտպանության համար ոտքի է կանգնում ինչպես քաղաքի, այնպես էլ շրջակա հայկական գյուղերի բնակչությունը: Երևանը վերածվում է ռազմական ճամբարի: Քաղաքը պաշտպանող հայկական ուժերը բաժանված էին ջոկատների: Յուրաքանչյուր ջոկատ ուներ իր տեղամասն ու հրամանատարը:

Երևանը 17-րդ դարում (ըստ Տավերնիեի)

Հակառակորդի գրոհներն ավարտվում էին անհաջողությամբ: Երևանի պաշտպանությունը տևեց մոտ երեք ամիս: Քաղաքն այլևս չէր կարող դիմանալ պաշարմանը, որովհետև սպառվում էին պարենը և զինամթերքը: Երևանի խանը ստիպված համաձայնում է բանակցություններ վարել թուրքերի հետ: 1724թ. սեպտեմբերի 26–ին պաշարված քաղաքն անձնատուր եղավ: Երևանի գրավման համար թուրքական բանակը կորցրեց ավելի քան 20 հազար զինվոր:

Երևանի պաշտպանությունը կասեցրեց թուրքերի սրընթաց առաջխաղացումը դեպի Սյունիք և Արցախ:

Ասկերանի բերդը (18-րդ դար)

Շարժման ծավալումը Արցախում: Թուրքական զորքերն առավել համառ և կազմակերպված դիմադրության հանդիպեցին Արցախում: 1724թ. Արցախի ազատագրական ուժերը թուրքական բանակների դեմ համատեղ պայքարի պայմանագիր կնքեցին Գանձակի մահմեդականների հետ: Արցախի հրամանատարները օսմանյան բանակների դեմ պայքարում համագործակցության առաջարկներ կատարեցին նաև պարսկական իշխանություններին: Արցախի մելիքությունները վճռականությամբ պատրաստ էին դիմագրավելու օտար հարձակումներին և ավերումներից պաշտպանելու սեփական երկիրն ու ժողովրդին:

1725թ. մարտին թուրքական երեք զորամաս ներխուժեց Արցախի Վարանդա գավառ: Կորուստներից խուսափելու համար մելիքները շուրջ 6000 թուրք զինվորների տեղավորեցին Արցախի հայկական գյուղերում և գիշերային հանկարծակի գրոհով ոչնչացրին նրանց: Թուրքական երկու փաշաներն սպանվեցին, իսկ երրորդը գերի վերցվեց: Թուրքական բանակի ոչնչացումը և

հայկական ուժերի այդ կարևոր հաղթանակը մեծ արձագանք ունեցան ամենուրեք, բարձրացան հայոց ինքնավստահությունը և մարտունակությունը:

Անհաջողության է մատնվում Արցախի դեմ թուրքական զորքերի նաև հաջորդ արշավանքը: 1726թ. Շուշին գրավելու օսմանյան բանակի համառ գրոհները, հանդիպելով հայերի դիմադրությանը, անհաջողության մատնվեցին: Ութօրյա մարտերից հետո, կորցնելով ութ հարյուր զինվոր, թուրքերն ստիպված վերադառնում են Գանձակ: Կրած պարտություններից հետո թուրքական զինվորականությունը ընտրում է անակնկալ հարձակումների մարտավարությունը:

Գանձասարի վանքը

Թուրքական բանակին, սակայն, չհաջողվեց կայուն դիրքեր գրավել Արցախում: 1729–1731թթ. թուրքական նվաճման դեմ պայքարը շարունակում էր Գյուլիստանի սղնախը:

Արցախի ազատագրական շարժումը մեծ արձագանք գտավ ողջ հայության մեջ: Այն ոգեշնչում էր նաև հայ ժողովրդի հաջորդ սերունդներին և հավատով լցնում իրենց ուժերի նկատմամբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Արցախի մելիքները միավորեցին իրենց զինական ուժերը: Ի՞նչ նպատակ էին հետապնդում նրանք:
2. Ի՞նչ կարող եք ասել հայ-վրացական համագործակցության մասին: Ձեր կարծիքով՝ անհրաժե՞շտ էր այդ համագործակցությունը:
3. Որո՞նք են թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժման պատճառները: Փորձե՛ք գնահատել 1724թ. ռուս-թուրքական պայմանագիրը: Ի՞նչ եզրակացության կարող եք հանգել:
4. Ի՞նչ քայլեր ձեռնարկեցին Արցախի ազատագրական ուժերը թուրքական արշավանքին դիմագրավելու համար:
5. Ովքե՞ր էին ղեկավարում ազատագրական պայքարը Արցախում: Ե՞րբ տեղի ունեցավ Շուշիի պաշտպանությունը և ինչո՞վ վերջացավ:
6. Ձեր կարծիքով՝ ի՞նչ նշանակություն ունեցավ Արցախի ազատագրական պայքարը: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
7. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *սղնախ*, *կասպիական արշավանք*, *Արցախի ինքնապաշտպանություն* տերմինները և հասկացությունները:

8. Լրացրե՛ք «Ազատագրական զինված պայքարը Արցախում» աղյուսակը:

Գործիչը	Իրադարձությունը	Վայրը	Դերը, նշանակությունը

ԹԵՍՏԵՐ

Համապատասխանեցրե՛ք տարեթվերը իրադարձություններին.

1. 1724թ. հունիս,
2. 1723թ. հունիս,
3. 1722թ.,
4. 1724թ. գարուն,

ա. ռուսական զորքերի կասպիական արշավանքը,
բ. Կարբի գյուղի բնակչության հերոսական դիմադրությունը թուրքերին,
գ. Երևանի հերոսական պաշտպանությունը,
դ. թուրքական զորքերի ներխուժումը Թիֆլիս:

Թուրքերը ե՞րբ ներխուժեցին Վարանդա գավառ.

1. 1728թ.,
2. 1729–1731 թթ.,
3. 1725թ.,
4. 1726թ.:

3. ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազատագրական պայքարի սկիզբը Սյունիքում: Վրաց ազատագրական ուժերի հետ կապեր հաստատելու նպատակով Սյունիքից Վրաստան է մեկնում հայ առևտրական Ստեփանոս Շահումյանը: Սյունիքի մելիքների անունից նրա խնդրանքով Վախթանգ VI–ը 1722թ. Դավիթ-Բեկի գլխավորությամբ հայազգի զորավարներ է ուղարկում Սյունիք: Նրանք հաստատվեցին Շինուհայր ավանում և իրենց շուրջը համախմբեցին տեղի զինված ուժերը: Դավիթ-Բեկի ղեկավարությամբ ստեղծվեց ռազմական խորհուրդ: Նա աչքի ընկած զորականներից Մխիթարին նշանակեց զորքերի սպարապետ, իսկ առանձին զորաջոկատների հրամանատարներ դարձան Տեր-Ավետիսը, Փարսադանը, Թորոսը և ուրիշներ:

Ճակատամարտ Դավիթ-Բեկի գլխավորությամբ
Գործ՝ Ա. Բեքարյանի

Առաջին հաղթական մարտը տեղի ունեցավ 1722թ. աշնանը ջևանշիր կոչվող քոչվոր ցեղի դեմ: Այդ հաղթանակը մեծ հեղինակություն բերեց Դավիթ-Բեկին: Հայկական ուժերին միավորելու և ինքնավստահություն հաղորդելու համար հատկապես կարևոր էր մահմեդականություն ընդունած և թշնամու հետ համագործակցող մելիք Բաղրին պատկանող՝ Տաթևի մոտ գտնվող ամրոցի գրավումը: Սյունիքի ազատագրական շարժման դեմ հանդես եկան ու Կապանի վրա հարձակ-

վեցին նաև շրջակա մահմեդական տիրակալները: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Չավնդուրի մոտ, որն ավարտվեց հայ զորականների լիակատար հաղթանակով:

Դավիթ-Բեկ: Սյունիքի հայկական իշխանության կազմավորումը: Դավիթ-Բեկի վարած շուրջ մեկ տարվա հաջող պայքարից հետո Սյունիքը հիմնականում ազատագրվեց օտար տիրապետությունից: Այնտեղ Դավիթ-Բեկի գլխավորությամբ ստեղծվեց հայկական իշխանություն: Պարսկական շահը ճանաչեց Դավիթ-Բեկի իշխանությունը և նրա հետ դաշինք կնքեց: Հայկական ուժերի կենտրոնատեղի դարձավ Հալիձորի բերդը: Շահը կոչ արեց շրջակա պարսկական կառավարիչներին՝ ճանաչել և համաձայնեցված գործել Դավիթ-Բեկի հետ: Ավելին՝ շահի հրամանով թուրքական արշավանքին դիմագրավելու համար պարսիկ կառավարիչները պարտավոր էին զինված օժանդակություն ցուցաբերել Դավիթ-Բեկին ու հայկական իշխանությանը:

Հալիձորի բերդը

Հայկական զորքերը, Մխիթար Սպարապետի և Տեր-Ավետիսի հրամանատարությամբ, ազատագրեցին Ձևայի և Որոտանի բերդերը:

Դավիթ-Բեկն իր զորքերով ամրացավ Հալիձորի բերդում: 1727թ. մարտին թուրքերը պաշարեցին Հալիձորը: Հայկական ուժերին հաջողվում էր հետ մղել թշնամու համառ գրոհները: Պաշարված հայ ռազմիկները մեծ քանակությամբ թուրքական զինվորների էին ցած գլորում պարիսպներից: Բերդի հրամանատարությունը որոշեց ճեղքել պաշարումը, դուրս գալ շրջափակումից և անցնել հակահարձակման: Մխիթարն ու Տեր-Ավետիսը դիմեցին հայ զինվորներին. «Արիացե՛ք, մի՛ երկնչեք, հետևեցե՛ք մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ՝ մեր աչքերի առաջ, տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը»: Նրանց հետևեցին 300 զինվածներ: Պաշարվածները, աննկատ դուրս գալով բերդից, հանկարծակի հարձակվեցին թշնամու վրա: Խուճապի մատնված թշնամու զորքերը, մեծ կորուստներ տալով, դիմեցին փախուստի: Այդ օրն օսմանցիների բանակից զոհվեցին

Տաթևի վանքի ընդհանուր տեսարան

13000-ը, իսկ հայ զինվորներից՝ շատ քչերը: Թշնամուց խլվեցին 147 դրոշ և նրանց բանակի ամբողջ կողոպուտն ու ունեցվածքը:

Հայկական զորքերը, Մխիթար Սպարապետի և Տեր-Ավետիսի հրամանատարությամբ, հետապնդելով թշնամուն, հարձակման անցան Մեղրիի վրա, որը գրավվել էր թուրքերի կողմից: Հայերը ազատագրեցին Մեղրին և հակառակորդի դեմ լիակատար հաղթանակ տարան: Հալիձորի և Մեղրիի հաղթանակները նոր լիցք հաղորդեցին հայկական զորքերին:

Մխիթար Սպարապետ: Ապստամբության ավարտը: 1728թ. մահացավ Դավիթ-Բեկը: Կապանի զինվորական հրամանատարությունն ամբողջությամբ անցավ Մխիթար Սպարապետին, որը շարունակեց գլխավորել պայքարը թուրքերի դեմ:

Մխիթար Սպարապետ (17-րդ դ. վերջ–1730)

Թուրքական բանակը, կրած պարտություններից ուշքի գալով, կրկին հարձակվեց Սյունիքի վրա: Թշնամուն դիմագրավելու ժամանակ, սակայն, հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցավ պառակտում, որը բացասաբար անդրադարձավ պայքարի հետագա ընթացքի վրա: Հալիձորի բերդի նոր պաշարման ժամանակ Մխիթար Սպարապետը պահանջեց շարունակել պաշտպանությունը և ուժասպառ անել թշնամուն, իսկ Տեր–Ավետիսը վստահեց թուրքերին և նախընտրեց նրանց հետ բանակցելու ուղին: Մխիթար Սպարապետը ստիպված էր գիշերով հեռանալ բերդից: Թուրքերը գրավեցին բերդը, կողոպտեցին ու կոտորեցին այնտեղ մնացած հայ բնակչությանը: Հալիձորի անկումից հետո թեև Մխիթար Սպարապետին հաջողվեց մի կարճ ժամանակ միավորել հայկական ուժերի մեծ մասը և թուրքերի դեմ մի շարք հաջող հարձակումներ կազմակերպել, սակայն ապստամբական ուժերի կազմալուծումը հնարավոր չեղավ կասեցնել:

1730թ., թուրքերին Օրդուբադում պարտության մատնելուց հետո, Խնձորեսկ վերադառնալու ճանապարհին Մխիթար Սպարապետը դավադրաբար սպանվեց: Սյունիքի ազատագրական պայքարի ելած զորքերը, հետզհետե կազմալուծվելով և միայնակ մնալով թշնամու գերակշիռ ուժերի դեմ, չկարողացան վերջնական հաղթանակի հասնել:

Ջինված պայքարի արդյունքները և Պարսկաստանի նոր քաղաքականությունը: Ազատագրական պայքարը խոր հետք թողեց և մեծապես բարձրացրեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ու ազատասիրական ոգին,

հավատ ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ: Պարսից պետությունը ստիպված էր հաշվի նստել հայկական մելիքությունների հետ, ճանաչել նրանց իրավունքներն ու ինքնիշխանությունը:

Պարսկաստանում աֆղանական և թուրքական նվաճողների դեմ պայքարի գլուխ անցած զորահրամանատար Նադիրին հաջողվում է պարտության մատնել աֆղաններին և նրանց դուրս քշել երկրից: Մի շարք ճակատամարտերում պարսկական բանակը պարտության է մատնում նաև թուրքական զորքերին: Նադիրի հաջողությունները պայմանավորված էին ժողովրդական զանգվածների աջակցությամբ:

Էջմիածնի Մայր տաճարը

Թուրքական զորքերի դեմ պայքարում Նադիրին օժանդակում էին նաև հայկական ուժերը: Իր բարյացակամությունը հայ ժողովրդի նկատմամբ ընդգծելու համար Նադիրը այցելում է Էջմիածին և ներկա լինում պատարագին: Վանքի վերանորոգման համար նա հատկացնում է հազար թուման, տաճարը զարդարում մոտ 15 կգ կշռող ոսկե ջահով: Միաժամանակ կարգադրում է Էջմիածին ուղարկել ընտիր գորգեր և այլ նվերներ: Նրա հրովարտակով վերահաստատվում են կաթողիկոսի և հայ հոգևորականության՝ հնուց սահմանված իրավունքները: Նադիրը՝ որպես հեռատես քաղաքական գործիչ ու դիվանագետ, լավ էր հասկանում տեղական բնակչության համակրանքը շահելու և նրա ցուցաբերած օգնության նշանակությունը հակաթուրքական պայքարում:

Պարսկական և օսմանյան զորքերի միջև 1735թ. հունիսին խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ Եղվարդ գյուղի մոտ, որտեղ օսմանցիները ծանր պարտություն կրեցին: Պարսկական բանակի կազմում թուրքերի դեմ մարտնչում էին նաև հայ զինվորներն ու աշխարհազորայինները:

Թուրքական հրամանատարությունը ստիպված էր զորքերը դուրս բերել Անդրկովկասից: 1736թ. Էրզրումում Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքվում է պայմանագիր, որով Թուրքիան կրկին ճանաչում էր Պարսկաստանի տիրապետությունը Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում: Նադիրը 1736թ. հռչակվեց Պարսկաստանի նոր շահ: Նրա տիրապետության ժամանակ Պարսկաստանը կրկին դարձավ Արևելքի հզոր պետություններից մեկը:

Հայկական ինքնավարությունը Արցախում (Խամսայի մելիքություններ): Նադիր շահը հաշվեհարդար տեսավ այն ցեղերի հետ, որոնք օժանդակել էին թուրքական զորքերին: 1736թ. Նադիրը Ղարաբաղի բեկլարբեկությունը բաժանեց երկու մասի՝ Գանձակի խանությունից անջատելով Արցախը և դարձնելով առանձին վարչական միավոր: Նա վերահաստատեց Արցախի ներքին վարչական բաժանումն ու մելիքների ժառանգական իրավասությունները: **Ար-**

ցախի (**Ջրաբերդի, Գյուլիստանի, Խաչենի, Վարանդայի** և **Դիզակի**) մելիքությունները անվանվեցին **Խամսայի (հինգ) մելիքություններ**: Դրանց կառավարիչ նշանակվեց Դիզակի մելիք Եգանը, որը միավորում էր նաև Արցախի մելիքների ռազմական ուժերը: Նա ստացավ նաև խանի տիտղոս: Մելիք Եգանի մահից հետո կառավարչի պաշտոնն անցավ նրա որդի Արամին, իսկ այնուհետև՝ վերջինիս եղբորը՝ մելիք Եսայուն:

Նադիր շահի կառավարման ժամանակ Արցախի մելիքները պահպանեցին իրենց բոլոր նախկին իրավունքները: Յուրաքանչյուր մելիք ուներ իր զորքը, որն անհրաժեշտության դեպքում կարող էր հասնել 1000–1500 զինվորի: Արցախի մելիքությունների սահմանները տարածվում էին Գանձակի հարավային շրջաններից մինչև Արաքս գետը:

Գանձասարի վանքի հատված

Իրենց տիրապետությունը պահպանեցին նաև Սյունիքի և Ղարադաղի հայկական մելիքությունները: Սևանի հարավարևելյան մասում իշխող Մելիք-Շահնազարյան տոհմի ներկայացուցիչները Նադիրի իշխանության տարիներին ոչ միայն վերահաստատվեցին ու պահպանեցին իրենց իրավունքները, այլև ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը: Նրանք անկախ ճանաչվեցին Երևանի խանից:

Արցախի ինքնավարությունը մարմնավորվում էր նաև հոգևոր իշխանության՝ Գանձասարի կաթողիկոսության գոյությամբ: Վերջինս եռանդուն մասնակցություն էր ունենում ազատագրական շարժման մեջ: Այն Արցախի ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ ուժերի համախմբման ու նրանց միասնականության համար մղվող պայքարի հիմնական կենտրոնն էր: 1700 թվականից մինչև իր կյանքի վերջը (1728թ.) ազատագրական եռանդուն գործունեություն էր ծավալել Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը: Եսայի կաթողիկոսի մահից հետո էլ Գանձասարի կաթողիկոսարանը մնում էր հայոց ազատագրական գաղափարախոսության ու շարժման կարևոր կենտրոններից մեկը: Այնտեղ էին կազմակերպվում գաղտնի խորհրդակցություններ՝ քննարկելու Հայաստանի ազատագրության տարբեր ծրագրեր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ և ի՞նչ նպատակով է մեկնում Վրաստան: Ձեր կարծիքով՝ Վրաստանը կարո՞ղ էր օգնել Հայաստանին
2. Ձեր կարծիքով՝ ի՞նչ հետևանքներ ունեցավ հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցած պառակտումը:

3. Ինչպիսի՞ն էր Մխիթար Սպարապետը ձեր պատկերացմամբ:
4. Որո՞նք էին 1720-ական թթ. զինված պայքարի արդյունքները: Ի՞նչ փաստեր են վկայում հայերի նկատմամբ Նադիր շահի բարեհաճ վերաբերմունքը:
5. Ե՞րբ է տեղի ունեցել Եղվարդի ճակատամարտը: Հայերից ովքե՞ր էին մասնակցում այդ ճակատամարտին:
6. Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը 1736թ. թուրք-պարսկական պայմանագրի նկատմամբ:
7. Ե՞րբ ստեղծվեցին Խամսայի մելիքությունները և ինչո՞ւ:
8. Կարելի՞ է արդյոք Խամսայի մելիքությունները համարել հայոց պետականության դրսևորում:
9. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *հայկական իշխանություն*, *խամսա*, *Խամսայի մելիքություն* տերմինները և հասկացությունները:
10. Տեքստից դո՛ւրս գրեք տարեթվերը և կազմե՛ք ժամանակագրություն:
11. Լրացրե՛ք «Սյունիքի հայկական իշխանությունը» աղյուսակը:

Գործիչը	Իրադարձությունը և տարեթիվը	Վայրը	Դերը և նշանակությունը

ԹԵՍՏԵՐ

Ո՞ՐՆ ԷՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԻ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻՆ.

1. Զևա, 3. Տաթև,
2. Օրդուբադ, 4. Հալիձոր:

Ո՞Վ ԷՐ ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ.

1. մելիք Մանուչարը, 3. մելիք Շահնազարը,
2. մելիք Եգանը, 4. մելիք Հակոբջանը:

1723թ. ԳԱՆՁԱՍԱՐԻ ԵՍԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ՝ ՊԵՏՐՈՍ Ի-ԻՆ ՀՂԱԾ ՆԱՄԱԿԻՑ

«Չորս կողմից թշնամիները մեզ վրա են հարձակվում: Մենք նման ենք առանց հովվի հոտի, մոլորված՝ լեռներում ու դաշտերում: Մենք ի վիճակի չենք դեմ կենալ նրանց, մի կողմից օսմանցին է գրոհում, որ գրավեց Վրաստանը և հասավ մինչև Գանձակ, 20 օր ասպատակեց ու հետ դարձավ, մյուս կողմից պարսիկներն են և ուրիշներ»:

4. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ



Հովսեփ Էմին
(1726–1809)

Հովսեփ Էմինի գործունեությունը: 18–րդ դարի կեսերից հայ ազատագրական շարժման մեջ սկսում են աշխուժանալ գաղութահայ կենտրոնները: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ ուներ հնդկահայ գաղութը, որի գործիչներից էր Հովսեփ Էմինը: Հովսեփ Էմինը ծնվել է 1726թ. Պարսկաստանի Համադան քաղաքում, որտեղից նրանց ընտանիքը տեղափոխվել էր Կալկաթա: Նա ծանոթ էր պարսկա–թուրքական լծի տակ գտնվող հայ ժողովրդի վիճակին, ինչպես նաև ականատես էր Հնդկաստանում հայ վաճառականության դժվարին կացությանը:

Երիտասարդ Էմինը որոշում է գնալ Անգլիա, սովորել ռազմական գործը և ձեռնամուխ լինել Հայաստանի ազատագրմանը: Նրան ոգևորում էին Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի մասին տեղեկությունները:

1751թ. Էմինը, հակառակ հոր կամքին, որը նրան ուզում էր վաճառական դարձնել, ծառայության է մտնում Անգլիա մեկնող մի նավում և ուղևորվում Անգլիա:

Անգլիայում Հովսեփ Էմինն ընդունվում է Վուլվիչի զինվորական ակադեմիան, ծանոթանում անգլիական քաղաքական ու պետական գործիչների հետ: Ակադեմիայում նա հմտանում է ռազմական գործի մեջ:

Ուսումն ավարտելուց հետո Էմինը մեկնում է Գերմանիա՝ մասնակցելու Ֆրանսիայի դեմ մղվող պատերազմին:

Հ. Էմինը գալիս է Հայաստան, որտեղ մոտիկից ծանոթանում է տիրող իրավիճակին: Նա համոզվում է, որ թուրքական տիրապետության դեմ ազատագրական պայքար կարելի է սկսել միայն որևէ հարևան տերության օժանդակությամբ: Այդպիսի հնարավոր դաշնակից կարող էին լինել Ռուսաստանը կամ Վրաստանը:

Վերադառնալով Անգլիա՝ Էմինը ներկայանում է Անգլիայում ռուսական դեսպան Գոլիցինին: Նրանից վերցնելով Ռուսաստանի վարչապետ Վորոնցովին ուղղված հանձնարարական նամակ՝ 1761թ. ճանապարհվում է Պետերբուրգ: Վորոնցովին Էմինը ներկայացնում է Հայաստանի ազատագրության իր ծրագիրը, ցանկություն հայտնում լինելու Վրաստանում: Նա մտադիր էր հայրենիքի ազատագրության համար վրաց Հերակլ II թագավորի հետ դաշնակցած պայքարել թուրքական տիրապետության դեմ:

Վորոնցովն ընդառաջում է Էմինի խնդրանքին և Հերակլ II թագավորին ուղղված նամակով նրան ճանապարհում է Վրաստան: Մոսկվայում Հովսեփ Էմինին է միանում Մովսես Բաղրամյանը, իսկ Աստրախանում հավաքագրվում է կամավորների ջոկատ, որն ուղեկցում է Էմինին:

Վրաց թագավորը համաձայնեց օժանդակել Էմինի ծրագրերին և նրան հանձնարարեց՝ վրաց զորքերին վարժեցնել եվրոպական ռազմական արվեստով:

Հայաստանում ազատագրական շարժումը կազմակերպելու համար Էմինը կապեր հաստատեց Մշո Սբ Կարապետ վանքի վանահայր Հովնանի հետ:

1764թ. Հ. Էմինը և Հերակլը խրախուսական նամակներ են ուղարկում Հովնանին, սակայն Երևանում խանի մարդկանց կողմից նամակատարը ձերբակալվում է: Տեղեկանալով այդ մասին՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը նամակով կշտամբում է Հերակլ II–ին անզգույշ քայլերի համար: Զգուշանալով հետագա անախորժություններից՝ Հերակլը Հովսեփ Էմինից պահանջեց հեռանալ Վրաստանից:

Սիմեոն Ա Երևանցի (1710-1780)

Հ. Էմինն անցավ Հյուսիսային Կովկաս, որտեղ մնաց ավելի քան մեկ տարի: Այնուհետև Էմինը վերադառնում է Հայաստան և հանգրվանում Գետաշենում գտնվող Գյուլիստանի մելիք Հովսեփի մոտ: Էմինը Գետաշենում մասնակցում է Գանձակի խանի անակնկալ արշավանքի դեմ մելիք Հովսեփի մղած ճակատամարտին: Հայկական զորքերը ջախջախիչ պարտության են մատնում խանի բանակին, հետապնդում մինչև Գանձակի դարպասները և պաշարում քաղաքը: Հերակլ II–ի միջնորդությամբ հայկական զորքը դադարեցնում է պաշարումը, իսկ մելիք Հովսեփը տեղափոխվում է Գյուլիստան: Մելիք Հովսեփի հետ Գյուլիստան է գնում նաև Հ. Էմինը:

Շամախիում Էմինը, լսելով, որ Խոյի ու Սալմաստի քրիստոնյաները պատրաստ են իրեն տրամադրել 18 հազար զինվոր, ճանապարհվում է Խոյ: Այնտեղ, սակայն, հրաժարվում են զորք տրամադրելուց, որովհետև Էմինը զորքի վարձատրման համար գումար չուներ:

Անհաջողություններն զգալի չափով հուսահատեցնում են Հ. Էմինին: 1770թ. նա վերջնականապես վերադառնում է Հնդկաստան:

Մադրասի հայրենասիրական խմբակը: Հայաստանի ազատագրությունը նախապատրաստելու համար Շահամիր Շահամիրյանի գլխավորությամբ Մադրասում ստեղծված խմբակի անդամները 18-րդ դարի 70–80-ական թթ. կատարել են դիվանագիտական ու կազմակերպչական մեծ աշխատանք:

Հովսեփ Էմինը, Հնդկաստան վերադառնալով, շարունակեց ազատագրական–հայրենասիրական քարոզչությունը, որը ոգեշնչում էր նաև Մադրասի հայերին: Այդ նպատակով նա գրել և հրատարակել է իր կյանքի պատմությունը՝ «Հովսեփ Էմինի կյանքը և արկածները» վերնագրով: Հնդկահայերը որո-

շում են Էմինի տրամադրության տակ դնել 12 հազար ռուփի՝ բանակ ստեղծելու համար: Գրիգոր Խոջաջանյանը հայտնում է, թե ինքը այդ ծրագրի համար պատրաստ է անգամ կտակել իր ունեցվածքի մեկ երրորդը, եթե այդ ծրագրին համաձայնություն տա նաև Սիմեոն կաթողիկոսը:

Շահամիր Շահամիրյան (1723–1799)

Հայաստանի ազատագրությունը, ըստ Շ. Շահամիրյանի, պետք է կատարվեր օտարի լծի դեմ համաժողովրդական ապստամբության միջոցով: Այն պետք է գլխավորեին Արցախի մելիքներն ու Էջմիածնի հոգևորականները: Հայ ժողովուրդը կարող էր օժանդակություն ստանալ Վրաստանից և Ռուսաստանից:

Հերակլ II թագավորին Շահամիր Շահամիրյանը առաջարկում էր Վրաստանում կատարել բարեփոխումներ, որոնք կհզորացնեին երկիրը, որպեսզի օգնության հասնեին հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Վրաց թագավորին օգնելու նպատակով Շ. Շահամիրյանը մեծ գումարի թանկարժեք նվերներ էր ուղարկում նրան և անգամ պատրաստակամություն հայտնում տեղափոխվելու Վրաստան:

Վրաց թագավորն իր հերթին Լոռու գավառը նվիրաբերում է Շ. Շահամիրյանին և նրան շնորհում նաև իշխանի տիտղոս: 1790թ. Հերակլ II-ը Շ. Շահամիրյանի առաջարկությամբ հատուկ ուղերձ է հղում Պարսկաստան քշված հայ ժողովրդին՝ հրավիրելով բնակություն հաստատելու վրաց թագավորության կազմում գտնվող հայկական գավառներում:

Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները: Հովսեփ Էմինի ու Մովսես Բաղրամյանի վերադարձը Հնդկաստան կարևոր նշանակություն ունեցավ գաղթօջախի կյանքում: Նրանք համոզեցին հնդկահայ ուրիշ գործիչների ևս, որ առանց ժողովրդի լայն աջակցության Հայաստանի ազատագրման գործում հնարավոր չէ հասնել հաջողության: Հետևաբար՝ անհրաժեշտ է միավորել հայ երիտասարդությանը, նրանց դաստիարակել հայրենասիրության ու ազգային արժանապատվության ոգով:

«Նոր տետրակ, որ կոչի հորդորակ»-ի տիտղոսաթերթը

Հայ ժողովրդի մեջ ազատագրական գաղափարների տարածման, երիտասարդությանը հայրենի երկրի պատմությանն ու մշակույթին ծանոթացնելու համար անհրաժեշտ էր գրականություն ունենալ: Նման գրքեր տպագրելու համար հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը 1771թ. Մադրաս քաղաքում հիմնում է հայկական տպարան: 1772թ. այդ տպարանում լույս է ընծայվում Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» գիրքը:

Գրքում ներկայացվում է հայ ժողովրդի հերոսական անցյալը, դրան հակադրվում է առկա վիճակը, երբ երկիրը կողոպտվում է օտարների կողմից: Գիրքը կոչ է անում հայ երիտասարդներին՝ դուրս գալ օտար բռնակալների դեմ և զենքի ուժով հասնել ազատության: «Նոր տետրակի» մեջ քննադատվում է միապետական կարգը՝ այն համարելով հայոց պետականության անկման պատճառներից մեկը: Մեկ մարդը ի վիճակի չէ անսխալ կառավարել, իսկ թագավորի սխալը դժբախտություն է երկրի համար: Ուստի առաջարկվում է ստեղծել սահմանադրություն և երկիրը կառավարել ժողովրդի ընտրովի ներկայացուցիչների միջոցով:

«Որոգայթ փառաց»-ի տիտղոսաթերթը

Ստանալով «Նոր տետրակը» և զգուշանալով հայ երիտասարդների անժամանակ ապստամբելու վտանգից՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը կարգադրում է հավաքել և այրել այդ գիրքը, փակել տպարանը և հեռացնել Մովսես Բաղրամյանին: Նրա սպառնալիքները, սակայն, չկասեցրին գրքի տարածումը: 1786թ. «Նոր տետրակը» թարգմանվում է ռուսերեն և լույս տեսնում Պետերբուրգում երկու հազար տպաքանակով, այնուհետև թարգմանվում նաև վրացերեն:

Շարունակելով «Նոր տետրակի» գաղափարները՝ Մադրասի խմբի անդամները կազմում և հրատարակում են «Որոգայթ փառաց» գիրքը: Այն ապագա հայկական պետության կառավարման համար նախատեսված օրենքների հավաքածու էր, որը պետք է կիրառվեր երկիրը օտար լծից ազատագրելուց հետո:

Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ «Հայոց տունը», պետք է կազմվեր ժողովրդի ընտրած փոխանորդներից (պատգամավորներից): Հայաստանում պետք է իշխեր օրենքը: «Հայոց տունը» պարտավոր էր ստեղծել գործադիր իշխանություն (կառավարություն): Այդ նպատակով փոխանորդներից պետք է ընտրվեին տասներեք հոգի, որոնցից մեկը վիճակահանությամբ կարող էր դառնալ նախարար (նախագահ), իսկ մյուսները՝ նախարարի խորհրդակիցներ: «Որոգայթ փառաց» գիրքը սահմանադրական հանրապետություն ստեղծելու ծրագիր էր և հայ քաղաքական մտքի կարևոր նվաճումներից մեկը:

Հայաստանի ազատագրության «Հյուսիսային ծրագիրը»: Հայրենիքի ազատագրմամբ մտահոգ աշխարհասփյուռ գաղութների մեջ առանձնանում էին մասնավորապես ռուսահայ կենտրոնները: Դա պայմանավորված էր նրանով, որ դեպի հարավ տարածվելու Ռուսաստանի ձգտումները և Հայաստանը ազատագրելու հայոց շարժումներն ու ծրագրերը համահունչ էին:

18–րդ դարի 80–ական թթ. հատկապես աշխուժացան հայ պետականության վերականգնման դիվանագիտական բանակցություններն ու ազատա-

գրական ծրագրի մշակումը: Դրանք մեծապես խթանեց 1783թ. Ռուսաստանի և Վրաստանի միջև Գեորգիևյան (Գեորգևսկ ամրոցում կնքված) դաշնագիրը, որով Ռուսաստանն իր հովանավորության տակ էր առնում և զորք տրամադրում Վրաստանին: Այդ դաշնագիրը մեծ արձագանք գտավ հայկական շրջաններում: Դրա հետ մեծ հույսեր էին կապում ինչպես Հովսեփ Արղությանը Ռուսաստանում, այնպես էլ Շահամիր Շահամիրյանը Հնդկաստանում:

Հովսեփ Արղության (1743–1801)

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Հովսեփ Արղությանը և Հովհաննես Լազարյանը 1780–ական թվականների սկզբին բանակցություններ էին վարում ռուսական պետական գործիչների հետ՝ արշավանք կազմակերպելու և Հայաստանը ազատագրելու մասին:

Հովհաննես Լազարյան (1735–1801)

Նրանք կազմում են նաև Հայաստանի ազատագրման և հայ–ռուսական դաշնագրի մի նախագիծ: Այն բաղկացած էր 18 հոդվածից: Առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել հավիտենական դաշինք: Դրա համաձայն՝ Հայաստանում լինելու էր չափավոր քանակի ռուսական զորք՝ երկիրը հնարավոր հարձակումներից պաշտպանելու համար: Հայաստանը պետք է հանքերից և եկամուտներից հարկ վճարեր Ռուսաստանին, իսկ պատերազմի ժամանակ ցուցաբերեր ռազմական օգնություն: Հայոց թագավորի ընտրությունը կատարելու էր ռուսաց կայսրը: Թագավորն այնուհետև պետք է օծվեր Էջմիածնում: Առաջարկվում էր Հայաստանի մայրաքաղաք դարձնել Վաղարշապատը կամ Անին: Սահմանվում էին Հայաստանի դրոշը, զինանշանը, շքանշանները և այլն: Նախկին հողատերերին վերադարձնելու էին իրենց կալվածքները, սակայն առանց գյուղացիներին ճորտացնելու իրավունքի: Առաջարկվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքել առևտրական պայմանագիր և Կասպից ծովի ափին Հայաստանին տրամադրել նավահանգիստ:

Հայաստանի ազատագրության «Հարավային (Շահամիր Շահամիրյանի) ծրագիրը»: Ռուսաստանի հովանու տակ հայկական պետականությունը վերականգնելու 20 հոդվածից բաղկացած նախագիծ կազմել էր Շահամիր Շահամիրյանը: Այս նախագծով Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ պառլամենտական կառուցվածքով: Կառավարությունը պետք է գլխավորեր ազգությամբ հայ նախարարը: Հայաստանում 20 տարի ժամկետով պետք է մնար 6–հազարանոց ռուսական զորք: Հայաստանը տարեկան հարկ պիտի վճարեր Ռուսաստանին և անհրաժեշտության դեպքում տրամադրեր նաև զորք: Առաջարկվում էր երկու

երկրների միջև սահմանել ազատ երթևեկություն: Հայաստանի կառավարությունը Պետերբուրգում պետք է ունենար իր դեսպանը:

Հովսեփ Արղությանի ծրագրի օրինակով Շ. Շահամիրյանի նախագիծը ևս ներկայացվել է ռուսական կառավարությանը, սակայն իշխանությունների կողմից դրանք բավարար ուշադրության չեն արժանացել ու չեն քննարկվել:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Հովսեփ Էմինը: Ի՞նչ գործոններ են ազդել նրա հայացքների վրա: Ինչո՞ւ Էմինը հրաժարվեց բարեկեցիկ կյանքի հեռանկարից և նվիրվեց Հայաստանի ազատագրության գործին: Էմինի փոխարեն դուք ինչպե՞ս կվարվեիք:
2. Ինչո՞ւ Էմինը կողմնորոշվեց դեպի Ռուսաստան:
3. Ձեր կարծիքով՝ ճի՞շտ էր արդյոք Էմինի վերադարձը Հնդկաստան:
4. Ե՞րբ է կնքվել Գեորգիևյան դաշնագիրը և ի՞նչ արձագանք է գտել հայ գործիչների շրջանում:
5. Ե՞րբ և ո՞ւմ գլխավորությամբ է ստեղծվել Մադրասի խմբակը: Ի՞նչ նպատակ էր հետապնդում: Վերլուծե՛ք Մադրասի խմբակի ծրագիրը և հայտնե՛ք ձեր տեսակետը այդ մասին:
6. Ե՞րբ է հիմնադրվել Մադրասի տպարանը, ի՞նչ գրքեր են տպագրվել այնտեղ: Որո՞նք են «Նոր տետրակ» և «Որոգայթ փառաց» գրքերի հիմնական գաղափարները: Դուք ընդունո՞ւմ եք այդ գաղափարները:
7. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էին հնդկահայ գործիչները պաշտպանում հանրապետական, իսկ ռուսահայ գործիչները՝ միապետական (թագավորական) կարգերը:
8. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *գաղութահայ կենտրոն*, *Հայաստանի ազատագրության «Հարավային ծրագիր»*, *Հայաստանի ազատագրության «Հյուսիսային ծրագիր»*, *Հայոց տուն*, *սահմանադրական հանրապետություն* տերմինները և հասկացությունները:
9. Տեքստից դո՛ւրս գրեք տարեթվերը և կազմե՛ք ժամանակագրական աղյուսակ:
10. Լրացրե՛ք «Հայաստանի ազատագրության գաղութահայ կենտրոնների ծրագրերը» աղյուսակը:

Գաղութահայ կենտրոնները	Հեղինակ(ներ)ը	Նմանությունը	Տարբերությունը
Ռուսահայ կենտրոն			
Հնդկահայ կենտրոն			

ԹԵՍՏԵՐ

Ո՞վ է միանում Հ. Էմինին Մոսկվայում.

1. Գոլիցինը, 3. Հերակլ II-ը,
2. Հովնանը, 4. Մ. Բաղրամյանը:

Ո՞վ է «Որոգայթ փառաց» գրքի հեղինակը.

1. Մովսես Բաղրամյանը, 3. Շահամիր Շահամիրյանը,
2. Հովսեփ Էմինը, 4. Սիմեոն Երևանցին:

Հատված Հովսեփ Էմինին ուղղված Մշո Սբ Կարապետ վանքի վանահայր Հովնանի նամակից

«Անցնող տասնմեկ ամիսներին գրելով էի զբաղված,– հայտնում է Հովնանը:– Ինձ շատ դյուրին եղավ՝ ձեզնով շահագրգռել ու ձեր հերոսական մտածողությամբ համակել Պոլսի, Զմյուռնիայի, Կեսարիայի, Թոխաթի, Էրզրումի, Դիարբեքիրի, Վանի և այլ վայրերի անվանի հայերին»:

ԹԵՄԱ 1-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 17-րդ դարի 2-րդ կեսը նշանավորվում է ազգային ազատագրական պայքարի վերելքով: Դրան նպաստում են հայոց ինքնագիտակցության մեջ արթնացած պետականության վերականգնման զգացումը, Հայաստանում պահպանված մի շարք իշխանություններ և առևտրական բուրժուազիայի հանդես գալը:
2. 1677թ. Էջմիածնի գաղտնի ժողովն օգնության խնդրանքով Եվրոպա ուղարկեց հատուկ պատվիրակություն, որի կազմում էր երիտասարդ Իսրայել Օրին: Երկարատև դեգերումներից հետո, համոզվելով, որ Եվրոպան շահագրգռված չէ աջակցելու Հայաստանին, Ի. Օրին դիմեց Ռուսաստանին: Նրա ներկայացրած ծրագիրը հետաքրքրեց ռուսաց Պետրոս I թագավորին, որը, հետապնդելով իր քաղաքական շահերը, խոստացավ աջակցել Հայաստանի ազատագրությանը:
3. Հյուսիսային պատերազմի հաղթական ավարտից հետո Պետրոս I-ը արշավեց Անդրկովկաս՝ նպատակ ունենալով հաստատվել երկրամասում: Սակայն անբարենպաստ քաղաքական պայմանների հետևանքով ռուսական ջոկատները հետ են դառնում: Օգտվելով դրանից՝ թուրքերը ներխուժում են Արևելյան Հայաստան, գրավում են Երևանը և շարժվում դեպի Արցախ ու Սյունիք:
4. Արցախահայությունը համախմբվեց և համառ պայքար ծավալեց ազատագրության համար: Արցախում կազմակերպվեցին պաշտպանական ամրոց-սղնախներ: Թուրքական զորքերի՝ Արցախ ձեռնարկած մի շարք արշավանքներ ավարտվում են պարտությամբ:

5. Սյունիքի հայության ազատագրական պայքարը ղեկավարում են Դավիթ-Բեկը, Մխիթար Սպարապետը և Տեր-Ավետիսը: Այն պսակվում է հաջողությամբ: Պարսկաստանը ճանաչում է Սյունիքի հայկական իշխանությունը: 1726թ. Սյունիք են ներխուժում թուրքական բանակները: Մեծ դժվարությամբ թուրքական գերակշիռ ուժերին հաջողվում է ժամանակավորապես տիրել Սյունիքին:
6. 1720–1730-ական թվականներին Արևելյան Հայաստանում հաստատվեց Նադիր շահի իշխանությունը: Հասկանալով, որ արտաքին և ներքին թշնամիների դեմ պայքարում կարելի է հենվել հայերի վրա, Նադիր շահը լայն իրավունքներ է տալիս Արցախի, մասամբ Սյունիքի հայ մելիքներին: Արցախում առաջանում են Խամսայի մելիքությունները: Իրադրությունը Արցախում կտրուկ փոխվում է Նադիր շահի սպանությունից հետո: Օգտագործելով մելիքների հակամարտությունը՝ ջևանշիրների ցեղի առաջնորդ Փանահը և նրա որդի Իբրահիմը կարողանում են հիմնվել Արցախում և հաստատել իրենց տիրապետությունը (18-րդ դարի 60–90-ական թվականներ):
7. Հնդկահայ գործիչ Հ. Էմինը Հայաստանի ազատագրումը հնարավոր էր համարում հայ-վրացական զինակցությամբ և Ռուսաստանի օգնությամբ: Իր ծրագիրը իրագործելու նպատակով Հ. Էմինը 1760-ական թվականներին հարաբերություն է հաստատում ռուսական և վրացական արքունիքների հետ: Չցանկանալով գժտվել Թուրքիայի հետ՝ վրաց թագավոր Հերակլ II-ը հրաժարվում է Հ. Էմինին աջակցելուց և պահանջում է հեռանալ Վրաստանից: Էմինը 1770թ. վերադառնում է Հնդկաստան:
8. Հայաստանի ազատագրման համար 1770–1780-ական թթ. մեծ աշխատանք էր կատարում Շ. Շահամիրյանի խմբակը: Խմբակը հրատարակեց «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերը:
9. 18-րդ դարի 2-րդ կեսին Հայաստանի ազատագրման համար լայն գործունեություն ծավալեցին ռուսահայ կենտրոնները: Հ. Արղությանը ցարական կառավարությանն է ներկայացնում Հայաստանի ազատագրության իր նախագիծը:

2 ԹԵՄԱ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1. ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ ժողովուրդը ոտք դրեց XIX դար՝ զրկված լինելով ազատ ու անկախ ապրելու հնարավորությունից: Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանի հիմնական մասն ընդգրկված էր Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանությունների մեջ, իսկ հյուսիսային որոշ շրջաններ գտնվում էին վրացական թագավորության կազմում: Երևանի խանությունը, որպես խոշոր և սահմանային վարչական միավոր, անվանվում էր նաև սարդարություն (կուսակալություն), իսկ նրա խանը՝ սարդար: Խանությունը բաժանված էր 15 շրջանների՝ Ջանգիբասարի, Սուրմալուի, Սարդարապատի, Թալինի, Ապարանի և այլն: Խանության գլուխ կանգնած էր շահի նշանակած խանը: Շրջանները կամ մահալները կառավարում էին խանի նշանակած միրբոլուքները, իսկ գյուղերը՝ գյուղապետները: Քաղաքների կառավարիչները կոչվում էին քալանթարներ:

Պարսկաստանն ավատատիրական հետամնաց երկիր էր: Կամայականություններն ու բռնությունները այդ պետության ուղեկիցներն էին: Ինչպես շահն ամբողջ երկրում, այնպես էլ խաներն իրենց վարչական տարածքներում միահեծան իշխողներ էին: Տնտեսությունը և նրա հիմնական ճյուղը՝ գյուղատնտեսությունը, խիստ ցածր մակարդակի վրա էին:

Արորավար

Ծանր էր գյուղացիության դրությունը, որից գանձում էին բազում հարկեր: Նրանք հարկ էին վճարում հողից, ջրից, արոտավայրերից օգտվելու համար: 15 տարեկանից բարձր յուրաքանչյուր տղամարդ տալիս էր գլխահարկ, ամեն մի ընտանիք՝ ծխահարկ: Բազմաթիվ հարկեր էին վճարում նաև արհեստավորներն ու առևտրականները: «Երևանի խանության գյուղացիները,- գրում է Խաչատուր Աբովյանը,- կոռ ու բեկարի տակ չորացել, չոփ էին դարձել»:

Ուրիշ ժողովուրդների նման հայ ժողովուրդը զուրկ էր կյանքի և գույքի ապահովությունից, երկրի քաղաքացու տարրական իրավունքներից: Նա համարվում էր ռայա, այսինքն՝ իրավազուրկ շերտ: Տնտեսական հարստահարությունից բացի՝ ենթարկվում էր նաև ազգային, կրոնական հալածանք-

ների: Նրա վկայությունը չէր անցնում դատարանում, իրավունք չուներ զենք կրելու, մահմեդականի առաջ պարտավոր էր գլուխ խոնարհել և այլն: Իր ազգային ծագման ու դավանանքի համար նա վճարում էր հատուկ հարկեր, որոնցից գլխավորը կոչվում էր խարաջ:

Հայ գյուղացիներ

Հայ ժողովուրդը կրում էր բարոյահոգեբանական ծանր հարվածներ, վիրավորում էին նրա ազգային արժանապատվությունն ու նվիրական զգացումները:

Այդ ամենը պայմաններ էր ստեղծում և խթանում պարսկական ծանր լուծը թոթափելու ձգտումը:

Քաղաքական իրավիճակը և ռուս-պարսկական 1804–1813թթ. պատերազմը: Բարդ իրադրություն էր ստեղծվել Անդրկովկասում XIX դարի սկզբներին: Երկրամասի ժողովուրդները ձգտում էին թոթափել օտարերկրյա տիրապետությունը: Ռուսաստանը ջանում էր կայսրությանը միացնել Անդրկովկասը: Նա, հանձինս վրացիների և հայերի, իր քաղաքականությունը իրականացնելու համակիրների էր տեսնում:

Խաղաղ միջոցներով 1801թ. Վրաստանը միացվեց Ռուսաստանին: Վրաստանի հետ Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև հայկական մի շարք շրջաններ՝ Լոռի-Փամբակը, Ղազախը, Շամշադինը:

Դեպի հարավ ծավալվելու և Անդրկովկասում ամրանալու Ռուսաստանի ձգտումը բուռն ընդվզում առաջ բերեց երկու հակամարտ պետությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից: Նրանք ջանում էին Պարսկաստանին և Թուրքիային հրահրել Ռուսաստանի դեմ և կանխել նրա առաջխաղացումը: Ֆրանսիան և Անգլիան համերաշխ էին Ռուսաստանին Անդրկովկասից վտարելու մտադրության մեջ: Գլխավորապես նրանց վարած քաղաքականության հետևանքով 1804թ. սկսվեց ռուս-պարսկական առաջին պատերազմը:

Ռազմական գործողություններն ընթանում էին հօգուտ Ռուսաստանի: 1805–1806թթ. ռուսական զորքը գրավում է Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի խանությունները: Հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը՝ ռուսները երկրորդ անգամ պաշարում են Երևանի բերդը: Մի քանի անհաջող գրոհներից հետո ռուսական զորքի հրամանատար Գուդովիչը դադարեցնում է պաշարումը և վերադառնում Վրաստան:

1812թ. Հայրենական պատերազմում Ռուսաստանի հաղթանակը նպաստեց ռուս-պարսկական պատերազմի հաջող ավարտին: Ռուսներն Ասլանդուզի, Լենքորանի և Մեղրու ճակատամարտերում վճռական հաղթանակներ տարան:

1813թ. հոկտեմբերի 12-ին Ղարաբաղի Գյուլիստան գյուղում կնքվեց հաշտության պայմանագիր: Այդ պայմանագրի համաձայն՝ Շիրակը, Լոռին, Ղա-

զախը, Շամշադինը, Զանգեզուրը, Ղափանը և Ղարաբաղը անցան Ռուսաստանի տիրապետության տակ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ վարչական միավորների էր բաժանված Արևելյան Հայաստանը, և ո՞ւմ կողմից էին դրանք կառավարվում:
2. Նշե՛ք այն հարկերը, որոնք գանձում էին հայ բնակչությունից պարսկական կառավարողները:
3. Ինչպե՞ս կարող եք հիմնավորել, որ հայ ժողովուրդը ենթարկվում էր ազգային, կրոնական հալածանքների:
4. Փորձե՛ք թվարկել 1804–1813թթ. ռուս-պարսկական պատերազմի հիմնական իրադարձությունները:
5. Ե՞րբ կնքվեց Գյուլիստանի պայմանագիրը և ի՞նչ նշանակություն ունեցավ:
6. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *սարդար, քալանթար, միրբոլուք, սարդարություն, մահալ, ռայա* տերմինները և հասկացությունները:
7. Լրացրե՛ք «Վարչատնտեսական իրավիճակն Արևելյան Հայաստանում XIX դարի սկզբին» աղյուսակը:

Վարչական բաժանումը	Տնտեսությունը, հարկերը	Ազգային և կրոնական հալածանքները	Կարևոր իրադարձությունները

ԹԵՍՏ

Ինչպե՞ս էր կոչվում 15 տարեկանից բարձր յուրաքանչյուր տղամարդուց գանձվող հարկը.

1. գլխահարկ,
2. խարաջ,
3. ծխահարկ,
4. հողահարկ:

2. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ 1826–1828 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Պատերազմի ընթացքը: Պարսկաստանը չէր հաշտվում Անդրկովկասի իր տարածքները Ռուսաստանին անցնելու իրողության հետ: Պարսկական 60-հազարանոց բանակը թագաժառանգ Աբբաս-Միրզայի գլխավորությամբ 1826թ. հուլիսին, խախտելով Գյուլիստանի պայմանագիրը, ներխուժեց Ռուսաստանի սահմանները: Սկսվեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Պարսկական բանակի անսպասելի հարձակումը դժվարին դրություն է ստեղծում ռուսական փոքրաքանակ զորամասերի և սահմանամերձ բնակչության համար:

Պարսկական զորքը պաշարում է Ղարաբաղի Շուշիի բերդը: Բերդի կայազորը և այնտեղ ապաստանած շրջակա գյուղերի բնակիչները դիմում են ինքնապաշտպանության: Պարսկական զորքը մի քանի անգամ գրոհում է, բայց հաջողության չի հասնում: Բերդի կայազորը և նրա հետ հայերը տոկունությամբ դիմադրում էին: Պաշտպանական մարտերի մասնակից Լազարյանը, նշելով, որ հայերը հացահատիկի իրենց ամբողջ պաշարը նվիրաբերեցին պաշտպաններին, ավելացնում է. «Հիշում եմ նույնպես, թե ինչպես մեր հայերը գիշերներն իրենց ուսերի վրա տանում էին հացահատիկի ծանր պարկերը Շուշի գյուղի ջրաղացները, ուր յուզբաշի եղբայրներ Սաֆար և Ռոստոմ Թարխանյանները արագ աղում էին հացահատիկը և էլի հետ էին ուղարկում բերդ: Առանց այդ օգնության կայազորը երբեք չէր կարող տանել վեցշաբաթյա պաշարումը»: Շուշիի պաշտպանությունը նկատելիորեն ձախողեց թշնամու՝ Թիֆլիսի վրա հարձակվելու ռազմական ծրագրերը:

Շուշիի Կանաչ ժամը (1847թ.)

Հայ կամավորական գումարտակներից մեկի զինադրոշը (1827թ.)

Հայաստանի տարբեր շրջաններում ձևավորվել էին կամավորական ջոկատներ, որոնք արիաբար մարտնչում էին հակառակորդի դեմ: Լոռի-Փամբակում քաջաբար կռվում էր Մարտիրոս Վեքիլյանը, իսկ Ղազախ-Շամշադինում, Դիլիջանում սրընթաց գրոհներ էր կատարում վարդապետ Գրիգոր Մանուչարյանի ջոկատը, որը գերությունից ազատեց հարյուրավոր ընտանիքների: Հայազգի նշանավոր գեներալ Մադաթովի 2000-անոց զորաջոկատը սեպտեմբերի 3-ին Շամխորի մոտ ծանր պարտության մատնեց Աբբաս-Միրզայի 10-հազարանոց զորամասին: Շուտով ռուսական զորքերը հաղթանակ տարան Գանձակի ճակատամարտում և ազատագրեցին ամբողջ Ղարաբաղը:

Այսպիսով՝ պատերազմի սկզբում՝ 1826թ. ամռանը պարսիկների ունեցած հաջողությունները կարճատև եղան: Նույն տարվա աշնանը ռուսական զորքերը պաշտպանությունից անցան հարձակման և թշնամուն դուրս քշեցին ռուսական սահմաններից: Դրանով ավարտվեց պատերազմի առաջին փուլը:

Ռազմական գործողությունները 1827 թվին: Երևանի գրավումը: 1827թ. գարնանը գեներալ Պասկևիչի գլխավորությամբ վերսկսվեցին պատերազմական գործողությունները: Ռուսական զորամասերին հաջողվեց առանց դիմադրության գրավել Էջմիածինը, Նախիջևանը: Արաքսի ափին գտնվող Աբա-

սաբաղ բերդի պաշտպանության կատաղի մարտերում պարսիկները ջախ-ջախիչ պարտություն կրեցին: Երբ գեներալ Կրասովսկին իր զինվորներին ամռան շոգից պատսպարելու համար հանգիստ էր տվել Արագածի լանջերին, Աբբաս-Միրզան 30-հազարանոց զորքով հանկարծակի հարձակվեց Էջմիածնի վրա: Օգոստոսի 17-ին Օշական գյուղի մոտ տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ Կրասովսկու փոքրիկ զորամասի և թվով տասն անգամ գերազանցող պարսկական զորքի միջև:



Օշականի ճակատամարտի պատվին 1834թ. կանգնեցված հուշարձանը

Ռուս զինվորները և նրանց շարքերում մարտնչող հայ կամավորականները բացառիկ խիզախության և ծանր կորուստների գնով կարողացան փրկել Էջմիածինը թշնամու ձեռքն ընկնելուց և ավերվելուց: Ճակատամարտում զոհված զինվորների հիշատակը հավերժացնելու համար Օշականից Էջմիածին տանող ճանապարհին հուշարձան կառուցվեց, որը կանգուն է մինչև օրս:

Ռուսներին հաջողվեց առանց կորուստների գրավել պարսկական ամրություններից Սարդարապատը և պաշարել Երևանը: Երևանի բերդը կառուցված էր քաղաքի հարավային ծայրամասում՝ Հրազդան գետի բարձր ու ժայռոտ ափին: Այն երեք կողմից շրջափակված էր երկշարք պարիսպներով: Բերդի շուրջը փորված էին մեծ փոսեր, որոնք լցված էին ջրով: Հասան խանը այս անգամ ևս հրաժարվեց հանձնել բերդը: Պասկևիչը հրամայեց գրոհով վերցնել այն: Ռուսական հրանոթները օրուգիշեր ռմբակոծում էին բերդը: «Հինգ օր, հինգ գիշեր, սար ու ձոր դմբում, դմբդմբում էր: Էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել»,– գրում է այդ դեպքերի ժամանակակից Խ. Աբովյանը:

«Երևանի բերդի գրավումը» հուշամեդալը

Ի. Ֆ. Պասկևիչ (1782–1856)

1827թ. հոկտեմբերի 1-ին ռուսական զորքը մտավ բերդ: Ընկավ պարսկական ամենաամուր ու վերջին հենակետը Հայաստանում: Գերի վերցվեցին բերդի երեքհազարանոց կայազորը և Հասան խանը: Գրավվեցին 100 թնդանոթ և մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

Երևանի գրավումը ոչ միայն ռազմական, այլև քաղաքական խոշոր նշանակության իրադարձություն էր: Դրա հետ էր կապում հայ ժողովուրդը իր լավ ապագայի հույսերը: Երևանի գրավումը ուրախությամբ ընդունեց ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի հայությունը: Հայ նշանավոր գրողներ Հ. Ալամդարյանը Թիֆլիսից, Մ. Թաղիադյանը Հնդկաստանից, Նոր Նախիջևանի (Դոնի Ռոստով) հայությունը Ռուսաստանից «հայրենիքի փրկության առթիվ» շնորհավորական ջերմ ուղերձներ առաքեցին Հայաստան:

Ներսես Աշտարակեցի (1770–1857)
Գործ՝ Հակոբ Հովնաթանյանի

Պատերազմում մեծ էր ժամանակի նշանավոր գործիչ, վրացահայության հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցու դերը, որը սրտառուչ կոչերով ոգեշնչում էր հայրենակիցներին: **«Հասավ ժամը,**– գրում էր նա,– **երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատագրությունը... Ոտքի՛ կանգնեք, հայո՛ց քաջեր, թոթափեցե՛ք պարսից լուծը, ուրախացրե՛ք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցե՛ք հայրենի հողը և ապա ապրեցե՛ք ազատ»:**

Պատերազմին ակտիվ մասնակցություն ունեցան հայ կամավորականները և դեկաբրիստները: 1827թ. գարնանը Ն. Աշտարակեցու և Հ. Ալամդարյանի գլխավորությամբ Թիֆլիսում կազմակերպեցին կամավորական ջոկատներ, որոնք ռուսական զորամասերի հետ մասնակցեցին ռազմական գործողություններին: Պատերազմին գործուն մասնակցություն ունեցան հակաիշխանական դիրքորոշում դրսևորած զինվորականները՝ Կովկաս աքսորված դեկաբրիստները: Նրանցից 70 սպաներ և 300 շարքայիններ մասնակցեցին ռազմական գործողություններին: Աչքի ընկնող դեկաբրիստներից էին Ե. Լաչինովը, Մ. Պուշչինը, Ի. Բուրդովը և շատ ուրիշներ: Դեկաբրիստ սպաների ռազմական խոր գիտելիքները, շարքայինների փորձն ու մարտունակությունն էական նշանակություն ունեցան հաղթանակի գործում:

Ն. Օրժիցկի



Մ. Պուշչին (1800–1869)

Թուքմենչայի պայմանագիրը: Երևանը գրավելուց հետո սպասվում էր, որ պարսիկները հաշտություն կխնդրեն, բայց դա տեղի չունեցավ: Ռուսական զորքերը շարունակեցին հարձակումը և հետապնդելով բարոյալքված թշնամուն՝ գրավեցին Թավրիզը,

Խոյի, Սալմաստի գավառները, մի շարք քաղաքներ: Պարսիկները հաշտություն խնդրեցին, որն ընդունվեց ռուսական կառավարության կողմից: Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղում 1828 թվի փետրվարի 10-ին կնքվեց հաշտության պայմանագիր: Դրանով ավարտվեց ռուս-պարսկական պատերազմը:

Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, Օրդուբադի գավառը, անցան Ռուսաստանի տիրապետության տակ: Երկու երկրների ռազմագերիներին թույլատրվեց վերադառնալ հայրենիք: Պարսկաստանը պարտավորվում էր վճարել 40 միլիոն ռուբլի ռազմատուգանք: Երկու երկրների միջև վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները: Ազատ առևտրի իրավունք տրվեց երկու երկրների հպատակներին և այլն:

Թուրքմենչայի պայմանագրի կնքումը
Գործ՝ Վ. Մաշկովի

Պայմանագրում իրավունք տրվեց Պարսկաստանի տիրապետության տակ մնացած հայերին գաղթել ու բնակություն հաստատել Հայաստանում: Տեղական իշխանությունները աշխատում էին արգելել նախատեսվող վերաբնակեցումը, որովհետև զրկվում էին աշխատավոր հմուտ ձեռքերից: Չնայած խոչընդոտներին՝ վերաբնակվել ցանկացողների թիվը շատ մեծ էր, և այն լայն ծավալ ստացավ: Վերաբնակեցումը կազմակերպվեց 1828թ. գարնանը: Մի քանի ամսվա ընթացքում Թավրիզի, Մակուի, Սալմաստի, Խոյի և այլ շրջաններից շուրջ 40 հազար հայեր գաղթեցին Արևելյան Հայաստան: Նրանք բնակություն հաստատեցին Երևանի, Նախիջևանի գավառներում, Զանգեզուրում, Ղարաբաղում և այլ վայրերում:

Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով՝ Արևելյան Հայաստանի ժողովուրդը ազատվեց ձուլման և ֆիզիկական բնաջնջման վտանգից: Նրա ճակատագիրը կապվեց կենտրոնացված հզոր պետության հետ, ուր ստացավ կյանքի և գոյքի ապահովություն: Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի ազգահավաքման և գոյատևման հաստատուն ու ապահով կենտրոն:

Ռուսաստանը ևս հետամնաց երկիր էր, բայց Պարսկաստանի համեմատությամբ առաջադեմ էր: Ռուսական պետության կազմի մեջ մտնելով՝ հայ ժողովուրդը տնտեսական և մշակութային զարգացման ավելի լավ պայ-

մաններ ստացավ: Ռուսական մշակույթը նպաստեց հայ արվեստի ու գիտության զարգացմանը:

Նման դրական տեղաշարժերի հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի առնել, որ, Ռուսաստանի կազմի մեջ մտնելով, հայ ժողովուրդն ազատություն ձեռք չբերեց: Նա ենթարկվում էր ազգային-գաղութային ճնշումներին: Այդ առումով չիրականացան ազգային անկախություն ստանալու կամ Ռուսաստանի հովանու տակ իր պետությունն ունենալու հայ ժողովրդի ազատագրական ձգտումները: Այս ամենով հանդերձ՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար ուներ որոշակի առաջադիմական նշանակություն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է սկսվել XIX դ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Նկարագրե՛ք Շուշիի հերոսական պաշտպանությունը:
2. Ո՞վ էր Վ. Մադաթովը և ո՞ր ճակատամարտերում աչքի ընկավ:
3. Ովքե՞ր էին կամավորական ջոկատների կազմակերպիչները: Եթե դուք լինեիք այն ժամանակ, կզինվորագրվեի՞ք կամավորական ջոկատներին:
4. Նկարագրե՛ք Երևանի գրավումը:
5. Ե՞րբ կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը: Ձեր կարծիքով՝ պայմանագրի ո՞ր կետն էր ամենակարևորը և ինչո՞ւ:
6. Պարսկաստանից որքա՞ն հայեր գաղթեցին Ռուսաստանի տիրապետության տակ, որտե՞ղ բնակվեցին նրանք, ի՞նչ նշանակություն ունեցավ դա:
7. Կարո՞ղ եք հիմնավորել, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար ունեցավ առաջադիմական նշանակություն:
8. Լրացրե՛ք «Ռուս-պարսկական 1826–1828թթ. պատերազմը» ժամանակագրական աղյուսակը.

Տարեթիվը	Իրադարձությունը

ԹԵՍՏ

Ե՞րբ է տեղի ունեցել Օշականի ճակատամարտը.

1. 1826թ. սեպտեմբերի 3-ին,
2. 1827թ. օգոստոսի 17-ին,
3. 1828թ. փետրվարի 10-ին,
4. 1826թ. հուլիսին:

Ա. Ս. Գրիբոյեդովը՝ ցարիզմի վարչական քաղաքականության մասին

«Խաներից ու բեգերից իշխանությունը մենք վերցնում ենք, իսկ փոխարենը

ժողովրդին տալիս ենք օտար օրենքների խառնաշփոթություն... Մեր մարզային և քաղաքային դատարանները փոքր չափով անգամ չեն մտահոգվում հարմարվել տեղական սովորություններին... դատում են ձգձգումով, ծանր, ստորագրում են այնպիսի որոշումներ ու վճիռներ, որոնք բնակիչները ընդունում են ոչ թե համոզվելով, այլ կարծես թե բռնությամբ»:

Դեկաբրիստ Լաչինովը՝ հայ բնակչության դրության մասին

«Գաղափար կազմելու համար մարդկության թշվառ վիճակի մասին՝ անհրաժեշտ է խորամուխ լինել բնակիչների, հատկապես Թուրքիայի, Պարսկաստանի սահմանագծի վրա եղած գյուղերի հայ բնակչության կյանքի մեջ: Բացի իրենց տիրակալների ճնշումներից՝ նրանք անընդհատ ենթակա են ավազակների հարձակումներին, երբեք չունեն կատարյալ հանգստություն, համոզված չեն, որ կարող են լինել մշտական անվտանգության մեջ»:

Խաչատուր Աբովյանը՝ պատերազմին հայերի մասնակցության մասին

«Ինչ-որ պարսից կռվի ժամանակ հայք արին, աստծուն է հայտնի... թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան: Հալբաթ մեկ օր մեկ արդար, անաչառ մարդ Վրաստանի պատմությունը կգրի, էն ժամանակ կերևա, թե հայք ինչ արին, ինչ հավատարմություն են ցույց տվել տերությանը, ինչ արյուն են վեր ածել»:

3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ 1830–1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայաստանի իրավաքաղաքական դրությունը: Ռուսական կառավարությանը զբաղեցնում էր այն հարցը, թե Արևելյան Հայաստանը միացնելուց հետո խանական իշխանության փոխարեն ինչպիսի կարգեր է անհրաժեշտ հաստատել այնտեղ: Պետերբուրգում ստեղծվել էր հատուկ կոմիտե, որն զբաղվում էր այդ խնդրով: Մյուս կողմից՝ այդ հիմնահարցը գտնվում էր հայ ազգային գործիչների ուշադրության կենտրոնում: Հենց այդ ժամանակ մի խումբ հայրենասերներ, Լազարյան տոհմի նշանավոր ներկայացուցիչ Խաչատուր Լազարյանի գլխավորությամբ, Հայաստանի ինքնավարություն ստեղծելու նախագիծ են ներկայացնում: Նախագծի համաձայն՝ Ռուսաստանի հովանու ներքո Արևելյան Հայաստանում ստեղծվելու էր ինքնավարություն, որն ունենալու էր իր օրենքները, զինանշանը և դրոշը: Հայ հայրենասերների այդ նախագիծը մերժվեց կառավարության կողմից:

Ստեղծված իրավիճակում ցարական կառավարությունը բռնեց փոխզիջման ուղի: Նիկոլայ I թագավորի 1828թ. մարտի հրամանով Արևելյան Հայաստանից կազմավորվեց վարչական մի նոր միավոր՝ Հայկական մարզ անունով: Մարզի մեջ մտնում էին Երևանի և Նախիջևանի նախկին խանությունները և

Օրդուբադի օկրուգը: Կառավարում էր մարզային վարչությունը՝ պետի գլխավորությամբ: Հայկական մարզի վարչության պետ է նշանակվում գեներալ Ա. Ճավճավաձեն, որին 1830–1838թթ. փոխարինում է իշխան Վ. Բեհբութովը: Մարզը բաժանվում էր գավառների, որոնք իրենց հերթին բաժանվում էին շրջանների: Հիմնվում են ոստիկանական, դատական և այլ բաժիններ:

Ա. Ճավճավաձե (1786–1846)

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո բնական էր, որ ցարական կառավարությունն անդրադառնալու էր հայկական եկեղեցու գործունեությանը: Նախկին ձևով այն չէր կարող պահպանել: Այնպիսի իրավիճակ պետք է ստեղծվեր, որ եկեղեցին ծառայեր պետական շահերին: Մանավանդ հայտնի էր, որ հայ եկեղեցին միշտ ակտիվորեն մասնակցել է երկրի ներքին ու արտաքին գործերին:

Ցարական կառավարությունը թույլ չէր տա, որ հայ եկեղեցու պետերը խառնվեն պետության գործերին: Ավելին՝ ցարիզմը ցանկանում էր հայ եկեղեցին օգտագործել իր իշխանությունը հայ ժողովրդի վրա ամրապնդելու համար:

Մշո Սբ Առաքելոց վանքի ընդհանուր տեսքը

Ահա թե ինչու եկեղեցին բարեփոխելու նպատակով 1833թ. ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ: Ցարական պաշտոնյաները ելնում էին, մի կողմից, տեղական պահանջներից, մյուս կողմից՝ պետության ընդհանուր շահերը հաշվի առնելու սկզբունքից: 1836թ. մարտի 11-ին ընդունվում է մշակված կանոնադրությունը (պոլոժենիե): Այդ կանոնադրությամբ սահմանվեցին հայ եկեղեցու իրավունքներն ու պարտականությունները: Ռուսաստանում բնակվող հայկական շրջանները բաժանվում են հոգևոր թեմերի (վիճակների): Կազմվում է 6 թեմ՝ Երևանի, Ղարաբաղի, Վրաստանի, Շամախիի կամ Շիրվանի, Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի և Աստրախանի: Յուրաքանչյուր թեմ ուներ առաջնորդ, վանքեր ու եկեղեցիներ, դպրոցներ, շարժական ու անշարժ գույք և այլն:

1836թ. կանոնադրությունը հոգևորականությանը արգելում էր խառնվել պետության գործերին: Կառավարության հսկողությամբ պահպանվում էին Էջմիածնի կաթողիկոսի իրավունքները երկրի և արտասահմանի հայության նկատմամբ: Հայկական դպրոցների, լուսավորական այլ հաստատությունների, ծննդյան, ամուսնության, թաղման հարցերի տնօրինումը հանձնվում էր եկեղեցուն: Կանոնադրությամբ օրինականացվում էին եկեղեցու հողատիրական իրավունքները:

1836թ. կանոնադրությունն օրենքի ուժ ուներ և կարգավորում էր ցարական կառավարության և հայ եկեղեցու փոխհարաբերությունները:

Վարչական կացությունը: Անդրկովկասը Ռուսաստանին միացնելուց հետո երկրամասում վարչական բաժանման խառը վիճակ էր ստեղծվել: Կառավարությունը մտածում էր միասնական և հստակ վարչաձև մշակել:

1840թ. օրենք ընդունվեց, որով երկրամասը ենթարկվում էր վարչական նոր բաժանման: Ստեղծվում է վարչական երկու միավոր՝ Վրաց-իմերեթական նահանգ և Կասպիական մարզ: Հայկական մարզը՝ որպես առանձին վարչական միավոր, վերացվում է: Այս նոր օրենքը անտեսում էր Անդրկովկասի ժողովուրդների ազգային առանձնահատկությունները, այդ պատճառով ընդհանուր դժգոհությունների տեղիք տվեց:

Ցարական կարգերը ամրապնդելու նպատակով 1844թ. Կովկասում հիմնվում է փոխարքայություն: Փոխարքա է նշանակվում փորձված պաշտոնյա Ա. Վորոնցովը, որը ճկուն քաղաքականություն էր վարում: Մի քանի տարի անց (1849թ.) հատուկ հրամանագրով կազմվում է Երևանի նահանգը, որի մեջ մտնում էին հինգ գավառ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի: Վարչական այս բաժանումը պահպանվեց երկար ժամանակ՝ մինչև 1917թ.:

Վարչական այս վերափոխումներով ցարական կառավարությունը Անդրկովկասում ամրապնդեց ռուսական վարչաիրավական կարգերը:

Արևելյան Հայաստանի տնտեսությունը, երկար ժամանակ գտնվելով հետամնաց Պարսկաստանի տիրապետության տակ, մնացել էր չափազանց ցածր մակարդակի վրա:



Երկանիվ սայլ

Գյուղատնտեսության մեջ մշակվում էին ցորեն, գարի, բրինձ, բամբակ, ծխախոտ և այլն: Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո սկսվեց կարտոֆիլի և կաղամբի մշակությունը: Տարածված էր այգեգործությունը, հատկապես խաղողագործությունը: Զարգացած էր արհեստագործությունը, որը կենտրոնացած էր քաղաքներում: Արհեստավորներն ունեին իրենց շահերը պաշտպանող կազմակերպություններ՝ համքարություններ, որոնք միևնույն արհեստի մեջ համախմբված աշխատողների միություններ էին:

Թույլ էր զարգացած նաև արդյունաբերությունը: Գործում էին Ալավերդու, Ախթալայի և մասամբ Կապանի պղնձահանքերը, Նախիջևանի և Կողբի աղահանքերը: Արտադրվող պղինձը և աղը արտահանվում էին:

Քաղաքները նույնպես հետամնաց վիճակում էին: Նշանավոր քաղաքներից էին Երևանը, Ալեքսանդրապոլը (Գյումրի), Նախիջևանը, Ախալցխան, Շուշին: Դրանք վարչական և արհեստագործական կենտրոններ էին՝ առանց

մշակութային աչքի ընկնող հարստությունների: Այդ քաղաքների բնակչությունը չէր անցնում 10–13 հազարից: Բնակչության աճը կատարվում էր շատ դանդաղ: Երևան քաղաքը 1830-ական թվականներին ուներ 11300 բնակիչ, իսկ 1850-ական թվականներին բնակչության թիվը հասավ 12600-ի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ Արևելյան Հայաստանի միացումից հետո ինչո՞ւ անհրաժեշտություն դարձան վարչական փոփոխությունները: Վարչական ի՞նչ բաժանումներ կատարվեցին: Ո՞րն էր դրանց նպատակը:
2. Վերլուծե՛ք հայ հայրենասերների ինքնավարության նախագիծը: Ինչպե՞ս եք գնահատում այն: Հնարավո՞ր էր այդ նախագծի իրագործումը: Ինչո՞ւ ցարական կառավարությունը մերժեց այն:
3. Ինչո՞ւ էր անհրաժեշտ վերափոխել հայ եկեղեցու վարչությունը: Ի՞նչ նպատակ էր հետապնդում դա:
4. Նկարագրե՛ք Արևելյան Հայաստանի տնտեսությունը և փորձե՛ք գնահատել:
5. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *Հայաստանի ինքնավարության նախագիծ, Հայկական մարզ, հայ եկեղեցու կանոնադրություն, հոգևոր թեմ* տերմինները և հասկացությունները:
6. Լրացրե՛ք «Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում 1830-ական թվականներին» աղյուսակը:

Վարչական փոփոխությունը	Փոփոխությունը տնտեսության մեջ	Հայ եկեղեցու բարեփոխումը

ԹԵՍՏ

1850թ. Երևանի բնակչության թիվը հասավ.

1. 11300-ի, 3. 12600-ի,
2. 14300-ի, 4. 18000-ի:

Հայ հայրենասերների՝ 1827թ. կազմած Հայաստանի ինքնավարության նախագծից

1. Բնակիչներից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները միշտ պաշտպանված լինեն արդարության և օրենքների վրա հիմնված կայուն կանոններով:

2. Յուրաքանչյուրի և բոլորի սեփականությունը պաշտպանվի:

3. Կալվածատերերի իրավունքները տարածվեն միայն այն հողերի և անշարժ գույքի վրա, որոնք ակտերով և օրենքներով պատկանում են նրանց:

4. Անհրաժեշտ է սահմանափակել կամ ոչնչացնել ճորտատիրական իրավունքը կամ առնվազն սահմանել, որ ոչ ոք չկարողանա անհատապես վաճառել ընտանիքի այն անդամներին, որոնք ամրացված են հողին և ոչ թե անձին և առհասարակ արգելվի մարդկանց վաճառքը:

ԹԵՄԱ 2-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 19-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանը շարունակում էր մնալ շահական Պարսկաստանի տիրապետության ներքո: Ծանր էր հայ ժողովրդի վիճակը: Նա ենթարկվում էր ազգային, կրոնական և սոցիալական հալածանքների: Չէր երաշխավորվում կյանքի և գույքի ապահովությունը: Կամայական բնույթ էր կրում հարկահանությունը:
2. Ռուսաստանի և Պարսկաստանի միջև հակամարտությունների սրումը հանգեցրեց 1804–1813թթ. պատերազմին: Մի շարք ճակատամարտերում ջախջախելով պարսկական բանակին՝ Ռուսաստանը հարկադրում է նրանց հաշտություն կնքել: 1813թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստան գյուղում հաշտության պայմանագիր է կնքվում, որով Ռուսաստանին է անցնում Արևելյան Հայաստանի հյուսիսարևելյան մասը:
3. 1826թ. սկսվում է ռուս-պարսկական պատերազմը: Մի շարք ծանր պարտություններից հետո շահական Պարսկաստանը հարկադրված էր հաշտություն խնդրել: 1828թ. փետրվարի 10-ին կնքվեց Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը, որով Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցավ: Ավելի քան 40000 հայեր ներգաղթեցին Արևելյան Հայաստան:
4. Ռուսական զենքի հաղթանակին մեծապես նպաստեց հայ ժողովրդի տնտեսական և ռազմական օգնությունը: Լոռի-Փամբակում և Ղազախ-Շամշադինում գործում էին Մարտիրոս Վեքիլյանի և Գրիգոր Մանուչարյանի ջոկատները: 1827թ. գարնանը վրացահայ թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցու կոչով կազմավորվեցին հայկական կամավորական ջոկատներ, որոնք զգալի ավանդ ներդրեցին հաղթանակի գործում:
5. Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրությանը միացնելու ժամանակ մի խումբ հայրենասերներ կազմեցին Հայաստանի ինքնավարության նախագիծ, որը, սակայն, մերժվեց: Նիկոլայ I-ի հրամանով 1828թ. մարտին ստեղծվեց Հայկական մարզը, որը վերացավ 1840թ.: 1849թ. կազմվեց Երևանի նահանգը:
6. Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանում փոքրիշատե նպաստավոր պայմաններ ստեղծվեցին տնտեսության զարգացման համար: Զարգանում էին գյուղատնտեսությունը և արհես-

տագործությունը: Արհեստավորները համախմբված էին համքարությունների մեջ:

7. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին զգալի չափով նպաստեց նաև առևտրի զարգացմանը: Արհեստները և առևտուրը կենտրոնացած էին հիմնականում քաղաքներում (Երևան, Ալեքսանդրապոլ, Շուշի, Ախալցխա, Նախիջևան և այլն):

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի հիմնական տարածքը ընդգրկված էր Կարսի, Ախալցխայի, Էրզրումի, Վանի, Դիարբեքիրի, Սեբաստիայի փաշայություններում (վիլայեթներում): Փաշայությունները բաժանված էին գավառների (սանջակների), իսկ վերջիններս՝ գյուղերի: Ինչպես սուլթանը ամբողջ երկրում, այնպես էլ փաշաները իրենց վիլայեթներում միահեծան իշխողներ էին:

Թուրքիան Պարսկաստանի նման հետամնաց ավատատիրական երկիր էր՝ իր տնտեսությամբ և ամբողջ կառուցվածքով: Արևմտահայությունը Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող արևելահայերի նման միևնույն տնտեսական և իրավական ծանր դրության մեջ էր: Այստեղ տնտեսական-սոցիալական շահագործումը, հարկային ճնշումներն ու ազգային հալածանքները թերևս ավելի վատթար էին, քան արևելահայերի շրջանում: Բնականաբար այստեղ ևս ուժեղ էր օտարի բռնակալական տիրապետությունից ազատագրվելու ձգտումը: Նապոլեոն կայսեր դրդումով Թուրքիան 1806թ. պատերազմ սկսեց Ռուսաստանի դեմ: Օգտվելով թվական գերակշռությունից՝ թուրքական զորքը Կարսի, Ախալքալաքի և Ախալցխայի ուղղությամբ հաջող հարձակումներ է կատարում: Դժվարին կացություն է ստեղծվում ռուսական փոքրաքանակ զինվորության և տեղի բնակչության համար: Գլխավոր ճակատամարտը տե-

Կարսի բերդի գրավումը

ղի է ունենում Գյումրիի մոտ (1807թ.): Յոթ ժամ շարունակ երկու կողմերը լարված մարտեր էին մղում: Թուրքերը թեպետ թվական գերակշռություն ունեին, բայց, չդիմանալով հակառակորդի հարվածներին, խուճապահար փախուստի են դիմում դեպի Կարս: Նրանք մարտի դաշտում թողեցին ավելի քան 1000 սպանված, իսկ Յուսուֆ փաշան հազիվ է փրկվում գերի ընկնելուց:

Փոքր իրադարձություններով պատերազմը ձգձգվեց, և միայն 1812թ. Բուխարեստում հաշտություն կնքվեց: Պայմանագրի համաձայն՝ Բեսարաբիան և Աբխազիան անցան Ռուսաստանին, իսկ գրավված մյուս տարածքները վերադարձվեցին Թուրքիային: Պայմանագրի կնքմանը աջակցեց հայազգի նշանավոր գործիչ Մանուկ Բեյը, որի առանձնատանը ստորագրվեց պայմանագիրը:

Ռուս-թուրքական 1828-1829թթ. պատերազմը: Ռուս-պարսկական Թուրքմենչայի պայմանագրից շատ չանցած՝ սկսվեց ռուս-պարսկական պատերազմը, որն ընթանում էր երկու ռազմաճակատներում՝ Բալկաններում և Կովկասում:

Ռուսական բանակը, Պասկևիչի գլխավորությամբ, անցավ Ախուրյան գետը և շարժվեց դեպի Կարս: Հակառակորդը մեծ ուժեր էր կուտակել Կարսի անառիկ համարվող բերդում: Երեք օր ու գիշեր կատաղի մարտեր էին մղվում բերդի պարիսպների մոտ: Ի վերջո ռուսներին հաջողվեց գրոհով վերցնել ռազմական կարևոր նշանակություն ունեցող այդ հենակետը: Ռուսների ձեռքն անցավ մեծաքանակ ռազմամթերք, իսկ գերիների թիվը անցնում էր 1300-ից: Կարևոր այդ հաղթանակից հետո գրավում են Ախալքալաքը, Ախալցխան, Արդահանը: Ռուսական մի զորամաս, գեներալ Ճավճավաձեի գլխավորությամբ, գրավում է Բայազետը և Ալաշկերտը:

Ռուսների հաջողությունները և՛ Կովկասում, և՛ Բալկաններում մեծ իրարանցում առաջացրին ոչ միայն Թուրքիայի, այլև եվրոպական պետությունների կառավարող շրջաններում: Անգլիայի հրահրումով Թուրքիան մեծ ուժեր է կուտակում Էրզրումում և 1829թ. գարնանը հարձակման է անցնում: Նրանք կարողանում են ներխուժել Ախալցխա և կորուստներ պատճառել տեղի կայազորին:

Էրզրում

Ռուսական զորքերին հաջողվում է կասեցնել թուրքերի գրոհները, անցնել հարձակման և գրավել Էրզրումը՝ Թուրքիայի ռազմական ամենակարևոր կենտրոնը: Այդ օրերին Պասկևիչի բանակ եկավ ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինը, նա եղավ Էրզրում քաղաքում, որի մասին իր ուղեգրություններում

գրում է. «Մենք տեսանք քաղաքը, որ զարմանալի տեսարան էր: Թուրքերն իրենց տափակ կտուրներից մռայլ նայում էին մեզ: Հայերը, աղմկելով, վխտում էին նեղ փողոցներում: Նրանց տղաները վազում էին մեր ձիերի առջևից՝ խաչակնքելով և կրկնելով՝ քրիստոնյաներ, քրիստոնյաներ»:

Շարունակելով հաղթարշավը՝ ռուսական զորքերը գրավում են Օլթին, Խնուսը, Մուշը և այլ բնակավայրեր:

Արևմտահայությունը ձգտում էր թոթափել թուրքական տիրապետությունը, ուստի պատերազմի ընթացքում օգնում էր ռուսական զորքին: Արևելյան Հայաստանի նման այստեղ էլ կազմակերպեցին կամավորական ջոկատներ: Բայազետում Մելիք Մարտիրոսյանի գլխավորությամբ ձևավորվեց 500 հոգուց բաղկացած ջոկատ, որը մասնակցում էր ռազմական գործողություններին: Արևելահայերը իրենց հերթին օգնության ձեռք էին մեկնում հայրենակիցներին: Ղարաբաղից կամավորական փոքր հեծյալ զորախումբ էր մասնակցում կռիվներին: Ա. Պուշկինը գրել է. «Հունիսի 17-ի առավոտյան մենք նորից լսեցինք հրաձգության ձայներ և երկու ժամ հետո տեսանք Ղարաբաղի գունդը, որը վերադառնում էր՝ բերելով թուրքական 8 դրոշակ»:

Ադրիանապոլսի պայմանագիրը և արևմտահայերի վերաբնակեցումը: Ռուսների հաջողությունները առավել մեծ էին Բալկանյան ռազմաճակատում: Ռուսական զորքերը 1829թ. օգոստոսին մոտենում են Կոստանդնուպոլսի մատույցներին: Սուլթանի խնդրանքով սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքվում է հաշտության պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ Սև ծովի արևելյան ափերը՝ Փոթի նավահանգստով, և Ախալցխան ու Ախալքալաքը անցնում են Ռուսաստանին: Ներում է շնորհվում պատերազմին մասնակցած երկու կողմերի հպատակներին և ռազմագերիներին: Պատերազմող կողմերի միջև վերականգնվում են դիվանագիտական հարաբերությունները: Այդ պայմանագրով ամրապնդվում էին Ռուսաստանի դիրքերը Սև ծովում, Բալկաններում և Անդրկովկասում:

Այդ ամենով հանդերձ՝ Ադրիանապոլսի պայմանագիրը ամենևին չարդարացրեց հայերի հույսերը: Արևմտահայերը ջանում էին ազատվել թուրքական տիրապետությունից և վերամիավորվել իրենց արևելահայ եղբայրների հետ: Նրանց այդ ձգտումները չիրականացան Ռուսաստանի հակառակորդ եվրոպական մեծ պետությունների վարած քաղաքականության հետևանքով: Այդ հզոր պետությունների հարկադրանքի տակ Ռուսաստանը Թուրքիային վերադարձրեց Կարսը, Արդահանը, Էրզրումը, Մուշը, Բայազետը և գրաված մյուս շրջանները: Այլ խոսքով՝ Արևմտյան Հայաստանը, չնչին բացառությամբ, մնաց օսմանյան տիրապետության տակ, որը ճակատագրական եղավ նրա համար:

Ադրիանապոլսի պայմանագրում նշվում էր, որ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերին թույլատրվում է անցնել Ռուսաստան: Դրա հիման վրա կազմակերպվեց նաև արևմտահայերի վերաբնակեցումը: Արևմտա-

հայ բնակչությունը մեծ ոգևորությամբ ընդունեց գաղթելու առաջարկը: Այնտեղ ևս թուրքական իշխանությունները, տեսնելով, որ զրկվում են աշխատավոր հմուտ ձեռքերից, ամեն կերպ ջանում էին արգելակել: Չնայած դրան՝ գաղթել ցանկացողների թիվը շատ մեծ էր: Արևմտահայերի վերաբնակեցումը կազմակերպվեց 1829–1830 թվականներին: Հիմնականում Էրզրումի, Կարսի և Բայազետի փաշայություններից գաղթեցին ավելի քան 80 հազար հայ բնակիչներ:

«Պարսկահայերի ներգաղթը»
Գործ՝ Վ. Մաշկովի

Էրզրումից գաղթողները բնակություն հաստատեցին հիմնականում Ախալցխայում և Ախալքալաքում, կարսեցիները՝ Շիրակի և Թալինի շրջաններում, իսկ բայազետցիք՝ Սևանա լճի ավազանում՝ հիմնելով Նոր Բայազետ անունով բնակավայր: Երկրագործներին բնակեցնում էին գյուղերում, իսկ արհեստավորներին և առևտրականներին՝ քաղաքներում:

Պետությունը որոշ օգնություն կազմակերպեց և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստանի վերաբնակվողների պայմանները լավացնելու համար: Նրանք վեց տարով ազատվում էին հարկերից, կարիքավոր ընտանիքներին դրամական նպաստ էր տրվում, նրանք օժանդակություն էին ստանում նաև տներ կառուցելու համար: Վերաբնակվողները, հաղթահարելով դժվարությունները, սկսեցին մշակել ամայի հողերը, այգիներ գցել, ջրանցքներ և ճանապարհներ շինել, կենդանություն տալ հին և նոր բնակավայրերին:

Արևմտահայերի և արևելահայերի ներգաղթը էական նշանակություն ունեցավ գյուղատնտեսության, արհեստների զարգացման համար: Փոխվեց Արևելյան Հայաստանի ու Անդրկովկասի բնակչության ազգային կազմը հօգուտ հայության:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ վարչական միավորների էր բաժանված Արևմտյան Հայաստանը, և ո՞ւմ կողմից էին դրանք կառավարվում:
2. Ինչպե՞ս կբնութագրեք հայ ժողովրդի դրությունը թուրքական տիրապետության ներքո մարդու իրավունքների տեսանկյունից:
3. Ինչպե՞ս կարող եք հիմնավորել, որ հայ ժողովուրդը ենթարկվում էր ազգային, կրոնական հալածանքների:

4. Ձեր կարծիքով՝ կարելի՞ է 1807թ. Գյումրիի մոտ տեղի ունեցած ճակատամարտը համարել 1806–1812թթ. ռուս-թուրքական պատերազմի գլխավոր իրադարձությունը Անդրկովկասում:
5. Ե՞րբ է կնքվել Բուխարեստի պայմանագիրը և ի՞նչ նշանակություն ունեցավ:
6. Ե՞րբ սկսվեց երկրորդ ռուս-թուրքական պատերազմը և ինչպե՞ս ընթացավ: Նկարագրե՛ք Կարսի գրավումը:
7. Ձեր կարծիքով՝ ո՞րն էր ռուս-թուրքական պատերազմի ամենախոշոր իրադարձությունը: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:
8. Ի՞նչ եք կարծում՝ ճի՞շտ էր հայերի ցույց տված նյութական և ռազմական օգնությունը ռուսական զորքերին:
9. Ե՞րբ կնքվեց Ադրիանապոլսի պայմանագիրը: Ինչո՞ւ Ռուսաստանը Թուրքիային վերադարձրեց Արևմտյան Հայաստանում գրաված տարածքները:
10. Արևմտյան Հայաստանից որքա՞ն հայեր գաղթեցին Ռուսաստանի տիրապետության սահմանները և որտե՞ղ բնակվեցին: Ինչպե՞ս եք գնահատում արևմտահայերի գաղթը Արևելյան Հայաստան:
11. Կարո՞ղ եք նշել, թե որքանով արդարացրեց ռուս-թուրքական պատերազմը արևմտահայերի հույսերը:
12. Լրացրե՛ք «Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերը» աղյուսակը:

Պայմանագիրը	Նմանությունը	Տարբերությունը
Թուրքմենչայի պայմանագիր		
Ադրիանապոլսի պայմանագիր		

ԹԵՍՏ

Համապատասխանեցրե՛ք տարեթվերը իրադարձություններին.

1. 1828–1829թթ.,	ա) արևմտահայերի գաղթը,
2. 1829թ. սեպտեմբերի 2,	բ) թուրքերի ներխուժումը Ախալցխա,
3. 1829–1830թթ.,	գ) ռուս-թուրքական պատերազմը,
4. 1829թ. գարուն,	դ) Ադրիանապոլսի պայմանագիրը:

Խ. Աբովյանը՝ Երևանի ազատագրման և հայ-ռուսական անխախտ բարեկամության մասին

«Կարելի է աշխարհք աշխարհքով դիպչի, ազգեր գան ու էլ եդ ոչնչանան, բայց քանի որ հայի շունչն ու լեզուն կա, ե՞րբ նրանց մտքից կերթա էն ավետալից սհաթը... Հայք ե՞րբ կարեն ռուսաց արածը մոռանալ, քանի շունչ ունին»:

1827թ. նոյեմբերի 9-ին Երևանից Թավրիզ՝ գնդապետ Ե. Լազարյանին գրած Ներսես Աշտարակեցու նամակից՝ հայ գերիների ազատության մասին

«Այժմ ես խնդրեցի ամենայն հայոց ազգի հավատարիմ պաշտպան Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովին՝ չմոռանալ իմ խնդիրը նաև այդտեղ և այլ տեղերում եղած քրիստոնյա գերիներին ռուսաց հզոր իշխանության դրոշի տակ ընդունելու»:

ԹԵՄԱ 3-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 19-րդ դարի սկզբին ծանր էր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի վիճակը: Նա ենթարկվում էր ազգային, կրոնական և սոցիալական հալածանքների: Չէր երաշխավորվում կյանքի և գույքի ապահովությունը: Կամայական բնույթ էր կրում հարկահանությունը:
2. Թուրքիայի և Ռուսաստանի միջև հակամարտությունները հանգեցրին 1806–1812թթ. ռուս-թուրքական պատերազմին: Մի շարք ճակատամարտերում ջախջախելով թուրքական զորքերին՝ Ռուսաստանը հարկադրում է նրանց հաշտություն կնքել: 1812թ. մայիսին Բուխարեստում կնքված ռուս-թուրքական հաշտության պայմանագրով Անդրկովկասում տարածքային փոփոխություն չի կատարվում:
3. 1828թ. սկսվում է ռուս-թուրքական պատերազմը: Ռուսական զորքերը գրավում են Ախալքալաքը, Ախալցխան, Արդահանը, Կարսը, ապա՝ Էրզրումը: 1829թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլիս քաղաքում կնքված հաշտության պայմանագրով Սև ծովի արևելյան ափերը, Ախալքալաքը և Ախալցխան անցնում են Ռուսաստանին: Պայմանագրի համաձայն՝ հայերին իրավունք է տրվում Արևմտյան Հայաստանից գաղթելու Արևելյան Հայաստան: Շուրջ 80 հազար հայեր մշտական բնակություն հաստատեցին Արևելյան Հայաստանում:
4. Ադրիանապոլսի պայմանագիրը չարդարացրեց արևմտահայերի իղձերը: Նրանք հույս ունեին թոթափել օսմանյան լուծը, վերամիավորվել արևելահայերի հետ, սակայն դա չիրականացավ եվրոպական մի շարք տերությունների միջամտության հետևանքով: Ռուսաստանը Թուրքիային վերադարձրեց Արևմտյան Հայաստանում գրաված շրջանները:

4 թեմա

ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նոր շրջանում (XVII դարից մինչև XIX դարի առաջին կեսը) մշակույթը ուշ միջնադարի տեղատվությունից հետո վերելքի ուղի էր բռնել: Դրա համար կային նպաստավոր պայմաններ: Նախ մեծ ծավալ է ընդունում գրատպությունը, գործում էր 1717թ. Վենետիկում հիմնադրված Մխիթարյան միաբանության գիտակրթական կենտրոնը: Լուսավորական շարժում է սկսվում հնդկահայ և ռուսահայ կենտրոններում:



Հովհաննավանք

Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ մշակութային առաջընթացի պայմաններ չկային: Այդ պատճառով հայկական մշակույթը պահպանվում ու զարգանում էր գերազանցապես Եվրոպայի և Ասիայի հայկական գաղթավայրերում:

Դպրոցները: Կրթական-լուսավորական էական դեր էին կատարում դպրոցները: XVII դարի երկրորդ կեսին հայկական մշակութային օջախները շարունակում էին հայոց ազգային ավանդույթները: Միաժամանակ նրանք առավել սերտորեն էին առնչվում եվրոպական քաղաքակրթության նվաճումներին, որը բարերար ազդեցություն էր գործում հայ մշակույթի հարստացման վրա: XVII–XVIII դարերում, չնայած քաղաքական ծանր իրավիճակին ու մեծամեծ կորուստներին, Հայաստանում ոչ միայն փորձել են շարունակել նախորդ դարաշրջանների կրթական ավանդույթները, այլև օգտագործվել են նոր հնարավորություններ: Հայաստանի բուն տարածքից դուրս՝ հայկական համայնքներում ևս, աշխուժացավ կրթական գործը, որ պայմանավորված էր նաև հայկական գաղթօջախների ստվարացմամբ:

Նոր Ջուղայի ավետարանը

XVII դարի դպրոցական կյանքի կարևոր կենտրոն էր նաև Նոր Ջուղան: Այնտեղ Խաչատուր Կեսարացու ջանքերով հիմնված դպրոցն ավելի քան հիսուն տարի կարևոր դերակատարում է ունենում հայոց կրթական կյան-

քում: Աշակերտներին առևտրական ասպարեզին նախապատրաստելու նպատակով դպրոցում բարձր մակարդակով դասավանդվում էին նաև տոմարագիտություն, թվաբանական առարկաներ, չափերի ու կշիռների մասին գիտելիքներ և այլն: Իր գոյության տարիներին դպրոցը տվել է ավելի քան 250 շրջանավարտ: Այս դպրոցի շրջանավարտներից էին Ոսկան Երևանցին, մի շարք կաթողիկոսներ և ուրիշ շատ անվանի գործիչներ: Ինչպես բոլոր դպրոցները, այս դպրոցը ևս եղել է գրչության կարևոր կենտրոն, ունեցել իր մատենադարանը:

XIX դարի առաջին կեսին մեծ առաջընթաց կատարվեց ուսումնական գործում: Հիմնվեցին այնպիսի դպրոցներ, որոնք ամբողջ հայության համար տևական ժամանակ կրթական-մշակութային կարևոր կենտրոններ դարձան: Աստրախանում 1810թ. բացվեց Աղաբաբյան դպրոցը: Լազարյան գերդաստանի համբավավոր ներկայացուցիչ Հովհաննես Լազարյանի կտակի համաձայն՝ Մոսկվայում 1815թ. բացվեց Լազարյան ճեմարանը: Ուսումնական այս օջախը գործեց ավելի քան մեկ դար և դարձավ հայագիտության, արևելագիտության, առհասարակ մշակութային ճանաչված կենտրոն: Ներսես Աշտարակեցու ջանքերով 1824թ. համանման դպրոց հիմնվեց Թիֆլիսում, որը հիմնադրի անունով կոչվեց Ներսիսյան: Երևանում 1832թ. հիմնադրվեց գավառական, իսկ 1837թ.՝ թեմական դպրոցը: Մեկ տարի հետո թեմական դպրոց բացվեց Շուշիում: Հայկական դպրոցներ են բացվում Վենետիկում, Զմյուռնիայում, Կոստանդնուպոլսում, Կալկաթայում, Վանում, Էրզրումում, Փարիզում և այլ բնակավայրերում: Բացվում են նաև ծխական դպրոցներ, որոնք անմխիթար վիճակում էին:

Ուսումնատենչ հայ երիտասարդները Անդրկովկասում բարձրագույն դպրոց չլինելու պատճառով մեկնում էին Ռուսաստանի, Եվրոպայի ճանաչված կրթական կենտրոնները: Այնտեղ կրթություն ստացած հայ մտավորականության առաջին սերունդը (Հ. Ալամդարյան, Խ. Աբովյան, Ս. Նազարյան, Ղ. Ալիշան և ուրիշներ) ակնառու դեր կատարեց լուսավորության ու մշակույթի ասպարեզում:

Գիտությունը: Հայոց գիտության պատմության համար մեծ արժեք ունի նաև 1695թ. Ամստերդամում Ղուկաս, Թովմա և Մատթեոս Վանանդեցիների ջանքերով կազմված և տպագրված «Համատարած աշխարհացույց» անունով քարտեզը: Քարտեզագրության ինքնատիպ ու եզակի նմուշ է Երեմիա Չելեպի Քեռմուրճյանի կազմած Հայաստանի քարտեզը: Գիտագործնական նպատակներ են հետամտել նաև մաթեմատիկայի բնագավառի ուսումնասիրությունները: 1675թ. Մարսելում լույս է ընծայվում գերմանացի մաթեմատիկոս Ք. Կլավիուսի «Գործնական թվաբանության համառոտ շարադրանք» աշխատության հայերեն թարգմանությունը:

«Համատարած Աշխարհացույց» քարտեզը

Միջնադարյան հայ գիտության նվիրյալ մշակներից էր Ավետիք Տիգրանակերտցին, որը գիտության պատմության մեջ հայտնի է իր տոմարական ու աստղաբաշխական աշխատություններով:

Վենետիկի Սբ Ղազար կղզու Մայրավանքի ներսը

Մխիթարյան միաբանություն: Մեծ է Վենետիկի Մխիթարյան միաբանության դերը մշակույթի զարգացման ասպարեզում: Հայ տպագրության մեջ ևս վիթխարի է Մխիթար Սեբաստացու և նրա հիմնած Մխիթարյան միաբանության հրատարակչական գործունեության նշանակությունը: Հրատարակվեցին Մխիթար Սեբաստացու կազմած «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» (1727թ.), որը կազմված էր թուրքախոս դարձած հայերին կրկին հայոց լեզուն հասու դարձնելու համար, «Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի» (1730թ.), «Համատարած Աշխարհացոյց» քարտեզը (1749թ.) և այլ երկեր:



Մխիթար Սեբաստացի (1676–1749)

Մխիթարյան միաբանության անդամ Ղ. Ինճիճյանը հրատարակում է պատմաաշխարհագրական մի շարք ծանրակշիռ աշխատություններ: Լույս է տեսնում Հ. Գաթրջյանի «Տիեզերական պատմություն» երկհատորյակը: Հրատարակվում է ռուս պատմաբան Սերգեյ Գլինկայի «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունը: Արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվում լեզվաբանության ուղղությամբ: Վենետիկում հրատարակվում է մի քանի հեղինակների շուրջ 50 տարվա համատեղ աշխատանքի արդյունքը՝ «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» գիրքը: Երկու ստվար հատորներից բաղկացած այդ բառարանը այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքը:

Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց» եռահատոր աշխատության տիտղոսաթերթերը (Վենետիկ, 1784թ.)

Խոշոր երևույթ էր Միքայել Չամչյանի «Պատմություն Հայոց» եռահատոր աշխատությունը (1784–1786), որն ընդհանրացնում էր հայ ժողովրդի անցած ամբողջ պատմական ուղին:

Մեծանում է հետաքրքրությունը բնական գիտությունների նկատմամբ: Նշանավոր բժիշկ-գիտնական Պետրոս Քալանթարյանը, որը լավ ծանոթ էր եվրոպական և արևելյան բժշկու-

թյանը, հրատարակում է «Բժշկարան» ուսումնասիրությունը: Դասագրքեր, հետազոտություններ են հրատարակվում թվաբանության, երկրաչափության վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են հայ ժողովրդի մշակութային առաջընթացի նախադրյալները և կենտրոնները: Ինչո՞ւ էր հայ մշակույթը զարգանում գերազանցապես Հայաստանից դուրս:
2. Ի՞նչ դպրոցներ էին գործում Հայաստանում և հայկական գաղթօջախներում 17–18-րդ դարերում: Ի՞նչ նոր ուսումնական հաստատություններ բացվեցին 19-րդ դարի առաջին կեսին: Նշե՛ք դրանցից ամենանշանավորները: Կուզեի՞ք դրանցում սովորած լինել:
3. Բնութագրե՛ք Մխիթարյան միաբանության հրատարակչական գործունեությունը:
4. Գիտության ո՞ր ճյուղերը առաջընթաց ապրեցին: Ովքե՞ր են դրանց ներկայացուցիչները: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
5. Ովքե՞ր էին 17–19-րդ դարի առաջին կեսի պատմագիտության նշանավոր ներկայացուցիչները: Ի՞նչ աշխատություններ են գրել նրանք:
6. Դուք համաձա՞յն եք այն կարծիքին, որ Մ. Չամչյանի «Պատմություն Հայոց»-ը դարակազմիկ նշանակություն է ունեցել հայ իրականության համար:
7. Տեքստից դո՛ւրս գրեք տարեթվերը և լրացրե՛ք «Կրթությունը և գիտությունը XVII դարի երկրորդ կեսին – XIX դարի առաջին կեսին» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվ	Իրադարձություն

ԹԵՍՏ

Ո՞վ է գրել «Տիեզերական պատմությունը».

1. Ղուկաս Վանանդեցին,
2. Ղուկաս Ինճիճյանը,
3. Հովսեփ Գաթրջյանը,
4. Միքայել Չամչյանը:

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՎԵՍՏ

Գրականություն: XIX դարի առաջին կեսը բեկումնային ժամանակաշրջան էր գրականության համար: Այս շրջանում ձևավորվում է հայ նոր գրականությունը: Հայ գրականության այս նոր փուլը նախապատրաստելու գործում նշանակալից է Հ. Ալամդարյանի, Մ. Թաղիադյանի և հատկապես Խ. Աբովյանի դերը: Հարություն Ալամդարյանը (1795–1834) որպես ուսուցիչ աշխատել է Լազարյան ճեմարանում, Ներսիսյան դպրոցում: Իր ոչ մեծաքանակ քնարա-

կան բանաստեղծություններով նա նոր երանգ է բերում գրականության մեջ, երգում աշխարհիկ կյանքը, սերը: Մեսրոպ Թաղիադյանը (1803-1858) հիմնականում ապրել ու գործել է Հնդկաստանում: Նա գրական, մանկավարժական բեղմնավոր գործունեություն է ծավալել, թողել գրական հարուստ ժառանգություն: Թաղիադյանը ջերմ հայրենասեր էր: «Մեր արմատը,– գրում էր նա,– մեր հայրենիքն է: Ով ուզում է երջանիկ լինել, նա պետք է նախ և առաջ ձգտի հայրենիքի երջանկությանը»:

Խաչատուր Աբովյանը (1809-1848) XIX դարի առաջին կեսի գրականության և լուսավորական շարժման ամենանշանավոր դեմքն է, հայ նոր գրականության հիմնադիրը, լուսավորիչ, մանկավարժ: Նա սովորել է Էջմիածնում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ապա նշանակվել է կաթողիկոսի թարգման ու գրագիր:

Հարություն Ալամդարյան (1795–1834)

Խաչատուր Աբովյան (1809–1848)

1829թ. Էջմիածին է գալիս Դորպատի (Տարտու) համալսարանի պրոֆեսոր Պարրոտի արշավախումբը՝ Արարատ լեռը բարձրանալու: Աբովյանը, որպես թարգմանիչ, միանում է արշավախմբին և նրա հետ բարձրանում Արարատի գագաթը: Ուշիմ պատանին գրավում է Պարրոտի ուշադրությունը և վերջինիս ջանքերով ընդունվում Դորպատի համալսարան: Վեց տարիների ուսման ընթացքում Աբովյանը հիմնավոր կրթություն է ստանում, տիրապետում մի քանի լեզուների: Վերադառնալով հայրենիք՝ նա Թիֆլիսում, ապա Երևանում նվիրվում է գրական-մանկավարժական աշխատանքների: 1848թ. ապրիլի 2-ի առավոտյան դուրս է գալիս տնից և այլևս չի վերադառնում: Մինչև այժմ պարզված չէ նրա անհայտացման պատճառը:

Իր բեղմնավոր գործունեությամբ Աբովյանը ձգտել է դպրոցները դուրս բերել հետամնաց վիճակից: Նրա նախաձեռնությամբ վերացվում են մարմնական պատիժները: «Մանուկներին կրթելը,- ասում էր նա,- աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար... Ուսուցիչը պետք է սիրի աշակերտին այնպես, ինչպես հայրը՝ որդուն»:

Մեծ է Աբովյանի գրական վաստակը: Նրա ստեղծագործությունների գլուխգործոցը հռչակավոր «Վերք Հայաստանի» պատմավեպն է: Դրանում գեղարվեստորեն ներկայացված են XIX դարի առաջին տասնամյակների պատմական անցքերը: Վեպի հիմնական գաղափարը հայրենասիրությունն ու ազատասիրությունն են. «Շունչդ տուր, հոգիդ,- ասում է Աբովյանը,- բայց քո հայրենիքը մի տուր թշնամյաց»:

Դրվատելով Ռուսաստանի կատարած դրական դերը՝ նա գրում է. «Օրհնված լինի էն սհաթը, երբ ռուսները ոտք դրին մեր հայկական հողը»:

«Վերք Հայաստանի»-ն աշխարհաբարով գրված առաջին վեպն է: Դրանով սերունդներ են դաստիարակվել: Խաչատուր Աբովյանը նոր ուղի բացեց գալիք սերունդների համար:

Հակոբ Հովնաթանյան (1809–1884)

Արվեստ: Զարգացում ապրեց արվեստը՝ իր բազմազան ճյուղերով: Կերպարվեստի մեջ նշանավոր էր Հովնաթանյանների գերդաստանը: Հակոբ Հովնաթանյանը (1809–1884) ապրել և ստեղծագործել է հիմնականում Թիֆլիսում: Նա ժամանակի դիմանկարչության ճանաչված վարպետ էր, որի գործերից մեզ է հասել շուրջ 60 կտավ: Աղաֆոն Հովնաթանյանը, ավարտելով Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան, զբաղվել է գեղանկարչության տարբեր ճյուղերով:

Նույնպես Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան ավարտեց ղրիմահայ Հովհաննես Այվազովսկին, որը դարձավ աշխարհահռչակ ծովանկարիչ: Այդ նույն ակադեմիայում կրթություն ստացավ նաև Աբովյանի մանկության ընկեր Ստեփան Ներսիսյանը, որի գործերից նշանավոր են Մեսրոպ Մաշտոցի, Բեթհովենի դիմանկարները, «Խնջույք գետափին» նկարը:

Երաժշտության մեջ աչքի էր ընկնում Համբարձում Լիմոնջյանը: Նա ստեղծում է հայկական նոտաներ: Այդ նոտաներով իր հետևորդների հետ ձայնագրում են եկեղեցական շարականներ, ժողովրդական երգեր ու պարեր: Մեծն Կոմիտասն ուշադրություն է դարձրել և բարձր գնահատել Հ. Լիմոնջյանի դերը:

Աշխուժություն է նկատվում թատերական արվեստի բնագավառում: Դեռևս մասնագիտացված թատրոններ չկային, բայց դպրոցներում և այլ տեղերում կազմակերպում էին սիրողական ներկայացումներ: Նման ներկայացումներ են կազմակերպվում Թիֆլիսում, Ղրիմի, Նոր Նախիջևանի հայկական գաղութներում: 1827թ. Երևանում դեկաբրիստ սպաների մասնակցությամբ առաջին անգամ բեմադրվեց Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը» պիեսը:

Հովհաննավանքի խաչքարերը

Թուրք-պարսկական տիրապետության շրջանում գրեթե դադարել էին շինարարական աշխատանքները: Հետևաբար՝ վերացել էին ճարտարապետությունը զարգացնելու հնարավորությունները: Հարուստ ավանդույթներ ունեցող

ճարտարապետությունը զարգանում էր փոքր ձևերում: Ստեղծվում էին նրբաճաշակ խաչքարեր, մատուռներ, տապանաքարեր, դարպասներ և այլն: Գողտրիկ հուշարձանների ստեղծումը նպաստեց քանդակագործության զարգացմանը: Հայ վարպետների նուրբ քանդակներով ստեղծված խաչքարերն ու շիրմաքարերն արվեստի սքանչելի գործեր են:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրե՛ք 17–19-րդ դարի առաջին կեսի հայ գրականության նշանավոր ներկայացուցիչներին:
2. Բնութագրե՛ք Խաչատուր Աբովյանի կյանքն ու գործունեությունը: Ինչպիսի՞ն եք պատկերացնում նրան:
3. Ովքե՞ր նախապատրաստեցին հայ գրականության նոր փուլը: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր այդ նորը:
4. Արվեստի ո՞ր ճյուղերը զարգացում ապրեցին 17-րդ դարի երկրորդ կեսից 19-րդ դարի առաջին կեսին: Ովքե՞ր են այդ բնագավառում աչքի ընկած գործիչները:
5. Լրացրե՛ք «Գրականությունը և արվեստը» աղյուսակը:

Բնագավառները	Ներկայացուցիչները	Ստեղծագործությունները
Գրականություն		
Կերպարվեստ		
Երաժշտություն		
Թատրոն		

3. ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մամուլը: Հնդկաստանի աշխույժ հասարակական կյանքը առաջադրեց նաև պարբերական ունենալու անհրաժեշտությունը: 1794–1796թթ. Մադրասում Հարություն Շմավոնյանի նախաձեռնությամբ և հենց իր տպարանում լույս ընծայվեց հայոց առաջին պարբերականը՝ «Ազդարարը»: Այն ուներ քաղաքական, տնտեսական և լուրերի բաժիններ: Այնտեղ տպագրվում էին նաև բանավիճային ու պատմական բնույթի հոդվածներ: XIX դարի առաջին կեսին աշխուժացավ պարբերական մամուլի հրատարակությունը: Այս շրջանի նշանավոր պարբերականներից են «Բազմավեպ» (Վենետիկ), «Շտեմարան», «Ազգասեր» (Կալկաթա), «Լրագիր» (Կ. Պոլիս), «Հայրենասեր» (Զմյուռնիա), «Կովկաս», «Արարատ» (Թիֆլիս) հանդեսները:



«Ազդարար»՝ հայերեն առաջին պարբերականը

Տպագրությունը: Հայերեն գրքերի տպագրության սկզբնավորումը նոր փուլ նախանշեց և անգնահատելի դեր ունեցավ XVII–XVIII դարերի հայկական մշակույթի զարգացման բնագավառում: XVII դարի երկրորդ կեսին առավել նշանավոր և արդյունավետ էր Ամստերդամում հիմնադրված տպարանը:

«Աստվածաշնչի» առաջին հրատարակությունը (1666–1668)

Հայերեն գրքերի աճող պահանջների թելադրանքից ելնելով՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը Եվրոպայում տպագրություն կազմակերպելու առաքելությամբ 1656թ. Եվրոպա է ուղարկում իր քարտուղար Մատթեոս Ծարեցուն: Գրաքննության խիստ կանոնների ու վերահսկողության պայմաններում հաջողության չհասնելով Հռոմում՝ Ծարեցին անցնում է Ամստերդամ, որտեղ բողոքականության միջավայրում նրան հաջողվում է ստեղծել տպարան:

Ամստերդամի հայոց տպարանը առավել լիարժեք է գործում 1664թ. այնտեղ ժամանած Ոսկան Երևանցու և Կարապետ Անդրիանցու համատեղ ջանքերի շնորհիվ: Աստվածաշնչի ամբողջական նկարազարդ ու հատուկ խնամքով իրականացված տպագրությունը խոշոր նվաճում էր: Ամստերդամի հայկական տպարանում տպագրվում է ևս 11 անուն գիրք:

Ոսկան Երևանցին տպարանը փոխադրում է Լիվոռնո, որտեղ երեք գիրք հրատարակելուց հետո փոխադրվում է Մարսել և այնտեղ 1673թ. վերսկսելով աշխատանքը՝ մինչև 1680-ական թվականների վերջերը հրատարակում 16 անուն գիրք:

Ամստերդամի հայոց տպարանը կարևոր դեր խաղաց հայ տպագրության պատմության մեջ: Ոսկան Երևանցին ունեցավ նաև աշակերտներ, որոնք նույն ոգով նվիրվեցին տպագրության միջոցով լուսավորության տարածման գործին:

Մատթեոս Վանանդեցու հրավերով Ամստերդամ են ժամանում նրա ազգականները ևս, որոնց ջանքերով 1695թ. այստեղ հրատարակվում է կիսագնդերի աշխարհագրական մի մեծադիր քարտեզ՝ «Համատարած աշխարհացույց»-ը: Նույն տարում հրատարակվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

XVII–XVIII դդ. հայկական գրահրատարակչությունը մեծ առաջադիմություն է արձանագրում Կ. Պոլսում: 1677թ. այստեղ տպարան է հիմնադրում Երեմիա Չելեպի Քեոմուրճյանը: Հայ տպագրության պատմության մեջ մեծ ավանդ ունի Աստվածատուր դպիր Կոստանդնուպոլսեցին, որն իր հիմնադրած տպա-

րանում 1699 թվականից հրատարակել է ավելի քան ութսուն անուն գիրք: Այս տպարանում առաջին անգամ լույս է տեսնում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» հռչակավոր երկը:

XVIII դարը հայ տպագրության համար դարձավ ծաղկման շրջան: Հայերեն գրքեր էին տպագրվում Կ. Պոլսում, Հռոմում, Վենետիկում, Տրիեստում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Մադրասում, Կալկաթայում, Էջմիածնում, որոնք միաժամանակ վերածվել էին հայ մշակույթի նշանավոր կենտրոնների: Հայ տպագրության մեծ և շրջադարձային նշանակության նվաճում արձանագրվեց Էջմիածնում՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763–1780) նախաձեռնությամբ տպարանի ստեղծումով (1771թ.): Սիմեոն Երևանցին նաև նախաձեռնում և 1776թ. իրականացնում է Էջմիածնում թղթի արտադրության գործարան կառուցելու գործը:

1512–1800թթ. հայ գրատպությունը ունեցավ մեծ առաջընթաց, լույս տեսավ հոգևոր ու աշխարհիկ բովանդակությամբ ավելի քան հազար անուն աշխատություն: XIX դ. առաջին կեսին շարունակվեց տպագրական գործի ծավալումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է հայ առաջին պարբերականը, ե՞րբ և որտե՞ղ է տպագրվել:
2. Ձեր կարծիքով՝ հայ մամուլի սկզբնավորումը կարելի՞ է գնահատել որպես շրջադարձային իրադարձություն:
3. Նշե՛ք 17–18-րդ դարերի հայ նշանավոր տպագրիչներին: Ո՞ւմ գործունեությունը կցանկանայիք առանձնացնել:
4. Լրացրե՛ք «Մամուլը և տպագրությունը XVII և XVIII դարերում» աղյուսակը:

Բնագավառները	Կենտրոնները	Ներկայացուցիչները	Տարեթիվը	Անվանումը
Մամուլ				
Տպագրություն				

ԹԵՍՏ

Որտե՞ղ է տպագրվել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը.

1. Ամստերդամում,
2. Կ. Պոլսում,
3. Մարսելում,
4. Վենետիկում:

Համապատասխանեցրե՛ք ստեղծագործությունը հեղինակի անվանը.

1. «Խնջույք գետափին»,
2. «Բժշկարան»,
3. «Խելքից պատուհասը»,
4. «Վերք Հայաստանի»,

ա) Խաչատուր Աբովյան,
բ) Ստեփան Ներսիսյան,
գ) Պետրոս Քալանթարյան,
դ) Ալեքսանդր Գրիբոյեդով:

Մ. Չամչյանը՝ «Պատմութիւն Հայոց» աշխատությունը գրելու դրդապատճառի մասին

«Բոլորին ցանկալի է ծանոթանալ իրենց ազգի սկզբնավորությանը և տեղեկանալ նրա գլխով անցած իրադարձություններին: Այդ պատճառով էլ այն ազգերը, որոնք ձեռնահաս եղան, հետամտեցին և գրեցին իրենց նախնիների պատմությունը ու նրանց գործերը: Այսպիսի հոգացություն թեև մեր ազգի մեջ էլ երևաց, բայց չծաղկեց, որովհետև քչերը ձեռնամուխ եղան այդ գործին, ու օտարներից շատերն էլ մեր ազգի մասին գրեցին, բայց սխալներով լի, հերյուրանքներով ու ստերով, որով իսպառ նսեմացավ ծանոթությունը մեր ազգի մեջ եղած գործերին: Այս տեսնելով՝ վաղուց հետե որոշեցինք գրել մեր ազգի օրինավոր պատմությունը, որպեսզի այս ասպարեզում էլ ուրիշ ազգերից հետ չմնանք»:

Սայաթ-Նովայի խոսքերից

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է.
Ամեն մարթ չի կանա կարթա, իմ գիրըն ուրիշ գըրեն է.
Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է...

Խ. Աբովյանը՝ ազատասիրության, հայրենասիրության ու լուսավորության ջատագով

«Ձեզ եմ ասում, ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդներ, ձեր անունին մեռնեմ, ձեր արևին ղուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն ղայիմ բռնեցեք: Մեկ դարդակ լեզուն ինչ ա, որ մարդ չկարենա սովրիլ...

Երեխեք, ձեր ջանին մեռնիմ, ձե՛զ եմ ասում իմ դարդը, ձեզ համար եմ գրում, ձեր երեսին ղուրբան. հողումն էլ ըլիմ, եկե՛ք, վրես կանգնեցեք. թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցե՛ք ինձ, թե օգուտ՝ օրհնեցեք...»:

ԹԵՄԱ 4-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հայկական մշակույթը 17-րդ դ. 2-րդ կեսից 19-րդ դարի առաջին կեսը զարգանում էր Հայաստանից դուրս: Մշակույթի աչքի ընկնող կենտրոններ էին Մոսկվան, Կ. Պոլիսը, Թիֆլիսը, Աստրախանը, Նոր Նախիջևանը, Կալկաթան, Վենետիկը և այլ քաղաքներ:
2. 17–18-րդ դդ. աշխուժացավ կրթական գործը, հայապահպանության խնդրում մեծացավ լուսավորության դերը: Բաղեշի Ամիրդոլու վանքի, Նոր Ջուղայի դպրոցները դարձան կրթության կարևոր կենտրոններ: 19-րդ դարի առաջին կեսին բացվեցին բազմաթիվ ուսումնական հաստատություններ: Նրանցից առավել նշանավորներն էին Աղաբաբյան դպրոցը, Լազարյան ճեմարանը, Ներսիսյան դպրոցը:

3. Վերելքի ուղիով ընթացող տպագրական գործը 18–19-րդ դարերում հասնում է բուռն ծաղկման: Խոշոր իրադարձություն էր հայ պարբերական մամուլի սկզբնավորումը: 1794թ. Մադրասում լույս ընծայվեց հայոց առաջին պարբերականը՝ «Ազդարարը»: Նրան հաջորդում են «Բազմավեպ», «Ազգասեր», «Կովկաս», «Լրագիր» և այլ պարբերականներ:
4. 17–19-րդ դարի առաջին կեսին հաջողություններ ձեռք բերվեցին նաև գիտության ասպարեզում: Լուրջ նվաճումների հասավ հայագիտությունը, մասնավորապես պատմագրությունը և լեզվաբանությունը: Մեծ նշանակություն ունեցավ Մ. Չամչյանի եռահատոր «Պատմութիւն Հայոց» աշխատությունը:
5. 17–19-րդ դարի առաջին կեսին հայ գրականությունը հարստացավ չափածո ստեղծագործություններով: Սայաթ-Նովան նոր մակարդակի բարձրացրեց գուսանական-աշուղական երգն ու բանաստեղծությունը: Այս շրջանում Խ. Աբովյանի ջանքերով ստեղծվեց հայ նոր գրականությունը: Նրա ստեղծագործությունները գրված են ժողովրդի համար պարզ և մատչելի լեզվով՝ աշխարհաբարով:
6. Հայ արվեստը զարգացում ապրեց 17–19-րդ դարի առաջին կեսին: Հայտնի էին նկարիչներ Հակոբ և Աղաֆոն Հովնաթանյանները, Ստեփան Ներսիսյանը: Նույն ժամանակ իր ստեղծագործական ուղին սկսեց աշխարհահռչակ ծովանկարիչ Հ. Այվազովսկին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX-Ի ՍԿԶԲԻՆ

ԲԱԺԻՆ 2

5 ԹԵՄԱ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԵՐՈՒՄ

1. ՏԵՂԱՇԱՐԺԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գյուղացիական բարեփոխումները: Ակնառու էր դարձել ճորտատիրական Ռուսաստանի հետամնացությունը: Գահ բարձրացած Ալեքսանդր II կայսրը նախապատրաստեց և 1861թ. փետրվարի 16-ի մանիֆեստով վերացրեց ճորտատիրությունը: Թեպետ գյուղացուն ճորտությունից՝ կալվածատիրոջը ամբողջովին ենթակա լինելուց ազատելու ցարական մանիֆեստը թերի կողմեր ուներ, այնուամենայնիվ այդ բարեփոխումը վճռական նշանակություն ունեցավ երկրի առաջընթացի, բուրժուական հարաբերությունների ուղիով ընթանալու համար: Դրան մեծապես նպաստեցին նաև կատարված վարչական, դատական, զինվորական բարեփոխումները:

Ցարական կառավարությունը կայսրության եվրոպական մասում բարեփոխումներ իրականացնելուց հետո անցավ երկրի ծայրամասերին: Նույն 1860-ական թթ. այդ քաղաքականությունը կիրառեց Անդրկովկասում և քսաներորդ դարի սկզբին՝ առաջին հերթին Վրաստանում, որտեղ ճորտատիրական հարաբերությունները դրսևորվում էին որոշակի: Նկատի ունենալով, որ Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում ճորտատիրություն չկա, և հողատիրության ձևերը համանման են, ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է այդ նահանգների համար մշակեր մեկ ընդհանուր կանոնադրություն: Հանձնաժողովի մշակած կանոնադրությունը 1870թ. մայիսի 14-ին հաստատում է Ալեքսանդր II-ը, որով և այն օրենքի ուժ է ստանում:

Գյուղացիական բարեփոխումները վերաբերում էին միայն կալվածատիրական գյուղացիներին և չէին տարածվում պետական ու վանքապատկան հողատիրությունների բնակչության վրա: Կանոնադրության համաձայն՝ գյուղի յուրաքանչյուր արական սեռի բնակիչ իրավունք ուներ փրկագնման կամ հետգնման միջոցով ձեռք բերելու մինչև 5 դեսյատին հող: Սակայն քանի որ հետգնման վճարները բարձր էին, գյուղացիները ի վիճակի չէին վճարումներ կատարելու, ուստի հիմնականում մնացին հողազուրկ: Կալվածատերերը

իրենց ձեռքում պահեցին հողերի զգալի մասը: Դրանից բացի՝ նրանց օգտին գյուղացիները պարտավոր էին կոռ ու բեկար կատարել: Այնպես որ 1870թ. բարեփոխումները իրենց հիմնական մասով մնացին չիրագործված:

Անդրկովկասում ևս կատարվեցին քաղաքային և դատական բարեփոխումներ: Քաղաքներին տրվում էր ինքնավարություն՝ հանձին ընտրովի քաղաքային դումայի, որը գլխավորում էր քաղաքագլուխը: Նոր օրենքով նախկին դասային դատարանը, որն իրեն սպառել էր, փոխարինվում էր ընդհանուր, բոլոր քաղաքացիների համար միատեսակ դատավարությամբ: Դատական բարեփոխումը առաջադիմական նշանակություն ունեցող կարևոր քայլ էր:

Գյուղատնտեսության առաջընթացը: Կատարված բարեփոխումները, որքան էլ լիարժեք չէին, այնուամենայնիվ նպաստեցին շուկայական պահանջներին համապատասխան գյուղատնտեսության վերակառուցմանը: Բնականաբար, կյանք մտնող բուրժուական արտադրահարաբերություններն իրենց կնիքն էին դնում նաև գյուղատնտեսության վրա: Ցարական կառավարությունը, ձգտելով Հայաստանի գյուղատնտեսությունը ծառայեցնել ռուսական կապիտալիզմի շահերին, նպաստեց դրա մի շարք ճյուղերի առաջընթացին: Ռուսական մանուֆակտուրային ընկերությունները նպաստում էին բամբակագործության զարգացմանը: Ընդարձակվում էին բամբակի ցանքատարածությունները, մեծանում էր արտադրությունը: Երևանի նահանգում 10 տարում՝ 1880-1890թթ., բամբակի արտադրությունը աճեց 5 անգամ: Արևելյան Հայաստանը դարձավ Անդրկովկասում բամբակի արտադրության գլխավոր կենտրոնը:

Շիրակի սայլվորներ

Հետռեֆորմային տարիներին առաջընթաց ապրեց նաև խաղողագործությունը, ինչը պայմանավորված էր սպիրտային խմիչքների արտադրության աճով: Աստիճանաբար ավելի ու ավելի ապրանքային նշանակություն էր ձեռք բերում և ավելի մեծ ծավալներ ստանում այգեգործությունը: Այգեգործությամբ զբաղվում էին Երևանի, Էջմիածնի, Նախիջևանի գավառներում, Կարսի մարզում և այլ տեղերում: Անգամ բանջարաբուծությունը սկսեց կապվել շուկայի հետ: Արարատյան դաշտում մշակվող բանջարեղենը վաճառքի էր հանվում լեռնային և նախալեռնային շրջաններում:

Տեղաշարժեր կատարվեցին նաև հացահատիկի արտադրության ոլորտում: Եթե ցորենն ու գարին և մյուս հացահատիկային կուլտուրաները սպառվում էին տեղում, ապա դարի վերջին դրությունը փոխվեց: Երբ շարք մտավ Թիֆլիս-Բաքու երկաթուղին, հացահատիկի զգալի մասը սկսեցին արտա-

հանել նաև արտասահման: Բրնձի մշակման հիմնական շրջանները Երևանի և Դարալագյազի գավառներն էին: Մետաքսագործության զարգացման պահանջարկը խթանեց նաև շերամապահության ծավալումը:

Փոփոխություններ տեղի ունեցան նաև անասնապահության ոլորտում: Հատկապես խոշոր եղջերավոր անասունները գիրացվում էին և վաճառքի հանվում: Անասնապահությունը ևս հարմարվում էր շուկայի պահանջներին:

Այսպիսով՝ 19-րդ դարի վերջին արդեն բնատնտեսությունը քայքայվում էր, և գյուղատնտեսության բոլոր ճյուղերը ներգրավվում էին շուկայական հարաբերությունների մեջ:

Առաջադիմեց այգեգործությունը, հատկապես խաղողագործությունը: Շուկային համապատասխան՝ փոփոխություններ կրեցին յուղատու բույսերի արտադրությունը, շերամապահությունը, բանջարաբուծությունը:

Տեղաշարժերը առավել նկատելի էին տնտեսության մյուս ճյուղերում՝ արդյունաբերության և առևտրի բնագավառներում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է ընդունվել ճորտատիրության վերացման ցարական մանիֆեստը:
2. Ե՞րբ ընդունվեց գյուղացիական բարեփոխման կանոնադրությունը և ի՞նչ նպատակ էր հետապնդում: Ի՞նչ սահմանափակումներ կային կանոնադրության մեջ:
3. Ո՞րն էր քաղաքային և դատական բարեփոխումների էությունը: Ի՞նչ նշանակություն ունեցան այդ բարեփոխումները:
4. Գյուղատնտեսության ո՞ր ճյուղերը զարգացան, և ինչի՞ հետ էր կապված դրանց զարգացումը:
5. Ձեր կարծիքով՝ ո՞ւմ շահերից էր բխում ցարական մանիֆեստը: Ի՞նչ եք կարծում՝ Ռուսաստանն ունե՞ր զարգացման այլընտրանք: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
6. Լրացրե՛ք «Ցարական բարեփոխումները» աղյուսակը:

Բարեփոխումները	Բովանդակությունը	Արդյունքները
Գյուղացիական		
Քաղաքային ինքնավարություն		
Դատական		

ԹԵՍՏ

19-րդ դարի վերջին քայքայվեց.

1. գյուղատնտեսությունը,
2. բնատնտեսությունը,
3. արդյունաբերությունը,
4. այգեգործությունը:

2. ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արդյունաբերություն և առևտուր: Հետռեֆորմյան շրջանում Ռուսաստանում սկսեցին զարգանալ բուրժուական հարաբերությունները: Կապիտալիզմը զարգանում էր և՛ խորությամբ, և՛ լայնությամբ՝ իր ոլորտի մեջ առնելով ծայրամասերը, այդ թվում և Անդրկովկասը: Աստիճանաբար ավելի ու ավելի էին ընդլայնվում Ռուսաստանի և Անդրկովկասի տնտեսական կապերը: Դա արտահայտվեց հատկապես դարի վերջին տասնամյակներին ձեռքի աշխատանքի մեքենայացմամբ, խճուղային ճանապարհների կարգավորմամբ, մասնավորապես երկաթուղիների կառուցմամբ: Երկաթուղին ամենաուրեք հեղաշրջում էր առաջացնում երկրի տնտեսության մեջ: 1883թ. սկսեց գործել Բաքու–Թիֆլիս–Բաթում, 1899թ.՝ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին, իսկ 1901թ. Ալեքսանդրապոլը կապվեց Երևանի հետ:

Ալեքսանդրապոլի դեպոն

Երկաթուղիները խթանեցին ապրանքափոխանակության, առևտրի զարգացումը Ռուսաստանի և Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի միջև: Ռուսաստանից ներմուծվում էր արդյունաբերական արտադրանք, իսկ Անդրկովկասից ու Հայաստանից տարվում էին գյուղատնտեսական ապրանքներ: Երևանի և Ալեքսանդրապոլի առևտրական շրջանառությունը դարի վերջին տասնամյակներին 1860-ական թթ. համեմատությամբ աճեց ավելի քան երեք անգամ: Աճեց նաև հացահատիկի առևտուրը: Երևանի նահանգից տարեկան շուրջ 2 միլիոն փութ հացահատիկ էր արտահանվում Եվրոպա: Արագորեն աճում էին հատկապես բամբակի, գինու, կոնյակի, մետաքսի, ծխախոտի, բրդի, չոր մրգի առևտուրն ու արտահանումը:

Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղը լեռնարդյունաբերությունն էր՝ պղնձի և աղի արտադրությունը: Պղնձարդյունաբերության կենտրոններն էին Ալավերդին և Զանգեզուրը: Արդյունաբերության այս ճյուղը զգալի աճ ունեցավ: Զանգեզուրում երեսուն տարվա ընթացքում (1870-1900թթ.) պղնձի արտադրությունը աճեց ավելի քան հինգ անգամ: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Հայաստանը տալիս էր ամբողջ Ռուսաստանում արտադրվող պղնձի 17 տոկոսը: Աճեց նաև աղի արտադրությունը:

Հիմնվեցին գինու, կոնյակի, կաշվի մշակման և ուրիշ արդյունաբերական ձեռնարկություններ: Կոնյակի գործարան 1887թ. առաջինը բացեց Թաիրովը: Հետագայում ռուս կապիտալիստ Շուստովը գնեց կոնյակի ու սպիրտի արտադրությունը: Նրա արտադրած կոնյակը, որը «Արարատ» մակնիշով էր արտահանվում, մրցությունից դուրս էր համարվում: Հայկական կոնյակը արտահանվում էր Ռուսաստան և եվրոպական երկրներ: Հայ արդյունաբերական և առևտրական բուրժուազիան ցրված էր ամբողջ Անդրկովկասում: Մի շարք

խոշոր արդյունաբերողներ (Մանթաշյանց, Տեր-Ղուկասով, Արամյանց և ուրիշներ) իրենց կապիտալը ներդնում էին Բաքվի արդյունաբերության մեջ: Թիֆլիսի թեթև և սննդի արդյունաբերության մեջ մեծ էր հայ ձեռնարկատերերի (Ադելխանով, Ալիխանով և ուրիշներ) տեսակարար կշիռը:

Շուստովի կոնյակի գործարանը

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը փոփոխություններ առաջ բերեց բնակչության կազմում, աշխուժացրեց քաղաքային կյանքը: Աճեց քաղաքների բնակչությունը: Երևանը 1865թ. ուներ 14 հազար բնակիչ, 1897թ.՝ 29 հազար, իսկ 1910թ. հասնում էր 32 հազարի: Այդ նույն ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի (Գյումրի) բնակչությունը 16 հազարից հասավ 31 հազարի, իսկ 1910թ. դարձավ 35 հազար:

Ցարական կառավարության ազգային-գաղութային քաղաքականությունը: 1860-1870-ական թթ. բարենորոգումների և տնտեսական կյանքի որոշ բարելավումներից հետո ցարիզմը փոխեց իր վերաբերմունքը և ուժեղացրեց ճնշումների ու հալածանքների քաղաքականությունը:

Ուժեղացվեցին ազգային հալածանքները ոչ ռուս ժողովուրդների նկատմամբ: Ինքնակալությունը սկսեց հակակրանքով վերաբերվել Արևմտյան Հայաստանում ինքնավարություն ստեղծելու հայերի ձգտումներին՝ գտնելով, որ դա վարակիչ կարող է լինել կովկասյան ժողովուրդների համար: Նա արգելեց հայ ֆիդայիներին Անդրկովկասից անցնել Թուրքիա և օգնել իրենց արևմտահայ եղբայրներին:

Չբավարարվելով դրանով՝ ցարիզմը սկսեց ուժեղացնել արևելահայերի հալածանքները: Ամենից առաջ սահմանափակվեցին Ամենայն հայոց կաթողիկոսի ու Էջմիածնի Մայր աթոռի իրավունքները: Իշխանությունը գտնում էր, որ կաթողիկոսը հաճախ գործում է Պետերբուրգից անկախ, բացում է ազգային դպրոցներ և կատարում անհարիր այլ գործողություններ: Ռուսական իշխանությունները գաղտնի հսկողություն սահմանեցին Էջմիածնի վրա: Նրանք Էջմիածինը համարում էին հեղափոխական շարժման կենտրոն, ուր երեխաներին դաստիարակում են ըմբոստության ոգով: Աքսորվեցին մի շարք հոգևորականներ և աշխարհիկ գործիչներ: Հայկական դպրոցների վրա սահմանվեց խիստ հսկողություն, իսկ 1885թ. փակվեցին Անդրկովկասում գործող շուրջ 300 հայկական դպրոցներ: Թիֆլիսում դպրոցների փակումը նկարագրելով՝ ականատեսը հաղորդում էր. «Ավելի քան 1000 աղջիկ ու տղա ցրվեցին իրենց տները՝ աղի-աղի արցունք թափելով, և ավելի քան 50 ուսուցիչ և ուսուցչուհի մնացին գլխիկոր ու վշտաբեկ»: Մեկ տարի անց Կովկասի իշխանությունները հարկադրված էին վերաբացել այդ դպրոցները:

Իրենց հայահալած քաղաքականությունը արդարացնելու և ռուսներին հայերի դեմ գրգռելու նպատակով հորինեցին հայերի սեպարատիզմի, այսինքն՝ Ռուսաստանից անջատվելու մասին առասպելը:

Ինքնակալությունը, առաջնորդվելով «Ռուսաստանը ռուսների համար» սկզբունքով, ջանում էր Արևելյան Հայաստանում փոխել բնակչության ազգային կազմը՝ որքան հնարավոր է շատ ռուսներ բնակեցնելով: Կարսի մարզը կայսրությանը միացնելուց հետո գտնում էին, որ անհրաժեշտ է այն և Հայաստանի այլ վայրերը բնակեցնել ռուսներով: Ցարական պաշտոնյաները մարզի ազատ տարածքները սկսեցին հատկացնել ռուսներին, որոնք գաղթեցվում էին գերազանցապես եվրոպական Ռուսաստանից: Նրանք եկվորներին ավելի շատ հողեր էին տալիս և ավելի երկար ժամանակով ազատում հարկերից ու տուրքերից: Ցարական կառավարության այդ քաղաքականության հետևանքով Լոռիում, Սևանի ավազանում, Կարսի մարզում, Զանգեզուրի ու Ղազախի գավառներում բնակություն հաստատեցին հազարավոր ռուսական ընտանիքներ:

Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը և վարչական բաժանումը: Թուրքական կառավարությունը Հայաստանը ենթարկում էր այնպիսի վարչական բաժանման ու կառավարման, ինչպիսիք կային կայսրության այլ շրջաններում: Սակայն այնպես էին անում, որ հայերը ոչ մի նահանգում չկազմեին բնակչության մեծամասնություն: Արևմտյան Հայաստանը բաժանված էր վեց նահանգների՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի: Նահանգները կամ վիլայեթները բաժանվում էին գավառների, իսկ գավառները՝ գավառակների:

Արևմտահայ բնակչության հիմնական մասը տարբեր նահանգներում ապրող գյուղացիությունն էր: Նրանք զբաղվում էին հացահատիկային, բանջարա-բոստանային կուլտուրաների մշակմամբ և այգեգործությամբ: Լայնորեն տարածված էր նաև գյուղատնտեսության մյուս կարևոր ճյուղը՝ անասնապահությունը: Հայերը զբաղվում էին մանր ու խոշոր եղջյուրավոր անասնապահությամբ, ձիաբուծությամբ: Նրանք իրենց գյուղատնտեսական մթերքները վաճառում էին տեղում կամ հարևան գավառներում: Առևտուրը կատարվում էր ապրանքափոխանակությամբ կամ դրամով:

Լայն տարածում ուներ արհեստագործությունը: Արհեստներից զարգացած էին դարբնությունը, դերձակությունը, կոշկակարությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը և այլն: Հայ վարպետները շատ տեղերում իրենց արհեստները հասցրել էին կատարելագործման: Հայտնի էին Վանի ոսկեգործ-արծաթագործները, Խարբերդի գորգագործները, Մուշի կավագործները և այլն:

Օսմանյան կայսրությունը հետամնաց ավատատիրական երկիր էր: Այնտեղ միայն 19-րդ դարի վերջերից սկսեցին օղու, կտորեղենի, մետաղամշակման և արդյունաբերական որոշ այլ ձեռնարկություններ հիմնել: Դրանց հիմ-

նական նախաձեռնողները հայերն էին: Երկիրը աստիճանաբար ներքաշվում էր կապիտալիստական հարաբերությունների մեջ:

Ազգային խտրականությունը: Թուրքական կառավարությունը հայտարարում էր երկրում բարենորոգումներ կատարելու, բոլոր ազգերին հավասար իրավունքներ տալու մասին, բայց այդ ամենը մնում էր թղթի վրա: Իրականում արևմտահայության նկատմամբ վարում էր հալածական քաղաքականություն: Նույն կերպ էր վարվում նաև ոչ մահմեդական մյուս ժողովուրդների նկատմամբ: Բարձր հարկերի և տուրքերի միջոցով հայերը տնտեսական շահագործման էին ենթարկվում: Նրանց վրա ավելի մեծ տուրքեր էին դրվում, քան երկրի մյուս բնակիչների՝ մահմեդականների վրա: Չկար անձի և գույքի ապահովագրում: Ընդհակառակը՝ հաճախ տեղական իշխանությունները գործարքի մեջ էին մտնում աղաների և ավազակային խմբերի հետ և թալանի ենթարկում հայ բնակչությանը:

Սուլթանական կառավարությունը արևմտահայության նկատմամբ վարում էր խտրականության քաղաքականություն: Բոլոր պաշտոններում նշանակվում էին մահմեդականները, հատկապես թուրքերը: Մահմեդականներին թույլատրվում էր զենք կրել, իսկ հայերին՝ ոչ: Դատարանում չէին ընդունվում քրիստոնյաների վկայությունները, եթե մեղադրվողները մահմեդականներ էին: Անհանդուրժողական վերաբերմունք կար նաև դավանանքի հարցում: Հաճախ արհամարհում, ծաղրի էին ենթարկում հայերի կրոնական զգացումները: Հայերին անվանում էին գյավուրներ, այսինքն՝ անհավատներ, որոնք օրենքից դուրս էին հայտարարվում և ենթարկվում զանազան ստորացումների:

19-րդ դարի վերջերից ավելի խստացան ազգային հալածանքները: Հայկական դպրոցները դնում էին տեղական իշխանությունների հսկողության տակ: Արգելվում էին հայրենասիրական ոգի արթնացնող թատերական ներկայացումները, պատմության, գրականության առարկաների դասավանդումը: Թուրքական իշխանությունները կրճատեցին հայերեն լույս տեսնող թերթերն ու ամսագրերը: Արգելվեց արտասահմանում լույս տեսնող հայ առաջադեմ գրականության մուտքը Թուրքիա:

Այդ ամենը, բնականաբար, խթանում էր հայության շրջանում խմորվող ազատագրական շարժումները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ 19-րդ դարի վերջին ի՞նչը նպաստեց Ռուսաստանի և Անդրկովկասի միջև տնտեսական կապերի ընդլայնմանը:
2. Ի՞նչ փաստեր կարող եք բերել Հայաստանի առևտրի զարգացման օգտին: Ի՞նչ էր արտահանվում Հայաստանից և ի՞նչ էր ներմուծվում:
3. Նշե՛ք հայ խոշոր արդյունաբերողներին: Ի՞նչ գիտեք նրանց մասին: Ի՞նչ դեր էին խաղում նրանք Անդրկովկասի արդյունաբերության մեջ:

4. Ցարական կառավարության գաղութային քաղաքականությունը ինչո՞ւ էր սուր ծայրով ուղղված հայկական դպրոցների և հայոց կաթողիկոսության դեմ:
5. Ի՞նչ եք կարծում՝ իր վարած գաղութային քաղաքականությամբ կարո՞ղ էր ցարական կառավարությունը հայ ժողովրդին զրկել ազգային և մշակութային ինքնավարությունից:
6. Լրացրե՛ք «Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ» աղյուսակը:

Քաղաքականությունը	Բովանդակությունը	Հետևանքները
Արևմտյան Հայաստան		
Հայոց եկեղեցի		
Կրթություն և մշակույթ		
Բնակեցում		

ԹԵՍՏ

Թիֆլիս – Ալեքսանդրապոլ – Կարս երկաթուղին սկսել է գործել.

1. 1899 թվականին,
2. 1883 թվականին,
3. 1902 թվականին,
4. 1891 թվականին:

ԹԵՄԱ 5-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 1860-ական թթ. Ռուսաստանում իրականացվող գյուղացիական բարեփոխումները ընդգրկեցին նաև Արևելյան Հայաստանը: Այստեղ կային պետական, կալվածատիրական և վանքապատկան գյուղացիներ: Առավել ծանր էր կալվածատիրական գյուղացիների սոցիալական դրությունը: Այդ էր պատճառը, որ 1870թ. մայիսի 14-ի կանոնադրությունը տարածվում էր միայն կալվածատիրական գյուղացիների վրա: Նրանց թույլատրվում էր փրկագնել իրենց հողաբաժինները: Չնայած թերի լինելուն՝ բարեփոխումն, այնուամենայնիվ, նպաստեց գյուղատնտեսության զարգացմանը: Զարգացում ապրեցին հացահատիկային կուլտուրաների, բրնձի, բամբակի մշակությունը, շերամապահությունը, այգեգործությունը, մասնավորապես խաղողագործությունը: Գյուղատնտեսությունն աստիճանաբար ձեռք էր բերում ապրանքային բնույթ:
2. 1860–70-ական թթ. բարեփոխումները նպաստեցին Արևելյան Հայաստանի արդյունաբերության վերելքին: Աշխուժացան երկաթուղային շինարարությունը և Ռուսաստանի հետ տնտեսական կապերը: Ավելացավ պղնձի և աղի արտադրությունը, սկսեցին գործել բամբակի մշակման մի շարք ձեռնարկություններ: Հիմնվեցին գինու, կոնյակի, կաշվի մշակման և ուրիշ գործարաններ: Հանդես եկան մի շարք

խոշոր հայ արդյունաբերողներ (Մանթաշյանց, Տեր-Ղուկասով, Արամյանց և ուրիշներ)։

3. 19-րդ դարի 2-րդ կեսին Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում ավելի ուժեղացան հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող ազգային ճնշումները։ Մեծ թափ ստացան լուսավորական հաստատությունների ու գործիչների հալածանքները, փակվեցին հայկական դպրոցները։ Սահմանափակվեցին Ամենայն հայոց կաթողիկոսի և Էջմիածնի Մայր աթոռի իրավունքները։

ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

1. ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Պահպանողական հոսանք։ 1860-1870-ական թթ. հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական զարգացման հիմնահարցն առաջնահերթ նշանակություն ստացավ։ Հայ գործիչների մի մասը կարծում էր, որ օսմանյան և ռուսական ճնշումներին դիմակայելու համար անհրաժեշտ է պահպանել ազգի ավանդույթները, լեզուն և կրոնը։ Ժողովրդի տնտեսական դրության բարելավման հիմնական միջոցը նրանք համարում էին երկրագործության, արհեստների և առևտրի զարգացումը։ Պահպանողականները դեմ չէին եվրոպական մշակութային արժեքներին, սակայն առաջարկում էին զգուշությամբ յուրացնել դրանք, որպեսզի չաղավաղվի հայության ազգային դիմագիծը։

Այսպիսի պահպանողական հայացքներ ուներ եկեղեցական նշանավոր գործիչ Գաբրիել Այվազովսկին՝ «Մասյաց աղավնի» ամսագրի խմբագիրը։ Նա հատկապես պաշտպանում էր կրոնի և եկեղեցու ազգապահպան նշանակության գաղափարը։ Այվազովսկին բարձր էր գնահատում հայերի հին գրական լեզուն՝ գրաբարը, բայց և կարևորություն էր տալիս ժողովրդին հասկանալի աշխարհաբարին։ Նա գրել է պատմագիտական լուրջ աշխատություններ։ Հիմնավորապես տիրապետել է մեկ տասնյակի չափ լեզուների և կատարել ճաշակով թարգմանություններ եվրոպական ու ռուս գրականությունից։

Պահպանողական քարոզչությամբ էր հանդես գալիս նաև Մարկոս Աղաբեկյանը իր խմբագրած «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրում։ Նա ընդդիմադիր տեսակետներ է հայտնել ցարիզմի գաղութային քաղաքականության մասին, ինչպես և արտահայտել է հայ բնակչության բողոքը օսմանյան բռնակալության դեմ։ Այս նույն դիրքորոշումն ուներ Պետրոս Շանշյանը, որը հատ-

կապես հանդես եկավ տնտեսական ծանր դրության մեջ ապրող հայ արհեստավորության վիճակը բարելավելու առաջարկներով: Հայ առաքելական եկեղեցին Շանշյանը համարում էր ազգի գոյության հիմնասյուներից մեկը:

Կ. Պոլսում գործող պահպանողականներից էր Հովհաննես Չամուռճյան-Տերոյենցը: Նա պայքարել է արևմտահայերի սահմանադրության դեմ, որովհետև կարծում էր, թե սահմանադրությունը նվազեցնելու է եկեղեցու դերն ազգային կյանքում: Լինելով հայ եկեղեցու պատմության լավագույն գիտակներից մեկը՝ Հ. Չամուռճյանը բանավիճել է ազատամիտ գործիչների հետ կրոնի, եկեղեցու, բարոյականության և ազգային լուսավորության շուրջը:

Ազատամտական հոսանք: Պահպանողականներին հակադրվում էին ազատամիտ հայացքներ ունեցող գործիչները:

Ազատամիտ ուղղության հետևորդ էր Ստեփանոս Նազարյանը: Հայ հանրության զարգացման կարևոր միջոցը նա համարում էր բարենորոգումները: Իր խմբագրած «Հյուսիսափայլ» ամսագրով Նազարյանը քննադատում էր հետամնացությունը, պաշտպանում լուսավորության ու կրթության տարածման եվրոպական ուղին: Նա կողմնակից էր եկեղեցու և հոգևորականության ազդեցության սահմանափակմանը: Նազարյանը և մյուս ազատամիտները պաշտպանում էին այն տեսակետը, որ ժողովրդի խոսակցական լեզուն՝ աշխարհաբարը, պետք է մշակել և դարձնել հայ նոր գրականության լեզու:

Միքայել Նալբանդյան (1829–1866)

Ստ. Նազարյանի հետ «Հյուսիսափայլում» համագործակցում էր Միքայել Նալբանդյանը, որը քարոզում էր արմատական հեղափոխական գաղափարներ: Մ. Նալբանդյանը հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ազատագրությունը կապում էր ռուսական և եվրոպական հեղափոխական շարժումների հետ: Նա մասնակցում էր արևմտահայերի հասարակական պայքարին, աջակցում սահմանադրական գործիչներին՝ հանդես գալով ազգի վերնախավի դեմ: Նրա ժողովրդավարական հրապարակախոսությունն ու գրական ստեղծագործությունները խոր հետք թողեցին հայ հասարակական մտքի և գրականության զարգացման հետագա ընթացքի վրա:

Հարություն Սվաճյան (1831–1874)

Արևմտահայ իրականության մեջ այս ժամանակաշրջանում առաջադիմական գաղափարներ էին քարոզում Մկրտիչ Խրիմյանը՝ ապագա Հայոց կաթողիկոսը, և «Մեղու» հանդեսի խմբագիր Հարություն Սվաճյանը: Նրանք հետևողականորեն պաշտպանում էին օսմանյան տիրապետության տակ տառապող հայ բնակչության իրավունքները:

Հ. Սվաճյանի գաղափարակիցն էր Զմյուռնիայի հայ գաղթավայրում գործող Գրիգոր Չիլինկիրյանը: Նա իր խմբագրած «Ծաղիկ» հանդեսում ընդդիմացել է հայ վերնախավերի կամայականություններին, պաշտպանել է սահմանադրությունը եվրոպական ազատամտության դիրքերից:

Առաջադիմական նշանավոր գործիչների շարքն արևմտահայ կյանքում լրացնում են Ստեփան Ոսկանյանը, Արմենակ Հայկունին և Մատթեոս Մամուրյանը՝ իրենց խմբագրած պարբերականներով:

Գրիգոր Արծրունի (1845–1892)

Արևելահայ հատվածում ազատամտության ճանաչված ներկայացուցիչն էր Գրիգոր Արծրունին: Նա օսմանյան լծի դեմ ուղղված ազատագրական պայքարի համոզված կողմնակիցն էր: Նրա խմբագրած «Մշակ» թերթը պատկառելի ներդրում ունի արևելահայերի և արևմտահայերի մտավոր-մշակութային մերձեցման ասպարեզում:

Առավել արմատական կողմնորոշում ուներ խոշորագույն գրող, հրապարակախոս Ռաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան): Օսմանյան լծից արևմտահայության ազատագրման հնարավորությունը Ռաֆֆին տեսնում էր համաժողովրդական զինված պայքարի մեջ: Այս գաղափարով են հագեցած նրա վեպերը: Ինչպես Գր. Արծրունին, Ռաֆֆին նույնպես հույսեր չի կապել այն բանի հետ, որ ազգային սահմանադրությունը և ընդհանրապես Թուրքիայի ձևական բարենորոգումները ինչ-որ չափով կթեթևացնեն արևմտահայերի իրավազուրկ վիճակը:

Ռաֆֆի (1835–1888)

Այսպիսով՝ հայ հասարակական մտքի ներկայացուցիչները 19-րդ դարի 60-70-ական թթ. հատուկ ուշադրություն են դարձրել հայության քաղաքական, տնտեսական ու մշակութային խնդիրներին: Ազգի գոյատևման ու զարգացման ուղիները նրանք պատկերացնում էին կամ խաղաղ վերափոխումների՝ բարենորոգումների, կամ էլ ազատագրական զինված պայքարի միջոցով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչն էր մտահոգում հայ գործիչներին 1860–1870-ական թվականներին և ինչո՞ւ: Ի՞նչ հասարակական հոսանքներ առաջացան:
2. Ովքե՞ր էին պահպանողականները, ի՞նչ հայացքներ ունեին նրանք: Արդյոք դուք ընդունո՞ւմ եք նրանց գաղափարները:
3. Որո՞նք էին ազատամտական հոսանքի հիմնական գաղափարները: Համաձա՞յն եք արդյոք նրանց: Ո՞ւմ հայացքներն են ձեզ ավելի դուր գալիս և ինչո՞ւ:

4. Եթե հասարակական փոփոխությունների հարց բարձրանար, դուք ո՞ր ուղին կնախընտրեիք՝ բարենորոգումների՞, թե՞ հեղափոխության: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
5. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *հասարակական միտք, պահպանողական հոսանք, ազատամտական հոսանք* հասկացությունները:
6. Լրացրե՛ք «Հայ հասարակական միտքը» աղյուսակը:

Հոսանքները	Հայացքները				
Պահպանողական	Տնտեսական	Քաղաքական	Մշակութային	Կրթական	Ազգային
Ազատամտական					

ԹԵՍՏ

Հ. Սվաճյանի խմբագրած պարբերականը կոչվում էր.

1. «Մեղու»,
2. «Ծաղիկ»,
3. «Հյուսիսափայլ»,
4. «Մշակ»:

2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԶԵՅԹՈՒՆԻ 1862 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայերի ազգային սահմանադրությունը: Սահմանադրական շարժման նախադրյալները: Եվրոպական տերությունների ճնշման պայմաններում Օսմանյան կայսրությունը դիմեց բարենորոգումների: Դա հարկադրված քայլ էր, որովհետև հարկավոր էր փոխել երկրի ամբողջ կյանքը, մանավանդ՝ ուժեղացել էին հպատակ ժողովուրդների ընդվզումները թուրքական լծի դեմ: Օսմանյան կառավարողները ակնկալում էին, որ բարենորոգումների միջոցով հնարավոր կլինի կանխել այդ ժողովուրդների ազատագրական շարժումները, ինչպես և վերջ տալ Թուրքիայի ներքին գործերին Եվրոպայի միջամտությանը:



Զեյթունի տեսարան

1839 և 1856 թվականներին հրապարակվեցին բարենորոգումների ծրագրերը: Դրանցով հռչակվում էին Թուրքիայի բոլոր ժողովուրդների իրավահավասարություն, կյանքի և գույքի անձեռնմխելիություն, հարկերի արդարացի գանձում: Սակայն դրանցից և ոչ մեկը չիրականացվեց, որովհետև ավատատիրական Թուրքիան պատրաստ չէր փոփոխությունների:

Ղրիմի պատերազմից հետո (1856թ.) արևմտահայերը նույնպես ձեռնամուխ եղան իրենց ազգային կյանքի վերակառուցման գործին: Կ. Պոլսում բնակվող հայերի մեջ սրվեցին հակասությունները հասարակ ժողովրդի (արհեստավորներ, մանր ու միջակ առևտրականներ) և մեծահարուստ ամիրաների ու սրանց թիկունքին կանգնած բարձրաստիճան հոգևորականության միջև:

Սահմանադրական շարժումը: Թուրքիայում հայ վերնախավի դեմ ուղղված ժողովրդական շարժումը գլխավորում էին Եվրոպայում կրթված մտավորականները: Նրանք մշակեցին ազգային վարչության կանոնադրություն, որը 1857թ. ներկայացվեց հաստատման: Այս կանոնադրությամբ պոլսահայերի աշխարհիկ վարչությանը տրվում էին բավական իրավունքներ, վերացվում էին ամիրաների և բարձրակարգ հոգևորականության արտոնությունները: Սակայն պաշտպանելով նրանց՝ օսմանյան կառավարությունը մերժեց կանոնադրությունը: 1859թ. կազմվեցին հանձնաժողովներ՝ ազգային նոր կանոնադրություն մշակելու համար: Ժողովրդի պայքարով այդ փաստաթուղթը, ազգային սահմանադրություն անվանումով, 1860թ. մայիսին ընդունվեց արևմտահայերի ազգային ընդհանուր ժողովում:

Բայց սուլթանական բռնապետության պայմաններում իսկական սահմանադրություն չէր կարող լինել: Այդ փաստաթուղթը ընդամենը կանոնադրություն էր, որով պետք է կարգավորվեին արևմտահայերի ներքին՝ զուտ ազգային կյանքին վերաբերող գործերը եկեղեցական, դպրոցական և մշակութային ասպարեզներում: Դրան համապատասխան ընտրվեցին ազգային մարմիններ, ազգային ժողով:

Օսմանյան կառավարությունը մշտապես վերահսկողության տակ էր պահում ազգային ժողովը, հարկ եղած դեպքում ճնշումներ գործադրելով ուղղորդում նրա գործունեությունը:

Ազգային սահմանադրությունը ոչ մի քաղաքական նշանակություն չունեցավ թուրքական լուծը թեթևացնելու, արևմտահայերի հարստահարությունը վերացնելու տեսակետից: Բայց դրականն այն էր, որ սահմանադրությունը հաստատում էր ժողովրդի ընտրական իրավունքը, որոշ պայմաններ ստեղծում մշակույթի, դպրոցի և ազգային-կրոնական կապերի զարգացման համար:

Սահմանադրության հեղինակներից էր Նահապետ Ռուսինյանը: Նա է հեղինակել հանրահայտ «Կիլիկիա» երգը:

Սահմանադրության հիմնական սկզբունքները մշակվել են ճարտարապետ Նիկողայոս Պալյանի ձեռքով:

Այդ շարժման երևելի դեմքերից էր Գրիգոր Օտյանը: Իր հեղինակությամբ նա ազդել է հայերի ազգային կյանքի ընթացքի վրա: Օտյանը զբաղվել է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրով և մշակել դրան նվիրված ծրագիր:

Զեյթունի կիսանկախ վիճակը: 19-րդ դարի երկրորդ կեսի ազատագրական պայքարի ցայտուն օրինակներից է Զեյթունի ինքնապաշտպանությունը:

Զեյթուն քաղաքը (և համանուն գավառը) գտնվում է Թուրքիայի տարածքում, Լեռնային Կիլիկիայում: Տեղանքը դժվարանցանելի է, շրջապատված լեռներով: Վաղ ժամանակներից այստեղ հայ ազգաբնակչություն էր կենտրոնացել: Զեյթունում և շրջակայքում 19-րդ դարի 2-րդ կեսին բնակվում էին 35-40 հազար հայեր և շուրջ 8,5 հազար մահմեդականներ: Հայությունը, ապավինած իր արիությանն ու անմատչելի լեռներին, կարողացել էր դարեր շարունակ հետ մղել նվաճողներին և պահպանել իր կիսանկախ դրությունը: Զեյթուն գավառը և քաղաքը փաստորեն կառավարում էին հայկական ավանդական իշխանական տները, որոնք ընդամենը թեթև հարկ էին վճարում սուլթանական իշխանությանը: Իր կիսանկախ վիճակով և ազատասիրական վարակիչ օրինակով Զեյթունը դարձել էր օսմանյան իշխանությունների աչքի փուշը: Վերջիններս բազմիցս փորձել էին հնազանդեցնել լեռնցիներին, սակայն միշտ էլ անհաջողություն էին ունեցել: Անհաջողության մատնվեցին նաև օսմանյան կառավարության փորձերը՝ Զեյթունը դարձնել կառավարչի նստավայր և բնակիչներին պարտադրել բարձր հարկեր վճարել: 1860թ. հուլիսին կառավարությունը որոշեց փոխել իրավիճակը և վերջնականապես իրեն ենթարկել զեյթունցիներին:

Զեյթունի ինքնապաշտպանությունը: 1862թ. Մարաշի կուսակալ Ազիզ փաշան վճռեց կանոնավոր զորքով հարձակվել Զեյթունի վրա: Թուրքական բանակի թիվը հասնում էր մոտ 40 հազար մարդու: Սրանց դեմ դուրս եկավ զեյթունցիների 7-հազարանոց զորախումբը, որը զինված էր ընդամենը պապենական հին հրացաններով: Բազմապատիկ թվական գերազանցության և սպառազինության շնորհիվ փաշան հուլիսին գրավեց մի քանի հայկական գյուղեր, որից հետո զեյթունցիների ջոկատները շրջակա գյուղերի բնակչության հետ ամրացան քաղաքում: Օգոստոսի սկզբին թուրքական ուժերը տարբեր կողմերից արդեն շրջապատել էին Զեյթունը: Լեռնականներն իրենց ամբողջ ռազմական ուժը բաժանեցին չորս հիմնական մասերի և խելամիտ ու հանդուգն գործողություններով՝ ծանր կռիվներում կարողացան հակահարված տալ թշնամուն: Թուրքերը, նշանակալի կորուստներ տալով և զեյթունցիներին թողնելով բավական քանակությամբ ռազմավար, դուրս քշվեցին Զեյթունի սահմաններից: Մարտերում իրենց ռազմական տաղանդն ու քաջությունը ցուցադրեցին զեյթունցի իշխաններ Մ. Յաղուբյանը, Ն. Սուրենյանը և ուրիշներ: Իրենց սխրանքներով աչքի ընկան վարդապետ մահտեսի Գրիգորը, Մարկոս Թաշճյանը և առհասարակ մարտնչող հայ բնակչությունը:

Զեյթունի պաշտպանությունը
Գործ՝ Վ. Գրիգորյանի

Այս պարտությունից հետո, չհրաժարվելով Զեյթունը գրավելու իր մտադրությունից, կառավարությունը նշանակեց նոր զորահրամանատար: Նախատեսվում էր 150-հազարանոց բանակով հարձակվել Զեյթունի վրա, հիմնահատակ ավերել այն և սրի քաշել հայ բնակչությանը: Թուրքական ուժերը վիթխարի գերակշռություն ունեին, սակայն զեյթունցիները կարողացան խուսափել արհավիրքից՝ դիմելով Կ. Պոլսի հայկական պատրիարքի և ֆրանսիական կառավարության օգնությանը: Վերջինս ձգտում էր ուժեղացնել իր ազդեցությունը Օսմանյան Թուրքիայում, ուստի խոստացավ օգնել նրանց՝ ճնշում գործադրելով թուրքական կառավարության վրա: Փոխարենը Ֆրանսիան ակնկալում էր կաթոլիկական դավանանքի ընդունումը զեյթունցիների կողմից: Իսկ օսմանյան կառավարությունը, հաշվի առնելով Թուրքիայում Ֆրանսիայի քաղաքական լուրջ դերակատարությունը, տեղի տվեց:

Զեյթունցի

Զեյթունի պաշարումը վերացվեց. լեռնականներն իրենց հերթին զիջումներ արեցին կառավարությանը: Նրանք այդուհետև պետք է ենթարկվեին օսմանյան վարչական կառավարմանը, կանոնավորապես վճարեին հարկերը՝ փոխարենը օգտվելով իրենց ազգային-եկեղեցական գործերը ինքնուրույն վարելու իրավունքից:

Զեյթունը կորցրեց իր նախկին կիսանկախ վիճակը: Սակայն 1862թ. Զեյթունի հերոսական պայքարը խոր հետք թողեց ազգային ինքնագիտակցության և ազատագրական պայքարի հետագա ընթացքի վրա: Բանաստեղծ և հասարակական գործիչ Մ. Պեշիկթաշլյանը գրեց իր բանաստեղծությունների զեյթունյան շարքը, որտեղ գեղարվեստական մեծ ուժով է պատկերված զեյթունցիների պայքարը օսմանյան բռնակալության դեմ: Պարբերական մամուլը նույնպես արձագանքեց հերոսամարտին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ բարեփոխումները չիրագործվեցին:
2. Ինչպե՞ս կարող եք բնութագրել սահմանադրական շարժումը, ո՞րն էր նրա նպատակը: Ովքե՞ր էին ազգային սահմանադրության հեղինակները:
3. Ի՞նչ տվեց ազգային սահմանադրությունը: Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր էր օսմանյան բռնապետության մեջ այդ (և ընդհանրապես) սահմանադրության կիրառումը:

4. Որտե՞ղ էր գտնվում Զեյթունը: Փորձե՛ք նկարագրել նրա դիրքը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ դեր է խաղացել տեղանքը Զեյթունի հայապահպանության գործում:
5. Ինչո՞ւ էր Զեյթունը դարձել օսմանյան իշխանությունների աչքի փուշը:
6. Ե՞րբ սկսվեց Զեյթունի հերոսամարտը: Ինչպիսի՞ն էր ուժերի հարաբերակցությունը, նկարագրե՛ք զեյթունցիների հերոսությունը: Ովքե՞ր աչքի ընկան իրենց սխրանքներով: Ո՞ւմ կուզեիք նմանվել:
7. Ինչո՞ւ թուրքերը հրաժարվեցին Զեյթունի վրա նոր արշավանքի մտադրությունից և վերացրին Զեյթունի պաշարումը: Ինչո՞վ վերջացավ Զեյթունի հերոսամարտը:
8. Ի՞նչ արձագանք գտավ Զեյթունի հերոսամարտը հայ իրականության մեջ:
9. Ո՞վ է բանաստեղծությունների մի ամբողջ շարք նվիրել զեյթունցիներին, դրանցից ո՞րն եք շատ սիրում, փորձե՛ք արտասանել:
10. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *սահմանադրական շարժում, ազգային սահմանադրություն* հասկացությունները:
Լրացրե՛ք «Զեյթունի 1862թ. ապստամբությունը» աղյուսակը:

Տարեթիվը	Գործիչները	Ուժերի հարաբերակցությունը	Կարևոր իրադարձությունները	Նշանակությունը

ԹԵՍՏ

Հանրահայտ «Կիլիկիա» երգի հեղինակն է.

1. Նիկողայոս Պալյանը,
2. Սերովբե Վիչենյանը,
3. Գրիգոր Օտյանը,
4. Նահապետ Ռուսինյանը:

19-րդ դարի 2-րդ կեսին Զեյթունում բնակվող հայերի թիվը կազմում էր.

1. 8,5 հազար,
2. 35–40 հազար,
3. 17 հազար,
4. 60–80 հազար:

ԹԵՄԱ 6-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ տնտեսական և քաղաքական ծանր պայմաններում: Աճում էր հպատակ ժողովուրդների դժգոհությունը և ուժեղանում ազատագրական շարժումը: Այդ շարժումները կանխելու համար Օսմանյան կայսրությունը դիմում է բարենորոգումների, որոնք, սակայն, չեն իրագործվում, և ժողովրդի դրությունը չէր բարելավվում:
2. Հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացման հիմնահարցերը լրջորեն զբաղեցնում են 1860–1870-ական թվականներին հայ իրականության մեջ հանդես եկած հասարակական մտքի նշանավոր ներկայացուցիչներին (Հ. Սվաճյան, Մ. Նալբանդյան, Մ. Պեշիկթաշլյան և ուրիշներ): Նրանց մի մասը ազգի գոյատևման և զարգացման ուղիները տեսնում էր հասարակության խաղաղ վերափոխումների, իսկ մյուս մասը՝ ազատագրական զինված պայքարի մեջ:
3. Քրիստոնյաների դրությունը առերևույթ բարելավելու անվան տակ օսմանյան կառավարությունը որոշ իրավունքներ տվեց քրիստոնյա ժողովուրդներին: Դա իր արտահայտությունը գտավ 1863թ. սուլթանի հաստատած հայ ազգային սահմանադրության մեջ, որը մշակել էին Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը, Սերովբե Վիչենյանը, Նիկողայոս Պալյանը: Այն որոշ պայմաններ էր ստեղծում արևմտահայության հասարակական-քաղաքական ու մշակութային զարգացման համար:
4. Ցանկանալով վերացնել Զեյթունի կիսանկախ դրությունը՝ 1862թ. սուլթանական կառավարությունը քայլեր կատարեց զեյթունցիներին հպատակեցնելու: Հայերի համառ դիմադրությունը և Ֆրանսիայի ճնշումը սուլթանին հարկադրեցին դադարեցնել Զեյթունի պաշարումը: Զեյթունի ինքնապաշտպանությունը նոր խթան հանդիսացավ ազատագրական շարժումների ծավալման համար:

1877–1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

1. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ 1877–1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմի պատճառները: 1870-ականներին թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովուրդները ոտքի են կանգնում անկախություն ձեռք բերելու համար: Այդ ժամանակ թուրքական կայսրության կազմում էին Բալկանյան թերակղզու մեծ մասը կազմող մի շարք իշխանություններ, որոնք անկախության էին ձգտում: 1875թ. ապստամբում են Բոսնիան և Հերցեգովինան, 1876-ին՝ Բուլղարիան: Այդ ապստամբությունները Ռուսաստանում առաջացրին «սլավոն եղբայրներին օգնելու» կարգախոսով լայն շարժում: Բալկանյան ժողովուրդների պայքարը Ռուսաստանն օգտագործեց իր քաղաքական նպատակներն իրականացնելու համար: Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպանները 1876թ. դեկտեմբերին Թուրքիային առաջարկեցին մշակել և իրագործել բալկանյան ժողովուրդների դրությունը բարելավելու մի ծրագիր: Սուլթան Աբդուլ Համիդը, հենվելով Անգլիայի աջակցության վրա, մերժեց դեսպանների առաջարկությունը՝ այն համարելով միջամտություն իր ներքին գործերին: Ռուսական ցար Ալեքսանդր II-ը Ռումինիայի հետ պայմանագիր կնքեց և ապահովելով նրա դաշինքը, նույն օրը՝ 1877թ. ապրիլի 12-ին, ստորագրեց պատերազմ սկսելու մանիֆեստը:

Միխայիլ Լոռիս-Մելիքով (1825–1888)

Պատերազմի ընթացքը: Պատերազմը տևեց տասն ամիս: Ռազմական գործողություններն ընթանում էին Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում: Շիպկայի և Պլևնայի համար մղված մարտերում ռուսները վճռական հաղթանակ տարան: 1878թ. հունվարի 4-ին նրանք մտան Սոֆիա, ապա գրավեցին Պլովդիվն ու Ադրիանապոլիսը և մոտեցան Կ. Պոլսին:

Արշակ Տեր-Ղուկասով (Տեր-Ղուկասյան) (1819–1881)

Կովկասյան ռազմաճակատում հիմնական ռազմական գործողությունները վարում էր Մ. Լոռիս-Մելիքովը՝ գլխավորելով 52-հազարանոց կովկասյան կորպուսը:

1877թ. ապրիլի 12-ին Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը հարձակման անցան երեք ուղղություններով: Երևանյան ջոկատը հայազգի գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ ապրիլին գրավում է Բայազետն ու Ալաշկերտը:

Թուրքերը, մեծ ուժեր կենտրոնացնելով, 1877թ. հունիսին պաշարում են Բայազետի բերդը: Թուրքական 10000-անոց զորքը կատաղի գրոհներ է սկսում բերդի վրա, որը պաշտպանվում էր փոքրաթիվ ռուսական զորաջոկատի և հայ կամավորների ուժերով՝ կայազորի պետ մայոր Շտոկվիչի գլխավորությամբ: Փրկության միակ ելքը դրսից օգնություն ստանալն էր: Պաշարվածներն իրենց վիճակի մասին ձգտում էին լուր հասցնել Տեր-Ղուկասովին, սակայն բոլոր լրատարները բռնվում էին թուրքերի կողմից: Քրդի շորերով ծպտված հայ կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանն անցնում է թուրքերի մոտով և լուր հասցնում Տեր-Ղուկասովին: Հայ գեներալին հաջողվում է օգնության հասնել 23 օր Բայազետում պաշարվածներին և փրկել նրանց: Պատմական այդ փաստն իր գեղարվեստական արտացոլումն է գտել Բաֆֆու «Խենթը» վեպում:

Կովկասյան ռազմաճակատի հաջողություններից էր Կարսի գրավումը: Պատերազմի սկզբին ռուսներն այնտեղ անհաջողության մատնվեցին: Երկրորդ անգամ այդ գործը հանձնարարվեց Հովհաննես Լազարևին, որը վճռական հարձակման անցավ և գիշերային գրոհով գրավեց Կարսը:

Մեծ էր պատերազմին մասնակցող հայ զորավարների թիվը՝ 7 գեներալ և ավելի քան 500 բարձրաստիճան սպա: Այդ պատերազմը ոգևորել էր և՛ արևմտահայերին, և՛ արևելահայերին: Անդրկովկասի տարբեր վայրերում մեծ մասամբ հայերից ձևավորվել էին ութ զորամիավորումներ: Արևելահայերը Ախուրյանի վրա կամուրջ կառուցեցին՝ ռուսական զորքերի անցումն Արևմտյան Հայաստան ապահովելու համար: Երևանի նահանգի հայությունը ռուսական զորքերին տրամադրեց հազարավոր սայլեր, ձիեր և ուղտեր: Երևանում և Ղարաքիլիսայում հայերն իրենց տներն իբրև հոսպիտալներ տրամադրում էին ռուսական զորքերին, ստանձնում վիրավոր ռուս զինվորների բժշկական օգնության գործը: Արևմտահայերն ստեղծում էին կամավորական ջոկատներ, ստույգ տեղեկություններ էին հաղորդում թուրքական ռազմական ուժերի վերաբերյալ, կատարում ուղեկցորդի դեր:

1878թ. հունվարի սկզբներին ռուսներն առանց մարտերի գրավեցին Ադրիանապոլիսը և մտան Կ. Պոլսից ընդամենը 12 կմ հեռու գտնվող Սան Ստեֆանո ավանը, որտեղ էլ հունվարի 19-ին կնքվեց զինադադար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին 1877–1878թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառները: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էր Ռուսաստանը պաշտպանում բալկանյան ժողովուրդների ապստամբությունը:
2. Ձեր կարծիքով՝ որո՞նք էին Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի տարած ամենամեծ հաղթանակները, և ինչպե՞ս եք գնահատում դրանք:

3. Որքա՞ն հայ գեներալներ և բարձրաստիճան սպաներ են մասնակցել այդ պատերազմին, ովքե՞ր աչքի ընկան: Նրանց ռազմական հաղթանակներից ո՞րն է տպավորվել ձեր մեջ: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:
4. Նկարագրե՛ք Բայազետի հերոսական պաշտպանությունը: Հայ կամավորներից ո՞վ աչքի ընկավ, ի՞նչ խիզախ քայլ կատարեց նա: Ինչպե՞ս կարող եք որակել այդ քայլը: Կուզեի՞ք նմանվել նրան:
5. Ձեր կարծիքով՝ կարելի՞ է պնդել, որ հայերի մասնակցությունը պատերազմին մեծ դեր է խաղացել ռուսական զորքերի հաղթանակի գործում: Փորձե՛ք հիմնավորել ձեր տեսակետը:
6. Լրացրե՛ք «1877–1878թթ. ռուս–թուրքական պատերազմը» աղյուսակը:

Տարեթիվը	Իրադարձությունը	Գործիչները	Արդյունքները	Նշանակությունը

ԹԵՍՏ

Թուրքական զորքերը Բայազետի բերդը պաշարել էին.

1. 1877թ. ապրիլի 12-ին,
2. 1877թ. նոյեմբերին,
3. 1878թ. հունվարի 4-ին,
4. 1877թ. հունիսին:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Ռուս և թուրք դիվանագետներն սկսեցին պատրաստվել հաշտության պայմանագիրը կնքելուն: Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հանդիպեց ռուսական կողմի ղեկավար Ն. Իգնատևի հետ և խնդրեց հաշտության պայմանագրում տեղ հատկացնել արևմտահայության արդարացի ձգտումներին: 1878թ. փետրվարի 19-ին Սան Ստեֆանոյում ստորագրվեց ռուս-թուրքական խաղաղության պայմանագիրը: Այն բաղկացած էր 29 հոդվածից, որի 16-րդ կետը վերաբերում էր հայերին: Նրանում ասվում էր. «Հաշվի առնելով, որ ռուսական զորքերի դուրսբերումը Հայաստանից կարող է առիթ տալ բախումների և բարդությունների, Բարձր Դուռը պարտավորվում է հայաբնակ մարզերում անհապաղ կենսագործել բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»: Պայմանագրի մյուս հոդվածներում ևս կային հայերին վերաբերող հարցեր: Դրանց համաձայն՝ բարենորոգումները պետք է կատարվեին մինչև ռուսական զորքերի դուրսբերումը՝ 6 ամսվա ընթացքում, և այդ մասին թուրքերը պետք է հաշվետու լինեին ռուսական կողմին: Թուրքիան անկարող էր վճարել հսկա ռազմատուգանք. դրա փոխարեն Ռուսաստանին էին անցնելու Կարսը, Արդահանը, Բաթումը, Բայազետը, Էրզրումը, Ալաշկերտի հովիտը և հարակից տարածքները:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը բարձրացրեց Ռուսաստանի միջազգային հեղինակությունը, ուժեղացավ Ռուսաստանի ազդեցությունը Թուրքիայի վրա: Քանի որ այդ պայմանագիրը կոչվում էր «նախնական», Անգլիան և Ավստրո-Հունգարիան դիմեցին Գերմանիայի կանցլեր Օտտո Բիսմարկին՝ եվրոպական պետությունների վեհաժողով հրավիրելու առաջարկությամբ: Մեծ տերությունները որոշեցին Բեռլինում հրավիրել միջազգային վեհաժողով և այնտեղ քննարկել վիճելի հարցերը:

Մկրտիչ Խրիմյան (1820–1907)

Հայկական հարցի առաջացումը: Արևմտահայության պահանջները Բեռլինի վեհաժողովին ներկայացնելու համար ընտրվեց հայկական պատվիրակություն Կ. Պոլսի նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ: Նա իր քարտուղար և թարգմանիչ Մինաս Չերազի հետ մեկնեց Եվրոպա՝ մեծ տերությունների կառավարող շրջաններին հայության ակնկալիքները ներկայացնելու նպատակով: Խրիմյանը հանդիպումներ ունեցավ Իտալիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների, Անգլիայի հոգևոր և պետական գործիչների հետ: Պատվիրակության մյուս անդամ Խորեն Նարբեյը պատրիարքի հանձնարարությամբ մեկնեց Պետերբուրգ՝ հայության խնդրանքը ռուսական ցարին ներկայացնելու և նրա աջակցությունն ստանալու ակնկալիքով: Վեհաժողովի օրերին նրանք պետք է հանդիպեին Բեռլինում:

Վեհաժողովն սկսվեց 1878թ. հունիսի 1-ին և ավարտվեց հուլիսի 1-ին: Դրան մասնակցում էին Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Անգլիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները: Թուրքիայի պատվիրակությունը ներկա էր իբրև պատերազմում պարտված պետություն: Կիպրոսը զիջելով Անգլիային՝ Թուրքիան ապահովեց նրա աջակցությունը: Վեհաժողովի ժամանակ ամեն մի պետություն հետապնդում էր իր շահը, և հաղթած Ռուսաստանն այնտեղ մնաց միայնակ: Հայ պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցել վեհաժողովի նիստերին: 16-րդ հոդվածը վերափոխվեց 61-ի: Դրանից հանվեց Հայաստան անվանումը, թողնվեց միայն

«հայաբնակ մարզեր» անորոշ արտահայտությունը: Բարենորոգումների կատարման ոչ մի ժամկետ չէր նշվում, և դրանց մասին Բ. Դուռը պետք է հաշիվ տար 6 մեծ տերություններին, որոնց միջև եղած հակասությունները հնարավոր չէին դարձնում Թուրքիայի դեմ միասնական գործողություն ձեռնարկելը: Բանավեճեր եղան Արևմտյան Հայաստանից Ռուսաստանին անցնող տարածքների խնդրում: Անգլիայի հարկադրանքով Թուրքիային վերադարձվեցին Էրզրումը, Բայազետը, Ալաշկերտի հովիտը և հարակից տարածքները: Ռուսաստանին մնացին Բաթումը, Կարսը, Արդահանը, Արդվինը: Վերջին երեքից ստեղծված Կարսի մարզը մնաց Ռուսաստանի կազմում մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը:

Հայ պատվիրակությունը հուսախաբ վերադարձավ Բեռլինից: Մկրտիչ Խրիմյանն զգաց, որ աղերսելով և խնդրագրով ժողովուրդը չի փրկվի: Հայությունն իր փրկությունը կարող է ձեռք բերել միայն պայքարով: 61-րդ հոդվածը մեծ տերությունների համար դարձավ շահարկման առարկա: Թուրքիայից պահանջ ունենալու դեպքում նրանք բարձրացնում էին արևմտահայության համար բարենորոգումներ կատարելու խնդիրը: Զգալով այդ վտանգը՝ Աբդուլ Համիդը վճռեց հայկական հարցը լուծել թուրքավարի՝ կոտորածների միջոցով: Այդ չարիքն զգացին նաև իրատես հայ հասարակական գործիչները (Գրիգոր Օտյան, Գարեգին Սրվանձտյան և ուրիշներ):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտե՞ղ և ե՞րբ կնքվեց ռուս-թուրքական խաղաղության պայմանագիրը: Ի՞նչ էր նախատեսում պայմանագրի 16-րդ հոդվածը: Ձեր կարծիքով՝ այն արդարացրե՞ց արևմտահայության հույսերը:
2. Ինչո՞ւ խոշոր տերությունները Բեռլինի կոնգրեսում հարկադրեցին Ռուսաստանին համաձայնել վերանայելու Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Ձեր կարծիքով՝ Ռուսաստանը ունե՞ր այլ ելք:
3. Ինչո՞ւ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի վեհաժողովում վերածվեց 61-րդի: Համեմատե՛ք Սան Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի վեհաժողովում հայկական հարցին վերաբերող հոդվածները և գտե՛ք տարբերությունները: Ի՞նչ դասեր քաղեցին հայ գործիչները Բեռլինի կոնգրեսից: Դուք համաձա՞յն եք նրանց հետ: Փորձե՛ք փաստերով հիմնավորել ձեր տեսակետը:
4. Փորձե՛ք ապացուցել, որ հայկական հարցը առաջին անգամ Բեռլինի վեհաժողովում մտավ միջազգային դիվանագիտության ասպարեզ և միջազգայնացվեց:
5. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *Հայկական հարց* հասկացությունը:

6. Լրացրե՛ք «Հայկական հարցի միջազգայնացումը» աղյուսակը:

Պայմանագիրը	Տարեթիվը	Հոդվածը	Բովանդակությունը	Տարածքային հարցերը	Նշանակությունը
Սան Ստեֆանոյի					
Բեռլինի վեհաժողովի					

ԹԵՍՏ

Մկրտիչ Խրիմյանի քարտուղարն ու թարգմանիչն էր.

1. Ներսես Վարժապետյանը,
2. Մինաս Չերազը,
3. Գարեգին Սրվանձտյանը,
4. Գրիգոր Օտյանը:

ԹԵՄԱ 7-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 1870-ական թվականներին ուժեղանում է թուրքական տիրապետության տակ գտնվող բալկանյան երկրների՝ Բոսնիայի, Հերցեգովինայի և Բուլղարիայի ընդվզումը: Ռուսաստանն օգտագործեց բալկանյան ժողովուրդների պայքարը իր քաղաքական նպատակների համար: Թուրքիան մերժում է բալկանյան ժողովուրդների վիճակի բարելավման ծրագիր մշակելու մեծ տերությունների առաջարկը:
2. 1877–1878թթ. տեղի ունեցավ ռուս-թուրքական պատերազմը: Ռազմական գործողություններն ընթանում էին Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում: Ռուսական բանակին օգնում էր թուրքական բռնակալությունից ազատագրվելու հույսեր փայփայող արևմտահայությունը: 1878թ. փետրվարի 19-ին (մարտի 3) կնքվեց Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը:
3. Պայմանագրի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացմանը, որի վերահսկողությունը դրվում էր Ռուսաստանի վրա: Մեծ տերությունները, չհաշտվելով Բալկաններում և Մերձավոր Արևելքում Ռուսաստանի դիրքերի հզորացման հետ, հարկադրեցին նրան վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը Բեռլինի վեհաժողովում: Այնտեղ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը վերափոխվեց 61-րդի, որով բարենորոգումների իրականացման ոչ մի իրական երաշխիք չէր ստեղծվում: Մեծ տերությունների կողմից Հայկական հարցն օգտագործվում էր Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և զանազան օգուտներ քաղելու նպատակով:

8 ԹԵՄԱ

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XIX ԴԱՐԻ 70–90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՎԱԿՈԽՈՒՄԸ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՓՈՒԼ

Զինված պայքարի գաղափարախոսության ձևավորումը: Բեռլինի վեհաժողովի արդյունքներից հուսախաբ հայությունը աստիճանաբար հանգում էր այն գաղափարին, որ ապրելու իրավունքը ոչ թե խնդրում են, այլ՝ պայքարով նվաճում: Այդ գաղափարախոսներից առաջինը Մկրտիչ Խրիմյանն էր: Մեծ տերությունների գործելակերպից հուսախաբ՝ նա Կ. Պոլսի Գում-Գափուի Մայր տաճարում ժողովրդական մարդուն հատուկ պատկերավոր ոճով պատմում է, որ վեհաժողովի ժամանակ հարիսա էին բաժանում: Ապստամբած եվրոպական ազգերը իրենց սրերով կաթսայից հարիսա վերցրին: Հայերը վեհաժողով էին եկել աղերսաթղթով, իսկ «թղթե շերեփով» հարիսա վերցնել հնարավոր չէր: Ուրեմն՝ ազատության կարելի է հասնել զենքով, ոչ թե խնդրագրերով:

Մուրացան (1854–1908)

Ծերենց (1822–1888)

Ազատագրական պայքարի գաղափարներ էր արծարծում նաև Թիֆլիսի «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին, որը մտորում էր, թե արևմտահայ գյուղացին մի ձեռքով արոր ու մաճ պետք է բռնի, մյուսով՝ հրացան: Ռաֆֆին իր պատմավեպերով («Խենթը», «Ջալալեդդին», «Կայծեր») և հրապարակախոսական հոդվածներով ժողովրդի մեջ բարձրացնում էր զենքով ազատագրվելու գաղափարը: Իսկ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի հերոսն ապացուցում էր, որ «մի ծաղկով գարուն կգա»: Ծերենցը իր «Երկունք Թ դարու» պատմավեպի հերոս Խութեցի Հովնանի օրինակով ժողովրդին վարակում էր օտար նվաճողների դեմ պայքարի ոգով: Ազատագրական պայքարի գաղափարներ էին արծարծում նաև հայ բանաստեղծները (Ռափայել Պատկանյան և ուրիշներ): Այդ գաղափարները նպաստեցին ազատագրական գաղտնի խմբակների և ընկերությունների ստեղծմանը:

Ռափայել Պատկանյան (1830–1892)

Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: 1869թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի) և 1874թ. Ղարաքիլիսայում (Վանաձոր) ստեղծվեցին ազատագրական խմբակներ, որոնք շատ շուտ հայտնաբերվեցին ցարական կառավարության կողմից և ցրվեցին: Մոսկվայի մի խումբ հայ ուսանողներ 1882թ. հիմնադրեցին «Հայրենասերների միություն» կազմակերպությունը, որն ուներ նաև իր տպագիր օրգանը՝ «Ազատության ավետաբեր» թերթը: Արևմտահայության մեջ ևս աստիճանաբար մեծ տարածում գտան ազատագրական գաղափարները: Դեռևս 1870-ականների սկզբից Վանում ստեղծվել էր «Միություն ի փրկություն»-ը, որ տարածվել էր նաև նահանգի գյուղերում, իսկ 1879թ. ստեղծվեց «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը: Տեղում նրան հովանավորում էին մանկավարժական գործունեություն ծավալած Մկրտիչ Փորթուգալյանը և Վանի ռուսական փոխհյուպատոս Կոստանդին Կամսարականը:

1881թ. գաղտնի կազմակերպություն էր գործում նաև Կարինում (Էրզրումում)՝ «Պաշտպան հայրենյաց» անվանումով: Նրա հիմնական կորիզը տեղի արհեստավորական դասի ներկայացուցիչներն էին: Կարինի հոգևոր առաջնորդ Մաղաքիա Օրմանյանը հովանավորում էր կազմակերպությանը, օգնում ֆինանսական միջոցներով: «Պաշտպան հայրենյաց»-ը պատահաբար հայտնաբերվեց կառավարության կողմից: 1882թ. տեղի ունեցան զանգվածային ձերբակալություններ: Ձերբակալվածները ենթարկվում էին ահավոր խոշտանգումների: 1883թ. թուրքական դատարանը դատեց նրանց: Պատրիարքի և Մ. Օրմանյանի շնորհիվ մահապատիժները փոխվեցին 15, 12, 10 տարվա դատապարտության, սակայն դարձյալ պատրիարքի շնորհիվ 1884թ. բոլորն ազատվեցին: Ժողովուրդն անմահացրեց այդ կազմակերպության գործունեությունը «Ձայն մը հնչեց Էրզրումի բարձր հայոց լեռներեն» երգով: 1880-ական թթ. ստեղծված բազմաթիվ այլ կազմակերպությունները ժողովրդի մեջ բարձրացնում էին ազգային ինքնագիտակցության, համախմբման և պայքարի գաղափարներ:

Մկրտիչ Փորթուգալյան (1848–1921)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ եք կարծում՝ Բեռլինի կոնգրեսից հետո ի՞նչը դարձավ ազատագրական պայքարի գաղափարախոսության առանցքը: Ովքե՞ր էին ազատագրական պայքարի գաղափարախոսները: Բնութագրե՛ք նրանց: Ի՞նչ և ինչպե՞ս էին քարոզում նրանք, ստեղծագործություններից ո՞րն եք կարդացել, և ի՞նչ զգացումներ են արթնացել ձեր մեջ:

2. Կարո՞ղ եք նշել, թե ինչ գործոններ նպաստեցին ազատագրական խմբակների և կազմակերպությունների առաջացմանը: Թվարկե՛ք ազատագրական խմբակները և գնահատե՛ք նրանց գործունեությունը:
3. Համաձայ՞ն եք այն կարծիքին, որ ազատագրական խմբակների հանդես գալը նոր փուլ էր ազատագրական շարժման մեջ: Բերե՛ք փաստարկներ ձեր տեսակետի օգտին:
4. Լրացրե՛ք «Ազատագրական խմբակները և կազմակերպությունները» աղյուսակը:

Խմբակի, կազմակերպության ստեղծման տարեթիվը	Խմբակի, կազմակերպության անվանումը	Նպատակը, գործունեությունը

ԹԵՍՏ

Ո՞ր խմբակի տպագիր օրգանն էր «Ազատության ավետաբեր»-ը.

1. «Հայրենասերների միություն»,
2. «Պաշտպան հայրենյաց»,
3. «Բարենպատակ ընկերություն»,
4. «Սև խաչ»:

2. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արմենական կուսակցություն: Գաղտնի կազմակերպությունները հող նախապատրաստեցին ազգային կուսակցությունների ստեղծման համար: Առաջին հայ քաղաքական կուսակցությունն ստեղծվեց Վանում «Սև խաչ» գաղտնի կազմակերպության հիմքի վրա: Երբ Մկրտիչ Փորթուգալյանն արտաքսվեց Վանից, նա հաստատվեց Ֆրանսիայի Մարսել քաղաքում և սկսեց հրատարակել «Արմենիա» թերթը: Նրա նախկին աշակերտները՝ «Սև խաչի» անդամները, գաղտնի ճանապարհներով ստանում էին թերթը և տարածում հայրենակիցների շրջանում: Աստիճանաբար նրանք նորից համախմբվում են, և 1885թ., խիստ գաղտնիության պայմաններում, Վանում ստեղծվում է առաջին քաղաքական կուսակցությունը, որի անդամները իրենց ուսուցչի հրատարակած թերթի անունով իրենց կոչեցին արմենական: Կուսակցության փաստացի ստեղծողը և ղեկավարը Մկրտիչ Թերլեմեզյանն էր (հետագայում հոր անունով կոչվեց Ավետիսյան): Կուսակցության առաջին ծրագրում իբրև առաջնային նպատակ նշվում էր թուրքական բռնապետությունը տապալելու անհրաժեշտությունը: Դրա համար անհրաժեշտ էին համարում զենք հայթայթել և զինախմբեր ստեղծել: 1890-ական թթ. երկրորդ կեսին (1896թ.) թուրքական կառավարության հրահրած հայկական զանգ-

Մկրտիչ Ավետիսյան (1864-1896)

վածային կոտորածների ժամանակ Մկրտիչ Թերլեմեզյանը (Ավետիսյանը) իր շուրջը համախմբեց հայ քաղաքական բոլոր ուժերին (արմենականներ, հնչակյաններ, դաշնակցականներ) և ուժգին դիմադրեց, հակահարված տվեց թուրքական ուժերին: Սակայն Վանից Պարսկաստան անցնելու ժամանակ կուսակցությունը մեծ կորուստներ կրեց, զոհվեց նաև Մկրտիչ Ավետիսյանը: Չնայած ծանր կորուստներին՝ արմենականները մեծ գործ կատարեցին Վանի 1915թ. ինքնապաշտպանական մարտերի օրերին:

Ավետիս Նազարբեկյան (1866–1939)

Հնչակյան կուսակցություն: 1887թ. Ժնևում սովորող մի խումբ հայ ուսանողներ տեղում սկսում են հրատարակել «Հնչակ» թերթը՝ Գերցենի և Օգարյովի «Колокол» թերթի օրինակով: Նրա ղեկավարներն էին Ավետիս Նազարբեկյանը, Մարո Վարդանյանը, Ռուբեն Խանազատը և ուրիշներ:

1888թ. «Հնչակ» թերթում նրանք հրատարակում են կուսակցության ծրագիրը՝ հեռավոր և մոտակա նպատակները: Մոտակա նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր թուրքական բռնապետությունից: Նախատեսվում էր նաև ռուսահայերի և պարսկահայերի ազատագրումը: Հեռավոր նպատակը ողջ մարդկության համար սոցիալիզմի կառուցումն էր: Այդ ծրագիրը հրատարակվեց «Հնչակում»՝ հայտարարելով նոր կուսակցության ստեղծման մասին: 1889թ. Ռ. Խանազատն ու Գ. Կաֆյանը մեկնեցին Կ. Պոլիս, հանդիպումներ ունեցան տեղի նշանավոր հասարակական-քաղաքական գործիչների հետ: Նրանցից Արփիար Արփիարյանը, ոգևորված Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարով, իր ամբողջ խմբով մտավ Հնչակյան կուսակցության մեջ:

Արփիար Արփիարյան (1851–1908)

1890թ. Տրապիզոնում ստեղծվեց Հնչակյան կուսակցության մասնաճյուղը, որը կապեր հաստատեց Կ. Պոլսի հնչակյանների հետ: Այդ նույն ժամանակ միացյալ ուժերով կազմակերպվեց Գում-Գափուի ցույցը, որը գնդակոծվեց թուրքական կառավարության կողմից: Հայաշատ վայրերում ստեղծվեցին բազմաթիվ մասնաճյուղեր:

Հայ հեղափոխական դաշնակցություն: Տարբեր հեղափոխական կազմակերպություններ Թիֆլիսում միավորվեցին Քր. Միքայելյանի ղեկավարած հայ նարոդնիկների խմբի հետ: Ընթացքում որոշվեց արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր ուժերը միավորել «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցության մեջ:

Բանակցություններ սկսվեցին Թիֆլիս եկած հնչակյան Խանազատի հետ, որը պնդում էր սոցիալիզմի սկզբունքների ամրագրումը կուսակցության ծրագրում: Այդ հարցին դեմ դուրս եկան Քր. Միքայելյանն ու Ս. Զավարյանը:

Միությունը չկայացավ: Հայ հեղափոխականների դաշնակցությունը ստեղծման առաջին ամիսներից տարածվեց Անդրկովկասում, թափանցեց Արևմտյան Հայաստան, Ռուսաստանի հայաշատ վայրեր: 1892թ. տեղի ունեցած առաջին ընդհանուր ժողովում կուսակցությունը վերանվանվեց Հայ հեղափոխական դաշնակցություն: 1894թ. «Դրոշակի» համարներում տպվեց կուսակցության ծրագիրը, որը բաղկացած էր երեք մասից՝ «Նպատակ», «Միջոցներ», «Կազմակերպություն»: Առաջին ընդհանուր ժողովին հաջորդեց ՀՀԴ-ի տարածման և ընդարձակման շրջանը: Տեղական ուժեղ կառույցներ ստեղծվեցին Անդրկովկասի հայաշատ վայրերում, ռուսական գաղութներում, Ատրպատականում, Վասպուրականում, թուրքական կայսրության հայաշատ վայրերում: 90-ական թթ. երկրորդ կեսից ՀՀԴ-ն դարձավ ամենաազդեցիկ հայկական կուսակցությունը:

Հայ ազգային կուսակցությունները մեծ գործ կատարեցին ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման ուղղությամբ:

Ռոստոմ (Ստեփան Զորյան) (1867–1919)

Քրիստափոր Միքայելյան (1859–1905)

Սիմոն Զավարյան (1865–1913)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ էր Մկրտիչ Փորթուգալյանը և ի՞նչ գործունեություն էր ծավալել: Ի՞նչն եք գնահատում նրա մեջ:
2. Ո՞րն էր հայ ազգային առաջին կուսակցությունը, ինչպե՞ս ստեղծվեց և ի՞նչ գործունեություն ծավալեց: Ո՞վ էր Մկրտիչ Թերլեմեզյանը, ի՞նչ գիտեք նրա մասին: Փորձե՛ք ներկայացնել կուսակցության ծրագիրը և արտահայտե՛ք ձեր վերաբերմունքը այդ ծրագրի նկատմամբ:
3. Ե՞րբ և ինչպե՞ս ստեղծվեց Հնչակյան կուսակցությունը: Ովքե՞ր էին

նրա ղեկավար անդամները, ի՞նչ գիտեք նրանց մասին: Ինչպիսի՞ն էր նրանց ծրագիրը, որքանո՞վ էր իրատեսական: Ի՞նչ գործունեություն ծավալեցին հնչակյանները և ի՞նչ արդյունքի հասան: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ էին արևմտահայ հնչակները հրաժարվում սոցիալիզմի քարոզչությունից: Ճի՞շտ էին արդյոք նրանք:

4. Ե՞րբ և ինչպե՞ս ստեղծվեց Հայ հեղափոխական դաշնակցությունը, ովքե՞ր էին նրա ղեկավարները, ի՞նչ գիտեք նրանց մասին: Ներկայացրե՛ք նրանց ծրագիրը: Ի՞նչ գործունեություն ծավալեցին դաշնակցականները և ի՞նչ արդյունքի հասան:
5. Համեմատե՛ք կուսակցությունների ծրագրերը և գործելակերպը, ի՞նչ նմանություններ և տարբերություններ կարող եք նշել: Ձեր կարծիքով՝ ի՞նչ նշանակություն ունեցավ դրանց երևան գալը: Կուսակցություններից որի՞ ծրագիրն է ձեզ համար ընդունելի և ինչո՞ւ:
6. Լրացրե՛ք «Հայ ազգային կուսացություններ» աղյուսակը:

Կուսակցությունների ստեղծման տարեթիվը	Անվանումը	Ծրագիրը	Գործունեությունը

ԹԵՍՏ

Գում-Գափուի ցույցը տեղի է ունեցել.

1. 1898 թ., 3. 1890 թ.,
2. 1896 թ., 4. 1887 թ.:

3. ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արևմտահայության ազգային-ազատագրական պայքարում մեծ նշանակություն ունեցավ հայդուկային կամ ֆիդայական շարժումը: Հայդուկ՝ հունգարերեն բառ է, նշանակում է պարտիզան, ֆիդայի՝ արաբերեն բառ է, նշանակում է անձնազոհ: 19-րդ դարի 80-ական թթ. կեսերից Արևմտյան Հայաստանում սկսած հայդուկային շարժումն ուղղված էր բոլոր տեսակի ճնշողների և բռնակալների դեմ: Դրանք քուրդ ցեղապետներն էին և թուրք պաշտոնեությունը: Վրիժառու հայդուկն իր զենքն ուղղում էր նաև հայ մատնիչի դեմ: Դիմադրելով ճնշումներին՝ հայ գյուղացին մի թուրք ոստիկանի կամ քուրդ աղայի սպանելուց հետո բարձրանում էր լեռները: Մենակ կամ խմբով, մոտակա հայկական գյուղերի հետ կապ պահպանելով, լեռներում ապաստանած հայդուկները հանկարծակի հարձակվում էին թուրք հարկահանների և ոստիկանների, քուրդ ավազակների վրա: Հայդուկային խմբերում տիրում էր երկաթյա կարգապահություն: Առաջին հայդուկներից էր **Արաբոն**

(Առաքել Մխիթարյան, ծնվ. 1863թ.): Նա, չհանդուրժելով քուրդ ցեղապետների ապօրինությունները, որոշեց նրանց պատասխանել «ակն ընդ ական» սկզբունքով: Նա պաշտպանում էր հայ գյուղացուն, կողոպտելով հարուստներին, ամեն ինչ բաժանում էր գյուղացիներին՝ անկախ ազգությունից: Կովկասից զենք տեղափոխելու ժամանակ նրա 16-հոգանոց խմբի բոլոր անդամները զոհվեցին (1893թ.):

Արաբո (Առաքել) (1863–1893)

Ազգային կուսակցությունների ստեղծումը նպաստեց հայդուկային շարժման վերելքին: Նշանավոր հայրենասեր հայդուկներից էր Սասունի Ահրոնք գյուղացի **Արմենակ Ղազարյանը**, որը հռչակվեց **Հրայր, Դժոխք, Ուրվական** մականուններով: Նրա նպատակը համաժողովրդական շարժում ստեղծելն էր: Այդ նպատակով նա ոչ թե բարձրանում էր լեռները, այլ շրջում էր գյուղից գյուղ՝ ժողովրդին միավորելու ձգտումով: Նա թղթակցում էր միաժամանակ «Հնչակին» և «Դրոշակին», ցանկանում հարթել միջկուսակցական անհամաձայնություններ: Իրատես գործիչը չէր հավատում Եվրոպայի խոստումներին: Հրայրը զոհվեց 1904թ. Սասունի ապստամբության մարտերի ժամանակ:

Հրայր Դժոխք (Արմենակ Ղազարյան) (1864–1904)

Անվանի հայդուկապետ էր Սերոբ Վարդանյանը (1864–1899թթ.), Ախլաթի շրջանի Սոխորդ գյուղի գյուղապետի կրտսեր եղբայրը: Սպանելով իր վրա հարձակված քրդին՝ նա փախչում է Կ. Պոլիս, ապա՝ Ռումինիա: Այնտեղ կազմավորում է հայդուկային խումբ և վերադառնում Ախլաթ: 1896–97 թվերին կազմակերպում է ժողովրդի ինքնապաշտպանությունը: Նրա շնորհիվ Ախլաթը զերծ մնաց 90-ականների վերջերի կոտորածներից: Ժողովուրդը նրան կոչում էր Աղբյուր Սերոբ, այսինքն՝ կյանք պարգևող: Կառավարությունը մեծ գին նշանակեց նրա գլխի համար: Գեղաշենի գյուղապետ Ավոն թունավորում է իր տանը հանգրվանած հայդուկապետին և լուր հասցնում Բշարե Խալիլին: Թունավորված Սերոբը, ընկերները և ընտանիքի անդամները մարտնչում են Խալիլի զորքերի դեմ, որի ընթացքում Սերոբը զոհվում է: Նրա մասին ժողովուրդը հյուսեց բազմաթիվ երգեր և լեգենդներ:

Գևորգ Չավուշ (Գևորգ Ադամյան) (1870–1907)

Ականավոր հին հայդուկներից էր նաև Գևորգ Չավուշը: Նա մղել է բազմաթիվ հերոսական մարտեր Մազրայում, Շենիկում, Պնավում և Բերդակում, որոնք բոլորն էլ ավարտվել են հաղթանակով: Հերոս հայդուկը աչքի էր

ընկնում արտակարգ խիզախությամբ և անսահման համեստությամբ: Կառավարությունն անընդհատ հետապնդում էր նրան: 1907թ. Սոլուխի կռվում նա զոհվեց:

Սերոբի խմբի հայդուկներից էր Անդրանիկ Օզանյանը: Շապինգարահիսարցի երիտասարդը, չհանդուրժելով անարդարությունը, իր հորը ծեծող թուրք պաշտոնյային սպանում է, ապա բանտարկվում է: Փախչելով բանտից՝ գնում է Կ. Պոլիս, հետո՝ Ռումինիա: Որոշ ժամանակ անց վերադառնում է Հայաստան, դառնում Աղբյուր Սերոբի խմբի անդամ: Հրացան նորոգող համեստ ֆիդային Սերոբի մահվան համար վրեժ է լուծում Բշարե Խալիլից, սպանում նրան, ապա դառնում հայդուկապետ: Նա մեծ հռչակ ձեռք բերեց Առաքելոց վանքի կռվի ժամանակ: Անդրանիկը բազմաթիվ հաղթական մարտեր վարեց Արևմտյան և Արևելյան Հայաստանի զանազան շրջաններում, նույնիսկ ռուսական բանակի հրամանատարության կողմից արժանացավ գեներալի աստիճանի, բայց միշտ մնաց հայդուկի հոգով՝ ժողովրդի և հայրենիքի համար զոհվելու պատրաստակամությամբ: Հնարավոր չէ գրել բոլոր հայդուկների մասին. տարբեր են նրանց գործունեության վայրերը, տարբեր՝ պայքարի ձևերը: Բայց նրանց բոլորին միավորում է մի նպատակ՝ պաշտպանել հարազատ ժողովրդի արժանապատվությունը: Հայ վրիժառու հայդուկներն իրենց գործունեությամբ ապացուցեցին, որ ստրկական գոյությունից լավ է պատվավոր մահը հայրենիքի և հարազատի համար:

Անդրանիկ (Անդրանիկ Օզանյան) (1865–1927)

Աղբյուր Սերոբ (1864–1899)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է սկսվել հայդուկային շարժումը, և ինչպե՞ս կարող եք բնութագրել այն: Ինչպիսի՞ն էր հայդուկը (ֆիդային) ձեր պատկերացմամբ: Կցանկանայի՞ք նմանվել հայդուկներին և ինչո՞ւ: Ի՞նչ եք կարծում՝ Արցախյան պատերազմի ազատամարտիկներին կարելի՞ է անվանել հայդուկներ: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
2. Ո՞վ էր Արաբոն: Ինչպե՞ս կարող եք բնութագրել նրան: Նրա գործունեության մեջ ի՞նչն է ձեզ դուր եկել:
3. Ինչպիսի՞ն էր Հրայր Դժոխքը, ո՞րն էր նրա գործունեության նպատակը: Ձեր կարծիքով՝ ինչո՞վ էր նա տարբերվում մյուս հայդուկներից:
4. Ինչպե՞ս եք պատկերացնում Գևորգ Չավուշին: Թվարկե՛ք նրա մղած կռիվներից մի քանիսը: Կարո՞ղ եք հիմնավորել, որ Գևորգ Չավուշը իրոք եղել է անձնազոհության և նվիրումի վսեմ օրինակ:

5. Ինչպե՞ս Անդրանիկը մտավ ազատագրական պայքարի ասպարեզ: Ի՞նչ գործունեություն ծավալեց: Ինչո՞ւ են Անդրանիկին անվանում ժողովրդական հերոս: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր նրա ժողովրդականության գաղտնիքը:
6. Փորձե՛ք գնահատել հայդուկային շարժումը: Ձեր կարծիքով՝ այն ծառայե՞ց իր նպատակին և տվե՞ց ցանկալի արդյունք:
7. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *հայդուկ, ֆիդայի* տերմինները և *հայդուկային շարժում* հասկացությունը:
8. Լրացրե՛ք «Հայ նշանավոր հայդուկները» աղյուսակը:

Հայդուկները	Գործունեության բնութագիրը	Գործունեության գնահատումը
Արաբո		
Աղբյուր Սերոբ		
Հրայր Դժոխք		
Անդրանիկ		
Գևորգ Չավուշ		

ԹԵՍՏ

Սասունի Ահրոնք գյուղում ծնվել է.

1. Անդրանիկը,
2. Գևորգ Չավուշը,
3. Հրայրը,
4. Արաբոն:

ԹԵՄԱ 8-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ազգային ինքնագիտակցության զարթոնքը, ազատագրական պայքարի վերելքը հիմք հանդիսացան քաղաքական խմբակների ու կազմակերպությունների առաջացման համար: Դրանց հիմնական նպատակը հայ ժողովրդի ազատագրումն էր օտարի բռնապետությունից: Մեծ գործունեություն են ծավալում «Հայրենասերների միություն», «Սև խաչ», «Պաշտպան հայրենյաց» և այլ կազմակերպությունները:
2. 1885թ. Վանում հիմնվում է Արմենական կուսակցությունը: Կուսակցությունը ձգտում էր ժողովրդին նախապատրաստել ազատագրական կռիվների համար:
3. 1887թ. Ժնևում կովկասահայ մի խումբ ուսանողներ հիմնում են Հնչակյան կուսակցությունը: Կուսակցության գլխավոր խնդիրը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր, իսկ սոցիալիզմը՝ նրա հեռավոր նպատակը:

4. 1890թ. Թիֆլիսում կազմակերպվեց «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը, որի հիմնական նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր, Հայկական հարցի լուծումը: 1890-ական թթ. վերջերին Դաշնակցությունը հայ հասարակական-քաղաքական կյանքում դարձել էր գերիշխող կուսակցություն: Անկախ այն հանգամանքից, թե կուսակցությունները որտեղ էին հիմնադրվել՝ Ժնևում, Վանում կամ Թիֆլիսում, նրանք բոլորն էլ ունեին համահայկական նշանակություն:
5. Թուրքիայի հայահալած քաղաքականությունը, տնտեսական, ազգային ու կրոնական հալածանքներն ու բռնություններն առաջ բերեցին արևմտահայության հակազդեցությունը, որն իր արտացոլումը գտավ հայդուկային (ֆիդայական) պայքարում: Հայդուկները պայքարում էին թուրք և քուրդ կեղեքիչների դեմ, պաշտպանում հայ գյուղացու կյանքը, պատիվն ու ունեցվածքը: Ֆիդայական շարժումը դրական նշանակություն ունեցավ: Այն հաճախ մեղմացնում կամ բացառում էր թուրք-քրդական հարստահարիչների կողմից գործադրվող բռնությունները:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Հայկական կոտորածների նախապատրաստությունը: 19-րդ դարի վերջին քառորդում գնալով ավելի էր ծանրանում արևմտահայության սոցիալ-քաղաքական և տնտեսական դրությունը: Հայ գյուղացին մահմեդականից հինգ անգամ շատ հարկ էր վճարում: Ծանր և հյուծիչ հարկային քաղաքականությունը նպատակ էր հետապնդում թուլացնելու հայերի տնտեսական հզորությունը, զրկելու ապրուստի միջոցներից, հարկադրելու բռնել տարագրության ուղին: Թուրքական իշխանությունները նաև այս միջոցով էին փորձում հասնել հայկական նահանգների հայաթափման զազրելի ծրագրի իրականացմանը:

Տնտեսական բազմաբնույթ ճնշումները զուգակցվում էին ազգային հողի վրա տեղի ունեցող բռնություններով: Թուրք կառավարող վերնախավի, սուլ-

թան Աբդուլ Համիդի մեջ արմատավորվել էր այն մտայնությունը, թե Հայկական հարցը պետք է «լուծել» հայերի բնաջնջման ճանապարհով: Այդ նպատակով սուլթանը դեռևս 1891-ին ստեղծել էր իր անունով կոչվող քրդական «համիդիե» հեծելագնդերը, որոնց հիմնական խնդիրն էր կոտորել հայերին և մյուս քրիստոնյաներին: 1890-ական թթ. սկզբներին սուլթանական կառավարությունն ամենայն մանրամասնությամբ մշակեց ջարդերի ծրագիրը՝ համապատասխան հրահանգներ հղելով տեղական իշխանություններին՝ հայկական կոտորածները բարձրացնելով պետական մակարդակի:

Սասունի 1894թ. ապստամբությունը: Թուրքական իշխանությունը որոշեց նախ և առաջ հաշվեհարդար տեսնել հայ ազատագրական շարժման գլխավոր օջախներից մեկի՝ Սասունի հետ: Սասունը Արևմտյան Հայաստանի լեռնային գավառներից էր, վարչականորեն գտնվում էր Բիթլիսի վիլայեթում և ուներ շուրջ 35000 հայ բնակչություն: Ազատաբաղձ և անկոտրում սասունցիներին ճնշելու համար սուլթանի հրամանով թուրքական ուժերը հաճախակի հարձակումներ էին կազմակերպում Սասունի հայկական գյուղերի վրա: Հնչակյան կուսակցության գործիչներ Միհրան Տամատյանը, Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաջյան) տեղի գործիչներ Հրայրի, Գևորգ Չավուշի և ուրիշների հետ ժողովրդին ապստամբության էին կոչում: Շուտով լեռնականները հրաժարվում են հարկատվությունից: Սուլթանական կառավարությունը նախ փորձում է սասունցիներին հնազանդեցնել քուրդ ցեղապետների միջոցով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դրանով ավելի կսրվեն հայ-քրդական հարաբերությունները: Սակայն լեռնցիներն անկոտրում էին: Սասունցիները, Գրիգոր Մոսեյանի գլխավորությամբ, 1893թ. պարտության են մատնում Բիթլիսի կուսակալի ուղարկած զորքերին: Բայց սուլթանին հաջողվում է ձերբակալել Մ. Տամատյանին, Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես եպիսկոպոսին և այլ ըմբոստ սասունցիների՝ 25 հոգու: Սակայն սասունցիները չեն վիհատվում: Պայքարի ղեկն իրենց ձեռքն են վերցնում Մեծն Մուրադը, Հրայրը, նրանց զինակիցները, որոնք ժողովրդին նախապատրաստում են զինված պայքարի: Առանձնապես մեծ աշխատանքներ է ծավալում երիտասարդ հայդուկ Գևորգ Չավուշը: Կատաղած սուլթանը սասունցիների դեմ է ուղարկում 4-րդ բանակի հրամանատար Զեքի փաշային, որին միանում են նաև քրդական ջոկատները, թուրք խառնամբոխը: Զեքի փաշան պահանջում է վերջին 7 տարիների հարկը, սակայն սասունցիները մերժում են:

Բիթլիս քաղաքի տեսարան

1894թ. օգոստոսի սկզբին թուրքական ավելի քան 40000-անոց զորքն ու խառնամբոխը անցնում են հարձակման: Սասունցիները դիմում են հերոսական պաշտպանության՝ խիզախության և անձնազոհության հրաշքներ գործելով:

Տղամարդկանց հետ քաջաբար մարտնչում էին նաև կանայք և պատանիները: Տեսնելով, որ չի կարողանում ճնշել քաջակորով լեռնականներին, թշնամին դիմում է նենգության, պատվիրակություն է ուղարկում սասունցիների մոտ և սուլթանի անունից ներում խոստանում, եթե նրանք անձնատուր լինեն: Բանակցություններին համար սասունցիներն ուղարկում են 148 հոգու, որոնք, սակայն, շրջապատվում են թշնամու կողմից և կոտորվում: Կռիվներն սկսվում են նոր թափով: Բայց ուժերը խիստ անհավասար էին: Բազմիցս գերակշիռ հակառակորդը շուտով գրավում է մի շարք բնակավայրեր, նաև՝ պաշտպանության կենտրոն Գելիեգուզան գյուղը: Ընդամենը 2000 մարտիկ ունեցող սասունցիները նահանջելով՝ դիրքավորվում են լեռներում և, սրընթաց հակագրոհներ կազմակերպելով, զգալի հարվածներ հասցնում թշնամուն: Շուրջ 15 օր շարունակվում է այդ անհավասար գոտեմարտը: Օգոստոսի վերջերին թուրքական զորքերն ի վերջո հաղթում են և սրի քաշում մոտ 7000 հոգու: Կանանցից ոմանք, չարատավորվելու համար, ինքնասպան են լինում: Գյուղապետ Գրիգորի գեղանի հարս Շաքեն զոհվում է՝ նետվելով ժայռից, նրա օրինակին են հետևում շատերը:

Սասունցի

Ապստամբության ղեկավարների մի մասը զոհվեց, իսկ մյուսները (Մեծն Մուրադ, Գևորգ Չավուշ և այլք) ձերբակալվեցին: Մուրադը դատապարտվեց 11 տարվա բանտարկության և աքսորվեց Տրիպոլի (Լիբանան): Սասունի 1894թ. ապստամբությունը Բեռլինի կոնգրեսից հետո արևմտահայերի առաջին զինված ելույթն էր օսմանյան բռնապետության դեմ:

Բարենորոգումների մայիսյան ծրագիրը: Սասունի կոտորածները բողոք և զայրույթ առաջացրին բազմաթիվ երկրներում: Միջազգային առաջադեմ հասարակայնությունը բողոքի ձայն բարձրացրեց Աբդուլ Համիդի կողմից Սասունում կատարված ոճրագործությունների դեմ: Հասարակական պահանջի ազդեցության տակ անգլիական, ֆրանսիական և ռուսական կառավարությունները սկսեցին անդրադառնալ Սասունի ջարդերին: 1894թ. նոյեմբերին կազմվեց հատուկ հանձնաժողով՝ Սասունի կոտորածներն ուսում-

նասիրելու համար: Մի քանի ամիս աշխատելուց հետո հանձնաժողովը եզրակացրեց, որ Սասունի հայությունը կոտորվել է առանց տարիքի և սեռի խտրության, կոտորվել է թուրքական իշխանությունների կողմից առանց պատճառի: Վերստին առաջ քաշվեց Հայկական հարցը:

1895թ. մայիսի 11-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները Թուրքիային ներկայացրին բարենորոգումների ծրագիր, որը կոչվեց մայիսյան: Ըստ դրա՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի և Սեբաստիայի վիլայեթներում իրականացվելու էին բարենորոգումներ: Նահանգապետները նշանակվելու էին 5 տարի ժամկետով, առանց կրոնական խտրության: Եթե նահանգապետը քրիստոնյա էր, ապա տեղակալը պետք է լիներ մահմեդական, և հակառակը: Նահանգապետներն ու գավառապետները նշանակվելու էին սուլթանի կողմից: Խաղաղ ժամանակ «համիդիե» հեծելազորը զրկվում էր զենք և համազգեստ կրելու իրավունքից: Վերացվելու էին բռնի պարհակները, կարգավորվելու էր հարկային դաշտը, լուծում էին ստանալու հողային և դատական հարցերը:

Ստանալով այդ փաստաթուղթը՝ սուլթանը կեղծավորաբար գոհունակություն հայտնեց, սակայն ավելացրեց, որ ինքն անարդար է համարում բարենորոգումների իրականացումը կայսրության միայն մի մասում: Դեսպաններին նա ասաց, որ անհրաժեշտ է բարենորոգումներ իրականացնել նաև մնացած վիլայեթներում: Չնայած սուլթանը 1895թ. հոկտեմբերին հաստատեց բարենորոգումների ծրագիրը, սակայն ոչ մի քայլ չձեռնարկեց դրանց իրագործման ուղղությամբ:

Եվրոպայի մեծ տերությունների ուշադրությունը գրավելու և նրանց աջակցությամբ մայիսյան բարենորոգումների ծրագիրը կենսագործելու համար հնչակյանները 1895թ. սեպտեմբերին Կ. Պոլսում խաղաղ ցույց կազմակերպեցին: Ցույցի կազմակերպիչները նախօրոք դեսպաններին տեղեկացրել էին, որ ցույցն ունի խաղաղ բնույթ: Շուրջ 4000 խաղաղ ցուցարարներ շարժվեցին դեպի Բաբ Ալի՝ կառավարության նստավայրը: Սակայն կես ճանապարհին ոստիկանները կանգնեցնում են ցուցարարներին և թույլ չեն տալիս պահանջագիրը հանձնել կառավարությանը: Ապա ցուցարարների վրա են հարձակվում զինվորները՝ գնդակոծելով նրանց: Նույն օրը ջարդերը տարածվում են ողջ Կ. Պոլսով, որին զոհ է գնում շուրջ 2000 հայ:

Արևմտահայության զանգվածային կոտորածները: Համոզվելով, որ մայիսյան բարենորոգումների ծրագիրը մեծ տերությունների միջև առկա հակասությունների պատճառով մնալու է թղթի վրա, սուլթանը վճռեց հայերի բողոքի ձայնը խեղդել աննախադեպ կոտորածներով: Դրանք սկսվում են փաստորեն 1894թ. և շարունակվում մինչև 1896թ. վերջերը:

Կառավարությունը հրահանգում է հետադեմ մահմեդական հոգևորականությանը՝ կեղծ լուրեր տարածել, թե իբր հայերը ցանկանում են պետական

հեղաշրջում կատարել, կոտորել մահմեդականներին: Ոտքի հանվեցին թուրք մոլեռանդ խառնամբոխը, քրդական ցեղերը, ոստիկանական ուժերը, բանակային կանոնավոր զորամասերը, որոնք առանց սեռի և տարիքի խտրության սկսեցին հայերի կոտորածները: 1895թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ջարդեր տեղի ունեցան Բաբերդում, Երզնկայում, Շապին-Գարահիսարում, Էրզրումում, Սեբաստիայում, Ուրֆայում, Վանում, Բայազետում, Բիթլիսում և այլուր՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում:

1896թ. օգոստոսի 14-ին մի խումբ դաշնակցականներ դիմում են արտասովոր միջոցի: Նրանք մտնում են Օտտոմանյան բանկ և պահանջում դադարեցնել ջարդերը, այլապես սպառնում են պայթեցնել բանկը: Դեսպանների միջամտությամբ բանկը գրաված խումբն ազատվում է, բայց այդ դեպքը օսմանյան իշխանություններն օգտագործում են կոտորածների ծավալման համար: Եռօրյա ջարդերից միայն Կ. Պոլսում սրի է քաշվում մոտ 10 հազար հայ: Մեծ թվով հայեր զոհվեցին կոտորածներին հաջորդած ցրտաշունչ ձմռան, սովի և համաճարակի պատճառով:

1890-ական թթ. կոտորածներով, փաստորեն, սկսվեց արևմտահայության ցեղասպանությունը: Զոհվեց ավելի քան 300 հազար հայ, նույնքան էլ բռնեց տարագրության ճանապարհը: Մոտ 100 հազար հայ գաղթեց Ռուսաստան, իսկ 150-200 հազարը՝ Եվրոպայի, Աֆրիկայի և Ամերիկայի զանազան երկրներ: Ցավոք, արևմտահայության որոշ մասն էլ դավանափոխվեց՝ ընդունելով մահմեդականություն:

Կոտորածների հետևանքները: 1890-ական թվականների ջարդերը խիստ ծանր հետևանքներ ունեցան Արևմտյան Հայաստանի և ողջ հայության համար: Օսմանյան Թուրքիայում բնակվող հայերի թիվը 3 միլիոնից նվազեց մինչև 2,5 միլիոն: Բնաջնջված և տարագրված հայերի բնակավայրերում իշխանությունները բնակեցնում էին մահմեդականների՝ փորձելով բնակչության տեսակարար կշիռը փոխել հօգուտ մահմեդական ազգաբնակչության: Այդ պատճառով ի վնաս հայերի զգալիորեն փոխվեց Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը:

Կոտորածներից հետո ավելի ուժեղացան արևմտահայերի ազգային և սոցիալական ճնշումները: Ազատագրական շարժումներն անմիջապես ճնշելու համար օսմանյան կառավարությունը հայկական քաղաքներում և գյուղերում հիմնեց զորանոցներ, ստեղծեց տարբեր ավազակախմբեր: Ավելի հանդուգն սկսեցին գործել սուլթանի կողմից հովանավորվող քուրդ ցեղապետները, որոնք բռնագրավում էին հայերի հողերը՝ նրանց տերերին դարձնելով իրենց հպատակները:

Անկում ապրեց Արևմտյան Հայաստանի տնտեսությունը: Ավերվել և փակվել էին արդյունաբերական ձեռնարկությունները, կրճատվել ցանքատարա-

ծությունները: Դրանք քոչվոր ցեղերի կողմից օգտագործվում էին որպես արոտավայրեր:

Մեծ տերությունները և արևմտահայերի կոտորածները: Մեծ տերությունները, Հայկական հարցը դարձնելով միջազգային դիվանագիտության առարկա, ծառայեցնում էին իրենց քաղաքական և տնտեսական շահերին: Հայկական հարցը նրանք քննարկման առարկա էին դարձնում միայն այն ժամանակ, երբ Թուրքիայից ցանկանում էին որոշակի զիջումներ ստանալ: Հասնելով իրենց նպատակին՝ նրանք մոռանում էին հայերին: Նույն քաղաքականությունը նրանք վարեցին նաև 1890-ական թվականներին:

Այսպես՝ Մեծ Բրիտանիայի կառավարող վերնախավը հայտարարում էր, որ եթե չկանխեն ջարդերը, ապա կխայտառակվեն ողջ աշխարհի առաջ: Բայց երբ Մերձավոր Արևելքում մի շարք հարցեր լուծվեցին հօգուտ իրեն, անմիջապես մոռացության մատնեց Հայկական հարցը:

Գերմանիան մշտապես հանդես էր գալիս սուլթանի պաշտպանությամբ: Օսմանյան Թուրքիայի ամբողջականության պահպանմամբ շահագրգռված էր նաև Ֆրանսիան, քանզի զգալի գումարներ էր ներդրել երկրում:

ԱՄՆ-ը ընդհանրապես հրաժարվում էր արծարծել Հայկական հարցը:

Ցարական Ռուսաստանը, մտավախություն ունենալով, թե արևմտահայ ազատագրական շարժումները կարող են իրենց արձագանքն ունենալ Անդրկովկասում, շատ դեպքերում համերաշխվում էր սուլթանի հետ: Այդ իսկ պատճառով հետապնդում էր ազատագրական շարժման գործիչներին, արգելում զինված և զինատար խմբերի անցումը Թուրքիա:

Բոլորովին այլ էր համաշխարհային առաջադեմ հասարակայնության վերաբերմունքը հայկական ջարդերի հանդեպ: Նա իր բողոքի ձայնը բարձրացրեց օսմանյան իշխանությունների հայաջինջ քաղաքականության դեմ: Մեծ տերություններից պահանջում էր հանդես գալ հայերի պաշտպանության դիրքերում, գործուն միջոցներ ձեռնարկել ջարդերի դադարեցման համար: Հիշատակության արժանի են ԱՄՆ-ում Մարկ Տվենի, Գերմանիայում Յոհաննես Լեփսիուսի, Ֆրանսիայում ժան ժորեսի, Ռուսաստանում Վիկտոր Գոլցևի և շատ ուրիշների անունները: Սակայն նրանց խոսքի ուժը շատ քիչ էր ջարդերը կանխելու կամ մեծ տերությունների անտարբերությունը վերացնելու համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Փորձե՛ք հիմնավորել, որ սուլթան Համիդը հայկական կոտորածները բարձրացրել էր պետական մակարդակի:
2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ թուրքական իշխանությունները հայկական կոտորածները որոշեցին սկսել Սասունից: Սասունի համառ կռիվների ո՞ր դրվագները ձեզ վրա մեծ ազդեցություն ունեցան: Ինչո՞վ վերջացավ Սասունի հերոսամարտը և ի՞նչ հետևանքներ ունեցավ:

3. Ներկայացրե՛ք մայիսյան բարենորոգումների ծրագիրը և փորձե՛ք վերլուծել:
4. Ե՞րբ և որտե՞ղ տեղի ունեցան հայկական կոտորածները: Ինչպե՞ս էին իրականացնում թուրք դահիճները հայկական ջարդերը: Ի՞նչ հետևանքներ ունեցան կոտորածները:
5. Ինչո՞ւ մեծ տերությունները չկանխեցին հայկական կոտորածները: Փորձե՛ք պարզել, թե ինչ հետևություններ կարելի է անել հայկական կոտորածների նկատմամբ աշխարհի առաջադեմ հասարակայնության վերաբերմունքից:
6. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *համիդիե, Սասունի 1894թ. ապստամբություն, բարենորոգումների ծրագիր, արևմտահայության զանգվածային կոտորածներ* տերմինները և հասկացությունները:
7. Լրացրե՛ք «Մեծ տերությունները և արևմտահայության կոտորածները» աղյուսակը:

Մեծ տերությունները	Հետապնդած նպատակները և շահերը	Վերաբերմունքը
Անգլիա		
Ֆրանսիա		
Գերմանիա		
Ռուսաստան		
ԱՄՆ		

ԹԵՍՏ

Օտտոմանյան բանկը գրավվել է.

1. 1891 թվականին,
2. 1896 թ. օգոստոսի 14-ին,
3. 1895 թ. մայիսի 14-ին,
4. 1894 թ. նոյեմբերին:

2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Զեյթունի տեսարան

Զեյթունի 1895թ. ապստամբությունը: Թուրքական իշխանության գլխավոր նպատակներից էր նաև հայոց ազատամարտի մեկ այլ միջնաբերդի՝ Զեյթունի վերջնական հպատակեցումը: 1895թ. ամռանը Զեյթունի և Լեռնային Կիլիկիայի մի շարք այլ բնակավայրերի հայությանը զինված պայքարի նախապատրաստելու համար Զեյթուն են գալիս հնչակյան գործիչներ: Նրանք խորհրդակցության են հրավիրում Զեյ-

թունի իշխաններին, տեղացի գյուղապետներին, հոգևոր գործիչներին: Տեղեկանալով, որ կառավարությունը ուժեր է կենտրոնացնում Զեյթունի հետ հաշվեհարդար տեսնելու համար, քաջակորով զեյթունցիները որոշում են նրանց դիմավորել զենքը ձեռքին: Ապստամբության փաստական ղեկավար դարձավ Նազարեթ Չավուշ Նորաշխարհյանը: Երեք օր անց քաջամարտիկ լեռնականները գրավեցին Զեյթունի կառավարչատունը՝ գերելով բոլոր պաշտոնյաներին, ապա գրավեցին գյուղաքաղաքի թուրքական զորանոցը և գերված 700 թուրք զինվորներին ստիպեցին գլուխները խոնարհած անցնել վանահոր թրի տակով: Ապա հայերը գրավեցին երկու թնդանոթ, երեք հարյուրից ավելի հրացան և ռազմամթերք: Ստեղծվում է Զեյթունի ժամանակավոր կառավարությունը՝ հնչակյան գործիչ Աղասու գլխավորությամբ: Ձևավորվում է նաև զինվորական խորհուրդը: Զորանոցի վրա բարձրացվում է «Զեյթունի անկախ իշխանության» կարմիր դրոշը:

Սուլթանական կառավարությունը զեյթունցիների դեմ է ուղարկում 30-հազարանոց կանոնավոր և մի քանի հազարի հասնող անդամներով անկանոն զորամասեր: Զեյթունցիները նրանց դիմավորում են 6000 կռվող ուժով և դեկտեմբերի 2–3-ին հետ են մղում մի քանի անգամ գերակշռող հակառակորդի բոլոր գրոհները: Ապստամբության շուրջ 4 ամսվա ընթացքում զեյթունցիները տվեցին 3500 զոհ, իսկ թշնամին՝ 20000 սպանված:

Զեյթունի՝ ամիսներ տևող հերոսամարտն իր վրա է հրավիրում նաև Եվրոպայի ուշադրությունը: Հասարակական կարծիքի ճնշման ներքո գործին միջամտեցին մեծ տերությունների ներկայացուցիչները: Հաշվի առնելով, որ Թուրքիայի ներքին և արտաքին դրությունը գնալով վատթարանում է, և ունկնդրելով եվրոպական դեսպանների միջնորդությանը՝ Աբդուլ Համիդը դադարեցրեց ռազմական գործողությունները: Անգլիական, ֆրանսիական, ռուսական և իտալական հյուպատոսների միջնորդությամբ Հալեպում սկսվեցին բանակցությունները զեյթունցիների և թուրքական իշխանությունների միջև: Ի վերջո, փոխադարձ զիջումներով, 1896թ. հունվարի 30-ին կողմերի միջև պայմանագիր կնքվեց:

Ըստ համաձայնագրի՝ ապստամբներին շնորհվում էր ընդհանուր ներում: Զեյթունում այդուհետև նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ: Հայերը վերադարձնելու էին թշնամուց խլված զենքը: Չեղյալ էին համարվում հարկային ապառքները: Համաձայնագրի իրացման հսկողությունը դրվում էր մեծ տերությունների հյուպատոսների վրա: Հատուկ այդ նպատակի համար գավառի կենտրոն Մարաշում բացվելու էին հյուպատոսություններ: Բայց համաձայնագրի կետերի մեծ մասը չիրականացվեց: Իրագործվեցին միայն Զեյթունում քրիստոնյա կառավարչի (ազգությամբ հույն) նշանակումը, ապստամբներին ներում շնորհելը և երկրորդական բնույթի խնդիրներ: Զեյթունի 1895-1896թթ. ապստամբությունը հայ ժողովրդի ազատագրական պայ-

քարի առասպել դարձած էջերից է: Անուրանալի է նրա ազդեցությունը ազատագրական պայքարի հետագա ծավալման գործում:

Ինքնապաշտպանական մարտերը: Արևմտահայերը կոտորածների առաջին օրերին հանկարծակիի եկան: Բայց շուտով բազմաթիվ վայրերում կարողացան դիմել կազմակերպված ինքնապաշտպանության: Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան 1895թ. հոկտեմբերին Մալաթիայում. Կիլիկիայում:

Վանի ժայռերը

Հերոսական ինքնապաշտպանության դիմեց նաև Վանը: Պայքարը կազմակերպելու համար Պարսկաստանից Վան էին անցել Վազգենի, Ներսեսի խմբերը: Նրանք իրենց ուժերը ցրում են Վանում և շրջակա հայկական գյուղերում: 1896թ. հունիսի 3-ին թուրք բազմահազարանոց խուժանը անցնում է հարձակման: Հանկարծակիի եկած հայերը սկզբում զգալի կորուստներ կրեցին: Բայց շուտով Դաշնակցության, Արմենական և Հնչակյան կուսակցությունների ղեկավարները, մի կողմ դնելով իրենց տարաձայնությունները, միավորեցին մարտական ուժերը: Ինքնապաշտպանության կենտրոն դարձավ Այգեստան թաղամասը: Հունիսի 5-ին և 6-ին թուրքերը բազմիցս փորձեցին գրավել Այգեստանը, բայց մատնվեցին անհաջողության: Պաշտպանները հերոսաբար հետ էին մղում հակառակորդի բոլոր գրոհները:

Սակայն Մեծ Բրիտանիան միջամտում է գործին: Վանի բրիտանական հյուպատոսը ինքնապաշտպանության ղեկավարներին առաջարկում է դադարեցնել դիմադրությունը և հեռանալ Պարսկաստան: Հայերը, տեսնելով, որ ուժերը անհավասար են, իսկ օսմանյան իշխանությունները պարտավորվում են երաշխավորել նրանց ապահով անցումը Պարսկաստան, համաձայնում են: Հունիսի 8-ին մոտ մեկուկես հազար հայեր դուրս եկան Վանից և շարժվեցին դեպի Վարագա լեռը: Սակայն ուխտադրուժ թշնամին Սբ Բարդուղիմեոս վանքի մոտ հարձակվեց նրանց վրա և կոտորեց: Միայն 30 հոգու հաջողվեց անցնել Պարսկաստան:

Քաղաքը զրկվեց իր քաջարի պաշտպաններից: Թուրքերը հրո ճարակ դարձրին Վանը, ապա հարձակվեցին վիլայեթի հայկական գյուղերի վրա: Մոտ 20000 հայեր սրի քաշվեցին: Թալանվեցին և ավերվեցին Վասպուրականի գրեթե բոլոր վանքերը, այնտեղ պահվող թանկարժեք ձեռագրերը:

1896թ. հոկտեմբերին թուրքական զորքը և մահմեդական ամբոխը հարձակվում են Ուրֆայի հայ բնակչության վրա: Ուրֆացիները երեք ամիս

շարունակ հաջողությամբ հետ էին մղում ջարդարարներին: Տեսնելով, որ չի կարողանում կոտրել ուրֆացիների դիմադրական կամքը, գավառապետը դիմում է նենգության: Նա հայկական թաղամաս է ուղարկում 5000 զինվորների և համիդեականների՝ ուրֆացիներին մահմեդական ամբոխից իբր պաշտպանելու համար: Հավատալով գավառապետի խոստումներին՝ հայերն ընդունում են զինվորներին: Մտնելով թաղամաս՝ թուրքերն ու քրդերը սկսում են կոտորածը: Կանանց ու երեխաների մի մասն ապաստանում է եկեղեցում, որը հրկիզվում է ջարդարարների կողմից: Ելուզակները սրի են բաշում ավելի քան յոթ հազար հայի:

Ինքնապաշտպանական մարտերի ժամանակ դրսևորվեց հայ ժողովրդի ազատաբաղձ և անկոտրում ոգին: Այդ հերոսամարտերն ապացուցեցին, որ թուրքական արյունոտ յաթաղանից փրկության միակ հույսը զինված պայքարն է:

1890-ական թվականների կոտորածների ժամանակ եղան թուրքեր և քրդեր, որոնք պաշտպանեցին հայերին: Այսպես՝ Մոկսի կառավարիչ, ազգությամբ քուրդ Մուրթուլլա բեյը, տեղեկանալով ջարդերի մասին, մի գիշերվա ընթացքում Վանից հասնում է Մոկս և կանխում կոտորածը: Ցավոք, այդպիսի մարդկանց թիվը քիչ էր: Թուրքերի և քրդերի մեծ մասը, կրոնական մոլեռանդությամբ և թալանի տենչով համակված, տուրք տվեց իշխանության կոչերին և մասնակցեց կոտորածներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ զեյթունցիները որոշեցին զինված պայքարի նախապատրաստվել: Ո՞ր կուսակցությունը կազմակերպեց Զեյթունի ապստամբությունը, ո՞վ դարձավ նրա փաստական ղեկավարը: Նկարագրե՛ք ապստամբության ընթացքը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ թուրքական իշխանությունները զիջումների գնացին և պայմանագիր կնքեցին ապստամբների հետ: Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ նշանակություն ունեցավ ապստամբությունը:
2. Փորձե՛ք ապացուցել, որ կոտորածները չեն ընկճել արևմտահայության մարտական ոգին: Նկարագրե՛ք Մալաթիայի և Մարաշի ինքնապաշտպանական մարտերը: Ո՞րն էր դրանց նշանակությունը:
3. Ե՞րբ տեղի ունեցավ Վանի ինքնապաշտպանությունը: Ձեր կարծիքով՝ որո՞նք էին վանեցիների հաջողությունների պատճառները: Ինչպե՞ս եք գնահատում ինքնապաշտպանության ղեկավարների՝ դիմադրությունը դադարեցնելու և Պարսկաստան հեռանալու որոշումը:
4. Ի՞նչ ընթացք ունեցավ Ուրֆայի ինքնապաշտպանությունը: Ո՞րն էր գավառապետին հավատալու պատճառը. հայերի դյուրահավատությո՞ւնը, միամտությո՞ւնը, թե՞ պայքարի հեռանկարը կորցնելը:

5. Տեքստից դուրս գրե՛ք և բացատրե՛ք *Զեյթունի 1895թ. ապստամբություն, ինքնապաշտպանական մարտեր* հասկացությունները:
6. Լրացրե՛ք «Արևմտահայության ինքնապաշտպանական մարտերը» աղյուսակը:

Վայրը	Տարեթիվը	Գործիչը	Մարտերի ընթացքը	Արդյունքները
Զեյթուն				
Կիլիկիա				
Վան				
Ուրֆա				

ԹԵՍՏ

Ո՞վ էր Զեյթունի ապստամբության փաստական ղեկավարը.

1. Եղիշե քահանա Խաչատրյանը,
2. Աղասին,
3. Նազարեթ Չավուշ Նորաշխարհյանը,
4. Մխո-Շահենը:

ԹԵՄԱ 9-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 1880-90-ական թթ. ավելի վայրագ բնույթ ստացան արևմտահայերի ազգային և տնտեսական հալածանքները: Թուրք կառավարող վերնախավի և սուլթան Համիդ II-ի մեջ արմատավորվել էր այն մտայնությունը, թե Հայկական հարցը պետք է «լուծել» հայերին բնաջնջելու միջոցով: Արևմտահայ ազատագրական շարժումները ճնշելու նպատակով կազմվեցին քրդական «համիդիե» հեծելագնդերը: Սուլթանական կառավարության կողմից 1890-ական թվականներին մշակվեց հայերի ջարդի ծրագիր:
2. Սուլթանական կառավարության ազգահալած քաղաքականությունը հանգեցրեց Սասունի 1894թ. ապստամբությանը: Այն ղեկավարում էին Մեծն Մուրադը, Գևորգ Չավուշը, Հրայրը և ուրիշներ: Չնայած ապստամբությունը ճնշվեց, բայց խթանեց ազատագրական շարժման ծավալումը:
3. Ազատագրական պայքարը և մեծ տերությունների դիվանագիտական ճնշումը սուլթան Աբդուլ Համիդին հարկադրեցին ընդունել բարեկարգումների 1895թ. մայիսյան ծրագիրը, որը կյանքում չիրագործվեց: Նույն թվականի սեպտեմբերին Կ. Պոլսում կազմակերպված Բաբ Ալիի խաղաղ ցույցը գնդակոծվեց իշխանությունների կողմից: Դա առիթ ծառայեց Կ. Պոլսում հայերի կոտորածներ հրահրելու:
4. Արևմտահայ ազատագրական շարժումները ճնշելու, Հայկական հարցը վերացնելու նպատակով սուլթան Համիդը 1894–1896թթ. կազմակերպեց հայկական կոտորածներ, որոնց զոհ գնաց ավելի քան 300

հազար հայ: Մի շարք վայրերում (Վան, Մուշ, Ուրֆա, Չարսանջակ և այլն) տեղի ունեցան ինքնապաշտպանական մարտեր:

5. Զեյթունցիները 1895թ. աշնանը ապստամբություն բարձրացրին թուրքական բռնապետության դեմ: Նրանց երկարատև և համառ պայքարն ավարտվեց որոշ հաջողությամբ: Զեյթունում նշանակվեց քրիստոնյա կառավարիչ (հույն):
6. 1890-ական թթ. ջարդերի ժամանակ մեծ տերությունները էական ոչինչ չձեռնարկեցին արևմտահայությանն օգնելու համար: Միայն առաջադեմ գործիչներ հանդես եկան հայերի պաշտպանությամբ՝ իրենց կառավարություններից պահանջելով ազդու միջոցներով դադարեցնել կոտորածները:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Առաքելոց վանքի կռիվը: 1890-ական թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած հայերի զանգվածային ջարդերից հետո թվում էր, թե արևմտահայությունն ի վիճակի չէ դիմադրել օսմանյան բռնապետությանը և համակերպվել է իր դրությանը: Սակայն արևմտահայությանը չէր լքել ազատագրվելու գաղափարը: Երկյուղելով նոր ելույթներից՝ թուրքական կառավարությունը միջոցների է դիմում արգելելու ազատագրական շարժումները: Այդ նպատակով օսմանյան իշխանությունները Կովկասից ստվար թվով մահմեդական ժողովուրդների են բնակեցնում Արևմտյան Հայաստանում:

Հայ բնակչությանը մնում էր միայն իր իրավունքները պաշտպանել զինված պայքարի միջոցով: Զոհված հայդուկներին փոխարինելու են գալիս նորերը: Օսմանյան բռնապետության դեմ ուղղված շարժումը շարունակում էին ղեկավարել ազգային կուսակցությունները՝ հատկապես Դաշնակցությունը: Աղբյուր Սերոբի սպանությունից հետո արևմտահայության ինքնապաշտպանության գործի կազմակերպումը Տարոնում գլխավորում են Անդրանիկն ու Հրայրը:

Ժողովրդի մարտական ոգին բարձրացնելու նպատակով Անդրանիկը 37 հայդուկների հետ որոշում է ամրանալ Մուշ քաղաքից ոչ հեռու գտնվող Առաքելոց վանքում: Նման բացահայտ մարտահրավերով Անդրանիկը և Գևորգ Չավուշը ապացուցում էին, որ պայքարը շարունակվում է:

1901թ. նոյեմբերի 3-ին հայդուկները հասնում են Առաքելոց վանք: Նրանց են միանում երկու տասնյակ զինված գյուղացիներ: Միացյալ ուժերով նրանք ձեռնամուխ են լինում վանքի ամրացման աշխատանքներին:

Օսմանյան իշխանությունները, տեղեկանալով այդ մասին, զորք են ուղարկում վանքում ամրացած հայդուկներին պատժելու համար: Թուրք զինվորները և նրանց միացած մահմեդական զինված ջոկատները վանքն ամուր օղակում են: Երկուստեք փոխհրաձգություն է սկսվում: Չնայած կառավարական ուժերի թվային մեծ գերակշռությանը՝ նրանց չի հաջողվում գրավել վանքը: Բազմաթիվ թուրք զինվորներ են ընկնում վանքը գրոհելիս:

Տեսնելով, որ զենքի ուժով հնարավոր չէ ընկճել հայերին, թուրքական հրամանատարությունը դիմում է բանակցությունների՝ առաջարկելով ներկայացնել պահանջները:

Մշո Սբ Առաքելոց վանքի ընդհանուր տեսքը

Առաքելոց վանք մտած կառավարական պատվիրակությանը Անդրանիկը ներկայացնում է իրենց պահանջները: Դրանք էին՝ ներում շնորհել քաղաքական բանտարկյալներին, տասանորդ տուրքի հավաքումը կատարել հայ գյուղացիների միջոցով, քրդերի զավթած գյուղերը վերադարձնել իրենց տերերին, զինաթափել հայկական բնակավայրերը ասպատակող քուրդ ելուզակներին և այլն:

Ներկայացված պահանջներից կատարվում է միայն առաջինը: Բանտից ազատ են արձակվում 31 հայ բանտարկյալներ: Սակայն պատվիրակության հեռանալուց հետո հակառակորդը վերսկսում է հրաձգությունը, և մարտը բորբոքվում է նոր թափով: Թուրքական անընդմեջ հարձակումներն ապարդյուն էին: Հակառակորդին չի հաջողվում ճեղքել հայերի պաշտպանությունը: Թուրքերի բանակատեղիում համաճարակ է բռնկվում: Հայերի դրությունը ևս ծանր էր, սպառվում էր զինամթերքը: Ուստի Անդրանիկն ու իր զինակիցները որոշում են ճեղքել պաշարումը: 1901թ. նոյեմբերի 27-ի ձյունածածկ գիշերը, քողարկվելով սպիտակ սավաններով, հայդուկները կարողանում են դուրս գալ վանքից և հեռանալ:

Առաքելոց վանքի կռիվը լայն արձագանք գտավ: Այն ցույց տվեց, որ համիդյան ջարդերը չեն կարողացել մարել արևմտահայության ազատատենչ ոգին: Սկսվում է հայկական ուժերի համախմբումը: Արևմտյան Հայաստանում ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով կազմվում է ղեկավար կենտրոն:

Սասունի ինքնապաշտպանությունը: Օսմանյան իշխանությունները, տակավին 1894թ. չկարողանալով ընկճել սասունցիների դիմադրությունը, վճռում

են նոր արշավանք կազմակերպել: Դրանով նրանք ձգտում էին վերացնել արևմտահայության ազատագրական կարևոր կենտրոններից մեկը:

Այդ ծրագիրն իրականացնելու համար իշխանությունները 1902-1904թթ. ընթացքում սկսում են զորամասեր տեղափոխել Մշո դաշտ և Սասուն: Զինվորների թիվը հասցվում է 10 հազարի: Նրանց են միանում շրջակա քրդական մի քանի ցեղեր: Կառավարության նախապատրաստություններն աննկատ չեն մնում սասունցիներից: Նրանք ևս դիմում են նախազգուշական միջոցների: Հայ ազգային կուսակցությունները, անհանգստացած Արևմտյան Հայաստանից եկող տագնապալի լուրերից, որոշում են օգնություն ուղարկել Սասուն: 1902–1904թթ. Դաշնակցություն և Հնչակյան կուսակցությունները կազմակերպում են հայդուկային և զինատար խմբերի անցումը Արևմտյան Հայաստան:

Մենակ (Եգոր Առուստամյան) (1882–1903)

Հ. 3. Դաշնակցության հանձնարարությամբ Մենակը (Եգոր Առուստամյան) 1903թ. հետախուզեց Սասուն օգնություն հասցնելու ճանապարհները: Նույն թվականի գարնանը ռուս-թուրքական սահմանն անցան դաշնակցական մի քանի ջոկատներ: Նրանցից միայն Թորգոմի (Թուման Թումյանց) 23 հոգուց բաղկացած հեծելաջոկատին հաջողվեց հասնել Սասուն: Նրանց հայտնվելը մեծ ոգևորություն առաջացրեց: Սակայն հայ ազգային կուսակցություններին չի հաջողվում Սասուն ուղարկել նախատեսված օգնությունը:

Թորգոմ (Թուման Թումյանց) (1879–1904)

1903թ. աշնանը Սասունի Գելիեգուզան գյուղում տեղի ունեցավ ինքնապաշտպանության կազմակերպիչների և մի շարք գյուղերի ավագների ու քահանաների ժողով: Ընտրվեց զինվորական խորհուրդ: Նրա անդամներն էին Անդրանիկը, Սեպուհը (Արշակ Ներսիսյան), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան), Սեբաստացի Մուրադը, Սմբատը և ուրիշներ: Ինքնապաշտպանության ղեկավար ընտրվեց Անդրանիկը:

Զինվորական խորհուրդը մեծ զգուշությամբ, կառավարությունից գաղտնի, նախապատրաստվում է դիմադրության: Միաժամանակ քայլեր էին ձեռնարկվում, որպեսզի հարկադրեն սուլթանին՝ հրաժարվել Սասունի վրա արշավելուց:

Թուրքական կառավարությունը հայերի դեմ ուղարկում է թնդանոթներով և գնդացիրներով զինված 10 հազար զինվորի: Նրանց էին միացել 5 հազար

զինված քրդեր: Թշնամուն դիմագրավում էին 200 հայդուկ և 1000 սասունցի: Նրանք պաշտպանում էին տեղի 12 հազարի հասնող բնակչությանը:

1904թ. ապրիլի 1-ին սկսվում է Սասունի վրա օսմանյան ուժերի հարձակումը: Նրանց դիմագրավում էին Հրայրի և Գևորգ Չավուշի ուժերը: Հայ ինքնապաշտպանները նահանջում են Տալվորիկ: Ապրիլի 6-ին թուրքերն անցնում են լայնածավալ հարձակման: Հրայրն իր մարտիկներով կարողանում է կասեցնել հակառակորդի առաջխաղացումը: Թուրքերը, սակայն, լրացուցիչ ուժեր են կենտրոնացնում և հրետանու կրակի ներքո անցնում են հարձակման: Չկարողանալով դիմագրավել թշնամուն՝ Հրայրը մի քանի գյուղերի բնակչության հետ նահանջում է Գելիեզուզան, այդ ժամանակ էլ սպանվում է: Զոհվեց հայ ազատագրական պայքարի ամենապայծառ ռահվիրաներից մեկը: Հրայրին թաղում են Աղբյուր Սերոբի կողքին, Գելիեզուզան գյուղում:

Սասունցիներին հաջողվում է կանգնեցնել հակառակորդի հարձակումը: Նրանք հարկադրում են թուրքերին նահանջել մինչև Շենիկ:

Ապրիլի 15-ին օսմանյան հրամանատարությունը նախաձեռնում է նոր հարձակում: Հայերը ստիպված էին դիմագրավել 20 անգամ գերազանցող ուժերին: Հակառակորդին հաջողվում է ծանր մարտերով մոտենալ Գելիեզուզանին: Սասունցիների ինքնապաշտպանության վերջին օջախը պաշտպանում էին Անդրանիկի գլխավորած մարտիկները: Ի վերջո զգացվում է զինամթերքի պակասը, և ինքնապաշտպանները ստիպված են լինում տեղի տալ: Ապրիլի 22-ին թուրքական զորքերը գրավում են Գելիեզուզանը: Ինքնապաշտպանները 10 օր շարունակ անհավասար մարտեր են մղում՝ ապահովելով խաղաղ բնակչության նահանջը Մշո դաշտի հայկական գյուղեր:

Դիմադրական կռիվները շարունակվում են մինչև 1904թ. հուլիսի կեսերը: Հայերը շարունակում են մի շարք հաղթանակներ տանել: Ուժերը, սակայն, անհավասար էին: Թուրքական բանակին և քրդական ջոկատներին հաջողվում է ճնշել հայերի ինքնապաշտպանությունը: 1904թ. Սասունի ինքնապաշտպանությունն ավարտվում է հայերի պարտությամբ:

Օսմանյան իշխանությունները փորձում են սասունցիներին վերաբնակեցնել Մշո դաշտում: Լեռնականները, սակայն, ոչ միայն մերժեցին կատարել նրանց պահանջը, այլև սպառնացին կրկին զենքի դիմել: Ի վերջո իշխանությունները հարկադրված էին տեղի տալ և թույլատրել սասունցիներին վերադառնալ:

Սասունում հայերն ունեցան շուրջ 7 հազար սպանված: Ավերվեց և թալանվեց 42 գյուղ:

Ինքնապաշտպանության ընթացքում Եվրոպայի տերություններին ուղղված օգնության դիմումներն ու խնդրագրերը մնացին անպատասխան:

Սասունի դեպքերով չեն վերջանում թուրքական բռնությունները: Սուլթանական զորքերը ավերիչ արշավանքներ են կազմակերպում Մշո դաշտի հայ-

կական գյուղերի վրա: Դիմադրելով ջարդարարներին և թուրքական նոր սադրանքներից հայ բնակչությանը զերծ պահելու համար հայդուկային խմբերի զգալի մասը որոշում է աստիճանաբար հեռանալ Արևմտյան Հայաստանից: Գևորգ Չավուշն իր կողմնակիցներով մնում է երկրում: 1905-1907թթ. ընթացքում Գ. Չավուշը պայքարում է թուրք և քուրդ հարստահարողների դեմ: Օսմանյան իշխանությունները գերագույն ճիգեր են գործադրում խիզախ հայդուկի հետ հաշվեհարդար տեսնելու համար: 1907թ. մայիսին Սուլուխ գյուղի մոտ նա ծանր վիրավորվում է և կնքում իր մահկանացուն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ քայլերի դիմեց Անդրանիկը ժողովրդի մարտական ոգին բարձրացնելու համար: Ձեր կարծիքով՝ ճի՞շտ էին Անդրանիկի ձեռնարկումները:
2. Նկարագրե՛ք Առաքելոց վանքի կռիվը: Ի՞նչ եք կարծում՝ այն ծառայե՞ց իր նպատակին:
3. Ինչո՞ւ ազգային կուսակցություններին չհաջողվեց անհրաժեշտ օգնություն հասցնել Սասուն:
4. Ե՞րբ է տեղի ունեցել Սասունի ինքնապաշտպանությունը:
5. Որո՞նք են Արևմտյան Հայաստանից հայդուկների հեռանալու պատճառները: Ճի՞շտ էր արդյոք այդ քայլը:
6. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *Առաքելոց վանքի կռիվ, Սասունի 1904թ. ինքնապաշպանություն* հասկացությունները:
7. Լրացրե՛ք «Ազատագրական շարժման ծավալումը» աղյուսակը:

Վայրը	Տարեթիվը	Գործիչը	Մարտերի ընթացքը	Արդյունքները
Առաքելոց վանք				
Սասուն				

ԹԵՍՏ

Սասունի ինքնապաշտպանության ղեկավարն էր.

1. Հրայրը,
2. Կայծակ Առաքելը,
3. Մուրադը,
4. Անդրանիկը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1-2. ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1903թ. հունիսի 12-ի հրամանագիրը: Ցարի կողմից հայ ժողովրդի դեմ XX դարի 90-ական թվականներից ծայր առած հալածանքներն ավելի սաստկացան իշխան Գ. Գոլիցինի օրոք: Նա 1896թ. նշանակվում է Կովկասի կառավարչապետ:

XX դարի սկզբին հայկական մշակութային միությունների, դպրոցների, մամուլի, մտավորականության դեմ իրականացվող բռնություններն արտահայտվեցին նոր ուժով: 1903թ. հունիսի 12-ին ցար Նիկոլայ II-ը Գոլիցինի սադրանքով ստորագրեց հատուկ օրենք, որով պետությանն էր անցնում հայկական հոգևոր հաստատություններին պատկանող ամբողջ շարժական և անշարժ գույքը:

Այդ օրենքն ուղղված էր լուսավորական-կրթական հիմնարկությունների, առաջին հերթին՝ դպրոցների դեմ: Հայտնի է, որ վանքերի և եկեղեցիների կալվածքներից ստացվող եկամուտների հաշվին էին պահվում հայկական դպրոցները: Այս նոր բռնությունը լցրեց ժողովրդի համբերության բաժակը:

Ինչպես Հայաստանի քաղաքներում և գյուղերում, այնպես էլ Անդրկովկասի հայաբնակ կենտրոններում տեղի ունեցան բազմաթիվ ելույթներ, ցույցեր: Դրանք հաճախ վերածվում էին ոստիկանության և ժողովրդի միջև զինված ընդհարումների: 1903թ. օգոստոսին Գանձակում տեղի ունեցավ առաջին զինված ընդհարումը, որի հետևանքով բնակչությունը տվեց մոտ 80 սպանված և վիրավոր:

Երևանի հրապարակը

Թիֆլիսում և Բաքվում նույնպես ընդհարումներ եղան բնակչության և ոստիկանության միջև: Ցույցեր և ելույթներ տեղի ունեցան նաև Ալեքսանդրապոլ, Երևան, Շուշի քաղաքներում, Էջմիածնում և բազմաթիվ գյուղերում:

Հայապահպանության և եկեղեցու ունեցվածքը վերադարձնելու խնդրում ակտիվ գործունեություն ծավալեցին հայ ազգային կուսակցությունները, մասնավորապես Հայ հեղափոխական դաշնակցություն և Սոցիալ-դեմոկրատական կու-

սակցությունները: Այդ օրերին ընդհատակում հրատարակվող մարքսիստական «Իսկրա» թերթում լույս տեսավ հայ նշանավոր հեղափոխական Բոգդան Կնունյանցի «Նոր կողոպուտ» հոդվածը, որտեղ նա մերկացնում էր ցարական իշխանությունների ավազակությունը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ:

1904թ. սկսված ռուս-ճապոնական պատերազմը, հեղափոխական շարժումները, հայ ժողովրդի միահամուռ դիմադրությունը հարկադրեցին կառավարությանը հրաժարվել հակահայ բացահայտ դիրքորոշումից: Իշխանությունները վերադարձրեցին եկեղեցական գույքը և 1905թ. օգոստոսի 1-ի հրովարտակով չեղյալ հայտարարեցին 1903թ. հունիսի 12-ի օրենքը:

Արևելյան Հայաստանը ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին: 1905թ. հունվարի 9-ին (22) Պետերբուրգում բանվորների խաղաղ ցույցի գնդակոծությամբ սկսվեց Ռուսաստանում բուրժուա-դեմոկրատական առաջին հեղափոխությունը: Հեղափոխությունը նպատակ ուներ տապալելու ցարիզմը և երկրում հաստատելու ժողովրդավարական կարգեր: Ռուսաստանի մայրաքաղաքում բանվորների նկատմամբ տեղի ունեցած արյունալի սպանդն ալեկոծեց ամբողջ երկիրը: Ծայր առան զանգվածային շարժումներ: Պայքարի մեջ ընդգրկվեց նաև Անդրկովկասը: Հունվար-փետրվար ամիսներին անընդհատ գործադուլներ էին տեղի ունենում Թիֆլիսում, Բաքվում: Գործադուլների ալիքը հասավ նաև Հայաստան: 1905թ. մարտին գործադուլ հայտարարեցին Ալավերդու հանքարդյունաբերության շրջանի շուրջ 1000 բանվորներ: Նրանց պահանջները հիմնականում տնտեսական բնույթ ունեին:

Բանվորական գործադուլներն իրենց ազդեցությունը ունեցան նաև հայ գյուղացիության վրա: Արդեն 1905թ. գարնան, ամռան ամիսներին Հայաստանի մի շարք վայրերում, հատկապես Լոռիում, տեղի ունեցան գյուղացիական ելույթներ:

Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժումների համեմատությամբ Հայաստանում տեղի ունեցած հուզումները զգալիորեն թույլ էին: Դրանք ավելի շուտ ռուսաստանյան շարժումների արձագանքներն էին: Դա բացատրվում էր նաև նրանով, որ հայ ժողովրդի ուշադրությունը գերազանցապես բևեռված էր Արևմտյան Հայաստանի վրա, որտեղ հայերի զանգվածային կոտորածներ էին տեղի ունենում: Այդ տարիներին Ռուսաստանում աշխույժ գործունեություն ծավալեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Նրա նշանավոր հայազգի գործիչներից Ստեփան Շահումյանը, Բոգդան Կնունյանցը և Սուրեն Սպանդարյանը 1905 թվից առաջ Հայաստանում ստեղծել էին սոցիալ-դեմոկրատական խմբակներ, որոնք հեղափոխության տարիներին դարձան կազմակերպություններ: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամները, իրենց կուսակցության հիմնարար դրույթնե-

Ստեփան Շահումյան (1878–1918)

ին հավատարիմ, և՛ արևելահայության, և՛ արևմտահայության ազատագրությունը կապում էին ռուսաստանյան հեղափոխության հաղթանակի հետ:

Սուրեն Սպանդարյան (1882–1916)

Հայ հասարակական կյանքի աշխուժացման վկայությունն էր նաև Դաշնակցություն կուսակցության ձեռնարկած հայկական եկեղեցին բարենորոգելու փորձը: Դաշնակցությունը կարողացավ համոզել կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին 1906թ. կոնդակ հրապարակել, որով ազդարարում էր հայկական եկեղեցու ժողովրդավարական սկզբունքը վերականգնելու մասին:

1906թ. օգոստոսի 17-ին Էջմիածնում բացվեց 46 պատգամավորների մասնակցությամբ ժողով: Ժողովի նախագահ ընտրվեց Դաշնակցություն կուսակցության նշանավոր գործիչ Սիմոն Զավարյանը: Սակայն կովկասյան իշխանությունները խիստ անհանգստացած էին ժողովում տեղի ունեցող ըմբոստ ելույթներից, և նրանց հրահանգով օգոստոսի 30-ին փակվում է ժողովը:

1906թ. հունվար-մարտ ամիսներին տեղի ունեցան Դումայի ընտրությունները: Դուման բացվեց 1906թ. ապրիլին: Մասնակցելով վերջինիս աշխատանքներին՝ հայ պատգամավորները հատուկ հարցապնդում կատարեցին հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ իշխանությունների սադրիչ գործունեության վերաբերյալ: Դումայի պատգամավորների ըմբոստ վերաբերմունքը պատճառ է դառնում, որ կառավարությունը ցրի Դուման: Երկրորդ դուման ևս չարդարացրեց Նիկոլայ II-ի հույսերը, և նույնպես ցրվեց:

Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները: Իշխանությունները չէին խորշում դիմելու այնպիսի հանցավոր քայլի, ինչպիսին տարբեր ժողովուրդների միջև կրոնական և ազգային թշնամանք բորբոքելն էր:

1905թ. փետրվարի 6-ին տեղական իշխանությունների և հատկապես Բաքվի նահանգապետ Մ. Նակաշիձեի հրահրումով մի քանի օր անընդհատ տեղի ունեցան հայ-թաթարական ընդհարումներ: Սակայն չարիքը միայն Բաքվով չսահմանափակվեց: Բաքուն ազդանշան ծառայեց Անդրկովկասի մյուս վայրերի համար:

Նիկոլ Դումանի (1867–1914) ջոկատի մի մասը

Խաղաղ աշխատանքով զբաղված հայ բնակչությունը ընդհարումների առաջին օրերին անակնկալի եկավ և բավականին զոհեր տվեց: Հետագայում հայերը կազմակերպվեցին և հակառակորդ կողմին զգալի կորուստներ պատճառեցին: Հայ ժողովրդի ինքնապաշտպանությունն այդ ծանր օրերին իր վրա էր վերցրել Դաշնակցություն կուսակցությու-

նը: Նշանավոր հայդուկներ Նիկոլ Դումանը, Վարդանը (Խանասորի Վարդան), Քեռին (Արշակ Գաֆաֆյան) և մյուսները ղեկավարում էին դիմադրական մարտերը:

Կատաղի բախումներ եղան Գանձակի նահանգում, այդ թվում և Շուշի քաղաքում: 1905թ. օգոստոսին Շուշիի՝ հիմնականում հայերի կոտորածին արձագանքեց Բաքուն, որտեղ ընդհարումներն ուղեկցվում էին նավթահորերի և նավթագործարանների հրդեհումով:

Նոյեմբերի 20-ին Բաքվում սկսվեց և այնտեղից Վրաստան ու Հայաստան տարածվեց ջարդերի և կոտորածների նոր ալիք: Վրաստանում, մասնավորապես Թիֆլիսում, հայկական ինքնապաշտպանությունը գլխավորում էր Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյանը): 1906թ. ընթացքում Անդրկովկասի զանազան վայրերում դեռևս ընդհարումներ էին տեղի ունենում:

Արմեն Գարո (Գարեգին Փաստրմաճյան) (1872–1923)

1906թ. սեպտեմբերին ցարական իշխանությունները դադարեցնում են երկրում բռնկված ընդհարումները, քանի որ այլևս կարիք չկար ապակայունացնելու իրադրությունը:

Հայ-թաթարական կռիվների ժամանակ համերաշխության կոչերով հանդես եկան երկու ժողովուրդների առաջադեմ ներկայացուցիչներից շատերը և հատկապես Հովհաննես Թումանյանն ու ադրբեջանցի գրող Միրզա Սաբիրը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է ստորագրվել հայկական հոգևոր հաստատությունների գույքի բռնագրավման հրամանագիրը: Ի՞նչ նպատակ էր հետապնդում այն: Ինչո՞ւ հայ ժողովուրդը մերժեց այդ օրենքը:
2. Ե՞րբ սկսվեց ռուսական առաջին հեղափոխությունը և ի՞նչ նպատակներ էր հետապնդում: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը հեղափոխությունների նկատմամբ:
3. Ինչպիսի՞ արձագանք գտավ ռուսական առաջին հեղափոխությունը Արևելյան Հայաստանում: Թվարկե՛ք Արևելյան Հայաստանում տեղի ունեցած առավել հայտնի ելույթները:
4. Ի՞նչ նպատակով ցարական կառավարությունը կազմակերպեց հայ-թաթարական ընդհարումները:
5. Ե՞րբ և ինչո՞ւ դադարեցվեցին հայ-թաթարական բախումները: Ձեր կարծիքով՝ ի՞նչ հետևանքներ ունեցան:
6. Ի՞նչ ընթացք ունեցավ ռուսական առաջին հեղափոխությունը Հայաստանում և ինչպե՞ս ավարտվեց:

7. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *1903թ. հունիսի 12-ի հրամանագիր, հայ-թաթարական ընդհարումներ* հասկացությունները:
8. Լրացրե՛ք «1903թ. հունիսի 12-ի հրամանագիրը» աղյուսակը:

Օրենքի ընդունման նպատակը	Ո՞ւմ սադրանքով և ո՞ւմ կողմից ընդունվեց օրենքը	Օրենքի վերացման դեմ ուղղված ելույթները	Օրենքի վերացման պատճառները

ԹԵՍՏ

Հայ-թաթարական բախումները սկսվել են.

1. 1905թ. հունվարին,
2. 1905թ. փետրվարին,
3. 1906թ. սեպտեմբերին,
4. 1907թ. փետրվարին:

3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1907-1912 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ցարական կառավարությունը և «Դաշնակցության գործը»: 1905 թվականի հեղափոխության պարտությունից հետո սկսվեց հետադիմության, ռեակցիայի ժամանակաշրջանը:

Երկիրը հնազանդ պահելու համար ցարական հետադիմական պաշտոնյաներն առիթներ էին որոնում բռնությունների դիմելու համար: Շուտով ներկայացավ այդպիսի առիթ: Խմբապետ Միհրանը (Գաբրիել Քեշիշյան) գժտվեց Դաշնակցության ղեկավարության հետ: Կուսակցությունը Միհրանին վտարեց իր շարքերից: Նա ցարական ոստիկանությանը մատնեց Դաշնակցության վերաբերյալ իրեն հայտնի գաղտնիքները: Սկսվեցին ձերբակալություններ: Ցարական իշխանությունները ստեղծեցին այսպես կոչված «Դաշնակցության գործը» և փորձեցին այն օգտագործել հայ մտավորականությանը հակառուսաստանյան քաղաքականության մեջ մեղադրելու համար: «Դաշնակցության գործի» բուն քննությունը սկսվեց Պետերբուրգում 1912թ. հունվարին: Մեղադրանք ներկայացվեց 159 մարդու: Դաշնակցականների հետ մեղադրյալների աթոռին հայտնվեցին բազմաթիվ անկուսակցականներ, այդ թվում՝ մտավորականներ, մի քանի հայ արդյունաբերողներ:

Կառավարությունը, հաշվի առնելով ծավալվող քննադատությունը, 1912թ. մարտի դատավճռով անմեղ ճանաչեց 94 մարդու, մյուսներն էլ համեմատաբար մեղմ պատիժներ ստացան: Այսպիսի «խաղաղ» վճիռը բացատրվում է նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ կատարված շրջադարձով:

Արդեն 1912թ. սկզբին Ռուսաստանը Բալկաններում, որի մի մասը շարունակում էր մնալ օսմանյան տիրապետության տակ, սլավոններին հովանավորելու քաղաքականություն էր վարում: Ուստի ռուսական կառավարությունը

հանդուրժում և համեմատաբար մեղմ էր վերաբերվում հայկական ազգային շարժմանը և ազգային կուսակցություններին:

Արևելյան Հայաստանը Առաջին աշխարհամարտի նախօրեին (1912–1914 թվականներ): XX դարի երկրորդ տասնամյակում Հայաստանը սոցիալ-տնտեսական և քաղաքական առաջընթաց էր ապրում: Հայաստանում կառուցվում են նոր երկաթուղիներ և խճուղիներ: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Հայաստանի երկաթուղիների երկարությունը կազմում էր 680 կիլոմետր:

Հայաստանում 1909-1913 թվականներին պղնձի ձուլման քանակը 278,2 հազար փութից հասավ 343,4 հազար փութի: Պղնձարդյունաբերությունից հետո, ինչպես հայտնի է, իր տեսակարար կշռով երկրորդ տեղն էր բռնում սպիրտ-կոնյակի արդյունաբերությունը:

Մշակվում էին նաև Երևանի նահանգի և Կարսի մարզի (Կաղզվան) աղահանքերը: Ղարաբաղում կային բազմաթիվ գորգագործական արհեստանոցներ, որոնց արտադրանքը հաջողությամբ սպառվում էր Անդրկովկասում: Երևանի նահանգում եղած մետաքսի ձեռնարկությունների արտադրանքը սպառվում էր միայն տեղում:

Գորգագործական արհեստանոց

1912 թվականը նաև Չորրորդ պետական դումայի հրավիրման տարի էր: Ի տարբերություն 1907 թվականին հրավիրված Երրորդ դումայի, որը ոչ մի կարևոր հետք չթողեց, Չորրորդը նշանակալից քաղաքական դերակատարություն ունեցավ Ռուսաստանի պատմության մեջ: Չորրորդ դումայում էր, որ բուռն կերպով արծարծվում էր նաև հայ ժողովրդի համար կարևորագույն՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցը: Այն ջերմ պաշտպանություն էր գտնում ռուսաստանյան «կադետական» կուսակցության առաջնորդների կողմից, որոնք պնդում էին, որ վերաբացվող Հայկական հարցի լուծումը բխում է նաև Ռուսաստանի պետական շահերից:

Արևելյան Հայաստանում 1910-1914 թվականներին տեղի ունեցած բանվորական շարժումները, պետք է նշել, համեմատաբար թույլ էին և հեշտությամբ ճնշվում էին:

Գյուղացիական շարժումները, որ բռնկվում էին երկրի տարբեր վայրերում, ավելի տևական բնույթ ունեին և գնալով ավելի բազմամարդ էին դառնում: Այդուհանդերձ նրանց պահանջները տնտեսական հարցերից այն կողմ չէին անցնում, ուստի և իշխանությունների կողմից նույնպես հեշտությամբ ճնշվում էին:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում և Հայաստանում տեղակայված զորամիավորումներում տեղի էին ունենում բավական ուժեղ խմորումներ: Հուզումներ բռնկվեցին Կարսի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Կաղզվանի, Սարիղամիշի, Օլթիի զորամասերում:

Սակայն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում և Հայաստանում զինված հուզումները բացահայտ ապստամբության չվերաճեցին, որովհետև վրա հասած համաշխարհային պատերազմը փոխեց իրադրությունն ամբողջ երկրում:

Պատերազմը Ռուսաստանի ժողովուրդների առաջ դրեց այլ խնդիրներ. հեղափոխական պայքարի հարցերը հետին պլան մղվեցին: Հայրենիքի պաշտպանությունն առաջնահերթ գործ դարձավ: Երկրի վրա կախված վտանգը միավորեց բոլոր կուսակցություններին: Միայն ձախակողմյան կազմակերպությունները մնացին ցարական կարգերի դեմ դասակարգային կռիվը շարունակելու դիրքերում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ 1905–1907թթ. հեղափոխությունից հետո սաստկացան քաղաքական բռնությունները և ազգային հալածանքները:
2. Ի՞նչ իրադարձություններ ստիպեցին ցարական ինքնակալությանը փոխել իր վերաբերմունքը և ավելի հանդուրժողական լինել հայկական ազգային շարժումների նկատմամբ:
3. Ի՞նչ նոր տեղաշարժեր կատարվեցին Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում և ի՞նչ սոցիալական շարժումներ տեղի ունեցան:
4. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *Դաշնակցության գործ, Պետական դումա, բանվորական շարժում, գյուղացիական շարժում* հասկացությունները:
5. Լրացրե՛ք «Արևելյան Հայաստանը 1907–1912թթ.» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվը	Իրադարձությունը

ԹԵՍՏ

Չորրորդ պետական դումայում արծարծված հայ ժողովրդի համար կարևոր հարցն էր.

1. Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը,
2. Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացումը,
3. Հայաստանում զինվորական ելույթների ճնշումը,
4. Հայաստանում նոր երկաթուղու կառուցումը:

4. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Երիտթուրքական 1908թ. պետական հեղաշրջումը: Ինչպես տեսանք, Օսմանյան կայսրությունը տնտեսական և քաղաքական ճգնաժամ էր ապրում: Ուժեղացել էին հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները: Թուրքական հասարակությունում առաջացել էին ուժեր, որոնք ցանկանում էին երկիրը դուրս բերել ծանր կացությունից և ամեն գնով պահպանել կայսրությունը: 1889թ. կազմակերպված «Իթթիհատ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը գլխավորում է հակասուլթանական շարժումը:

1907թ. դեկտեմբերին Փարիզում երիտթուրքական և Դաշնակցական կուսակցությունները, արաբական, հրեական, ապա մակեդոնական կոմիտեները համաձայնության եկան համատեղ ջանքերով համիդյան վարչակարգը տապալելու և Թուրքիայում սահմանադրական կարգեր հաստատելու համար:

1908թ. հուլիսին Մակեդոնիայում զորքերն ապստամբում են: Կարճ ժամանակում Թուրքիայում տեղի է ունենում պետական հեղաշրջում: Երկրում հաստատվում են սահմանադրական կարգեր, որտեղ վճռական դեր էին խաղում երիտթուրքերը:

Համիդյան բռնակալության տապալումը մեծ խանդավառություն առաջացրեց կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի մեջ: Հայերի մեծ մասը հավատաց երիտթուրքերի խոստումներին՝ կարծելով, թե վերջ կտրվի իրենց տառապանքներին: Երիտթուրքերը, սակայն, հրաժարվեցին իրենց խոստումներից: Նրանք որդեգրեցին օսմանիզմի քաղաքականությունը: Իրականում այդ քաղաքականությունը նպատակ ուներ թուրքացնել բոլոր ոչ թուրք ժողովուրդներին: Հանդիպելով նրանց դիմադրությանը՝ երիտթուրքերի ծրագիրն անհաջողության է մատնվում: Ավելի ուշ նրանք առաջ են քաշում պանիսլամիզմի և պանթուրքիզմի ծրագիրը: Առաջինը նպատակ ուներ Թուրքիայի շուրջը համախմբել մահմեդականներով բնակեցված երկրները և տարածքները, իսկ երկրորդը՝ համախմբել թուրքալեզու ժողովուրդներին: Երիտթուրքերն իրենց առջև խնդիր են դնում բռնի ձուլման միջոցով թուրքացնել կայսրության ոչ թուրք բնակչությանը: Աբդուլ Համիդ II-ը գաղտնի նախապատրաստություններ էր տեսնում վերականգնելու սուլթանական բացարձակ միապետությունը:

1909թ. մարտի 31-ին նա հեղաշրջում կազմակերպեց: Սակայն կառավարությանը հավատարիմ զորքերը վերականգնում են երիտթուրքերի իշխանությունը: Սուլթանը գահընկեց արվեց: Երիտթուրքերը գահ են բարձրացնում նրա եղբորը՝ Մահմեդ V-ին:

Ադանայի կոտորածը: Անցնելով իշխանության գլուխ՝ երիտթուրքերը սաստկացրին ազգային հալածանքները: Նրանք ազգայնամոլությունը բարձրացնում են պետական քաղաքականության աստիճանի: Փաստորեն երիտթուրքերը ազգային քաղաքականության խնդրում Աբդուլ Համիդ II-ի ժառանգորդներն էին: Նրանք յուրացրին և կատարելագործեցին սուլթանի հայաջինջ գործելակերպը: Ամրապնդելով իրենց իշխանությունը՝ երիտթուրքերը ծրագրում և իրականացնում են Կիլիկիայի հայության կոտորածը:

XX դարի սկզբին Ադանայի նահանգի բնակչության մեծ մասը՝ մոտ 400 հազարը, իսկ Ադանա քաղաքի 60 հազար բնակչությունից 22 հազարը հայեր էին: Նրանք նահանգի տնտեսության առաջատար ուժն էին:

Առաջին հարվածը հասցվեց Ադանային, որի հայությունն աչքի էր ընկնում բարեկեցությամբ: Իշխանությունները ցանկանում էին տեր դառնալ հայերի ունեցվածքին և, գլխավորը, վերջ տալ նրանց հնարավոր ազգային պահանջներին:

1909թ. ապրիլի 1-ին Ադանայի իշխանությունների կարգադրությամբ թուրքերը ներխուժում են քաղաքի հայկական թաղամասերը և սկսում կոտորածն ու թալանը: Երեք օր շարունակվում էին այդ ոճրագործությունները:

Ջարդերը միայն Ադանա քաղաքով չեն սահմանափակվում: Կոտորածներ են տեղի ունենում նաև Կիլիկիայի հայկական այլ բնակավայրերում:

Կիլիկիայի մի շարք վայրերում հայերը դիմում են ինքնապաշտպանության, որը հնարավորություն է տալիս շատերին փրկվելու:

Ադանայի ջարդի առաջին օրը՝ ապրիլի 1-ին, քաղաքի երեք հայկական թաղամասերում բնակիչներն ինքնապաշտպանություն են կազմակերպում: Մեծաքանակ և լավ զինված ուժերին դիմագրավում էին 173 հայեր:

Սիս քաղաքի բերդի ավերակները

Առաջին ջարդից հետո իշխանությունները խաբեությամբ հավաքում են քաղաքի հայերի զենքը: Իրենց ապահովելով հնարավոր դիմադրությունից՝ թուրքերը շարունակում են կոտորածները: Դրանց մասնակցում էին օսմանյան զորքերը: Ադանայում հայերն ավելի քան 18 հազար զոհ են տալիս:

Կիլիկիայի մի շարք հայկական բնակավայրերում հայերը կարողացան դիմադրություն կազմակերպել:

Դյորթ-Յոլ գյուղում 400 հայեր դիմագրավում են գերակշիռ ուժերի: Ինքնապաշտպանությունը գլխավորում է Միհրան Մելքոնյանը: Տղամարդկանց են

միանում գերանդիներով և եղաններով զինված 100 կանայք և երիտասարդներ: Թուրքերը 13 օր շարունակ հարձակումներ են կազմակերպում գյուղի վրա, սակայն ապարդյուն: Օտարերկրյա հյուպատոսների միջնորդության և հայերի հերոսական դիմադրության պատճառով թուրքերը դադարեցնում են Դյորթ-Յոլի պաշարումը:

Ջարդարարներին դիմագրավում է Սիս քաղաքի հայությունը՝ 1500 հոգի: Ղևոնդ վարդապետ Թուրսարգսյանի և Գյուտ վարդապետի ղեկավարությամբ նրանք ապաստանում են վանքում և դիմադրում ջարդարարներին: Մեկշաբաթյա պաշարումից հետո հակառակորդն ապարդյուն հեռանում է:

Շեյխ Մուրադ գյուղի երիտասարդության հնգօրյա դիմադրության շնորհիվ բնակչությունը կարողանում է հեռանալ և ապաստանել Ադանայում:

Կիլիկիայի հայության հերոսական ինքնապաշտպանության մեջ նշանավոր էր Հաճընի 12-օրյա դիմադրությունը: Քաղաքի հայությունը Ներսես վարդապետի գլխավորությամբ դիմագրավում է թուրքական բազմահազար ուժերին: Ի վերջո, Մերսին քաղաքի անգլիական հյուպատոսի միջամտությամբ պաշարումը դադարեցվում է: Մարաշ քաղաքում թուրքական իշխանությունները չեն համարձակվում տեղի հայության նկատմամբ որևէ բռնություն գործադրել, քանի որ երկյուղում են զեյթունցիների պատասխան հարձակումից: Նրանք սպառնացել էին իշխանություններին՝ Մարաշի հայերի կոտորածի դեպքում Զեյթունը անտարբեր չի մնա իր հայրենակիցների ճակատագրի հանդեպ:

Ինքնապաշտպանական մարտեր են տեղի ունենում նաև հայկական այլ բնակավայրերում:

Ընդհանուր առմամբ Կիլիկիայի հայության ջարդերին զոհ է գնում ավելի քան 30 հազար մարդ: Տեղի հայությունը հայտնվում է ծանր վիճակում: Միայն Ադանայի վիլայեթում հայերի նյութական կորուստը կազմում էր 20 միլիոն թուրքական լիրա:

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Երիտթուրքերի տիրապետությունը գրեթե ոչ մի էական փուիոխություն չմտցրեց ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ արևմտահայության դրության մեջ: Ընդհակառակը՝ վատթարացրեց այն:

1912–1913թթ. Բալկանյան պատերազմներում Օսմանյան Թուրքիայի կրած պարտությունը քաղաքական աշխուժություն է առաջացնում հայերի շրջանում: Ելնելով ստեղծված բարենպաստ իրավիճակից՝ հայերը որոշում են մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել հայկական վիլայեթներում բարենորոգումներ իրականացնելու վրա: 1912թ. հոկտեմբերի 2-ին կաթողիկոս

Գևորգ V-ը պաշտոնապես դիմում է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով հարց բարձրացնել ցարի առջև՝ Բեռլինի 61-րդ հոդվածը իրականացնելու համար: Մեկ ամիս անց կաթողիկոսը եգիպտահայ նշանավոր քաղաքական և հասարակական գործիչ Պողոս Նուբար Փաշային լիազորում է՝ մեծ տերություններին ներկայացնել հայկական բարենորոգումների խնդիրը: Հայկական հարցի վերաբացումից անհանգստացած թուրքական կառավարությունը կազմում է բարենորոգումների մի ծրագիր: Դրանով նախատեսվում էր բարենորոգումներ կատարել հայկական վեց վիլայեթներից (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Տրապիզոն, Էրզրում և Սեբաստիա) միայն չորսում:

Գևորգ V Սուրենյանց (1847–1930)

Իրենց հերթին արևմտահայերը կազմում են բարենորոգումների իրականացման սեփական ծրագիրը: Այն նախատեսում էր վեց վիլայեթները միավորել մեկ երկրամասի մեջ, որը պետք է գլխավորեր գերագույն կոմիսարը կամ գեներալ-նահանգապետը:

Պողոս Նուբար Փաշա (1851–1930)

Հայկական բարենորոգումների իրականացման վերահսկողությունը դրվում էր մեծ տերությունների վրա: Ռուսաստանը պետք է հետևեր դրանց իրագործմանը:

Հայկական բարենորոգումների խնդիրը և ռուս-թուրքական համաձայնագիրը: 1912թ. վերջին և 1913թ. սկզբին ռուսական, անգլիական և ֆրանսիական կառավարությունները համաձայնության են գալիս՝ Օսմանյան Թուրքիայի հայկական վիլայեթներում բարենորոգումների նախագիծ կազմելու:



Վան (19-րդ դարի վերջ)

1913թ. հունիսի 4-ին Կ. Պոլսի ռուսական դեսպանատան աշխատակից Անդրեյ Մանդելշտամը ներկայացնում է բարենորոգումների իրականացման ռուսական տարբերակը: Այն նախատեսում էր հայկական վեց վիլայեթներից կազմել մեկ նահանգ: Նահանգը ղեկավարվելու էր թուրքահպատակ քրիստոնյայի կամ եվրոպացի գեներալ-նահանգապետի կողմից: Նա իրականացնելու էր գոր-

ծաղիր իշխանությունը: Գեներալ-նահանգապետին էին ենթարկվելու ոստիկանական և զինվորական ուժերը: Օրենսդիր մարմինը կազմվելու էր տեղի մահմեդական և քրիստոնյա բնակչությունից: Առաջարկվում էր վերացնել «համիդիե» գնդերը: Պաշտոնական լեզուն լինելու էր թուրքերենը: Ջուգահեռաբար թույլ էր տրվում օգտագործել հայերենը և քրդերենը: Բարենորոգումների հսկողությունն իրականացնելու էին մեծ տերությունները:

Տրապիզոնը

Ռուսական կողմի ներկայացրած բարենորոգումների ծրագիրը հանդիպում է հատկապես Գերմանիայի առարկությանը: Վերջինս ձգտում էր թույլ չտալ, որ Թուրքիայում ուժեղանան Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքերը: Օսմանյան կառավարությունը, ստանալով գերմանացիների և ավստրիացիների աջակցությունը, հայկական վիլայեթներում բարենորոգումների ծրագիրը ձախողելու միտումով զանազան խոչընդոտներ է հարուցում:

Բանակցություններ են սկսվում Ռուսաստանի և Գերմանիայի միջև: Ի վերջո, թուրքական կառավարությանն է ներկայացվում վեց կետից բաղկացած մի նախագիծ: 1913թ. հոկտեմբերի 10-ին օսմանյան կառավարությունը պաշտոնապես տեղեկացնում է ռուսական կողմին, որ ինքը պատրաստ է իրագործել հայկական վիլայեթներում բարենորոգումների ներկայացրած ծրագիրը:

1914թ. հունվարի 26-ին կնքվում է ռուս-թուրքական համաձայնագիր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ: Այն նախատեսում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու նահանգի: Առաջին նահանգի մեջ մտնելու էին Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի, իսկ երկրորդի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները: Նահանգապետների թեկնածությունն առաջադրելու էին եվրոպացիները, իսկ հաստատելու էր սուլթանը: Նահանգապետների ենթակայության ներքո էին գտնվելու վարչական, դատական և ոստիկանական իշխանությունները: Նահանգներում պաշտոնական գրագրությունը կատարվելու էր տեղի ժողովուրդների լեզուներով (հայերեն, քրդերեն և թուրքերեն):

Ղարսը 1890-ականներին

Նահանգապետներն ունենալու էին զինված ուժեր, որոնք պետք է հետևեին նահանգների ներքին կարգուկանոնին: Հայերին արտոնվում էր մահմեդականների նման զենք կրել: Նահանգների վարչական խորհուրդները կազմվելու

էին հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից: Նույն սկզբունքը պետք է կիրառվեր ոստիկանական և այլ պաշտոններ բաշխելիս: Հայկական դպրոցների պահպանման ծախսերն իր վրա էր վերցնում օսմանյան պետությունը:

1914թ. գարնանը Արևմտյան Հայաստանի նահանգապետներ են նշանակվում հոլանդացի դիվանագետ Լ. Վեստենենկը և նորվեգացի գնդապետ Ն. Հոֆը: Նրանք նոր էին անցել իրենց պարտականությունների կատարմանը, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Հայկական բարենորոգումներն այդպես էլ չիրականացան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ինչո՞ւ սկսվեց հակասուլթանական շարժումը: Քաղաքական ի՞նչ ուժ էր գլխավորում այն:
2. Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ Հայ հեղափոխական դաշնակցությունը միացավ հակասուլթանական շարժմանը: Ձեր կարծիքով՝ ճի՞շտ էր արդյոք Դաշնակցության այդ քայլը:
3. Ե՞րբ տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը և ի՞նչ քաղաքական նպատակներ էր հետապնդում: Ի՞նչ դիրք բռնեց արևմտահայությունը: Արդյոք արդարացա՞ն նրանց հույսերը:
4. Ե՞րբ տեղի ունեցան Կիլիկիայի հայության կոտորածները, և որո՞նք էին պատճառները: Նկարագրե՛ք կիլիկիահայության ինքնապաշտպանական մարտերը: Ի՞նչ նշանակություն ունեցան դրանք:
5. Փորձե՛ք վերհիշել՝ ի՞նչ է Հայկական հարցը, ի՞նչ փուլեր է անցել, լուծման ի՞նչ փորձեր են արվել: Նշե՛ք այն պայմանները, որոնք նպաստավոր եղան Հայկական հարցի վերաբացման համար:
6. Ձեր կարծիքով՝ ներկայացված ծրագրերից ո՞րն էր ավելի ընդունելի արևմտահայության համար:
7. Բարենորոգումների ռուսական ծրագիրը ո՞ր երկրների առարկությանը հանդիպեց և ինչո՞ւ:
8. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *երիտթուրքական հեղաշրջում, սահմանադրական կարգ, Ադանայի կոտորած, Հայկական հարցի վերաբացում* հասկացությունները:
9. Լրացրե՛ք «Հայկական հարցը 1912–1914թթ.» աղյուսակը:

Բարենորոգումների տարբերակները	Տարեթիվը	Նմանությունը	Տարբերությունը
Ռուսական նախագիծ			
Ռուս-թուրքական համաձայնագիր			

ԹԵՍՏԵՐ

Հաճընի ինքնապաշտպանությունը գլխավորում էր.

1. Գյուտ վարդապետը,
2. Միհրան Մելքոնյանը,
3. Կարապետ Լաչինյանը,
4. Ներսես վարդապետը:

Կ. Պոլսի ռուսական դեսպանատան աշխատակիցն էր.

1. Հոֆը,
2. Մանդելշտամը,
3. Վեստենենկը,
4. Վորոնցով-Դաշկովը:

ԹԵՄԱ 11-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. Արևմտահայության ազատագրական պայքարի նշանակալի դրվագներից էր 1901թ. նոյեմբերին տեղի ունեցած Մշո Առաքելոց վանքի կռիվը: Անդրանիկի գլխավորությամբ վանքում դիրքավորված հայդուկներն իրենց խիզախ մարտական գործողություններով ապացուցեցին, որ արևմտահայության ազատագրական պայքարը շարունակվում է:
2. 1904թ. ապրիլին օսմանյան գերակշիռ ուժերը հարձակվեցին Սասունի վրա: Զինվորական խորհուրդն Անդրանիկի գլխավորությամբ դիմադրություն կազմակերպեց: Հակառակորդը, օգտագործելով ուժերի գերակշռությունը, կարողանում է ճնշել սասունցիների դիմադրությունը: Սուլթանական ուժերն ավերիչ արշավանքներ են կատարում նաև Մշո դաշտի հայկական գյուղերի վրա:
3. 1908թ. հուլիսին տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումը չբարելավեց կայսրության հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի վիճակը: Երիտթուրքերի հակահայկական քաղաքականության առաջին դրսևորումը Ադանայի կոտորածն էր 1909թ. ապրիլին: Մի շարք վայրերում հայերը համառ դիմադրություն կազմակերպեցին՝ փրկվելով անխուսափելի թվացող կործանումից:
4. 1912թ. աշնանը բարենպաստ պայմաններ են ստեղծվում Հայկական հարցի վերաբացման համար: Գևորգ V կաթողիկոսը Պողոս Նուբար Փաշային լիազորում է՝ հայկական բարենորոգումների խնդիրը ներկայացնել մեծ տերություններին: Երկարատև բանակցություններից հետո, 1914թ. հունվարին, կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիրը, որով թուրքական կառավարությունը պարտավորվում էր բարենորոգումներ իրականացնել Արևմտյան Հայաստանում: Սակայն բռնկված Առաջին համաշխարհային պատերազմն ի չիք է դարձնում այդ ծրագիրը:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատերազմի սկիզբը: 1914թ. օգոստոսի 1-ին բռնկվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Այն մղվում էր երկու խոշոր ռազմաքաղաքական խմբավորումների՝ Անտանտի (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա և Ֆրանսիա) և Եռյակ, իսկ 1915 թվականից՝ Քառյակ միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա և Բուլղարիա) միջև: Եվ Անտանտը, և՛ Եռյակ միությունն այս պատերազմում հետապնդում էին զավթողական նպատակներ: Թուրքիան ձգտում էր գրավել Կովկասը, Ղրիմը, Իրանական Ատրպատականը և Միջին Ասիան: Դրանով իրագործվելու էր երիտթուրքերի պանթուրքական ծրագիրը: Իր հերթին ցարական Ռուսաստանը նպատակ ուներ գրավել Արևմտյան Հայաստանը, Կ. Պոլիսը, Բոսֆորի և Դարդանելի նեղուցները: Կովկասյան ճակատում մարտական գործողությունները սկսվում են 1914թ. հոկտեմբերի 29–30-ին: Թուրքերը կենտրոնացրել էին 300 հազար զինվոր: Ռուսական զորքերի թիվը հասնում էր շուրջ 200 հազարի: Մարտական գործողություններն ընթանում էին Սև ծովից մինչև Ուրմիա լիճը՝ 720 կմ երկարությամբ: Առաջինը նախահարձակ են լինում թուրքերը: Օգտագործելով ուժերի գերակշռությունը և այն հանգամանքը, որ ռուսները զորքերի մի մասը Կովկասից տեղափոխել էին Արևմտյան ռազմաճակատ, թուրքերին հաջողվում է գրավել ռուսական սահմանամերձ մի քանի շրջաններ: Զավթած տարածքների բնակչությունը՝ հայեր, հույներ և ասորիներ, հալածանքների և կոտորածի է ենթարկվում թուրք զինվորների կողմից:

Մանազկերտի համայնապատկեր

1914թ. դեկտեմբեր, 1915թ. հունվար ամիսներին թուրքական և ռուսական բանակների միջև, Սարիղամիշ քաղաքի շրջանում, տեղի են ունենում կատաղի մարտեր: Թուրքերը, որոնք ողջ հույսը դրել էին իրենց թվական գերակշռության վրա, գլխովին ջախջախվում են: Իննսունհազարանոց թուրքական բանակից հաջողվում է ճողոպրելով ազատվել միայն 12 հազարին: Ռազմական նախարար Էնվեր փաշան հազիվ է խուսափում գերի ընկնելուց: Ռուսների 60 հազար զորքից զոհվում է 20 հազարը: Զարգացնելով հարձակումը՝ ռուսական ուժերը գրավում են Թավրիզը և Դիլմանը, հետ մղում Պարսկաստան ներխուժած

թուրքական զորքերին: 1915թ. գարնանը Արևմտյան Հայաստանում ևս ռուսական Կովկասյան բանակը հաջող գործողություններ է ծավալում: Թշնամուց գրավվում են Մանազկերտը, Շատախը, Արճեշը և Վանը: 1915թ. հուլիսին, սակայն, ռուսները անսպասելիորն նահանջում են Ալաշկերտի հովիտ: Ռուսական հրամանատարությունը, լրացուցիչ ուժեր ստանալով, անցնում է հարձակման և վերագրավում կորցրած տարածքները:

1916թ. հունվարին ռուսական բանակներն անցնում են լայնածավալ հարձակման: Կարճ ժամանակամիջոցում ջախջախվում է թուրքական երեք դիվիզիա: Իսկ 1916թ. փետրվարին, հնգօրյա կատաղի մարտերից հետո, նրանք գրավում են ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Էրզրումը: Նույն թվականի ապրիլին ռուսական ցամաքային և ծովային ուժերի համատեղ ջանքերով գրավվում է Սև ծովի ափին գտնվող Տրապիզոն քաղաք-նավահանգիստը:

Երկարատև պատերազմը և Արևմտյան ճակատում ռուսական զորքերի պարտությունը հնարավորություն չտվեցին շարունակելու ռազմական գործողությունները: 1917թ. մայիսից ռուս-թուրքական մարտադաշտում հարաբերական դադար է հաստատվում: Իսկ 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումը նոր իրադրություն է ստեղծում երկրում և ռազմաճակատում: Դեկտեմբերին Երզնկայում ստորագրվում է զինադադար ռուսական և թուրքական կողմերի միջև:

Կամավորական շարժումը: Կամավորական շարժումը սկիզբ առավ Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից: Ռուսական կայսրությունում բնակվող շուրջ 2 միլիոն 54 հազար հայերից ռուսական բանակ են զորակոչվում մոտ 200 հազար հոգի: Իսկ Անտանտի բանակներում ծառայող հայերի թիվը 50 հազարի է հասնում: Միաժամանակ հայ հասարակական-քաղաքական շրջանները ձեռնամուխ են լինում կամավորական ջոկատների ստեղծմանը: Կամավորական ջոկատների կազմակերպումը նպատակ ուներ նպաստել ոչ թե ցարիզմի նվաճողական քաղաքականությանը, այլ օգտագործել նրա ռազմական ուժերը Արևմտյան Հայաստանն ազատագրելու համար: Ռուսաստանի շահերը Մերձավոր Արևելքում և մասնավորապես Արևմտյան Հայաստանում համընկնում էին հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին: Բացի հայերից՝ կամավորական ջոկատներ են կազմվում ասորիներից, հույներից, վրացիներից և կովկասյան այլ ժողովուրդներից:

Կամավորական ջոկատների կազմակերպման աշխատանքներն իր վրա է վերցնում Թիֆլիսում գործող Հայկական ազգային բյուրոն: Նրա ճնշող մեծամասնությունը Դաշնակցություն կուսակցության անդամներն էին: Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու կոչը լայն արձագանք գտավ ոչ միայն կայսրության հայաբնակ շրջաններում, այլև արտասահմանում: Կամավորներ ժամանեցին շատ երկրներից, նույնիսկ Միացյալ Նահանգներից: Միաժամանակ հայությունը բավականին դրամ հանգանակեց ջոկատների

հանդերձավորման համար: Սկզբնապես 1914թ. աշնանը կազմակերպվում են կամավորական չորս ջոկատներ: Հետագայում դրանց թիվն աճեց: Առաջինի հրամանատարն էր Անդրանիկը, երկրորդինը՝ Դրոն, երրորդինը՝ Համազասպը, չորրորդինը՝ Քեռին: Հինգերորդ ջոկատի հրամանատարն էր Վարդանը (Սարգիս Մեհրաբյան): Ավելի ուշ կազմակերպվում են ևս երեք ջոկատներ: Վեցերորդ ջոկատի հրամանատարն էր Արշակ Ջանփոլադյանը, ապա՝ Գրիգոր Ավշարյանը, վերջինիս զոհվելուց հետո՝ Հայկ Բժշկյանը (հետագայում՝ խորհրդային զորահրամանատար Գայ): Ընդհանուր առմամբ այս ջոկատներում ընդգրկված էին շուրջ 10 հազար հոգի: 1915թ. ապրիլին, Ազգային բյուրոյի որոշմամբ, 2-րդ, 3-րդ և 4-րդ ջոկատները միացվում են 5-րդին:

Վարդան (Սարգիս Մեհրաբյան)

Այս զորամիավորումը ստանում է Արարատյան անվանումը: Նրա հրամանատար է դառնում Վարդանը: Հայ կամավորական ջոկատները կռվում էին խիզախությամբ: Նրանցից առավել աչքի ընկավ առաջին ջոկատը՝ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Անդրանիկի հրամանատարությամբ: 1915–1916թթ. կամավորները ռուսական բանակի կազմում մասնակցում են Արևմտյան Հայաստանի մեծ մասի ազատագրմանը: Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը բազմիցս դրվատել է հայ կամավորներին: Առանձնահատուկ ընդգծվում էին նրանց քաջությունն ու հերոսությունը: Մարտական գործողությունների ընթացքում զոհվում են մոտ 800 կամավորականներ: 500 կամավորականներ պարգևատրվեցին ռուսական Գեորգիևյան խաչերով և մեդալներով: Ցարական իշխանությունը, երկյուղելով, որ հայ կամավորական ջոկատները կարող են դառնալ ազգային բանակի հիմք, վճռում է դրանք ցրել: 1916թ. ամռանը այդ ջոկատներից կազմվում են վեց հրաձգային գումարտակներ, որոնք մտցվում են ռուսական զորքի կազմի մեջ:

Ռուսական հրամանատարությունը, սակայն, վերջնականապես չի հրաժարվում հայ կամավորներից: Նրանց, իհարկե, ավելի փոքրաթիվ խմբերով, օգտագործում է ռազմաճակատի տարբեր հատվածներում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Ի՞նչ նպատակներ էին հետապնդում Թուրքիան և Ռուսաստանը այդ պատերազմում:
2. Ե՞րբ սկսվեցին մարտական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում: Ինչպիսի՞ն էր ուժերի հարաբերակցությունն այստեղ:

3. Ի՞նչ ռազմական հաջողություններ ունեցան ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանում: Ո՞րն էր, ձեր կարծիքով, ամենախոշոր հաղթանակը:
4. Որքա՞ն հայեր զորակոչվեցին ռուսական բանակ: Որքա՞ն էր Անտանտի բանակներում ծառայող հայերի թիվը:
5. Քանի՞ հայկական կամավորական ջոկատ ստեղծվեց: Ի՞նչ նպատակներ էր հետապնդում կամավորական ջոկատների կազմակերպումը: Ի՞նչ եք կարծում՝ ճի՞շտ էր արդյոք կամավորական ջոկատների կազմակերպումը և արդյոք ծառայե՞ց իր նպատակին:
6. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *Կովկասյան ճակատ*, *Անտանտ*, *Եռյակ միություն*, *կամավորական շարժում* հասկացությունները:
7. Լրացրե՛ք «Կամավորական շարժում» աղյուսակը:

Կամավորական ջոկատները	Հրամանատարները	Ջոկատներում ընդգրկված-ների թիվը	Ջոհված կամավոր-ների թիվը	Ջոկատ-ների ցրումը	Նշանակությունը
1-ին ջոկատ					
2-րդ ջոկատ					
3-րդ ջոկատ					
4-րդ ջոկատ					
5-րդ ջոկատ					
6-րդ ջոկատ					

ԹԵՍՏ

Կամավորական 3-րդ ջոկատի հրամանատարն էր.

1. Անդրանիկը,
2. Համազասպը,
3. Վարդանը,
4. Քեռին:

2. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

Հայերի ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը: Սկսված պատերազմը հնարավորություն էր ընձեռում թուրքական կառավարությանը հաշվեհարդար տեսնելու կայսրության հայ հպատակների հետ: Երիտթուրքերն իրականացնում էին 1910–1911թթ. Սալոնիկ քաղաքում կայացած իրենց կուսակցության գաղտնի ժողովների որոշումները: Դրանք նախատեսում էին, որ կայսրության տարածքում բնակվող և թուրք ազգությանը չպատկանող մահմեդականները պետք է թուրքացվեն, իսկ քրիստոնյաները՝ ոչնչացվեն:

Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ տարածքներում բնակվող հայ ժողովուրդը դարձավ այս հրեշավոր քաղաքականության առա-

ջին զոհերից մեկը: Այդ ծրագրի հեղինակներն էին Թալեաթ փաշան (ներքին գործերի նախարար), Էնվեր փաշան (ռազմական նախարար), Ջեմալ փաշան (ծովային նախարար, Պաղեստինյան ճակատի հրամանատար), Բեհաեդդին Շաքիր բեյը (երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ) և ուրիշներ:

Մտադրվելով ոչնչացնել հայերին՝ երիտթուրքերը ձգտում էին վերացնել Հայկական հարցը: Հայերը և Հայաստանը արգելք էին պանթուրքական ծրագրի իրականացման ճանապարհին: Նրանց երազած «Մեծ Թուրանը» պետք է ձգվեր Բոսֆորից մինչև Ալթայ: Երիտթուրքերը ցանկանում էին այդ ստեղծվելիք պետության մեջ ներգրավել բոլոր թուրքալեզու ժողովուրդներին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, բացի հայերի զանգվածային տեղահանությունից և կոտորածներից, օսմանյան իշխանություններն իրականացնում են կայսրության մի շարք այլ հպատակ ժողովուրդների՝ ասորիների, հույների և արաբների մասնակի ջարդեր:

Թուրքական իշխանությունների վայրագությունները հանկարծակիի բերեցին նաև այդ ժողովուրդներին: Հարկ է նշել, որ հայ քաղաքական շրջանակների կողմից ևս իր ամբողջության մեջ չընկալվեց նախադեպը չունեցող արհավիրքը:

1914թ. հոկտեմբերին երիտթուրքերը կազմավորում են Երեքի գործադիր կոմիտե, որին հանձնարարվում է իրականացնել օսմանահպատակ հայերի զանգվածային բռնագաղթն ու կոտորածը: Նախկին քրեական հանցագործներից կազմակերպվում է «Հատուկ կազմակերպություն»: Նրանց էր հանձնարարված տեղերում հայերի ջարդը: Այդ նպատակի համար կայսրությունը բաժանվում է երեք շրջանների. 1. Կիլիկիա և Սիրիա, 2. Արևելյան Անատոլիա (Արևմտյան Հայաստան), 3. Արևմտյան Անատոլիա:

Իրենց հրեշավոր քաղաքականությունն իրագործելու նպատակով թուրքական իշխանությունները հայերին զրկում են դիմադրելու հնարավորությունից: Նրանք 1915թ. գարնանը առաջին հերթին սկսում են օսմանյան բանակ զորակոչված հայ տղամարդկանց զինաթափումն ու ոչնչացումը: Նրանց ռազմաճակատից տեղափոխում են թիկունք, ընդգրկում բանվորական գումարտակներում: Հայ զինվորների հետ զինաթափվում են օսմանյան բանակում ծառայող հույները: Զինաթափված հայերին հանձնարարվում է ամենածանր աշխատանքը՝ ճանապարհների, ամրությունների կառուցումը և բեռների տեղափոխումը: Ապա անասելի ծանր աշխատանքներից և թերասնվելուց հյուծված հայ զինվորներին 50-ական կամ 100-ական խմբերով զինվորական կամ ոստիկանական հսկողության ներքո դուրս էին բերում իրենց տեղակայված վայրից և ոչնչացնում:

Դրանից հետո երիտթուրքական իշխանությունները, զանազան միջոցներ բանեցնելով, բռնագրավում են հայ բնակչության ունեցած սակավ զենքն ու զինամթերքը: Օսմանյան կառավարության հաջորդ քայլը կուսակցական, աշ-

խարհիկ, հոգևոր ներկայացուցիչների և մասնավորապես հայ մտավորականության ձերբակալումն ու ոչնչացումն էր: Այդ քայլով իշխանությունները ցանկանում էին զրկել հայությանը նրա ղեկավարող և կազմակերպող ուժերից: Ամենածանր հարվածը հասցվում է Կ. Պոլսում: 1915թ. ապրիլի 24-ին այստեղ ձերբակալվում և աքսորվում են 600-ից ավելի հայ մտավորականներ՝ գրողներ, արվեստագետներ, բժիշկներ, մանկավարժներ, հասարակական գործիչներ: Ձերբակալվածների թվում էին նշանավոր երգահան Կոմիտասը, գրողներ Գրիգոր Զոհրապը, Ռուբեն Սևակը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը և ուրիշներ: Աքսորի ճանապարհին հայ մտավորականները ենթարկվում էին զանազան զրկանքների և նվաստացումների: Կոմիտասը, չդիմանալով իր ժողովրդի դեմ կատարվող վայրագություններին, խելագարվում է: Հայ մտավորականության մեծ մասը սպանվում է ջարդարարների կողմից: Հունիսին Կ. Պոլսում կեղծ ամբաստանությունների հիման վրա ձերբակալում և մահապատժի են ենթարկվում հնչակյան կուսակցական նշանավոր գործիչ Փարամազը (Մաթևոս Սարգսյան) և իր 19 կուսակցական ընկերները:

Դրո (Դրաստամատ Կանայան) (1883–1956)

Հիմնականում աքսորելով և ոչնչացնելով 18–45 տարեկան հայ տղամարդկանց՝ երիտթուրքական իշխանությունները ձեռնամուխ են լինում գրեթե անպաշտպան մնացած հայ կանանց, երեխաների ու ծերերի բռնագաղթին և կոտորածին:

Քեռի (Արշակ Գավաֆյան) (1858–1916)

Ցեղասպանության իրագործումը: 1914թ. աշնանից և հատկապես 1915թ. գարնանից սկսվում են արևմտահայ բնակչության բռնագաղթն ու կոտորածը: Թուրքական իշխանությունները հայ բնակչությանը աքսորում են Միջագետքի անապատային շրջանները: Աքսորից առաջ կամ դրա ընթացքում բռնագրավվում կամ թալանվում էր հայերի գույքը: Գեղեցիկ կանայք և աղջիկները բռնի տարվում են մահմեդականների հարեմները: Մինչև աքսորավայր հասնելը տարագիրները ենթարկվում էին զանազան քրդական և այլ մահմեդական ավազակախմբերի, այդ թվում՝ աքսորականներին հսկող ոստիկանների և զինվորների բռնություններին: Ովքեր ի վիճակի չէին լինում շարունակելու ճանապարհը, սպանվում էին տեղում: Տարագրման վայր էր հասնում աքսորականների չնչին մասը: Այսպես՝ Տրապիզոնից դուրս եկած 3 հազար աքսորականներից Հալեպ հասան միայն 35 հոգի: Մնացածը կամ սպանվեցին, կամ մահացան սովից, ծարավից ու զանազան հիվանդություններից:

Կայսրության մի շարք հարավային քաղաքներ, որոնք գտնվում էին հայերի տարագրման ճանապարհին, վերածվել էին ստրկավաճառության շուկաների: Այնտեղ չնչին գներով վաճառվում էին աքսորական հայեր:

Մինչև 1915թ. վերջը Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայաբնակ տարածքներն ամբողջությամբ հայաթափ են լինում, շատ քչերին է հաջողվում փրկվել: Հայերն ամբողջությամբ չեն աքսորվում միայն երկու քաղաքներից՝ Կ. Պոլսից և Զմյուռնիայից:

Ջանգվածային կոտորածներից փրկվելու նպատակով մեծ թվով արևմտահայեր հարկադրված էին լքել իրենց հայրենի օջախները: 1914թ. նոյեմբերից մինչև 1916թ. հարյուրհազարավոր հայեր, հիմնականում կանայք և երեխաներ, գաղթում են Ռուսաստան՝ Արևելյան Հայաստան և այլ վայրեր:

Հայ գաղթականների ընտանիք Եգիպտոսում

Մեծ թվով հայ գաղթականներ ապաստան են գտնում արաբ ժողովրդի մոտ: Հայերի մի մասն էլ հյուրընկալվում է Պարսկաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Հունաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում: Տեղահանված արևմտահայերը հայտնվում են նյութական ծանր պայմաններում: Սովի և զանազան հիվանդությունների հետևանքով մահանում էին շատերը: Գաղթականներին օգնելու և վերջնական կործանումից փրկելու համար Ռուսաստանի հայաբնակ վայրերում կազմակերպվում են հանգանակություններ: Ռուսական իշխանությունները կազմակերպում են հատուկ կոմիտե՝ հայ գաղթականությանն օժանդակելու նպատակով: Փախստականների օգնության հիմնական ծանրությունն ընկնում է հայ բարեգործական ընկերությունների և հայ եկեղեցու վրա: Արևմտահայերին զգալի օժանդակություն են ցույց տալիս նաև զանազան միսիոներական կազմակերպություններ:

1915–1916թթ. ընթացքում հայության նկատմամբ իրականացված երիտթուրքերի քաղաքականությունը որակվում է որպես ցեղասպանություն, քանի որ այն նպատակ ուներ ամբողջությամբ բնաջնջել հայ ժողովրդին: Եվ դա իրավամբ համարվում է 20-րդ դարի առաջին խոշոր ցեղասպանությունը:

Ընդհանուր հաշվով Օսմանյան Թուրքիայում բնակվող 2,5 միլիոն հայերից 1,5 միլիոնը զոհ գնաց թուրքական յաթաղանին: Ավելին՝ արևմտահայությանը հասցվեց հսկայական նյութական վնաս, ավերվեցին հայկական եկեղեցիները, կրթության ու մշակույթի օջախները, յուրացվեցին հայերի կալվածքները, տները, նյութական միջոցները:

Տեղի ունեցածը, հիրավի, նախադեպը չունեցող մի ոճրագործություն էր, որը կազմակերպեցին և առավել դաժանորեն իրագործեցին երիտթուրքական ջարդարարները:

Միավորված ազգերի կազմակերպության 1948թ. դեկտեմբերի 9-ի որոշման համաձայն՝ ցեղասպանություն համարվում են այն գործողությունները, որոնք գործադրվում են որևէ ազգի, ցեղային կամ կրոնական համայնքի լիակատար կամ մասնակի ոչնչացման համար:

1915թ. իրադարձությունները հայոց պատմության ամենաողբերգական էջերից են: Ամեն տարի ապրիլի 24-ին համայն հայությունը հարգանքի տուրք է մատուցում Հայոց եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են արևմտահայության ցեղասպանության պատճառները: Ինչո՞ւ արևմտահայության տեղահանությունն ու կոտորածները իրականացվեցին Առաջին աշխարհամարտի տարիներին:
2. Ինչպե՞ս նախապատրաստեցին երիտթուրքերը օսմանահպատակ հայերի կոտորածը: Ի՞նչ քայլեր իրականացրին նրանք այդ ուղղությամբ:
3. Ե՞րբ և ինչպե՞ս տեղի ունեցան հայ զինվորների զինաթափումը և ոչնչացումը: Ձեր կարծիքով՝ նրանք կարո՞ղ էին մինչև զինաթափումը չենթարկվել թուրքական հրամանատարությանը և ապստամբել նրանց դեմ: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
4. Նշե՛ք թուրքական յաթաղանին զոհ գնացած հայ մտավորականների անուններ: Ի՞նչ հույզեր և զգացումներ են արթնացնում այդ անունները ձեր սրտերում:
5. Ե՞րբ սկսվեցին հայ բնակչության զանգվածային բռնագաղթը և կոտորածը: Ինչպիսի՞ն էր գաղթի ճանապարհը: Ի՞նչ անմարդկային փորձությունների ենթարկվեցին նրանք:
6. Կարո՞ղ եք ապացուցել, որ Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին խոշոր ցեղասպանությունն էր, որպիսին մինչ այդ չէր տեսել ողջ մարդկությունը:
7. Լրացրե՛ք «Հայերի ցեղասպանության երիտթուրքական ծրագրի իրագործումը» աղյուսակը:

Ցեղասպանության ծրագիրը	Նպատակը	Իրականացումը	Հետևանքները
Կռվող ուժի ոչնչացումը			
Հայ մտավորականների և ղեկավարների ոչնչացումը			
Հայ բնակչության տեղահանումը և ոչնչացումը			

ԹԵՍՏ

Հնչակյան գործիչներից ո՞վ է իր 19 կուսակցական ընկերների հետ մահապատժի ենթարկվել.

1. Ա. Նազարբեկյանը,
2. Փարամազը,
3. Գ. Կաֆյանը,
4. Ռ. Խանազատը:

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԱԴԵՄ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայերի զանգվածային բռնագաղթն ու կոտորածներն առաջացնում են համաշխարհային հասարակայնության և առաջադեմ գործիչների զայրույթն ու բողոքը: Քաղաքական զանազան համոզմունքների և տարբեր ազգությունների մարդիկ իրենց ելույթներում դատապարտում են երիտթուրքերի ոճրագործությունները: Արդեն 1915թ. կեսերին Արևմտյան Հայաստանից վերադարձած մի խումբ ամերիկյան միսիոներներ միջազգային հանրությանը պատմում են այն ահավոր չարագործությունների մասին, որոնց ենթարկվում էին հայերը: Հրապարակվում են նաև կոտորածներին ականատես եղած գերմանացի, հույն, իտալացի, արաբ և այլ ազգությունների ներկայացուցիչների վկայությունները:

Յոհաննես Լեփսիուս (1858–1926)

Հատկապես բուռն գործունեություն է ծավալում նշանավոր արևելագետ, Գերմանա-հայկական ընկերության նախագահ դոկտոր Յոհաննես Լեփսիուսը: Իր հայանպաստ գործունեության համար նա ստիպված է լինում հեռանալ Գերմանիայից: Իսկ 1916թ. անգլիական պետական գործիչ և պատմաբան լորդ Ջեյմս Բրայսը հրատարակում է փաստաթղթերի ժողովածու, ուր ամփոփված էին ջարդերի ականատես օտարերկրացիների և կոտորածներից փրկված հայերի վկայությունները:

Հայերի ցեղասպանության դեմ առաջին հերթին բողոքում են այն մարդիկ, որոնք արդեն ծանոթ էին հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին: Նրանք իրենց ելույթներում ու հոդվածներում դատապարտում էին երիտթուրքերին, ինչպես նաև նրանց հովանավորող գերմանական և ավստրո-հունգարական իշխանություններին:

Հայերի զանգվածային կոտորածների դեմ բողոքի ձայն են բարձրացնում Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը (Ռուսաստան), Անատոլ Ֆրանսը, Անտուան Մեյեն, Ժակ դը Մորգանը (Ֆրանսիա), Արմին Վեգները, Յոզեֆ Մարկվարտը (Գերմանիա) և շատ ուրիշներ:

Նրանք իրենց հրապարակային ելույթներում հերքում էին օսմանյան իշխանությունների այն պնդումները, թե հայերը «տեղափոխվում» են ան-

վտանգ վայրեր, որովհետև խռովություններ են բարձրացրել թուրքական բանակի թիկունքում, կոտորել մահմեդական բնակչությանը և այլն: Առաջադեմ գործիչները ընդգծում էին, որ երիտթուրքական կառավարությունն ուներ վաղօրոք մշակված ծրագիր՝ բնաջնջել թուրքահպատակ հայերին:

Մաքսիմ Գորկի (1868–1936)

Հենրի Մորգենթաու (1856–1946)

Վալերի Բրյուսով (1873–1924)

Այդ տարիներին Օսմանյան Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն իր հուշերում վկայում է. *«Անհեթեթ են թուրքական կառավարության այն հավաստիացումները, թե ինքը մտադիր էր հայերին վերաբնակեցնել նոր վայրերում: Պահակազորով ուղեկցվող խմբերի նկատմամբ վերաբերմունքը պարզ ցույց է տալիս, որ Էնվերի և Թալեաթի իրական նպատակն էր՝ բնաջնջել հայերին»*: Ապա դեսպանը հիշում է. *«Համոզված եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնքան զարհուրելի փաստեր, ինչքան այս կոտորածը: Անցյալում նշված մեծ ջարդերն ու հալածանքները գրեթե աննշան են թվում 1915թ. հայ ազգի կրած տառապանքների համեմատ»*:

Անտանտի տերությունները, հավաստի տեղեկություններ ստանալով հայերի նկատմամբ իրականացվող զանգվածային կոտորածների մասին, 1915թ. մայիսի 11-ին, Ռուսաստանի նախաձեռնությամբ, հանդես եկան համատեղ հայտարարությամբ. նրանք կատարված հանցագործությունների համար պատասխանատու են համարում թուրքական կառավարությանը և մասնակից պաշտոնյաներին:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան Թուրքիայի պարտությունից և երիտթուրքերի փախուստից հետո նոր կառավարության հրամանով Կ. Պոլսում ստեղծվեց ռազմական դատարան (տրիբունալ), որը հրապարակային դատ կազմակերպեց պատերազմի հանցագործ ու եղեռնագործ երիտթուրք պարագլուխների նկատմամբ: 1919թ. հուլիսի 5-ին Կ. Պոլսի ռազմական դատարանը հեռակա կարգով մահապատժի դատապարտեց հայերի ցեղասպանությունը ծրագրած և իրականացրած Թալեաթին, Էնվերին, Ջեմալին և դոկտոր Նազիմին:

Սակայն հետագա իրադարձություններն այնպես են դասավորվում, որ հնարավոր չի լինում հասնել երիտթուրք ոճրագործների դատավճռի օրինական կատարմանը: Այդ գործն իրենց վրա են վերցնում հայ վրիժառուները:

Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կառավարությունները, քաջատեղյակ լինելով հայերի նկատմամբ իրականացվող բռնություններին, ոչ միայն չարգելեցին դաշնակցին՝ Թուրքիային, այլև հայերին մեղադրեցին խռովություններ բարձրացնելու մեջ:

Անտանտի տերությունների ղեկավարները, ենթարկվելով առաջադեմ գործիչների ճնշմանը, բազմիցս հայտարարում են, որ պատերազմի ավարտից հետո այդքան մարդկային զոհեր տված Հայաստանը կստանա բարոյական և նյութական հատուցում, ու նրա արդարացի պահանջները կկատարվեն: Այդ ամենը, սակայն, մնաց լոկ խոստում: Դաշնակից տերությունների ղեկավարներից միայն Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Լլոյդ Ջորջը համարձակություն ունեցավ խոստովանելու. «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 և 1909 թվականների ահավոր սպանդներին և 1915 թվականի զարհուրելի եղեռնին»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ովքե՞ր են տեղեկացնում միջազգային հանրությանը հայկական կոտորածների մասին: Ի՞նչ աշխատանքներ են տանում կոտորածի ականատեսները: Ձեր կարծիքով՝ ի՞նչ նշանակություն ունեցավ նրանց գործունեությունը:
2. Ովքե՞ր են իրենց բողոքի ձայնը բարձրացրել Հայոց ցեղասպանության դեմ: Նրանցից հատկապես ո՞ւմ կառանձնացնեիք և ինչո՞ւ: Ձեր կարծիքով՝ ի՞նչ կփոխվեր Հայոց ցեղասպանության ընթացքի մեջ, եթե աշխարհի առաջադեմ գործիչներն ունենային իշխանության լծակներ: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
3. Ե՞րբ և ի՞նչ հայտարարություններով հանդես եկան Անտանտի երկրները՝ հավաստի տեղեկություններ ստանալով հայերի զանգվածային կոտորածների մասին: Ինչպիսի՞ն էր Եռյակ միության երկրների (հատկապես Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի) վերաբերմունքը հայկական կոտորածների նկատմամբ: Ձեր կարծիքով՝ մեծ տերությունները կարո՞ղ էին կանխել հայերի կոտորածները, եթե անգամ ցանկանային: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
4. Ե՞րբ է տեղի ունեցել երիտթուրքերի պարագլուխների դատավարությունը: Ինչո՞ւ չիրականացվեց Կ. Պոլսում ստեղծված ռազմական դատարանի դատավճիռը երիտթուրքերի պարագլուխների նկատմամբ: Թուրքական իշխանությունների փոխարեն ովքե՞ր իրականացրին

նրանց մահապատիժը: Ի՞նչ եք կարծում՝ կարելի՞ է Կ. Պոլսի թուրքական ռազմական դատարանի դատավճիռը համարել ցեղասպանության ճանաչման առաջին քայլ հենց թուրքերի կողմից: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

5. Լրացրե՛ք «Հայոց ցեղասպանությունը, առաջադեմ հասարակայնությունը և մեծ տերությունները» աղյուսակը:

Գործիչները, տերությունները	Վերաբերմունքը Հայոց ցեղասպանության նկատմամբ	
Գործիչները	Նմանությունը	Տարբերությունը
Անտանտի երկրներ		
Եռյակ միության երկրներ		

ԹԵՍՏ

Ո՞ւմ է պատկանում «Անցյալում նշված մեծ ջարդերն ու հալածանքները գրեթե աննշան են թվում 1915թ. հայ ազգի կրած տառապանքների համեմատ» խոսքը:

1. Յոհաննես Լեփսիուսին,
2. Յոզեֆ Մարկվարտին,
3. Ժակ դը Մորգանին,
4. Հենրի Մորգենթաուին:

4. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

Չնայած 1915թ. ստեղծված օրհասական դրությանը՝ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի մի շարք հայաբնակ վայրերում տեղի հայությունը դիմում է ինքնապաշտպանության: Դա հնարավորություն է տալիս բնակչության մի մասին փրկվելու, իսկ մնացածին՝ զենքը ձեռքին պատվավոր մահ ընդունելու:

Վանի ինքնապաշտպանությունը: Ջարդարարներին առաջին դիմադրությունը ցույց տվեց Վանի վիլայեթի հայությունը: Հայերը դիմագրավում են թուրք և քուրդ հրոսակներին Շատախում, Հայոց ձորում, Գավաշում, Թիմարում և այլ վայրերում: Մոկսի հայությունը փրկվում է շնորհիվ տեղի ցեղապետ Մուրթուլլա բեյի:

Վանի ինքնապաշտպանությունը

Առավել կատաղի և անզիջում դիմադրություն է ցույց տրվում թուրք և քուրդ հրոսակներին Վան քաղաքում: Հայ բնակչությունը հիմնականում կենտրոնացած էր Այգեստան (20 հազար հոգի) և Քաղաքամեջ (2000 հոգի) կոչվող թաղամասերում:

Ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար Այգեստանում ստեղծվում է Ձինվորական մարմին: Նրա մեջ ընդգրկվում են տարբեր կուսակցությունների անդամներ և ոչ կուսակցականներ՝ Արմենակ Եկարյանը (ղեկավար), Արամ Մանուկյանը, Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Քաղաքամեջի Ձինվորական մարմնի ղեկավար է ընտրվում Հայկակ Կոսոյանը: Երկու թաղամասերն էլ բաժանվում են պաշտպանական շրջանների: Փորվում են խրամատներ, կառուցվում են պաշտպանական ամրություններ: Կանայք և աղջիկները զբաղված էին մարտիկների, հայ և ասորի գաղթականների համար հագուստ և պարեն հայթայթելով: Երեխաները հանդես էին գալիս որպես կապավորներ Ձինվորական մարմնի և դիրքերի միջև: Նրանցից ոմանք մասնակցում էին մարտերին: Կազմակերպվել էր զինագործական արհեստանոց, որտեղ վերանորոգում էին զենքը և լիցքավորում փամփուշտները: Այգեստանում ներքին կարգուկանոնը վերահսկելու համար կազմակերպվել էր ոստիկանություն: Վանի ողջ բնակչությունը մեկ մարդու նման դուրս էր եկել կենաց և մահու կռիվ մղելու թշնամու դեմ: Վանի նահանգապետ Ջևդեթ բեյը քաղաքի հայության դեմ կենտրոնացրել էր հրետանիով և գնդացիրներով զինված 12-հազարանոց զորք: Այգեստանի և Քաղաքամեջի հայությունն այս ահռելի ուժին կարող էր հակադրել միայն վատ զինված և 10 անգամ քիչ մարտիկներ:

1915թ. ապրիլի 7-ին թուրքերի հարձակումով սկսվում են Վանի ինքնապաշտպանական մարտերը: Երկուստեք կատաղի հրաձգություն է սկսվում: Վանեցիները հաջողությամբ հետ են մղում հակառակորդի գրոհները: Հայերը կարողանում են ոչնչացնել թշնամու մի շարք դիրքեր և ամրություններ: Թուրքքրդական ուժերը ծանր պարտություններ են կրում և լուրջ կորուստներ ունենում: Հայկական թաղամասերի պաշարմանը մասնակցած գերմանացի սպան վկայում է. «Հայերը հուսահատորեն պաշտպանվում էին բոցավառվող տների ավերակներում՝ մինչև վերջին շունչը կռվելով ազատ Հայաստանի և Սուրբ Խաչի հաղթանակի համար: Ես հազվադեպ եմ հանդիպել կամ ենթադրել, թե երբևիցե կրկին կտեսնեմ այդպիսի կատաղի կռիվ, ինչպիսին ականատես եղա Վանի պաշարման ժամանակ»:

Վանի կամավորական ջոկատ

Ռուսական բանակի առաջխաղացումը և Վանի հայության դիմադրությունը հարկադրում են թշնամուն դադարեցնել քաղաքի պաշարումը: Մայիսի սկզբներին քաղաք են մտնում հայ կամավորները և ռուսական բանակը:

1915թ. մայիսին կազմվում է Վանի և շրջանի ժամանակավոր վարչություն: Ռուսական հրամանատարությունը Արամ Մանուկյանին նշանակում է Վասպուրականի նահանգապետ:

Աստիճանաբար քաղաքը և ազատագրված գավառները բնականոն հունի մեջ մտան: Սակայն 1915թ. հուլիսի կեսերին ռուսական զորքն անակնկալ նահանջում է: Նահանգի և քաղաքի հայությունը, չունենալով անհրաժեշտ միջոցներ հակառակորդին դիմագրավելու համար, ստիպված է լինում հետևել ռուսական բանակին: Իրենց օջախներն են լքում մոտ 200 հազար վան-վասպուրականցիներ: Նրանց պահպանությունն իրականացնում էին հայ կամավորները, ինչպես նաև ռուսական որոշ զորամասեր:

Վանի կամավորական ջոկատ

Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը: Երիտթուրք ջարդարարներին կատաղի դիմադրություն է ցույց տալիս Շապին-Գարահիսար քաղաքի հայկական թաղամասի բնակչությունը: Այստեղ ինքնապաշտպանական մարտերը սկսվում են 1915թ. հունիսին: Կազմվում է Զինվորական խորհուրդ, որը գլխավորում է Ղուկաս Տեռվլեթյանը: 5000-ի հասնող հայ բնակչությունն ամրանում է քաղաքից ոչ հեռու գտնվող բերդում, որը շրջապատվում է թշնամու կողմից:

Ինքնապաշտպանական մարտերին մասնակցում էին նաև հայ պատանիները: 14-ամյա Հայկ Թևեքելյանը կյանքի գնով կարողանում է ճախողել թուրքական գրոհը և փախուստի մատնել թշնամուն: Զինամթերքի, պարենի և հատկապես ջրի սպառվելու վտանգը ստիպում է գարահիսարցիներին փորձել հանդուգն գրոհով դուրս գալու շրջապատումից:

1915թ. հունիսի 29-ի գիշերը մոտ 1000 հոգուց բաղկացած հայկական ջոկատը, մի քանի ուղղություններով գրոհելով, ծանր մարտերից հետո ճեղքում է հակառակորդի օղակը: Դրանից հետո թուրք զինվորները ներխուժում են բերդ և գազանաբար հաշվեհարդար տեսնում մնացած բնակչության հետ:

Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան Մուշում և Սասունում, որտեղ բնակչությունը մի քանի ամիս շարունակ համառ դիմադրություն էր ցույց տալիս թշնամուն:

Սուետիայի հայության գոյամարտը: 1915թ. ինքնապաշտպանական ինքնատիպ մարտերից էր Սուետիայի հայության նշանավոր գոյամարտը: Սուետիան գտնվում էր Միջերկրական ծովի առափնյա շրջանում և ընդգրկում էր յոթ հայկական գյուղեր:

1915թ. հուլիսի վերջին, ստանալով գաղթելու հրամանը, տեղի հայության մեծ մասը որոշում է չենթարկվել, այլ դիմել ինքնապաշտպանության: Դիմադրությունը ղեկավարելու համար ստեղծվում է Զինվորական խորհուրդ: Նրա մեջ ընդգրկվում են Տիգրան Անդրեասյանը, Հաբեթ Իսկենտերյանը, Եսայի Յաղուբյանը և ուրիշներ: Դիմադրության համար ընտրվում է մոտակա Մուսա լեռը: Լեռ է բարձրանում ավելի բան 4 հազար մարդ:

Օգոստոսին տեղի է ունենում առաջին մարտը: Հայերը հետ են շպրտում հակառակորդին: Այդ պարտությունից հետո թուրքական հրամանատարությունն ավելի մեծ ուժեր է կենտրոնացնում: Բերվում է հրետանի, որը սկսում է ռմբակոծել հայկական դիրքերը:

Թշնամին մեծ ուժերով, հրետանու աջակցությամբ, կատաղի մարտերից հետո կարողանում է մոտենալ հայկական դիրքերին և գրավել դրանցից մի քանիսը: Հայ մարտիկները, սակայն, հավաքելով իրենց ուժերը, անակնկալ հարձակում են ձեռնարկում և հետ շպրտում հակառակորդին:

Մի շարք անհաջողություններից հետո թուրքական հրամանատարությունն այլևս ակտիվ մարտական գործողությունների չի դիմում: Նա ավելի ու ավելի է սեղմում պաշարման օղակը՝ սուետիահայերին դատապարտելով դանդաղ սովամահության: Չնայած ծանր դրությանը՝ հայերը պահպանում էին ոգու արիությունը: Լեռան բարձր գագաթների վրա նրանք երկու մեծ դրոշներ էին ամրացրել: Մեկի վրա ասեղնագործված էր կարմիր խաչ, իսկ մյուսի վրա գրված էր. «Քրիստոնյաները վտանգի մեջ են»:

Սեպտեմբերի 5-ին հորիզոնում մի ռազմանավ է երևում: Դիտորդները սկսում են ազդանշան տալ: Դա ֆրանսիական «Գիշեն» հածանավն էր, որ պարեկություն էր կատարում Միջերկրական ծովի այդ մասում: Հայերը նավապետից օգնություն են խնդրում:

Սեպտեմբերի 10-ին սկսվում է սուետիահայության տեղափոխությունը: Առաջին հերթին նավ են բարձրանում կանայք, երեխաները և ծերունիները: Տղամարդիկ այդ ժամանակ շարունակում էին մնալ դիրքերում՝ ապահովելով յուրայինների անվտանգ տեղափոխումը: Ֆրանսիական և անգլիական նավերով 4058 հայեր հասնում են Եգիպտոսի Պորտ Սաիդ նավահանգիստ:

Սուետիայի ինքնապաշտպանությունն իր արտացոլումն է գտել ավստրիացի նշանավոր գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում:

Թուրք ջարդարարների դեմ վերջին գոյամարտն է մղում Ուրֆա (Եդեսիա) քաղաքի հայկական թաղամասի բնակչությունը: Ուրֆայի հայության ինքնապաշտպանությունը սկսվում է 1915թ. սեպտեմբերին: Դիմադրությունը կազմակերպելու համար կազմվում է Զինվորական խորհուրդ: Ղեկավար է ընտրվում Մկրտիչ Յոթնեղբայրյանը: Մարտերին մասնակցում էին նաև կանայք և աղջիկներ:

Չնայած հայերի հերոսական դիմադրությանը՝ հակառակորդն աստիճանաբար կարողանում է նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը: Թուրքական հրետանին մեկը մյուսի հետևից քանդում է հայկական ամրությունները: Մարտիկների մեծ մասը կամ վիրավորվում, կամ զոհվում է: Դա հնարավորություն է տալիս թշնամուն ներխուժելու հայկական թաղամաս, ավելի ճիշտ՝ նրա փլատակները: 2300 տներից կանգուն էր մնացել միայն 50-ը: Սակայն տների փլատակներում թաքնված հայ մարտիկները շարունակում են դիմադրել մինչև 1915թ. նոյեմբերի կեսերը: 15 հազար կանայք ու երեխաներ թուրքական իշխանությունների կողմից աքսորվում են Միջագետքի անապատային շրջանները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս պատասխանեց արևմտահայությունը հայկական կոտորածներին: Օսմանյան կայսրության ո՞ր շրջաններում տեղի ունեցան ինքնապաշտպանական կռիվներ:
2. Ե՞րբ տեղի ունեցավ Վանի ինքնապաշտպանությունը: Ինչպե՞ս էին կռվում Վանի պաշտպանները:
3. Նկարագրե՛ք Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանական կռիվները: Հայ պատանիներից ո՞վ աչքի ընկավ իր սխրանքով:
4. Ներկայացրե՛ք Մուսա լեռան հերոսամարտը: Ինչպե՞ս եք պատկերացնում մուսալեռցիներին: Ի՞նչ արձագանք գտավ Մուսա լեռան հերոսամարտը:
5. Ի՞նչ նշանակություն ունեցան 1915թ. ինքնապաշտպանական կռիվները: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը այդ կռիվների նկատմամբ:
6. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *ցեղասպանություն* հասկացությունը:
7. Լրացրե՛ք «1915թ. ինքնապաշտպանական մարտերը» աղյուսակը:

Վայրը	Տարեթիվը	Գործիչները	Ընթացքը	Արդյունքները

ԹԵՍՏ

«Մուսա լեռան 40 օրը» վեպը գրել է.

1. Ջեյմս Բրայսը,
2. Անատոլ Ֆրանսը,
3. Վալերի Բրյուսովը,
4. Ֆրանց Վերֆելը:

ԹԵՄԱ 12-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 1914թ. հուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Օսմանյան Թուրքիան նպատակ ուներ տիրանալ հսկայական տարածքների, ստեղծել «Մեծ Թուրան» պետությունը: Իր հերթին՝ ցարական Ռուսաստանը ձգտում էր նվաճել Արևմտյան Հայաստանը, հաստատվել Բոսֆորի և Դարդանելի նեղուցներում: Ռուսական զորքերը մինչև 1917թ. գրավում են Արևմտյան Հայաստանը՝ հասնելով Սեբաստիայի վիլայեթ:
2. Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում ռուսական բանակներին աջակցելու նպատակով Թիֆլիսում գործող Հայկական ազգային բյուրոն ձեռնամուխ եղավ հայ կամավորական ջոկատների կազմակերպմանը: Կազմավորվեցին հայ կամավորական ութ ջոկատներ, որոնցում ընդգրկվեցին շուրջ 10 հազար հոգի: Նրանց քաջությունն ու հերոսությունը բազմիցս նշել է Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը:
3. Պանթուրքիզմի ծրագրի իրականացմանը և «Մեծ Թուրանի» ստեղծմանը խոչընդոտում էր Հայաստանը: Այդ «արգելքը» վերացնելու նպատակով երիտթուրքական կառավարությունը ծրագրեց և իրագործեց հայերի ցեղասպանությունը: Առաջին հերթին, արևմտահայությանը պաշտպանության հնարավորությունից զրկելու համար, ոչնչացվեց օսմանյան բանակ զորակոչված հայ տղամարդկանց մեծ մասը: Ապա վճռական հարվածը հասցվեց հայ մտավորականությանը: Այս ամենի հետ լայն թափ ստացան արևմտահայության զանգվածային տեղահանությունն ու կոտորածները, որոնց զոհ գնաց 1,5 միլիոն մարդ: Արևմտահայության նկատմամբ իրագործված ցեղասպանությունը խստորեն դատապարտեցին ականատես օտարերկրացիները և համայն աշխարհի առաջադեմ գործիչները:
4. Արևմտյան Հայաստանում, կայսրության մի շարք շրջաններում հայ ժողովուրդը դիմեց ինքնապաշտպանության: Դա հնարավորություն տվեց բնակչության մի մասին փրկվելու: Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան Վանում, Մուշ-Սասունում, Շապին-Գարահիսարում, Մուսա լեռան մոտ, Ուրֆայում և այլուր:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1917 ԹՎԱԿԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ցարիզմի տապալումը: Նոր իշխանության մարմինների ստեղծումը: Առաջին աշխարհամարտի տարիներին Ռուսաստանը հայտնվեց ծանր դրության մեջ: Երկիրը կանգնեց հեղափոխության շեմին: Ժողովրդի ընդհանուր դժգոհությունը վերաճեց հզոր ապստամբության, և 1917թ. փետրվարին Ռուսաստանում տապալվեց ցարական ինքնակալությունը: Դրանով վերջ տրվեց Ռոմանովների արքայատոհմի 300-ամյա տիրապետությանը: Երկրում հաստատվեց երկիշխանություն: Դրանցից մեկը աշխատավորական զանգվածների շահերն արտահայտող իշխանությունն էր՝ ի դեմս բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների սովետների (խորհուրդների), իսկ մյուսը՝ իշխող շերտերի (բուրժուազիայի)՝ հանձին Ժամանակավոր կառավարության: Պետական իշխանությունը գտնվում էր Ժամանակավոր կառավարության ձեռքում: Դրա կողքին մեծ դերակատարություն ուներ մայրաքաղաք Պետրոգրադի պատգամավորների խորհուրդը:

Հեղափոխության ալիքը տարածվեց երկրով մեկ: Ամենուրեք առաջացան բանվորագյուղացիական խորհուրդներ: Տեղական իշխանության մարմիններ ստեղծվեցին նաև Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում:

Փետրվարյան հեղափոխությամբ իրադրությունը հիմնովին փոխվեց նաև Անդրկովկասում: Քանի որ ցարիզմը տապալվել էր, բնականաբար, վերացվեց նաև Կովկասի փոխարքայությունը: Դրա փոխարեն երկրամասում հիմնվեց Ժամանակավոր կառավարության տեղական իշխանության մարմինը, որը կոչվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե՝ ՕԶԱԿոմ (Особый закавказский комитет): ՕԶԱԿոմ-ի կազմի մեջ մտան Ռուսաստանի Պետական դումայի (խորհրդարանի) 5 անդամներ, որոնք ներկայացնում էին կովկասյան հիմնական ազգություններին՝ հայերին, վրացիներին, ադրբեջանցի թուրքերին և ռուսներին: Նոր իշխանության այս մարմինները ժամանակավոր էին: Դրանք պետք է կառավարեին երկիրը մինչև Համառուսաստանյան սահմանադիր (հիմնադիր) ժողովի հրավիրումը և օրինական իշխանության ձևավորումը:

Հայ հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը: Ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը: Փետրվարյան հեղա-

փոխությունից հետո զարթոնք ապրեց ազգային կյանքը: Սկսեցին ազատորեն գործել բոլոր կուսակցությունները: Լայն գործունեություն ծավալեցին հայ կուսակցությունները՝ Դաշնակցական, Հնչակյան և այլն: 1917թ. ապրիլին Թիֆլիսում ստեղծվեց մի նոր կուսակցություն՝ Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ):

Հայ քաղաքական կուսակցությունները հույս ունեին Ժամանակավոր կառավարության օգնությամբ լուծել Հայկական հարցը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդիրը:

Վահան Փափազյան (1876–1973)

Դա բարդ խնդիր էր, քանի որ Արևմտյան Հայաստանը Մեծ եղեռնի հետևանքով հայաթափ էր եղել: Ժամանակավոր կառավարությունը ռուսական զորքերի գրաված Արևմտյան Հայաստանի համար սահմանեց կառավարման հատուկ վարչաձև: Արևմտահայ նահանգներից կազմվեցին երեք (Էրզրումի, Վանի և Խնուսի) վարչական շրջաններ: Քայլեր ձեռնարկվեցին արևմտահայ գաղթականներին իրենց երկիրը ներգաղթեցնելու, նրանց անվտանգությունը ապահովելու և տնտեսական պայմանները բարելավելու ուղղությամբ:

Այդ ժամանակ կարևորվեց նաև Անդրկովկասի սահմանների արդարացի բաժանման հարցը՝ հայերի, վրացիների և կովկասյան թուրքերի միջև: Հայտնի է, որ ցարիզմի օրոք Անդրկովկասի վարչական բաժանումները կատարվել էին հայերի համար ոչ նպաստավոր: Ստացվել էր այնպես, որ հայ հոծ բնակչությամբ բնիկ հայկական մի շարք շրջանների՝ Ախալքալաքի, Լոռու, Ղարաբաղի և այլնի նկատմամբ վրացիները և կովկասյան թուրքերը հավակնություններ ունեին: Այդ հարցի համատեղ քննարկումների ժամանակ հայերն առաջարկեցին Անդրկովկասի սահմանները բաժանել ազգային (էթնիկ) սկզբունքով: Սակայն հայերի առաջարկը հանդիպեց վրացիների և թուրք-թաթարների միասնական դիմադրությանը: Հետագայում այդ խնդիրը ավելի սրվեց:

Ավետիս Ահարոնյան 1866–1948

Արևմտահայերի և Արևելահայերի առաջին համագումարները: Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում առաջացան ազգային խորհուրդներ, որոնք կոչված էին կառավարելու տվյալ ազգի կյանքը: Այդպիսիք հիմնեցին Անդրկովկասի մահմեդականները, վրացիները, նաև հայերը: Արևմտահայությանը հուզող խնդիրների քննության նպատակով 1917թ. մայիսին Երևանում գումարվեց Արևմտահայերի 1-ին համագումարը: Նրա աշխատանքներին մասնակցում էին արևմտահայ գործիչներ, հայդուկապետներ,

այդ թվում՝ Անդրանիկը: Համագումարն ընտրեց Արևմտահայերի ազգային խորհուրդ՝ Վահան Փափազյանի (Կոմսի) նախագահությամբ: Հույս էր փայփայվում, որ դրականապես կլուծվի Հայկական հարցը:

Արևմտահայերի ազգային խորհրդին հաջորդեց Արևելահայոց ազգային խորհրդի ստեղծումը: 1917թ. աշնանը Թիֆլիսում կայացավ Արևելահայերի 1-ին համագումարը: Համագումարի պատվիրակների կեսից ավելին Դաշնակցություն կուսակցության անդամներ էին: Համագումարը քննության առավ արտաքին ու ներքին կյանքի (ինքնապաշտպանության, գաղթականության, պարենավորման և այլն) մի շարք կարևոր խնդիրներ: Վերջում բազմակուսակցական սկզբունքով ստեղծվեց 15 հոգուց բաղկացած Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդ: Խորհրդի նախագահ ընտրվեց հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանը: Հայոց ազգային խորհուրդն ուներ իր բաժինները կամ կոմիսարիատները՝ զինվորական, գաղթականության, դպրոցական, պարենավորման, բժշկական և այլն: Դեպքերի բերումով Հայոց կենտրոնական ազգային խորհրդին վիճակված էր կարևոր դեր խաղալ: Նա փաստորեն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանությունը մինչև Հայաստանի պետական անկախության հռչակումը:

Բացի Թիֆլիսի Հայոց կենտրոնական ազգային խորհրդից՝ տեղերում նույնպես ստեղծվեցին ազգային խորհուրդներ, որոնք զբաղվում էին տեղական նշանակության խնդիրների լուծմամբ:

Հոկտեմբերյան հեղափոխությունը և սահմանների հարցը Անդրկովկասում: Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկները, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, խնդիր դրեցին զինված ապստամբության միջոցով տապալել Ժամանակավոր կառավարությունը և գրավել իշխանությունը: Դրան հասնելու համար նրանք լայն քարոզչություն ծավալեցին՝ ժողովրդական զանգվածներին հուզող հաշտության, հողի, հացի, աշխատանքի հարցերի շուրջը և ժողովրդի մի մասին գրավեցին իրենց կողմը: 1917թ. հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 7) բոլշևիկները մայրաքաղաք Պետրոգրադում (Սանկտ Պետերբուրգ) պետական հեղաշրջում կատարեցին և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Այդպիսով վերջ տրվեց Ժամանակավոր կառավարությանը, իսկ քիչ ուշ ձախողվեց նաև Սահմանադիր ժողովի հրավիրումը: Իշխանափոխությունից հետո բոլշևիկները ընդունեցին հաշտության և հողի դեկրետներ (հրովարտակ), կազմվեց բանվորագյուղացիական կառավարություն՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ:

Այսպիսով՝ Հոկտեմբերյան հեղափոխությամբ սկսվում է խորհրդային պետության պատմության ժամանակաշրջանը, որը տևում է ավելի քան 70 տարի, մինչև 1991թ.:

Հոկտեմբերյան իրադարձությունները, որ հաճախ կոչում են նաև հեղաշրջում, Անդրկովկասում միանշանակ չընդունվեցին: Անդրկովկասի քաղա-

քական ազդեցիկ ուժերը հիմնականում բացասաբար ընդունեցին այդ հեղաշրջումը և չճանաչեցին խորհրդային իշխանությունը: 1917թ. նոյեմբերին երկրամասի ամենաազդեցիկ երեք կուսակցությունները՝ վրաց մենշևիկները, հայ դաշնակցականները և ադրբեջանական մուսավաթականները, հեղինակազրկված ՕԶԱԿՈՄ-ի փոխարեն ստեղծեցին իշխանության նոր մարմին՝ Կոմիսարիատ: Անդրկովկասյան կոմիսարիատը, իբրև գործադիր մարմին, ժամանակավորապես ստանձնեց երկրամասի կառավարումը: Ստեղծվեց նաև օրենսդիր մարմինը՝ Անդրկովկասյան սեյմը (խորհրդարանը): Խորհրդային Ռուսաստանի և Անդրկովկասի կառավարությունները իրար հանդեպ անհաշտ էին:

Տարածաշրջանում Հոկտեմբերյան հեղափոխությունը պաշտպանեցին միայն տեղի բոլշևիկյան կազմակերպությունները և նրանց ազդեցության տակ գտնվող կովկասյան բանակի առանձին զորամասեր: 1917թ. դեկտեմբերի կեսերին խորհրդային կառավարության ղեկավար Վ. Ի. Լենինի հանձնարարականով ականավոր բոլշևիկ Ստ. Շահումյանը (1878–1918թթ.) նշանակվեց կովկասյան գործերի արտակարգ կոմիսար: Բոլշևիկները այստեղ ևս վերցրին Կովկասի խորհրդայնացման ուղեգիծ (ռազմավարություն):

Խորհրդային Ռուսաստանի կառավարության կարգախոսներից մեկը ճնշված ազգերի ինքնորոշման իրավունքի հռչակումն էր: Դա ոգևորեց մի շարք հայ ազդեցիկ գործիչների՝ Ստ. Շահումյանին, Վ. Տերյանին, Ռոստոմին, Հ. Ջավրիյանին և ուրիշների: Նրանց ջանքերով 1917թ. դեկտեմբերի վերջին խորհրդային կառավարությունը ընդունեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:

Այդ դեկրետով խորհրդային կառավարությունը ճանաչում էր Թուրքահայաստանի (Արևմտյան Հայաստանի) հայ բնակչության ազատ ինքնորոշման իրավունքը ընդհուպ լիակատար անկախություն: Դրա կենսագործման համար Ժողկոմխորհն անհրաժեշտ էր համարում ռուսական զորքի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից: Արևմտահայերի անձի ու գույքի անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում էր հայկական ազգային միլիցիայի ստեղծում: Պահանջվում էր նաև թուրքական իշխանությունների կողմից տեղահանված հայերի անարգել վերադարձ հայրենիք, տեղում իշխանության մարմինների ստեղծում և այլն: Սակայն հեղափոխության հետևանքով ռուսական զորքերի կազմալուծումը և Արևմտյան Հայաստանից դրանց վաղաժամ դուրսբերումը կործանարար եղան հայերի համար: Շուտով թուրքական զորքերը անցան հարձակման, կարճ ժամանակում վերագրավեցին Արևմտյան Հայաստանը և «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը մնաց չկենսագործված:

Այսպիսով՝ 1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած խոշոր իրադարձությունները հայության համար շատ բարդ, անորոշ ու դժվարին կացություն ստեղ-

ծեցին: Նման պայմաններում հայերը ինքնակազմակերպման քայլեր ձեռնարկեցին: Ստեղծվեցին ազգային խորհուրդներ: Դրանք կոչված էին, մի կողմից, կազմակերպելու ժողովրդի ինքնապաշտպանությունը, իսկ մյուս կողմից, ի վերջո, նրան առաջնորդելու անկախության ուղիով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս փոխվեց իրադրությունը Անդրկովկասում փետրվարյան հեղափոխությունից հետո: Ինչպե՞ս կբնութագրեք Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ՕԶԱԿոմ): Ի՞նչ էր երկիշխանությունը:
2. Ինչպիսի՞ն էր Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի հարցում: Դա բխո՞ւմ էր արդյոք հայ ժողովրդի շահերից: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
3. Ե՞րբ տեղի ունեցավ Արևմտահայերի առաջին համագումարը: Ի՞նչ գործունեություն ծավալեց Արևմտահայերի ազգային խորհուրդը:
4. Ինչպիսի՞ կազմ ուներ Արևելահայերի համագումարը և ի՞նչ հարցեր քննարկեց: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Հայոց (արևելահայ) ազգային խորհրդի ստեղծումը:
5. Ի՞նչ արձագանք գտավ Հոկտեմբերյան հեղափոխությունը Անդրկովկասում: Իշխանության ի՞նչ նոր մարմին ստեղծվեց ՕԶԱԿոմ-ի փոխարեն: Ինչպե՞ս էր կոչվում Անդրկովկասի օրենսդիր մարմինը և ի՞նչ խնդիր էր փորձում լուծել:
6. Ե՞րբ ընդունվեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը: Վերլուծե՛ք հրովարտակի բովանդակությունը:
7. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *երկիշխանություն, Ժամանակավոր կառավարություն, Արևելահայերի համագումար, Արևմտահայերի համագումար, Արևմտահայ ազգային խորհուրդ, Հայոց կենտրոնական ազգային խորհուրդ, ՕԶԱԿոմ, Անդրկովկասյան կոմիսարիատ, Ժողովրդական կոմիսարների խորհուրդ* տերմինները և հասկացությունները:
8. Լրացրե՛ք «Իշխանության մարմինները և համագումարները 1917թ.» համալիր աղյուսակը:

Իշխանության մարմինները	Նմանությունը	Տարբերությունը	Համագումարները	Նմանությունը	Տարբերությունը
ՕԶԱԿոմ			Արևմտահայերի		
Անդրկովկասյան կոմիսարիատ			Արևելահայերի		

ԹԵՍՏ

Հայոց (արևելահայ) ազգային խորհրդի նախագահն էր.

1. Անդրանիկը,
2. Ստեփան Շահումյանը,
3. Ավետիս Ահարոնյանը,
4. Հակոբ Ջավրիյանը:

ԹԵՄԱ 13-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 1917թ. Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը տապալեց ցարիզմը: Ռուսաստանում հաստատվեցին ժողովրդավարական կարգեր: Ժամանակավոր կառավարության հրամանով վերացվեց Կովկասի փոխարքայությունը, և 1917թ. մարտին կազմակերպվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտեն: Անդրկովկասի քաղաքական կուսակցությունները, բացի բոլշևիկներից, հանդես եկան Ժամանակավոր կառավարության պաշտպանությամբ:
2. Արևմտյան Հայաստանի վերաշինության հարցերը քննարկվեցին 1917թ. մայիսին Երևանում տեղի ունեցած Արևմտահայերի համագումարում: Ընտրվեց Արևմտահայերի ազգային խորհուրդը: Նույն թվականի աշնանը Թիֆլիսում ստեղծվեց Արևելահայոց ազգային խորհուրդը:
3. 1917թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) Պետրոգրադում տեղի ունեցավ բոլշևիկյան զինված հեղաշրջում: Չընդունելով բոլշևիկյան իշխանությունը՝ Անդրկովկասի քաղաքական շրջանները 1917թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում ստեղծեցին իշխանության տեղական մարմին՝ Անդրկովկասի կոմիսարիատ:
4. 1917թ. դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհը հռչակեց «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը, որով նախատեսվում էր արևմտահայերի ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ լիակատար անջատում: Սակայն հրովարտակի իրականացման համար չկային երաշխիքներ:

ԹՈՒՐՔ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ: ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

1. ԹՈՒՐՔ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1917 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Երզնկայի զինադադարը: Ռազմաճակատի քայքայումը: Ինչպես գիտենք, խորհրդային իշխանության ընդունած հաշտության դեկրետով կոչ էր արվում պատերազմող երկրներին՝ վերջ տալ իմպերիալիստական պատերազմին և կնքել արդարացի հաշտություն: Սակայն Խորհրդային Ռուսաստանի կառավարության կոչը արձագանք չգտավ Անտանտի տերությունների կողմից: Ուստի երկիրը պատերազմից դուրս բերելու և հաշտություն կնքելու նպատակով 1917թ. վերջերին բոլշևիկները զինադադար կնքեցին Գերմանիայի հետ, ու սկսվեցին անջատ հաշտության բանակցությունները:

Խորհրդային կառավարության օրինակով Անդրկովկասյան կոմիսարիատը ևս, արձագանքելով հաշտության գաղափարին, որոշեց զինադադար կայացնել թուրքերի հետ: Կողմերը ընդառաջ գնացին իրար, և 1917թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում ստորագրվեց զինադադար:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տագնապալի վիճակ էր ստեղծվել Հայաստանում և Անդրկովկասում: Մի կողմից՝ ցրտաշունչ ձմեռ, սով, քայքայում, իսկ մյուս կողմից՝ թուրք-քրդական ավազակային հարձակումներ, թալան, սպանություններ: Երկրամասի համար առավել կործանարար հետևանք ունեցավ Կովկասյան ռազմաճակատի շուրջ կեսմիլիոնանոց բանակի քայքայումն ու կազմալուծումը:

Դրան հատկապես նպաստեց այն հանգամանքը, որ խորհրդային կառավարությունը 1917թ. վերջին հրահանգ էր իջեցրել՝ ռուսական զորքերը դուրս բերել Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Պարսկաստանի գրավյալ տարածքներից: Դրա հետևանքով Կովկասյան ռազմաճակատի զորքերը սկսեցին զանգվածաբար լքել իրենց դիրքերը և վերադառնալ տուն: Այդպիսով՝ գործնականում քայքայվեց ու մերկացավ շուրջ 750 կմ երկարությամբ ձգվող ռազմաճակատը: Իսկ դա նշանակում էր, որ հայ ժողովուրդը կրկին կանգնում էր թուրքական ներխուժման սպառնալիքի առաջ: Եվ թուրքական զորքերի հարձակումը չուշացավ:

Հայկական զորամիավորումների ստեղծումը: Թուրքերի հարձակումը: Կովկասյան ճակատի քայքայման պայմաններում ինքնապաշտպանության նպատակով անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու ազգային զորամիավորումներ: Ռուսական բանակում ծառայող հայ զինվորներից ու կամավո-

ական խմբերից պետք էր ստեղծել զորամիավորումներ՝ կասեցնելու թուրքական հարձակումը: Այդ գործում մեծ դեր կատարեցին Հայոց ազգային խորհուրդները: Երևանի ազգային խորհուրդը գլխավորում էր նշանավոր գործիչ Արամ Մանուկյանը: Ավելի ուշ նա ստանձնեց Երևանի նահանգի դիկտատորի պարտականություններ:

Արամ Մանուկյան (Սարգիս Հովհաննիսյան) (1879–1919)

Անդրանիկ (Անդրանիկ Օզանյան) (1865–1927)

1917թ. նոյեմբերից սկսեց ձևավորվել Հայկական բանակային կորպուսը (զորակազմը): Այդ աշխատանքներում ներգրավվեցին ցարական բանակի հայազգի գեներալներ ու բարձրաստիճան սպաներ՝ Նազարբեկյանը, Մ. Միլիկյանը, Դ. Բեկ-Փիրումյանը և ուրիշներ: Հայկական կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ Թովմաս Նազարբեկյանը, իսկ կոմիսար՝ Դրաստամատ Կանայանը (Դրո): Բանակային կորպուսի մեջ էր մտնում նաև արևմտահայերից կազմված երկրապահ կամավորական զորաբաժինը (դիվիզիան), որի հրամանատար նշանակվեց գեներալի կոչում ստացած Անդրանիկը: Անդրանիկի կողքին խիզախաբար կռվում էին Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Գ. Նժդեհը, Պանդուխտը և ուրիշներ: 1918թ. մարտի 1-ից Հայկական բանակային կորպուսը վերակառուցվեց Հայկական առանձին բանակային կորպուսի, որի շարքերում կային 26 հազարից ավելի զինվոր ու սպա:

Թովմաս Նազարբեկյան (1855–1928)

Նժդեհ (Գարեգին Տեր-Հարությունյան) (1886–1955)

Սեբաստացի Մուրադ (1874–1918)

Հայկական զինուժը հետագայում դարձավ հայկական ազգային բանակի հիմքը:

Ռուսական բանակի քայքայումը ձեռնտու էր թուրքերին, և 1918թ. հունվարի վերջին նրանք, խախտելով Երզնկայի զինադադարը, անցան հարձակման: Թուրքերը կարճ ժամանակում փաստորեն գրավեցին ամբողջ Արևմտյան Հայաստանը և գարնանը սկսեցին «բախել» Անդրկովկասի դռները: Մինչև ատամները զինված թուրքական դիվիզիաներին դիմակայող միակ ուժը նոր ձևավորվող հայկական զորամիավորումներն

էին: Սակայն փորձի պակասի, Անդրկովկասի կառավարության ներսում առկա հակասությունների հետևանքով հայկական նորաստեղծ զինուժին չհաջողվեց կասեցնել թշնամու առաջխաղացումը: Թուրքական հարձակման և ձմեռվա դաժան ցրտերի պայմաններում տեղի ունեցան արևմտահայության նոր կոտորածներ ու գաղթ: Արևմտյան Հայաստանը հայաթափվեց:

Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և Տրապիզոնի բանակցությունները: Թուրքերի հետագա առաջխաղացումը դեպի Անդրկովկաս կանխելու և գոնե 1914թ. նախապատերազմյան սահմանները պահպանելու նպատակով անդրկովկասյան իշխանությունները (Կոմիսարիատը և Սեյմը) 1918թ. մարտի սկզբին Տրապիզոնում Թուրքիայի հետ հաշտության բանակցություններ սկսեցին: Բայց մինչև բանակցությունները սկսելը հայտնի դարձավ, որ 1918թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանը Գերմանիայի և նրա դաշնակիցների, այդ թվում՝ Թուրքիայի հետ Բրեստ-Լիտովսկում կնքել է հաշտության ծանր պայմանագիր: Այդ կողոպտիչ պայմանագրով, Գերմանիայի ճնշման տակ, Ռուսաստանը Թուրքիային էր հանձնում ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի մասը կազմող Կարսը, Արդահանը, ինչպես նաև Վրաստանից՝ Բաթումը: Բրեստի պայմանագրի 4-րդ կետում ասվում էր. «Ռուսաստանը կանի իրենից կախված ամեն ինչ, որպեսզի ապահովի Արևելյան Անատոլիայի գավառների (Արևմտյան Հայաստան) շուտափույթ մաքրումը և դրանց օրինական հանձնումը Թուրքիային: Արդահանի, Կարսի ու Բաթումի օկրուգները ևս անհապաղ պիտի մաքրվեն ռուսական զորքերից»: Այսինքն՝ վերականգնվում էր այն սահմանագիծը, որը գոյություն էր ունեցել մինչև 1877-1878թթ. ռուս- թուրքական պատերազմը:

Բրեստի պայմանագիրը հաղթաթուղթ դարձավ Թուրքիայի ձեռքին իր հետագա զավթողական պլաններն իրականացնելու համար: Թուրքական պատվիրակությունը, գոտեպնդված իր ռազմական հաջողություններով, պահանջեց Թուրքիային հանձնել Կարսը, Արդահանը, Բաթումը:

Միաժամանակ Թուրքիան պահանջ դրեց, որ Անդրկովկասը անջատվի Ռուսաստանից, իրեն անկախ հռչակի: Դրանով նա նպատակ էր հետապնդում, մեկուսացնելով երկրամասը, իրականացնել իր պանթուրքական զավթողական պլանները: Նման պայմաններում Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը մտավ փակուղի, և ապրիլի սկզբին բանակցություններն ընդհատվեցին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանը հանդես եկավ պատերազմին վերջ տալու և արդարացի հաշտություն կնքելու առաջարկությամբ: Ինչպիսի՞ հետևանքներ ունեցավ այդ քաղաքականությունը Հայաստանի համար:

2. Ե՞րբ կնքվեց Երզնկայի զինադադարը: Ինչպե՞ս ընթացավ ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը: Ի՞նչ եք կարծում՝ կարելի՞ էր դա աղետ համարել հայ ժողովրդի համար: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
3. Ե՞րբ և ի՞նչ նպատակով ստեղծվեցին հայկական զորամիավորումները: Ովքե՞ր ներգրավվեցին այդ գործում:
4. Ե՞րբ և ո՞ւմ կողմից խախտվեց Երզնկայի զինադադարը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ թուրքերին հաջողվեց գրավել ամբողջ Արևմտյան Հայաստանը: Ի՞նչ ընթացք ունեցան Տրապիզոնի բանակցությունները: Ինչո՞ւ էր Թուրքիան պահանջում Անդրկովկասը անջատել Ռուսաստանից:
5. Ե՞րբ կնքվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը: Հայկական ի՞նչ տարածքներ հանձնվեցին Թուրքիային: Ինչպե՞ս եք գնահատում այդ պայմանագիրը:
6. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *Երզնկայի զինադադար, Հայկական բանակային կորպուս, երկրապահ կամավորական դիվիզիա* հասկացությունները:
7. Լրացրե՛ք «Թուրք-անդրկովկասյան հարաբերությունները 1917թ. վերջին և 1918թ. սկզբներին» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթիվը	Իրադարձությունը

ԹԵՍՏ

Հայկական առանձին բանակային կորպուսի կոմիսարն էր.

1. Անդրանիկը,
2. Գ. Նժդեհը,
3. Սեպուհը,
4. Դրոն:

2. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ: ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

Թուրքական զորքերի ներխուժումը Արևելյան Հայաստան: Տրապիզոնի հաշտության բանակցությունների ձախողումից հետո թուրքական զորքերը արշավեցին Արևելյան Հայաստան: 1918թ. մարտի վերջին ընկավ Սարիղամիշը: Անդրկովկասյան կառավարության (նախագահ՝ Ա. Չխենկելի) դավաճանական վարքագծի հետևանքով, գրեթե առանց դիմադրության թուրքերին հանձնվեց լավ ամրացված Կարսը: Վիճակը ամենևին չփրկեց Անդրկովկասը անկախ հայտարարելը: Չկար համերաշխություն Անդրկովկասի կառավարության ներսում և Մեյմում: Նոր կառավարության նախագահ, մենշևիկ Ա. Չխենկելին վարում էր ըստ էության թուրքամետ գիծ: Անդրկովկասի երեք հիմնական ազգերի (հայ, վրացի, ադրբեջանցի) անմիաբանությունն էր պատճառը, որ

թուրքական զորքերը ռազմական հաջողություններ էին ունենում: Ադրբեջանցիները բացահայտ համակրում և օժանդակում էին թուրքերին:

Թուրք զավթիչների դեմ պայքարի հարցում հայ քաղաքական բոլոր կուսակցությունները միակամ էին: 1918թ. ապրիլին Ալեքսանդրապոլում Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ կայացավ հայ քաղաքական կուսակցությունների և անկուսակցական գործիչների խորհրդակցություն: Խորհրդակցությունը որոշեց «բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի պաշտպանությունը»: Սակայն հայությունը միայնակ ի վիճակի չէր դիմակայելու թուրք զավթիչներին:

Թուրքական զորքերի ռազմական հաջողությունները հարկադրեցին Անդրկովկասի կառավարությանը վերսկսել Տրապիզոնում ընդհատված բանակցությունները: Մայիսի սկզբներին Բաթումում սկսվեցին թուրք-անդրկովկասյան հաշտության նոր բանակցություններ: Սակայն ռազմական հաջողություններով արբեցած թուրքերն ամենևին մտադրություն չունեին բավարարվելու Բրեստի հաշտության պայմաններով: Այժմ նրանք կողոպտչական նոր պահանջներ ներկայացրին, որի պատճառով բանակցությունները կրկին ընդհատվեցին:

1918թ. մայիսյան հերոսամարտերը և դրանց պատմական նշանակությունը: Օգտվելով նպաստավոր հանգամանքից՝ մայիսի 15-ին թուրքական զորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Ալեքսանդրապոլը (Գյումրին) և առաջ շարժվեցին երկու հիմնական ուղղություններով: Թուրքական զորքերի մի խմբավորում Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Արարատյան դաշտ՝ Երևանը և Էջմիածինը գրավելու, իսկ մյուսը Ղարաքիլիսա (Վանաձոր)-Ղազախով ռազմավարական ուղղություն վերցրեց դեպի Բաքու: Հայկական ազգային զորամասերը անկարող էին երկարատև դիմադրություն ցույց տալ զավթիչներին: Հայ ժողովրդի գլխին նորից կախվեց ֆիզիկական բնաջնջման վտանգը:

Թուրքերին դիմակայելու համար կատարվեց հայկական զինված ուժերի վերադասավորում: Ստեղծվեց Երևանյան զորախումբը, որի հրամանատարն էր գեներալ Մովսես Սիլիկյանը:

Մովսես Սիլիկյան (1862–1937)

Արարատյան դաշտ ներխուժած թուրքական ուժերը մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը: Հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարի ելավ, ուր վճռվելու էր նրա լինել-չլինելու հարցը:

Մայիսի 22-ի վաղ առավոտյան եկեղեցու զանգերի ղողանջների ներքո սկսվեց Սարդարապատի պատմական ճակատամարտը: Սարդարապատի զորաջոկատը, որի հրամանատարը գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանն էր, հրետանային նախապատրաստությունից հետո անցավ հակահարձակման: Հայկական զինուժը հուժկու գրոհով հետ վերցրեց թշնամու կողմից մեկ օր առաջ գրված

Սարդարապատը: Թուրքերը, մեծ կորուստներ տալով, խուճապահար նահանջեցին մինչև Արաքս կայարանի մոտակա բարձունքները: Իսկ մի քանի օր տևած համառ ու ծանր մարտերից հետո թուրքական 15-հազարանոց զորքը ջախջախվեց և նահանջեց դեպի Գյումրի:

Դանիել Բեկ-Փիրումյան (1861–1921)

Այդ հաղթանակը բարձրացրեց զորքի և ժողովրդի տրամադրությունը: Հարկ է նշել, որ հայրենիքի և Երևանի պաշտպանության համար ոտքի ելավ Երևանի ու Արարատյան դաշտի ողջ հայ բնակչությունը: Հարյուրավոր մարդիկ, անկախ կուսակցական պատկանելությունից, մասնագիտությունից, քաղաքական համոզմունքներից ու տարիքից, ներկայանում էին զորամաս և կամավոր մեկնում ճակատ: Գյուղացիները տրամադրում էին փոխադրամիջոցներ, փամփուշտ, սննդամթերք, մտնում աշխարհազորայինների շարքերը, փորում խրամատներ: Հերոսամարտը ստացավ համաժողովրդական բնույթ, հայ ժողովուրդը համախմբվել, մի բռունցք էր դարձել, որովհետև յուրաքանչյուր հայ գիտակցում էր, որ ինքը մարտնչում է հանուն հայրենիքի, հանուն կյանքի ու ազգային արժանապատվության: Արարատյան դաշտի ինքնապաշտպանության ոգին Երևանի դիկտատոր Արամ Մանուկյանն էր (1879-1919թթ.): Նրա աննկուն կամքի և հմուտ կազմակերպչական ջանքերի շնորհիվ հայ ժողովուրդը հաղթանակ տոնեց:

Սարդարապատի ճակատամարտին գրեթե զուգընթաց ահեղ մարտեր մղվեցին նաև Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Սպիտակը, շարժվեց դեպի Բաշ-Ապարան՝ նպատակ ունենալով Երևանի վրա գրոհել հյուսիսից, մտնել Արարատյան դաշտ և Սարդարապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից: Ստեղծվեց հարվածային խումբ: Հայկական զորամասը, Դրոյի հմուտ ղեկավարությամբ, ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջընթացը, այլև խիզախ հակագրոհով փախուստի մատնեց թշնամուն: Այդ կռիվներում հայերին օգնում էր Ջահանգիր աղայի քրդական (եզդիական) ջոկատը:

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը

Մայիսի 24–28-ը ահեղ մարտեր տեղի ունեցան Ղարաքիլիսայի մոտ: Երկու կողմերն էլ ունեցան մեծ կորուստներ: Չնայած թշնամին ի վերջո գրավեց Ղարաքիլիսան և շարժվեց առաջ, սակայն այնտեղ նույնպես հայերը ցույց տվեցին հիրավի հերոսական դիմադրություն: Դա խոստովանել է հենց թուրք հրամանատա-

ությունը: Ղարաքիլիսայի կռիվներում աչքի ընկան սպաներ Ա. Բեյ Մամիկոնյանը, Ն. Ղորղանյանը, Գ. Նժդեհը, մարտերում հերոսաբար զոհվեցին կապիտան Գ. Տեր-Մովսիսյանը և ուրիշներ:

Դրո (Դրաստամատ Կանայան) (1883–1956)

Այսպիսով՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ ու վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու և տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Մայիսյան հերոսամարտը ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակն էր: Ավելին, եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին՝ հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի պետական անկախության համար: Եվ հենց այդ հաղթանակի օրերին հռչակվեց Հայաստանի անկախությունը: Մայիսյան հերոսամարտը դարձավ հայոց նոր ժամանակների Ավարայրը, որ իր խաղացած դերով ու նշանակությամբ, հիրավի, հայ ժողովրդի պատմության ամենահերոսական դրվագներից է: Այս դեպքերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանը և սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների պատմության ժամանակաշրջանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ ռազմական հաջողություններ ունեցան թուրքական զորքերը Արևելյան Հայաստանում, որո՞նք էին դրանց պատճառները: Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ Անդրկովկասի կառավարությունը շահագրգռվածություն հանդես չբերեց Արևելյան Հայաստանի պաշտպանության հարցում:
2. Փորձե՛ք պատկերացնել, թե ինչ էր սպառնում հայ ժողովրդին Արարատյան դաշտ ներխուժած թուրքական զորքերի հաջողության դեպքում:
3. Ե՞րբ տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտը: Ի՞նչ նշանակություն ունեցավ Սարդարապատում տարած հաղթանակը հայ ժողովրդի համար: Դուք համաձա՞յն եք այն մտքին, որ Սարդարապատի ճակատամարտը նոր ժամանակների Ավարայրն էր: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

4. Նկարագրե՛ք Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Ովքե՞ր աչքի ընկան այդ կռիվների ժամանակ: Ձեր կարծիքով՝ ո՞րն է թշնամու գերակշիռ ուժերի դեմ հայ ժողովրդի հաղթանակի գաղտնիքը:
5. Տեքստից դո՛ւրս գրեք և բացատրե՛ք *Երևանի դիկտատոր, Երևանյան զորախումբ* հասկացությունները:
6. Լրացրե՛ք «Մայիսյան հերոսամարտերը 1918թ.» աղյուսակը:

Հերոսամարտերը	Տարեթիվը	Ղեկավարները	Ընթացքը	Արդյունքները
Սարդարապատի ճակատամարտ				
Բաշ-Ապարանի ճակատամարտ				
Ղարաքիլիսայի ճակատամարտ				

ԹԵՍՏ

Համապատասխանեցրե՛ք տարեթվերը իրադարձություններին.

1. 1918թ. մայիսի 15, ա) Սարիղամիշի գրավումը,
2. 1918թ. մայիսի 24–28, բ) Ալեքսանդրապոլի գրավումը,
3. 1918թ. մարտի վերջ, գ) Սարդարապատի ճակատամարտի սկսվելը,
4. 1918թ. մայիսի 22, դ) Ղարաքիլիսայի ճակատամարտը:

Գեներալ Մովսես Սիլիկյանի կոչը հայ ժողովրդին

«Հայեր, շտապեցեք Հայրենիքն ազատելու: Հասել է պահը, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի, Հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պիտի գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար...

Հայեր, ժամանակը չէ դանդաղելու, մինչև 50 տարեկան բոլոր տղամարդիկ պարտավոր են զենքի տակ գնալ: Ես պահանջում եմ բոլորից՝ ներկայանալ իրենց զենքով ու փամփուշտներով Հայրենիքի պաշտպանության համար:

Հայուհիներ, հիշեցեք 5-րդ դարի փափկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դեպի մեծ գործը անմահ Վարդանի կռիվների ժամանակ, հետևեցեք նրանց օրինակին, եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնատակ լինի, խրախուսեցեք այրերին, նզովեք վախկոտներին, հավաքեցեք ռազմապաշար, հաց, հագուստ...

Հայեր, ոտքի կանգնեցեք, դեպի գո՛ր, դեպի սրբազան պատերազմ»:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

«1918թ. մարտի 17-ի երեկոյան 7-8 հազար հայ զինվորներ և դրանց միացած բազմահազար ժողովուրդ, հավաքված Երևանի Ազգային խորհրդի մուտքի առաջ, կընդդիմանային ճակատ գնալու: Դեռ աչքիս առջև է այն րոպեն, երբ Արամը պատշգամբ ելավ և ասաց.

– Կամ այստեղ ինձ կխփեք, կամ բոլորդ կգնաք կռվի դաշտ:

Այս երկու խոսքը բավական եղավ, որ զինվորների մեջ բռնկվի հայրենասիրության կայծը, և բոլորը միակամ որոշեցին մեկնել ռազմաճակատ»:

«Մայիսի 19-ի առավոտյան զորավար Սիլիկյանը ուղիղ հեռագրաթելի մոտ է կանչում Արամին:

ՍԻԼԻԿՅԱՆ. – Արամ, բարև, մեր դրությունը վճռական է, մենք առանց կռվի նահանջում ենք դեպի Զեյվա, թշնամին գերազանց ուժեր ունի, իմ զորամասս քայքայվում է թիկունքի ընդհանուր քայքայման պատճառով. դասալքությունը բազմացել է: Մտածում եմ, թե ստիպված եմ նահանջել...

ԱՐԱՄ. – Զորավար, Ձեր խոսակցությունից եզրակացնում եմ, որ Դուք մտադիր եք նահանջել դեպի Երևան և նույնիսկ մայրաքաղաքը ենթարկել ռմբակոծման:

ՍԻԼԻԿՅԱՆ. – Ամեն ինչ հնարավոր է:

ԱՐԱՄ. – Այդ չի լինի: Ասացեք անմիջապես՝ ինչ է պետք Ձեզ՝ հարձակողականի անցնելու և նախօրոք դրված խնդրի իրագործման համար:

ՍԻԼԻԿՅԱՆ. – Փամփուշտներ, մարդիկ, հաց, տեղափոխության միջոցներ, իսկ գլխավորը՝ թիկունքի ոգևորությունը, և հաղթանակը երաշխավորում եմ:

ԱՐԱՄ. – Պահեցե՛ք, զորավա՛ր, դիրքերը երկու օր, և ամեն ինչ կլինի»:

«Արամը իբրև շարժական ոգի ամեն տեղ էր՝ հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում, և՛ կոգևորեր իր խոսքերով, և՛ կներշնչեր ամենքին: Եվ գործը եռաց: Բոլորն էլ աշխատում էին: Խրամատներ կփորեին և՛ շրջանային դատարանի նախագահը, և՛ դպրոցական երեխան, և՛ երիտասարդ գեղեցկուհի երևանցին, և՛ 60 տարեկան վանուհին»:

Եվ վերջապես հասավ վճռական գոտեմարտի պահը: Սիլիկյանը հաղորդեց, որ ինքը ամեն ինչ ունի և լրացուցիչ օգնության կարիք չունի: Սարդարապատի տակ ահեղ մարտերն ընթացան մի քանի օր շարունակ: Մայիսի 26-ին՝ երեկոյան, Ազգային խորհուրդը հավաքվել և սրտատրոփ սպասում էր ճակատամարտի ելքին: Ստացվեց զորավար Սիլիկյանի զեկուցումը. «16-ժամյա համառ մարտերից հետո թշնամին ջախջախված է»: Բոլորի աչքերի մեջ արցունքներ երևացին: Հաղթանակն ապահովված էր:

ԹԵՄԱ 14-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 1917թ. դեկտեմբերին կնքված զինադադարի համաձայն՝ ռուսական զորքերը դուրս բերվեցին Արևմտյան Հայաստանից: Կովկասյան ռազմաճակատը սկսեց քայքայվել: Այդ պայմաններում ինքնապաշտպանության նպատակով ստեղծվեցին հայկական ազգային զորամիավորումներ: Այդ զորամիավորումները կազմակերպելու համար հրավիրվեցին ռուսական բանակի հայազգի գեներալներ և բարձրաստիճան սպաներ՝ Թ. Նազարբեկյան, Մ. Սիլիկյան, Դ. Բեկ-Փիրումյան և ուրիշներ:
2. Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրով Թուրքիային հանձնվեցին մի շարք հայկական տարածքներ: Երկու պետությունների միջև հաստատվեցին այն սահմանները, որոնք գոյություն ունեին մինչև 1877–1878թթ. ռուս-թուրքական պատերազմը: Անդրկովկասի Սեյմը պայմանագիրը չճանաչեց, նա նախընտրեց Տրապիզոնում անջատ հաշտություն կնքել Թուրքիայի հետ: Թուրքական շարունակվող առաջխաղացման պայմաններում ընթացող բանակցություններն ավարտվեցին անարդյունք:
3. Օսմանյան Թուրքիայի հետևողական պնդմամբ՝ հայտարարվեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից: Թուրքիան ստացավ գործողությունների լիակատար ազատություն: Կարճ ժամանակում հակառակորդը նվաճեց Կարսը, Ալեքսանդրապոլը և մոտեցավ Երևանին:
4. Հայրենիքի պաշտպանության համար ոտքի ելավ ժողովուրդը: 1918թ. մայիսի 22–28-ը Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում հայկական ուժերը ջախջախեցին թուրքերին, կասեցրին նրանց հետագա առաջխաղացումը:
5. Մայիսյան հերոսամարտը ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակն էր: Այն դարձավ նոր ժամանակների Ավարայրը և հիմք հանդիսացավ Հայաստանի անկախության համար:

ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

19-րդ դարի երկրորդ կեսին գիտության ու տեխնիկայի հայտնագործությունները (հեռախոս, ռադիոկապ, ավտոմեքենա, օդանավ և այլն) մեծապես նպաստեցին աշխարհի տարբեր մասերում ապրող ժողովուրդների շփումներին և մշակույթի վերելքին: Համընդհանուր նվաճումներն իրենց բարերար ներգործությունն ունեցան տարբեր ժողովուրդների, այդ թվում և հայ մշակույթի վրա: Հայ ժողովրդի զավակները, շփումների մեջ լինելով Եվրոպայի և Ռուսաստանի կենտրոնների հետ, յուրացնում էին այնտեղ ստեղծված արժեքները և ձգտում առաջավոր գաղափարներով լուսավորել հայրենիքն ու հայրենակիցներին:

Արևելահայերը կապված էին գերազանցապես ռուսական, իսկ արևմտահայերը՝ ֆրանսիական մշակույթի հետ: Ճակատագրի բերումով հայ ժողովրդի մի զգալի մասը ցրված էր աշխարհով մեկ: Հետևաբար՝ հայկական մշակույթը պահպանվում ու զարգանում էր նաև նշանավոր հայկական գաղթավայրերում:

Այս շրջանում վերջնականապես ձևավորվեցին հայ նոր գրականությունը, աշխարհաբար գրական լեզուն, հիմնվեցին կուլտուր-կրթական բազմաթիվ ընկերություններ, զարգացան մամուլը, հրապարակախոսությունը, արվեստը, առհասարակ մշակույթը իր բազում ճյուղերով:

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դպրոց: Նախորդ դարաշրջանում, ինչպես տեսանք, հայկական մշակույթը զարգանում էր հիմնականում արտերկրների հայկական գաղթավայրերում: Մոսկվան, Պետերբուրգը, Թիֆլիսը, Կ. Պոլիսը, Վենետիկը, Զմյուռնիան, Նոր Նախիջևանը հայ մշակույթի նշանավոր կենտրոններ էին: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին հայ մտավորականությունը սկսում է իր գործունեությունը տարածել նաև մայր հայրենիքում՝ Հայաստանում: Այս շրջանում հայկական գավառներում բացվեցին բարեկարգ դպրոցներ, հիմնվեցին տպարաններ, գրադարաններ, լույս տեսան պարբերականներ, Էջմիածնում հիմնադրվեց (1874թ.) ճեմարան, որը իր հիմնադրի՝

Գևորգյան ճեմարանը (1874թ.)

Գևորգ IV կաթողիկոսի անունով կոչվեց Գևորգյան: Արդյունավետ գործող Լազարյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի հետ Գևորգյան ճեմարանը դարձավ գիտակրթական կենտրոն: 1860–1870-ական թվականներին Թիֆլիսում, Երևանում, Շուշիում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում բացվեցին իգական դպրոցներ: Այս շրջանում ևս ուսուցման տարածված տեսակը եկեղեցիներին առընթեր ծխական դպրոցներն էին, որոնք անմխիթար վիճակում էին: Գյուղերի մեծ մասը դպրոց չուներ: Ուսուցիչների մեծ մասը թերի կրթություն ուներ և նյութական ծանր կացության մեջ էր:

Գևորգ IV Կոստանդնուպոլսեցի (1813–1882)

Ցարական կառավարությունը, ռուսացման քաղաքականություն վարելով, փաստորեն խոչընդոտում էր կրթության գործին: Հատկապես 1880–1890-ական թվականներին իշխանությունները բռնի մեթոդներով փակեցին հայկական շատ դպրոցներ: Այդուհանդերձ հասարակական կյանքի ընդհանուր առաջընթացը կատարում էր իր դերը: Հենց այդ նույն տասնամյակներին հրապարակ եկան բարեգործական և հասարակական այլ կազմակերպություններ, որոնք մեծապես նպաստում էին կրթական գործին:

Ուսումնակրթական գործը մեծապես հովանավորող Գևորգ կաթողիկոսի կարգադրությամբ բարեկարգվեցին և բոլոր գյուղերում բացվեցին եկեղեցական ծխական դպրոցներ: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Անդրկովկասի եկեղեցական-ծխական դպրոցների թիվը անցնում էր 400-ից, ուր սովորում էին 30 հազարից ավելի աշակերտներ:

Կրթական գործը աշխուժություն ապրեց նաև արևմտահայության շրջանում: Այնտեղ ստեղծվեցին տարբեր անուններով բազմաթիվ ընկերություններ, որոնք մեծապես նպաստում էին ուսումնական գործին: 1870-ական թվականներին Թուրքիայում գործում էին 450-ից ավելի հայկական դպրոցներ, իսկ XX դ. սկզբին նրանց թիվը անցնում էր 800-ից: Կ. Պոլսի մոտ գտնվող Արմաշի վանքում հիմնվել էր եկեղեցական բարձրագույն ուսումնարան, որը պետք է նույն դերը կատարեր, ինչ Գևորգյան ճեմարանը Արևելյան Հայաստանում: Նշանավոր էին Պետերբուրգի բարերար Սանասարյանի՝ Կարինում հիմնած (1881թ.) վարժարանը, Վանի Երամյան, Սանդուխտյան դպրոցները, Ղալաթիայի կենտրոնական վարժարանը և ուրիշներ:

Վենետիկի Սբ Ղազար կղզին

Հայկական դպրոցներ են հիմնվում նաև Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Բուլղարիայի և այլ երկրների հայկական գաղութներում: Այդ դպրոցներից Մխիթարյանների Փարիզի Մուրադյան և Վենետիկի Ռաֆայելյան վարժարանները 1870թ. Վենետիկում միավորվեցին՝ կազմելով Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը: Այս վարժարանի հեղինակությունը աստիճանաբար այնքան բարձրացավ, որ իտալական կառավարությունը նրան շնորհեց պետական միջնակարգ դպրոցի կարգավիճակ:

Ծխական դպրոցներում դասավանդում էին հիմնականում կրոն և հայոց լեզու, իսկ մյուս ուսումնական օջախներում՝ նաև պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, օտար լեզու, վայելչագրություն, երգեցողություն և այլ առարկաներ:

Մանկավարժական բեղմնավոր աշխատանք են կատարել, դպրոցական ծրագրեր, դասագրքեր կազմել Մ. Մամուրյանը, Պ. Շանշյանը, Ղ. Աղայանը, Ա. Բահաթյանը, Ռ. Պերպերյանը, Ստ. Մալխասյանցը և շատ ուրիշներ:

Հատկանշական է, որ դարի երկրորդ կեսին հիմնվեցին ուսումնակրթական նոր կենտրոններ: 1874թ. բացվեց Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Կրթական այս կենտրոնը բեղուն գործունեություն ունեցավ և տվեց մշակույթի, գիտության, մանկավարժության շատ նշանավոր գործիչներ: Կոստանդնուպոլսում՝ Կեդրոնական, Վանում Երամյան վարժարանները բացվեցին, Նոր Նախիջևանում՝ թեմական, Էրզրումում՝ Սանասարյան դպրոցները, իսկ Երևանում՝ գիմնազիա: Թիֆլիսում, Երևանում, Բաքվում, Ախալցխայում, Ալեքսանդրապոլում և այլ տեղերում բացվեցին իգական դպրոցներ: Կրթական-լուսավորական իրենց առաքելությունները լավագույնս իրականացնում էին դարի առաջին կեսին հիմնված Մոսկվայի Լազարյան ճեմարանը և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 90-ական թվականների կեսերին երկրամասի դպրոցներում սովորում էին 30 հազարից ավելի հայ աշակերտներ:

Գիտություն: Հայ գիտական միտքը 19-րդ դարի երկրորդ կեսին զարգացավ գերազանցապես հայոց պատմության, լեզվի և հայագիտության մյուս ճյուղերի ուսումնասիրության ուղղությամբ: Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանը, որը երբեք չէր եղել Հայաստանում, ստեղծեց

պատմաաշխարհագրական մի շարք հիմնարար աշխատություններ («Շիրակ», «Սիսուան», «Այրարատ» և այլն)։ Նա թողել է ավելի քան 45 հատոր հայագիտական գործեր։ Մաղաքիա Օրմանյանը իր ծանրակշիռ «Ազգապատում» աշխատության մեջ ներկայացրեց հայ եկեղեցու ամբողջական պատմությունը։ Լազարյան ճեմարանի դասախոս Մկրտիչ Էմինը վիթխարի աշխատանք կատարեց միջնադարյան հայ պատմիչների երկերը ռուսերեն և ֆրանսերեն թարգմանելով։ Դրանով նա օտարազգի ժողովուրդներին ծանոթացնում էր հայոց մեծարժեք գրավոր ժառանգությանը։

Ղևոնդ Ալիշան (1820–1901)

Հայ պատմագիտության զարգացման գործում լուրջ ներդրում ունեն Ստ. Պալասանյանը, Ք. Պատկանյանը, Գր. Խալաթյանը, Ա. Գարգաշյանը, Ա. Երիցյանը և ուրիշներ։ Գարեգին Սրվանձտյանը բեղմնավոր աշխատանք կատարեց բանահյուսության ասպարեզում։ Նա հայտնաբերեց «Սասնա ծռեր» դյուցազնավեպը։ Ազգագրության մեջ մեծ է Երվանդ Լազարյանի վաստակը։

Գիտության զարգացումը մեծ չափերով խթանվեց 20-րդ դարի սկզբներին, որն իր արգասավոր պտուղները տվեց նաև հայ իրականության մեջ։ Լեզվաբան Հրաչյա Աճառյանը հեղինակեց արժեքավոր աշխատություններ հայոց և ընդհանուր լեզվաբանության բնագավառում։ Մանուկ Աբեղյանը հիմնավոր ուսումնասիրեց հայ հին և միջնադարյան գրականությունը և ժողովրդական բանահյուսությունը։ Պատմության և գրականության ասպարեզում բեղմնավոր աշխատանք կատարեց Լեոն (Առաքել Բաբախանյան)։ Միջնադարյան Հայաստանի պատմությունը խորությամբ հետազոտեց Նիկողայոս Ադոնցը։

Մանուկ Աբեղյան (1865–1944)

19-րդ դարի երկրորդ կեսին լուրջ տեղաշարժեր կատարվեցին նաև բնական գիտությունների մեջ։ Գունավոր հեռուստատեսության և այլ հայտնագործությունների հեղինակ էր Հովհաննես Ադամյանը։ Երկրաբան և քիմիկոս Անդրեաս Արծրունին, որն ավարտել էր Պետերբուրգի և Հայդելբերգի համալսարանները, ուսումնասիրել է Կովկասի և Ուրալի օգտակար հանածոների հանքավայրերը։ Նա՝ առաջնակարգ գիտական հետազոտությունների համար, իսկ Քերովբե Պատկանյանը հումանիտար գիտություններում ընտրվում են Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ։ Բժիշկ Մարգար Առուստամյանը հռչակվեց պրակտիկ գործերով։ Նա խիզախ պայքար կազմակերպեց Աստրախանում

Լեո (1860–1932)

1893թ. բռնկված ու համընդհանուր տագնապ առաջացրած խոլերայի դեմ և փրկեց հազարավոր մարդկանց: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել նրա անձնվեր գործունեությունը:

Քիմիայի բնագավառում մեծ անուն է վաստակել մի շարք աշխատությունների հեղինակ Հակոբ Չամչյանը (1857–1921), որը գործել է Իտալիայում: Բժշկության ու բուսաբանության ասպարեզում հայտնի են Ս. Շահամիրյանը, Ն. Տաղավարյանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչը նպաստեց հայկական մշակույթի վերելքին 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Որո՞նք էին հայկական մշակույթի զարգացման կենտրոնները:
2. Որո՞նք էին ցարական իշխանությունների կողմից հայկական դպրոցների փակման պատճառները:
3. Թվարկե՛ք նոր բացված դպրոցները: Որո՞նք են դրանցից նշանավորները: Ի՞նչ դեր խաղացին դրանք կրթական գործում:
4. Թվարկե՛ք գիտության այն ճյուղերը, որոնք բարձր զարգացման հասան:
5. Ի՞նչ հաջողություններ ձեռք բերվեցին բնագիտության բնագավառում: Ովքե՞ր են այդ ոլորտի նշանավոր ներկայացուցիչները:
6. Լրացրե՛ք «Գիտությունը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին» աղյուսակը:

Բնագավառները	Ներկայացուցիչները	Գործունեությունը (երկեր)	Նշանակությունը
Պատմագիտություն			
Լեզվաբանություն			
Բնական գիտություններ			

ԹԵՍՏ

«Շիրակ» աշխատության հեղինակն է.

1. Մաղաքիա Օրմանյանը,
2. Ղևոնդ Ալիշանը,
3. Նիկողայոս Ադոնցը,
4. Գարեգին Սրվանձտյանը:

2. ՄԱՄՈՒԼ: ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մամուլ: Աննախադեպ զարգացում ապրեց հայական մամուլը: Եթե 19-րդ դարի առաջին կեսին հրատարակվել էին ընդամենը 30, դարի երկրորդ կեսին՝ 246 անուն թերթ ու ամսագիր, ապա 20-րդ դարի սկզբին այդ թիվը հասավ շուրջ 600-ի: Դա պատկառելի թիվ է, որ հատուկ է քիչ ժողովուրդների մշակույթին: Հայ պարբերական մամուլի հիմնական կենտրոններն են դառնում Թիֆլիսը և Կոստանդնուպոլիսը:

«Մշակ» թերթի գլխագիրը

Թիֆլիսում հրատարակվում էին «Մշակ» օրաթերթը, «Մուրճ» ամսագիրը, «Նոր դար», «Փորձ», «Արձագանք» և այլ պարբերականներ: Կոստանդնուպոլսում լույս էին տեսնում «Մասիս», «Մեղու», «Արևելք» օրաթերթերը: Փարիզում հրատարակվում էին «Արևելք» և «Արևմուտք» պարբերականները: Բազմաթիվ թերթեր էին լույս տեսնում Զմյուռնիայում, Մոսկվայում և այլ քաղաքներում:

Գրիգոր Արծրունու «Մշակ» թերթը լուրջ ազդեցություն ունեցավ ժամանակի առաջավոր, հայրենասեր երիտասարդության վրա: Լայն ճանաչում գտած պարբերականների կողքին դրասկզբին աչքի ընկան Արշակ Չոպանյանի «Անահիտ»-ը (Փարիզ), Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ»-ը (Թիֆլիս): Մանուկների սիրելի հանդեսը դարձավ «Հասկեր»-ը:

Դարի վերջին տասնամյակներում հրապարակ եկավ կուսակցական մամուլը՝ Հնչակյան կուսակցության օրգան «Հնչակ»-ը, Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնական թերթը՝ «Դրոշակ»-ը, և այլ պարբերականներ: Մարքսիստական գաղափարախոսությամբ տոգորված սոցիալ-դեմոկրատական մամուլի օրգաններն էին «Պրոլետարիատ»-ը, «Կայծ»-ը, «Նոր խոսք»-ը և ուրիշ թերթեր: Կուսակցական մամուլը արծարծում էր հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության խնդիրները, միաժամանակ քարոզում իր կուսակցության գաղափարախոսությունը:

Հայ պարբերական մամուլը վիթխարի դեր կատարեց հայ հասարակական-քաղաքական մտքի, գիտամշակութային կյանքի զարգացման, եվրոպական քաղաքակրթության արժեքները հայ իրականության մեջ տարածելու գործում:

Գրականություն: Այս շրջանում գրականությունն աննախընթաց վերելք ապրեց, թևակոխեց զարգացման մի նոր աստիճան:

1850–60-ական թվականներին շարունակում էր հնչել Միքայել Նալբանդյանի՝ ազատության կոչող մարտական քնարը: Ռափայել Պատկանյանի (Գա-

մառ-Քաթիպա) ստեղծագործությունները հատկանշվում են խոշոր պետությունների վարքագիծը բացահայտելու, մերկացնելու և հայերին զենքի կոչելու ջերմ հայրենասիրությամբ ու ազատասիրությամբ: Նրա «Արաքսի արտասուքը» բանաստեղծությունը դարձավ հայ ժողովրդի սիրած երգերից մեկը:

Հակոբ Պարոնյան (1843-1891)

Մեծ վիպասան Րաֆֆին իր ազգային-ազատագրական գաղափարներն արտահայտել է «Խենթը», «Կայծեր», «Դավիթ-Բեկ», «Սամվել» վեպերում:

Հակոբ Պարոնյանը մեծ երգիծաբան էր: Նրա ստեղծագործությունները («Ազգային ջոջեր», «Պաղտասար աղբար», «Մեծապատիվ մուրացկաններ» և այլն) ուղղված էին աշխատավոր մարդու շահերի պաշտպանությանը: Սուր գրչով նա միաժամանակ խարազանում էր սուլթանական կարգերի և արևմտաեվրոպական տերությունների խարդախ քաղաքականությունը:

Գաբրիել Սունդուկյան (1825-1912)

Գաբրիել Սունդուկյանը մեծապես նպաստեց հայ թատերական արվեստի զարգացմանը: Նա իր պիեսներում («Խաթաբալա», «Էլի մեկ զոհ», «Քանդված օջախ», «Պեպո») ներկայացրեց կյանքի իրական պատկերը: Պաշտպանելով աշխատավորների շահերը՝ նա անարգանքի սյունին գամեց պորտաբույծ հարուստներին:

Հայ գրողներից և ոչ մեկը այնպես խորաթափանցությամբ ու հարազատորեն չի մարմնավորել մեր ժողովրդի ազգային ոգին, ինչպես արել է Հովհաննես Թումանյանը:

Ավետիք Իսահակյան (1875-1957)

Հովհաննես Թումանյան (1869-1923)

Հայ գրականության մնայուն արժեքները՝ «Անուշ»-ը, «Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Թմկաբերդի առումը», «Գիքորը» և մյուս ստեղծագործությունները դրա լավագույն ապացույցն են: Նույնքան մեծ է Ամենայն հայոց բանաստեղծը որպես քաղաքացի, ազգային գործիչ:

Ավետիք Իսահակյանը հայ նոր գրականության սիրո խոշորագույն երգիչն էր: Ալ. Շիրվանզադեն իր ստեղծագործություններով թափանցում էր կյանքի խորքերը:

Այս շրջանում իրենց գործերով հայ գրականության մեջ մեծ հետք թողեցին Հ. Հովհաննիսյանը, Ղ. Աղայանը, Մուրացանը, Պ. Պռոշյանը, Վ. Տերյանը, Նար-Դոսը և շատ այլ գրողներ: Գրականության մեջ կատարվող առաջընթաց տեղաշարժերը հատուկ էին նաև արևմտահայությանը:

Իբրև բանաստեղծ, արձակագիր և դրամատուրգ ինքնատիպ է Լևոն Շանթը: Արձակի մեջ նշանավոր է նաև Ավետիս Ահարոնյանը: Նրա ստեղծագործությունները աչքի են ընկնում ժանրային բազմազանությամբ:

Արևմտահայ արձակի զարգացումը շատ բանով կապվում է Արփիար Արփիարյանի անվան հետ: Իր ստեղծագործությունների մեջ նա մերկացնում է հասարակության մեջ տիրող անարդարությունները: Սոցիալական ու քաղաքական երգիծանքի փայլուն ներկայացուցիչն էր Երվանդ Օտյանը:



Վահան Տերյան
(1885–1920)

Արևմտահայ պոեզիայի և արձակի մնայուն գործերի հեղինակ, երիտասարդ, շատ տաղանդավոր դեմքեր՝ Գր. Զոհրապը, Ռ. Սարդարյանը, Սիամանթոն, Դ. Վարուժանը, Ռ. Սևակը և ուրիշներ, զոհ դարձան թուրքական բարբարոսություններին:

Գրիգոր Զոհրապ
(1861–1915)

Ավետիս Ահարոնյան
(1866–1948)

Դանիել Վարուժան
(1884–1915)

Սիամանթո
(1878–1915)

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ որո՞նք էին ամենանշանավոր պարբերականները: Ի՞նչ դեր կատարեց մամուլը հայ հասարակական կյանքում:
2. Ինչպե՞ս էր արտացոլվում հայ իրականությունը գրականության մեջ: Ի՞նչ թեմաներ էին գերակշռում հայ գրողների ստեղծագործություններում: Դրանցից որո՞նք են ձեր սրտին մոտ ու հարազատ:
3. Լրացրե՛ք «Հայ գրողները» աղյուսակը:

Գրողները	Ստեղծագործությունները	Թեմատիկան
Ռ. Պատկանյան		
Ռաֆֆի		
Հ. Պարոնյան		
Գ. Սունդուկյան		
Հ. Թումանյան		

ԹԵՍՏ

Համապատասխանեցրեք հեղինակի անունը ստեղծագործությանը.

1. Հովհաննես Թումանյան,	ա) «Արաքսի արտասուքը»,
2. Հակոբ Պարոնյան,	բ) «Կայծեր»,
3. Ռափայել Պատկանյան,	գ) «Էլի մեկ զոհ»,
4. Ռաֆֆի,	դ) «Թմկաբերդի առումը»:

3. ԱՐՎԵՍՏ

Թատրոն: 19-րդ դարի երկրորդ կեսին թատերական կյանքում մեծ փոփոխություններ կատարվեցին, նաև սիրողական մակարդակից վերաճելով՝ թատրոնը դարձավ արվեստի մասնագիտացված մի ճյուղ: Կազմակերպվեցին դերասանական մշտական խմբեր, հանդես եկավ տաղանդավոր դերասանների մի ամբողջ սերունդ: Փոխայցելություն ու համագործակցություն ստեղծվեց արևելահայ և արևմտահայ նշանավոր թատերական խմբերի միջև: Ձևավորվեցին դրամատիկական արվեստ սիրողների մի շարք ընկերություններ:

Կ. Պոլսում 1868թ. Հակոբ Վարդովյանը հիմնում է թատերախումբ և ներկայացումներ տալիս հայերեն ու թուրքերեն լեզուներով: Նա իրավամբ համարվում է ինչպես հայ, այնպես էլ թուրքական թատրոնի հիմնադիրը: Թատերական արվեստում փայլեց Պետրոս Ադամյանը: Նա 1879թ. Կ. Պոլսից մեկնեց Ռուսաստան, հանդես եկավ Թիֆլիսի, Մոսկվայի, Պետերբուրգի, Նոր Նախիջևանի և մի շարք այլ քաղաքների բեմերում և շեքսպիրյան դերերով մեծ հռչակ ձեռք բերեց: Իրենց դերասանական գործունեությամբ փառաբանվեցին նաև Գևորգ Չմշկյանը, Հովհաննես Աբելյանը, Սիրանույշը և շատ ուրիշներ:



Պետրոս Ադամյան (1849–1891)

Երաժշտություն: 19-րդ դարի երկրորդ կեսը շրջադարձային եղավ նաև երաժշտության համար: Հայրենասեր շատ մտավորականներ զբաղվեցին երաժշտությամբ, կազմվեցին երգարաններ, երգչախմբեր, սկսեցին մշակվել ժողովրդական երգերը:

Երաժշտության բնագավառում հռչակվեցին հատկապես Տիգրան Չուխաջյանը, Քրիստափոր Կարա-Մուրզան, Մակար Եկմալյանը: Տ. Չուխաջյանը «Արշակ Երկրորդ» հայկական առաջին օպերայով (1868թ.) հիմք դրեց հայկական օպերային արվեստին: Եկմալյանը և Կարա-Մուրզան ձայնագրել ու մշակել են հարյուրավոր ժողովրդական երգեր:

Կոմիտաս (1869–1935)

Հանճարեղ երգահան Կոմիտասը գրի առավ հարյուրավոր ժողովրդական երգեր, մշակեց, մաքրեց օտարամուտ տարրերից և վերստին վերադարձրեց ժողովրդին որպես երաժշտական գոհարներ: Դրանցից են «Կալի երգը», «Հոյ արա, եզո», «Գարուն ա», «Կռունկ» և մյուս ստեղծագործությունները: Նա, համերգներով ու դասախոսություններով հանդես գալով Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի և այլ երկրների տարբեր քաղաքներում, ներկայացրեց հայ երաժշտական արվեստը, ապացուցեց նրա ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը:

Դարերի ընթացքում հայ երաժշտությունը զարգացել էր միաձայնության ուղղությամբ: Այս շրջանում երգահաններ Ք. Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Մ. Եկմալյանի շնորհիվ տարածում գտավ բազմաձայն, խմբակային երաժշտությունը:

Հովհաննես Այվազովսկի (1817–1900)

Կերպարվեստ: Այս շրջանում հայ կերպարվեստը նույնպես ծաղկում ապրեց: Այդ հաջողությունների համար պարտական ենք մի խումբ ստեղծագործողների, որոնց մեջ առանձնակի տեղ է գրավում Հովհաննես Այվազովսկին: Նա դարձավ ժամանակի միջազգային անուն վաստակած անզուգական ծովանկարիչներից մեկը: Այվազովսկու ստեղծագործություններում որոշակի տեղ է հատկացված նաև հայկական թեմաներին («Արարատ», «Սևանա լիճ», «Հայերի ջարդը Տրապիզոնում 1895թ.» և այլն):

Վարդգես Սուրենյանց (1860–1921)

Այդ տասնամյակներում են ստեղծագործել դիմանկարիչ Հակոբ Հովնաթանյանը, բնանկարիչ Գևորգ Բաշինջաղյանը, Ստեփան Ներսիսյանը, Վարդգես Սուրենյանցը, Փանոս Թերլեմեզյանը, Եղիշե Թադևոսյանը, Սեդրակ Առաքելյանը, նշանավոր քանդակագործներ Հակոբ Գյուրջյանը, Անդրեաս Տեր-Մարուքյանը: Վերջինս Փարիզում կերտել է Խ. Աբովյանի արձանը, որն այժմ դրված է գրողի ծննդավայրում:

Ճարտարապետություն: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, տնտեսական կյանքի զարգացման հետ, Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում աշխուժանում է քաղաքաշինությունը: Սկսվում են քաղաքների բարեկարգման և կառուցապատման աշխատանքները: Միաժամանակ ծավալվում է վարչական, ուսումնական շենքերի, առանձնատների շինարարությունը: Հրապարակ են գալիս մի շարք հայ ճարտարապետներ, որոնց նախագծերով կառուցված շենքերը զարդարում են Անդրկովկասի քաղաքները: Արվեստի այս ճյուղում մեծ է Թորոս Թորամանյանի վաստակը:

Արևմտյան Հայաստանում ճարտարապետության զարգացման համար պայմաններն անբավարար էին: Սակայն Կ. Պոլսում շարունակում էին գործել Պալյան ճարտարապետական նշանավոր գերդաստանի ժառանգները: Նրանց նախագծերով կառուցվում էին տարբեր բնույթի շենքեր, որոնք աչքի էին ընկնում իրենց բարձր արվեստով:

Այսպիսով՝ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին հայկական մշակույթն իր բոլոր ճյուղերով ու դրսևորումներով վիթխարի զարգացում ապրեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ կարևոր փոփոխություն կատարվեց թատրոնում:
2. Ո՞վ է համարվում հայ և թուրք թատրոնների հիմնադիրը: Նշե՛ք հայ բեմի մեծ վարպետներին:
3. Ի՞նչ փաստեր կարող եք բերել երաժշտության զարգացման օգտին: Ո՞ւմ անվան հետ է կապվում հայ ժողովրդական երգերի մշակումը: Թվարկե՛ք նրա լավագույն ստեղծագործություններից մի քանիսը:
4. Ովքե՞ր աչքի ընկան կերպարվեստի բնագավառում: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
5. Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ էր պայմանավորված ճարտարապետության զարգացումը:
6. Լրացրե՛ք «Արվեստը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին» աղյուսակը:

Արվեստի ճյուղերը	Արվեստագետները	Ստեղծագործությունները	Նշանակությունը
Թատրոն			
Երաժշտություն			
Կերպարվեստ			
Ճարտարապետություն			

ԹԵՍՏ

«Հայերի ջարդը Տրապիզոնում 1895թ.» նկարի հեղինակն է.

1. Գևորգ Բաշինջաղյանը,
2. Եղիշե Թադևոսյանը,
3. Սեդրակ Առաքելյանը,
4. Հովհաննես Այվազովսկին:

ԹԵՄԱ 15-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները պայմա-

նավորեցին հայկական մշակույթի աննախադեպ զարգացումը՝ այն հասցնելով նոր որակի։

2. Չնայած հալածանքներին և բազմաթիվ խոչընդոտներին՝ զարգանում էր հայկական դպրոցը։ Ե՛վ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստանում գործում էին նշանավոր կրթօջախներ։ Ուսումնական նոր կենտրոններից նշանավոր էին Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Կ. Պոլսի Կեդրոնական, Վանի Երամյան վարժարանները, Երևանի գիմնազիան և այլն։
3. Գիտության ասպարեզում առանձնապես զարգացել էր հայագիտությունը։ Իրենց հիմնարար աշխատություններով լուրջ ներդրում կատարեցին Ղ. Ալիշանը, Մ. Օրմանյանը, Ստ. Պալասանյանը, Ն. Ադոնցը, Լեոն, Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը և ուրիշներ։ Բնական գիտությունների ասպարեզում աչքի ընկան Ա. Արծրունին, Ձ. Չամչյանը, Մ. Առուստամյանը։
4. Բուռն վերելք ապրեց հայ մամուլը։ Նշանավոր պարբերականներից էին «Մշակ»-ը, «Մուրճ»-ը, «Հնչակ»-ը, «Դրոշակ»-ը, «Փորձ»-ը, «Մասիս»-ը, «Մեղու»-ն և այլն։
5. Հայ գրողների ստեղծագործությունները հատկանշվում են ջերմ հայրենասիրությամբ ու ազատասիրությամբ (Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Ռաֆֆի, Մուրացան և ուրիշներ)։

   Իրենց տաղանդի ողջ խորությամբ փայլեցին Հ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը, Գ. Սունդուկյանը, Հ. Պարոնյանը, Վ. Տերյանն ու Շիրվանզադեն, Սիամանթոն ու Դ. Վարուժանը, Ա. Չոպանյանը, Լևոն Շանթը, Ավ. Ահարոնյանը և ուրիշներ։
6. Ջգալի վերելք ապրեց հայ թատրոնը։ Դերասանական անզուգական վարպետությամբ մեծ հռչակ ձեռք բերեցին Պ. Ադամյանը, Գ. Չմշկյանը, Սիրանույշը և ուրիշներ։

   Երաժշտության ասպարեզում մեծ նվաճում էր Տ. Չուխաջյանի «Արշակ Երկրորդ» օպերան։

   Նշանավոր երգահան Կոմիտասը հավաքեց, գրի առավ և մշակեց շուրջ 3000 ժողովրդական երգեր։
7. Այդ ժամանակաշրջանում համաշխարհային ճանաչում ունեցող ծովանկարիչներից էր Հովի. Այվազովսկին։ Իրենց կտավներով հիացմունք են պատճառում Վ. Սուրենյանցը, Գ. Բաշինջաղյանը, Փ. Թերլեմեզյանը և ուրիշներ։
8. Հայ ճարտարապետների նախագծերով ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Թուրքիայում (Պալյան ճարտարապետական նշանավոր գերդաստանի ժառանգների կողմից) կառուցվել են բազմաթիվ շենքեր, առանձնատներ։

ԲԱԺԻՆ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ

Նոր շրջանում հայ ժողովրդի մի հատվածը շարունակում էր գոյատևել իր պատմական հայրենիքից դուրս, աշխարհի տարբեր երկրներում:

Նրանք, հյուրընկալ երկրի տնտեսական, քաղաքական մշակութային կյանքին ենթակա լինելով հանդերձ, պահպանում էին հարազատ ժողովրդի լեզուն, սովորությունները, մշակույթը:

Հայկական գաղութները նշանակալի դեր են կատարել հայ և օտար ժողովուրդների հարաբերություններում:

Այս շրջանում իրենց գոյությունը պահպանեցին դեռևս միջնադարից եկող շատ գաղթօջախներ: Դրանց զուգահեռ՝ Ռուսաստանում, Արևմտյան Եվրոպայում ձևավորվեցին հայկական կենսունակ համայնքներ: Հայկական գաղութներում ոչ միայն պահպանվեցին, այլև զարգացան հայկական մշակութային ավանդույթները:

1. ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Սիրիա և Լիբանան: Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Սիրիայի և Լիբանանի մի շարք բնակավայրերում՝ Հալեպում, Լաթաքիայում, Բեյրութում, կային հայկական համայնքներ: 1880–1890-ական թվականներին այդ երկու երկրներում հայերի թիվը հասնում է 80 հազարի:

Բեյրութ, Բուրջ-Համուդ հայկական թաղամաս

Հայերը զբաղվում էին գյուղատնտեսությամբ, գլխավորապես՝ այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, շերամապահությամբ: Արհեստներից լայն տարածում ունեին ջուլհակությունը, կաշեգործությունը, ոսկերչությունը:

Նշանակալի էր այս գաղթավայրերի հայերի առևտրական գործունեությունը: Ներքին առևտրից բացի՝ հայերն ակտիվորեն մասնակցում էին արտաքին մեծածավալ առևտրին:

Ինչպես 1895–1896թթ., այնպես էլ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Սիրիայի և Լիբանանի հայերը ծանր կորուստներ կրեցին: Նրանք Արևմտյան Հայաստանի հետ ենթարկվեցին թալանի և կոտորածների:

Հալեպի հայկական եկեղեցին

Այդ երկրների հայկական գաղութները զրկված են եղել մշակույթը լայնորեն զարգացնելու հնարավորությունից: Դպրոցներից նշանավոր էին Հալեպի Ներսիսյան վարժարանը և Զմառի հայ կաթոլիկ վանքի դպրոցը: 20-րդ դարի սկզբներին լույս տեսան պարբերականներ, ստեղծվեցին թատերախմբեր, երգչախմբեր: Մի շարք հայեր նշանակալի դեր կատարեցին արաբական մշակույթի և գիտության զարգացման գործում:

Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա: Տակավին միջնադարում ձևավորված Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայկական գաղութները նոր շրջանում վերելք ապրեցին: Երկու քաղաքներն էլ առևտրի համար աշխարհագրական հարմար դիրք ունեին:

Հայ առևտրականները Կ. Պոլսում ունեին իրենց խանութները, իջևանատները: Նրանք կապող օղակ էին Արևելքի և Արևմուտքի շատ երկրների միջև կատարվող առևտրում: Պոլսահայ բնակչության մի ստվար խավը զբաղվում էր արհեստագործությամբ: Հայ վարպետների ձեռքերով են կառուցվել բազմաթիվ պալատներ, մզկիթներ:

Պոլսահայ ստվար գաղութը 18–19-րդ դդ. այնքան հզորացավ, որ դարձավ արևմտահայության տնտեսական և մշակութային կյանքի կենտրոնը: Բավական է նշել, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում կար հայկական 80 տպարան: Այնտեղ լույս էին տեսնում տասնյակ պարբերականներ, մեծաքանակ գրքեր: Կային բազմաթիվ դպրոցներ, թատերական, երաժշտական և այլ հաստատություններ: Հայ բնակչության թիվը հասնում էր շուրջ 200 հազարի:

Կոստանդնուպոլսի համայնապատկեր

Զմյուռնիան կամ Իզմիրը գտնվում է Էգեյան ծովի ափին: Այնտեղի գաղութը փոքրաքանակ էր:

Այստեղ ևս տնտեսության հիմնական ճյուղերն էին առևտուրն ու արհեստագործությունը:

Հայ վաճառականները եվրոպական երկրներ էին արտահանում բամբակ, մրգեր, ձիթապտուղ, ծխախոտ, մորթիներ:

Արհեստագործությունը ժառանգական բնույթ էր կրում և փոխանցվում էր սերնդեսերունդ: 19-րդ դարի երկրորդ կեսին Զմյուռնիայում գործում էին ոսկերչական 30, ժամագործների 12, դերձակների 20, կոշկակարների 16 և այլ արհեստանոցներ:

Զմյուռնիան ևս հայ մշակույթի նշանավոր կենտրոն էր:

1919–1922թթ. Թուրքիայի կազմակերպած ջարդի և արտագաղթի հետևանքով Զմյուռնիայում այլևս հայ բնակչություն չմնաց: Գաղութը դադարեց գոյություն ունենալուց:

Պարսկաստանի հայկական գաղութները: Պարսկաստանի հին հայկական համայնքներն իրենց կենսունակությունը պահպանեցին նաև նոր դարաշրջանում:

Հայերը բնակվում էին գերազանցապես Հյուսիսային Պարսկաստանում՝ Թավրիզում, Խոյում, Սալմաստում, Ուրմիայում և այլ վայրերում:

Պարսկաստանի հայ բնակչությունը 19-րդ դարի առաջին կեսին հասնում էր 35–40 հազարի: Հետագայում ստվարացավ և 20-րդ դարի սկզբներին հասնում էր 180–200 հազարի:

Արհեստներից տարածված էին ոսկերչությունը, ջուլհակությունը, դարբնությունը, կաշեգործությունը: Երկրի ոսկերչական արհեստը գրեթե ամբողջությամբ հայերի ձեռքում էր:

Հայկական թաղամաս Թավրիզում

Պարսկահայերը բավականաչափ աշխույժ առևտուր էին անում երկրի ներսում և նրա սահմաններից դուրս: 19-րդ դարի երկրորդ կեսին առևտրի հետ զարգանում էր նաև արդյունաբերությունը: Կային մեծահարուստ առևտրաարդյունաբերողներ:

Պարսկական արքունիքում շատ հայեր դիվանագիտական պատասխանատու պաշտոններ էին վարում: 19-րդ դարի երկրորդ կեսին Անգլիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում պարսկական դեսպանները հայեր էին:

Եփրեմ խան
(1868–1912)

Անգլիայում դեսպան Մելքոն իշխանը Լոնդոնում հրատարակել է «Ղանուն» («Օրենք») պարբերականը, որը դեմոկրատական, սահմանադրական գաղափարներ քարոզող առաջին ամսագիրն էր պարսկական իրականության մեջ: 1905–1911թթ. բուրժուական հակաֆեոդալական հեղափոխությանը հայերը ակտիվ մասնակցություն ունեցան: Նրանցից Եփրեմ խանը դարձավ սահմանադրական շարժման առաջնորդներից մեկը:

Պարսկահայերը նկատելի հաջողությունների հասան լուսավորության և առհասարակ մշակույթի ասպարեզում:

1838թ. հայկական դպրոց է բացվում Նոր Ջուղայում: Հետագա տասնամյակներում դպրոցներ են հիմնվում Թավրիզում, Թեհրանում և այլուր: Սալմաստի գավառի հայկական 11 դպրոցներում 1904–1905թթ. սովորում էր 800 աշակերտ: 1880-ական թվականներին հայկական տպարաններ են հիմնվում մի շարք քաղաքներում: Ստեղծվում են թատերասիրական, բարեգործական և այլ հասարակական ընկերություններ:

Իրանի հայկական կենտրոններում հրատարակվեցին շուրջ երկու տասնյակի հասնող պարբերականներ:

Հայկական Սբ Թովմաս եկեղեցին Մադրասում

Հնդկաստանի հայկական գաղութները: Հայերը Հնդկաստանում բնակություն են հաստատել դեռևս 16–17-րդ դարերում:

17–18-րդ դարերում, գլխավորապես Պարսկաստանից կատարվող գաղթի հետևանքով, մի շարք համայնքներ են ձևավորվում ծովափնյա շրջաններում: Դրանցից էին Սուրհաթը, Ագրան, Մադրասը, Կալկաթան, Բոմբեյը:

Տակավին եվրոպացիների՝ Հնդկաստան թափանցելուց առաջ հայերը լայնորեն զբաղվում էին առևտրով: Նրանք շուտով ձեռք բերեցին ծովային նավեր, որոնք երթևեկում էին հայկական դրոշներով: Եվրոպացիները խոչընդոտում էին հայկական նավերի գործունեությանը:

Հայկական եկեղեցի Կալկաթայում

19-րդ դարի սկզբներին հնդկահայերի թիվը հասնում էր 20–25 հազարի: Հնդկահայերը կապեր էին պահպանում հայրենիքի՝ Հայաստանի հետ:

Հնդկահայ շրջաններում մեծ զարգացում է ապրել հայկական մշակույթը: Հնդկահայերի ամենաարժեքավոր ներդրումը հայկական առաջին պարբերականի հիմնումն է: Մադրասում, Կալկաթայում, Բոմբեյում հիմնադրվեցին մի շարք տպարաններ:

Լուսավորություն տարածելու կարևոր ձեռնարկում է Կալկաթայում 1821թ. հայկական

մարդասիրական ճեմարանի բացումը: Դպրոցն ուներ գիշերօթիկ բաժին, ուր սովորում էին նաև ուրիշ երկրների հայ համայնքների երեխաներ: Ճեմարանում դասավանդում էին նշանավոր դեմքեր՝ գրող Մեսրոպ Թաղիադյանը և ուրիշներ: 19-րդ դարի կեսերից հնդկահայ համայնքները թուլանում և կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը:

Եգիպտոս: Հայերը Եգիպտոսում հաստատվել են միջին դարերում: Միջազգային առևտրի շնորհիվ հայ համայնքները աշխուժություն ապրեցին 18-րդ դարում, սակայն Եգիպտոսը, որը գտնվում էր Թուրքիայի տիրապետության ներքո, 19-րդ դար թևակոխեց թուլացած և քայքայված: Նույն վիճակում էին նաև հայկական գաղութները: Շուտով ամբողջ երկրի հետ վերելքի ուղին են բռնում նաև հայ համայնքները: Պետությունը հովանավորում էր այլազգիների տնտեսական գործունեությունը: Սկսվում է հայերի գաղթը դեպի Եգիպտոս, մասնավորապես՝ Կահիրե և Ալեքսանդրիա:

Այդուհանդերձ Եգիպտոսի հայազգի բնակչության քանակը փոքր էր: 19-րդ դարի առաջին կեսին այն հասնում էր 3 հազարի, իսկ 20-րդ դարի սկզբներին՝ 15 հազարի:

Հայ փախստականները Եգիպտոսի Պորտ Սաիդ նավահանգստում

Արհեստներից զատ՝ հայերը կարևոր դեր էին կատարում արդյունաբերության մեջ: 19-րդ դարի վերջերից Եգիպտոսում, գերազանցապես հայ և հույն մասնագետների նախաձեռնությամբ, զարգացավ ծխախոտագործությունը: Եգիպտոսի ծխախոտի արտադրության կեսից ավելին բաժին էր ընկնում հայ ձեռնարկատերերին:

Եգիպտոսի Սբ Կատարինե վանքը

Եգիպտահայերը աչքի ընկան նաև երկրի քաղաքական կյանքում: Մի շարք պետական բարձր պաշտոններ վարած Նուբար Փաշայի անվան հետ են կապվում երկրի դատական բարեփոխումները: Նրա որդի Պողոս Նուբարը գլխավորեց հայ ազգային պատվիրակությունը Փարիզում և եղավ Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հիմնադիրը (1906թ.):

Կահիրեում առաջին հայկական դպրոցը հիմնվել է 1828թ., իսկ Ալեքսանդրիայում՝ 1851թ.: 1917թ. հայկական դպրոցների թիվը հասավ 11-ի, որոնցում ուսանում էր շուրջ 1600 աշակերտ: 19-րդ դարի կեսերից այնտեղ հրատարակվում էին պարբերականներ, հիմնվում տպարաններ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հիշե՛ք՝ ինչ է գաղթօջախը: Թվարկե՛ք հայկական խոշոր գաղութները:
2. Ի՞նչ գործունեություն էին ծավալել Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութները: Ինչպիսի՞ն էր այս գաղութների մշակութային կյանքը:
3. Որո՞նք էին Թուրքիայի հայկական խոշոր գաղութները: Ինչպիսի՞ն էր նրանց վիճակը, ի՞նչ ձեռքբերումներ ունեցան:
4. Նկարագրե՛ք Պարսկաստանի հայկական գաղութները: 20-րդ դարի սկզբին որքա՞ն էր պարսկահայերի թիվը, ինչո՞վ էին նրանք զբաղվում: Նշե՛ք Պարսկաստանում բարձր դիրքի հասած հայերից մի քանիսի անուններ: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
5. Որո՞նք էին հնդկահայ նշանավոր գաղութները, ինչո՞վ էին զբաղվում հայերը այնտեղ: Ի՞նչ դիրքի էին հասել: Ինչպե՞ս էր ընթանում մշակութային կյանքը:
6. Նկարագրե՛ք Եգիպտոսի հայկական գաղութները: Նշե՛ք եգիպտահայ նշանավոր գործիչներին: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
7. Ձեր կարծիքով՝ հայկական գաղթավայրերի գոյությունը կարելի՞ է համարել մեր ժողովրդի պատմական ճակատագրի դրսևորում:
8. Լրացրե՛ք «Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները» աղյուսակը:

Երկրները	Կենտրոն-ները	Գործիչ-ները	Մշակութային արժեքները	Դերը, նշանակությունը
Սիրիա և Լիբանան				
Թուրքիա				
Պարսկաս-տան				
Եգիպտոս				
Հնդկաստան				

ԹԵՍՏ

Հայ բարեգործական ընդհանուր միությունը հիմնադրվել է.

1. 1895թ., 3. 1906թ.,
2. 1900թ., 4. 1912թ.:

2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Հայաստանի ազատագրությունը Ռուսաստանի օգնության հետ կապելու ակտիվ հետաքրքրությունների շրջանում՝ 18-րդ դարում, ձևավորվեց ռուսահայ գաղութների մեծ մասը: Ռուսաստանը իր հարավային սահմանները ընդարձակելու և Անդրկովկասում ամրանալու նպատակով հովանավորում էր անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական ձգտումները: Օգտվելով պետության այդ քաղաքականությունից՝ բազմաթիվ հայեր գաղթեցին Ռուսական կայսրության սահմանները և հիմնեցին իրենց համայնքները:

Ղրիմ: Այստեղ նշանավոր էին հատկապես Թեոդոսիայի, Հին Ղրիմի (Սուրխաթ), Եվպատորիայի, Ղարասուբազարի և այլ գաղթօջախներ:



Ղրիմի Սբ Խաչ վանքը

Հայերը ստացել էին դավանանքի ազատություն, թույլատրվում էր հիմնել հայկական դատարան (ռատուշա): Հայերի ինքնավարությունը խորհրդանշող ռատուշայում ազգային սովորությունների հիման վրա գործավարությունը տարվելու էր հայերեն լեզվով:

Ղրիմահայերը հիմնականում զբաղվում էին առևտրով, արհեստներով և գյուղատնտեսությամբ:

Խոշոր առևտրականներից շատերն ունեին ընդարձակ կալվածքներ: Նրանցից էին Նալբանդովները, Սեֆերովները, Սպենդիարովները, Այվազովսկիները և այլ գերդաստաններ: Նրանք զբաղվում էին այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, դաշտավարությամբ: Հոգևոր իշխանությունը՝ հայ եկեղեցին, ևս տիրում էր ընդարձակ կալվածքների: Սուրբ Խաչ վանքն ուներ ավելի քան 4000 դեսյատին տարածություն:

Ղրիմահայերը մշակութային աշխույժ կյանք ունեցան: 1815թ. Ղարասուբազարում, ապա Հին Ղրիմում, Թեոդոսիայում, Եվպատորիայում բացվում են դպրոցներ: 1858թ. հիմնվում է Խալիբյան ուսումնարանը: 20-րդ դարի սկզբներին Ղրիմում կար 9 տարրական դպրոց՝ 250 աշակերտով: 19-րդ դ. 60-70-ական թվականներին լույս տեսան «Մայաց աղավնի», «Դաստիարակ» պարբերականները:

Ղրիմահայերը մեր ժողովրդին տվեցին մշակույթի այնպիսի մեծանուն գործիչներ, ինչպիսիք են ծովանկարիչ Հ. Այվազովսկին, երգահան Ալ. Սպենդիարյանը և ուրիշներ:

Աստրախան: Այստեղ հայկական գաղթօջախը ձևավորվում է 17-րդ դարի առաջին կեսին: Հայերի առևտրական գործունեությունը մեծ թափ է ստանում 18-րդ դարում:

Մետաքսի ներմուծումը մնում էր որպես հումքի պահանջի բավարարման հիմնական միջոց: Տնտեսության այդ ճյուղում գլխավոր դեր էին կատարում հայերը: 18-րդ դ. վերջին Պարսկաստանից Աստրախանով ներմուծվող մետաքսի 70–80 տոկոսը հայերի ձեռքում էր:

Այդ նույն ժամանակ հիմնվում է հայկական դատարանը կամ ռաթհաուզը: Դա հայերի ներքին ինքնավարության մարմինն էր: Դատավարությունը կատարվում էր ազգային իրավական նորմերի համաձայն: Հայկական դատարանին անհրաժեշտ էր ունենալ դատաստանագիրք: Տեղի հայ մտավորականները 1765թ. ստեղծեցին «Աստրախանի հայոց դատաստանագիրքը»: Այն կազմված էր Մխիթար Գոշի (13-րդ դար) դատաստանագրքի, հայկական սովորութային իրավունքի հիման վրա՝ ռուսական օրենքների հաշվառումով: Այդ դատաստանագիրքը գործածվում էր ինչպես Աստրախանում, այնպես էլ Ղզլարում, Մոզդոկի, Նոր Նախիջևանի հայկական գաղութներում:

1870թ. բարեփոխումների ժամանակ լիովին վերացվեց համայնքի ինքնավարությունը: Սակայն դրանից հետո հիմնվեցին ազգային բարեգործական հաստատություններ, որոնք ապահովում էին հայ համայնքի ինքնավար գոյությունը:

Աստրախանի հայ համայնքն ուներ իր ուրույն մշակութային կյանքը:

1810թ. վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը բացեց իր անունը կրող դպրոց, որը գործեց ավելի քան հարյուր տարի: Այստեղ 1816 թվականին հրատարակվեց ռուսահայ առաջին պարբերականը՝ «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը: 20-րդ դարի սկզբներին հրատարակվում էին մի քանի թերթեր:

Մոսկվա, Պետերբուրգ: Մոսկվան հայերին ծանոթ էր տակավին 14-րդ դարից: Սակայն ռուսական մայրաքաղաքում հայկական համայնքը ձևավորվում է 17-րդ դարի երկրորդ կեսին: Դրան մեծապես նպաստեց 1667թ. Նոր Ջուղայի առևտրական ընկերության՝ Մոսկվայի հետ կնքած պայմանագիրը: Դրանով հնարավորություն էր ստեղծվում Վոլգայով մինչև Արխանգելսկ և ապա արտասահմանյան երկրների հետ առևտուր անելու: Մոսկվան դառնում է հայ վաճառականների, արհեստավորների, դիվանագիտական ծառայողների, արվեստագետների հանգրվան:

Այդ տարիներին Մոսկվայում հաստատվում է նկարիչ Բոգդան Սալթանովը: Նա կարևոր դեր է կատարում ռուսական գեղանկարչության մեջ: Ջուղայի վաճառական խոջա Զաքարը Ալեքսեյ ցարին է նվիրում նշանավոր «Ալմաստե գահը», որն այժմ զարդարում է Կրեմլի Ջինապալատը:

Հետագա դարերում շարունակվում է հայերի հոսքը Մոսկվա: Այնտեղ է տեղափոխվում նաև Լազարյանների գերդաստանը: Նրանք Մոսկվայում,

ապա Պետերբուրգում առևտրաարդյունաբերական լայն գործունեություն են ծավալում: Լազարյաններն իրենց բարձր դիրքն օգտագործեցին և ավելի քան մեկ դար մեծապես նպաստեցին ռուսահայերի տնտեսական և մշակութային գործունեությանը:

Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցին

Պետերբուրգի հիմնադրումից (1703թ.) մի քանի տարի անց հայերը հաստատվեցին այնտեղ: Ռուսաստանի նոր մայրաքաղաք էին գալիս հայ վաճառականները:

Համայնքն այնքան է ստվարանում, որ 18-րդ դարի վերջերին կառուցում է հայկական երկու եկեղեցի: 1781թ. Գր. Խալդարյանն այնտեղ հաստատեց Լոնդոնից տեղափոխած իր տպարանը: Հետագայում տպարանը տեղափոխվեց Նոր Նախիջևան, ապա՝ Աստրախան և ունեցավ բեղուն գործունեություն:

Այս համայնքների ինքնավարությունը իրականացնում էր եկեղեցական խորհուրդը, որը լուսավորական լայն գործունեություն ունեցավ հայ իրականության մեջ:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները: Օգտվելով հայերին շնորհված արտոնություններից՝ 1735թ. նրանցից մի խումբ հաստատվում է նորակառույց Ղզլար ամրոցում: Հայկական մեկ այլ զանգված 1763թ. բնակություն է հաստատում նոր հիմնադրված Մոզդոկ բերդ-ամրոցում: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին ձևավորվեցին Եկատերինոդարի (Կրասնոդար), Մայկոպի, Ստավրոպոլի և այլ քաղաքների հայկական համայնքները: 1839թ. չերքեզահայերը հիմնեցին Արմավիրի հայկական գաղութը:

Այդ հայկական համայնքները, մանավանդ Ղզլարը և Մոզդոկը, ստացան արտոնություններ: Նրանց թույլատրվում էր ազգային սովորույթներով դատավարություն վարել, ազատ առևտուր անել: Ղզլարը և Մոզդոկն ունեին իրենց ռաթհաուզը, որը զբաղվում էր համայնքի դատական և վարչատնտեսական գործերով:

Նորաբնակները սկսեցին մշակել բրինձ, բամբակ, քունջութ, խաղող և այլ կուլտուրաներ: Նրանք լայն չափերով զբաղվում էին հատկապես խաղողագործությամբ: Ղզլարի և Մոզդոկի հայերը թթենու մեծատարած այգիներ էին պահում մետաքս ստանալու համար:

Արդյունաբերական ճյուղերից զարգացած էր հատկապես գինու և օղու արտադրությունը, որը շատ մեծ ծավալ էր ընդունել: 1823թ. հայերին պատկանող ձեռնարկություններում արտադրվել է 96 հազար դույլ օղի:

Հյուսիսային Կովկասի հայերը ակտիվորեն մասնակցում էին երկրամասի ներքին և արտաքին առևտրին:



Դոնի Ռոստովի հայկական եկեղեցին

Երկրամասի հայ համայնքներում մշակույթն արտահայտվում էր գերազանցապես դպրոցական-կրթական և թատերաերաժշտական ասպարեզում: 1912թ. Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում դպրոցների թիվը հասնում է 34-ի: Նրանցում սովորում էր 2300 երեխա: Այդ գաղթօջախները ունեին իրենց թատերական, երաժշտական խմբերը:

Նոր Նախիջևան (Դոնի Ռոստով): Նշանավոր այս գաղութը հիմնադրվել է 1779թ.՝ Ղրիմից 12600 հայեր գաղթեցնելու միջոցով: Ռուսական կառավարությունը կազմակերպեց այդ գաղթը երկրի հարավային տափաստանները բնակեցնելու և տնտեսական կյանքը աշխուժացնելու համար: Գաղթեցված ղրիմահայերը հանգրվան են գտնում Դոնի տափաստանում և Ա. Դմիտրի (հետագայում՝ Դոնի Ռոստով քաղաք) ամրոցի մոտակայքում հիմնում Նոր Նախիջևան քաղաքը և 5 հայկական գյուղեր: Եկատերինա II կայսրուհու հատուկ հրովարտակով (1779թ. նոյեմբերի 14) ղրիմայերը նոր մեծ արտոնություններ ստացան: Նրանք հիմնեցին մագիստրատ, որը զբաղվում էր գաղութի դատական, ոստիկանական և գործադիր իշխանության հարցերով: Այլ խոսքով՝ նույն դերն էր կատարում, ինչ ուրիշ գաղութներում ռաթհաուզը:

Նոր Նախիջևանի հայկական եկեղեցին

Նոր Նախիջևանի հայերը, օգտվելով տեղի նպաստավոր պայմաններից և պետության ընձեռած հնարավորություններից, զարգացրին տնտեսության տարբեր ճյուղերը:

Գյուղատնտեսության մեջ առաջատար էր հացահատիկային կուլտուրաների, մասնավորապես ցորենի մշակումը:

Նոր Նախիջևանում զգալի հաջողության հասան արհեստագործությունը և արդյունաբերությունը: Արհեստավորներն այստեղ ևս ունեին իրենց համքարությունները, որոնք շատ նման էին Անդրկովկասի հայ համքարություններին:

Արդյունաբերությունից նշանավոր էին հատկապես ճարպահալ, բրդալվաց, ծխախոտի, աղյուսի և այլ ձեռնարկություններ: Նոր Նախիջևանը կարճ ժամանակում դառնում է Հարավային Ռուսաստանի բարեշեն և նշանավոր քաղաքներից մեկը:

Նոր Նախիջևանի գաղութը կարևոր դեր կատարեց հայ մշակույթի ավանդները պահպանելու և զարգացնելու ասպարեզում: 1880-ական թվականներին հիմնված ժառանգավորաց, արհեստավորական դպրոցների կողքին գործում էր թեմական ուսումնարանը: Հրատարակվում էին բազում թերթեր, լայն տարածում էր գտել թատերական արվեստը: Դոնի հայության մշակութային կյանքում շատ էական էր իրենց հայրենակիցներ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի դերը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս են ձևավորվել Ռուսաստանի հայկական գաղթավայրերը: Ինչո՞ւ էին ռուսական իշխանությունները հովանավորում ու արտոնություններ տալիս դրանց:
2. Թվարկե՛ք Ռուսաստանի հայկական գաղութները: Ե՞րբ են դրանք առաջացել և ի՞նչ զարգացում են ունեցել:
3. Նշե՛ք Ռուսաստանի հայկական գաղութների նշանավոր հայ գերդաստանները և նրանց լավագույն ներկայացուցիչներին: Ի՞նչ գիտեք նրանց մասին:
4. Նշե՛ք Ռուսաստանի հայկական գաղութների պատմաճարտարապետական հուշարձանները, կրթական և մշակութային մյուս հաստատությունները: Ի՞նչ գիտեք դրանց մասին:
5. Կարո՞ղ եք հիմնավորել, որ հայկական համայնքները մեծ դեր են խաղացել Ռուսաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում:
6. Լրացրե՛ք «Ռուսաստանի հայկական գաղութները» աղյուսակը:

Կենտրոնները	Գործիչները	Մշակութային արժեքները	Դերը, նշանակությունը
Ղրիմ			
Աստրախան			
Մոսկվա, Պետերբուրգ			
Հյուսիսային Կովկաս			
Նոր Նախիջևան			

ԹԵՍՏ

Ռուսահայ առաջին պարբերականը կոչվել է.

1. «Հյուսիսափայլ»,
2. «Մշակ»,
3. «Արարատ»,
4. «Արևելյան ծանուցմունք»:

3. ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Բուլղարիա: Նոր շրջանում գոյատևում էին Սոֆիայի, Ռուսչուկի, Պլովդիվի և այլ վայրերի հայկական համայնքները:

Բուլղարահայերի զգալի մասը զբաղվում էր արհեստագործությամբ, մասնավորապես ոսկերչությամբ, պղնձագործությամբ, կաշեգործությամբ, մանածագործությամբ: Նրանք մասնակցում էին Արևմտյան Եվրոպայի, Ռուսաստանի և Մերձավոր Արևելքի երկրների հետ կատարվող առևտրին: 19-րդ դարի կեսին հայ բնակչությունը շատ ստվար էր, իսկ դարի վերջին հասնում էր 30 հազարի:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Բուլղարիան ազատագրվեց թուրքական լծից և ինքնուրույն զարգացման ուղի բռնեց: Դա նպաստեց նաև հայ համայնքների բարգավաճմանը:

Սուրբ Երրորդության հայկական եկեղեցին Տրանսիլվանիայի Արմենոպոլիս քաղաքում (ներկայումս՝ Գեռլա)

1912թ. պատերազմին, որը բալկանյան ժողովուրդները մղում էին թուրքերի դեմ, մասնակցեցին նաև հայերը: Բուլղարիայում գտնվող ժողովրդական հերոս Անդրանիկը կամավորական վաշտով մասնակցեց ռազմական գործողություններին: Վաշտի կազմակերպման և մարտական գործողությունների ղեկավարներից էր **Գարեգին Նժդեհը**:

Բուլղարահայ համայնքը երկարակյաց հայ գաղութներից է և, թեկուզ հյուծված, գոյատևում է մինչև այժմ:

Հունգարիա: 18-րդ դարի սկզբներին Հունգարիայի Տրանսիլվանիա երկրամասում ցրված հայերը կենտրոնացան երկու քաղաքներում: Դրանցից մեկը 1700թ. հիմնադրված Գեռլան՝ Արմենոպոլիսն էր, մյուսը՝ Եղիսաբեթպոլիսը: Թագավորական հրամանով երկու քաղաքներն էլ համարվեցին զուտ հայկական կենտրոններ և ստացան արտոնություններ:

Հայ ազգաբնակչությունը Հունգարիայում մեծաքանակ չէր, հասնում էր 15-20 հազարի: Տրանսիլվանիայի հայերը կապված էին մայր հայրենիքի հետ: Նրանք ակտիվ մասնակցություն ունեցան

1848-1849թթ. Հունգարիայի ազատագրական-հեղափոխական շարժումներին: Մի քանի հայազգի գեներալներ ազատագրական բանակի հրամանատարներ էին:

Հունգարահայերը ունեցել են ուրույն մշակութային կյանք: 18-րդ դարից սկսած Հունգարիայում բացվել են հայկական դպրոցներ: Նշանավոր էր հունգարերենով լույս տեսնող «Արմենիա» ամսագիրը (1887–1907թթ.), որը հայագիտական բնույթ ուներ և օտարներին ծանոթացնում էր հայոց պատմությանն ու մշակույթին:

Ռումինիայի հայկական գաղութները: Ռումինիայի կազմում գտնվող Մոլդովայում, Վալաքիայում և ուրիշ երկրամասերում հայկական համայնքները գոյատևում էին:

Մոլդովայի գաղութն ուներ ինքնավարություն, ղեկավարվում էր 5 հոգուց բաղկացած թաղական խորհրդի կամ հոգաբարձության կողմից:

19-րդ դարի կեսերին Մոլդովան և Վալաքիան միավորվեցին ռումինական պետության մեջ: Դա հայության գոյատևման համար նպաստավոր պայմաններ ստեղծեց: Հայերին իրավունք վերապահվեց կալվածքներ ունենալու, ազնվականական տիտղոսներ ստանալու, մասնակցելու քաղաքական կյանքին: Այդ նույն դարի սկզբներին հայտնի էր ռուսական կողմնորոշման ջատագով, դիվանագետ Մանուկ Բեյ Միրզայանի գործունեությունը:

Սուրբ Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցին Յասսայում, Մոլդովա

Հայերը շարունակում էին բնակվել հիմնականում Բուխարեստում, Ֆոկշանում, Յաշում և այլ քաղաքներում: Նրանց զգալի մասը արհեստավորներ և առևտրականներ էին:

Ռումինահայերը ծառայում էին ինչպես իրենց ապաստանած երկրին, այնպես էլ մայր հայրենիքին: «Ռումինիայի հայերը,– գրում է ռումին գիտնական, ակադեմիկոս Նիկոլա Յորգան,– կարողացան մեծ հմտությամբ զուգակցել երկու դժվարին և նրբին պարտականություններ, մեկը՝ հավատարմությունը իրենց հայրենի ավանդույթներին ու իրենց ազգությանը, որը բնավ մոռացած չեն, և մյուսը՝ այն երկրին, ուր իրենց նախնիները հաստատվել են շատ հին ժամանակներից ի վեր: Մեզ համար նրանք եղբայրներ են, ազնիվ եղբայրներ՝ միաժամանակ մնալով իրենց հնագույն հայրենիքի ընտրյալ որդիները»:

Այս գնահատականը կարելի է տարածել նաև մյուս երկրներում ապաստան գտած հայության վրա:

Ֆրանսիա: Դեռևս միջնադարում ձևավորված հայկական փոքր համայնքները և հայ-ֆրանսիական կապերը նոր շրջանում մտան լայն հունի մեջ:

Տնտեսական կյանքում առանձնանում էր առևտուրը: Հայ վաճառականները Հարավային Ֆրանսիայում, մասնավորապես Մարսելում, կազմակերպում են ընկերություններ: Նրանք Միջերկրական և Սև ծովերում ունեին ազատ երթևեկող նավ:

Փարիզի Մուրադյան վարժարանը

Այնտեղի հայ բնակչությունը փոքրաթիվ էր, ուստի Փարիզում հայկական եկեղեցի կառուցվեց միայն 1902 թվականին:

Ֆրանսիան առավել նշանավոր է որպես հայերի մտավոր կենտրոն: Տակավին 1811թ. Փարիզում բացվեց հայագիտական ամբիոն: Կրթական-լուսավորական նկատելի գործունեություն ունեցավ 1846թ. Փարիզում հիմնադրված Մուրադյան վարժարանը:

1850-ական թվականներից հիմնադրվում են ֆրանսահայ առաջին պարբերականները: Հետագայում լույս տեսան «Արմենիա», «Հնչակ» և ուրիշ պարբերականներ: Այդ հանդեսներից առավել նշանակալի է Մ. Փորթուգալյանի «Արմենիա» թերթի և Ա. Չոպանյանի «Անահիտ» ամսագրի դերը: Փարիզի հայ ուսանողները հիմնում են «Արարատ» և այլ ընկերություններ:

Ֆրանսիայի հայությունն ավելի ստվարացավ և ծանրակշիռ դեր կատարեց հետագայում՝ նորագույն ժամանակաշրջանում:

Մանչեստրի հայկական եկեղեցին

Անգլիա: Հայերը Անգլիային ծանոթ էին միջնադարից, սակայն հայկական համայնքներ այստեղ ձևավորվել են միայն 19-րդ դարի 80-ական թվականներին: Այդ ժամանակ Կ. Պոլսի հայ վաճառականները բնակություն են հաստատում և իրենց գրասենյակներն են հիմնում Լոնդոնում ու Մանչեստրում: 1870թ. հայերը Մանչեստրում կառուցում են առաջին եկեղեցին: Մինչ այդ նրանք ընտրել էին հոգաբարձություն, որը փաստորեն վարում էր տեղի հայ համայնքի գործերը:

Թուրքիայում սկսված կոտորածների, ծայր առած արտագաղթի և Մեծ եղեռնից հետո փախստականների հոսքի աճի հետևանքով ավելի է ստվարանում հայ բնակչությունը:

Հայերի զգալի մասը մտավորականներ էին, վաճառականներ ու արհեստավորներ: Հայ վաճառականները Մանչեստրում, Լիվերպուլում, Լոնդոնում իրենց խանութներն ու գրասենյակներն ունեին:

Այդ սակավամարդ համայնքները մշակութային ձեռնարկումներ էին կատարում: 1736թ. Լոնդոնում թարգմանաբար հրատարակվել են Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ը և Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ը:

Անգլիայի հայկական գաղութները զորեղանում են 20-րդ դարում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Եվրոպայի ո՞ր երկրներում գոյություն ունեին հայկական գաղութներ, Ինչպե՞ս աճեցին ու ամրապնդվեցին դրանք:
2. Որո՞նք էին Բուլղարիայի հայկական գաղութները, ի՞նչ փոփոխություններ կրեցին դրանք: Ինչո՞վ էին զբաղվում բուլղարահայերը, ի՞նչ մասնակցություն են ունեցել նրանք այդ երկրի կյանքին:
3. Որտե՞ղ էին կենտրոնացած հայկական գաղութները Հունգարիայում: Ինչպե՞ս էր ընթանում հունգարահայերի տնտեսական և մշակութային կյանքը:
4. Նշե՛ք Ռումինիայի հայկական գաղութները: Բնութագրե՛ք ռումինահայության զբաղմունքը, մշակութային կյանքը, կապերը մայր հայրենիքի հետ:
5. Որտե՞ղ էին կենտրոնացել հայերը Ֆրանսիայում և ինչո՞վ էին զբաղվում: Նկարագրե՛ք հայագիտության ձեռքբերումները, կրթական գործը, մամուլը և այլն:
6. Ե՞րբ են ձևավորվել Անգլիայի հայկական գաղութները և ո՞ր քաղաքներում: Ինչո՞վ էին զբաղվում անգլիահայերը:
7. Լրացրե՛ք «Հայկական գաղութները նոր շրջանում» աղյուսակը:

Գաղութները	Նմանությունը	Տարբերությունը
Ասիայի և Աֆրիկայի գաղութներ		
Ռուսաստանի գաղութներ		
Եվրոպայի գաղութներ		

ԹԵՍՏ

Համապատասխանեցրե՛ք գործչի անունը այն երկրին, որտեղ նա գործել է.

1. Գարեգին Նժդեհ,	ա) Անգլիա,
2. Արշակ Չոպանյան,	բ) Ռումինիա,
3. Էռնե Կիշյան,	գ) Ֆրանսիա,
4. Մանուկ Բեյ Միրզայան,	դ) Բուլղարիա:

Կոմս Ի. Բեզբորոդկոն՝ Նոր Նախիջևանի մասին

«Եկա Նախիջևան առավոտյան ժամը 10-ին, դիտեցի քաղաքը: Եղա քարավանատանը, քաղաքը բազմամարդ էր, կանոնավոր փողոցներով: Շինությունները կառուցված էին հայկական ճաշակով: Տները մաքուր էին, մեծիմասամբ ծածկված կղմինդրով: Կային լավ քարե տներ, բավական մեծ մի քանի քարաշեն եկեղեցիներ, շատ այգիներ: Քաղաքի դիրքը հիանալի է՝ Դոնի ափին, բարձունքի վրա»:

ԲԱԺԻՆ 3-Ի ԱՄՓՈՓՈՒՄ

1. Օսմանյան Թուրքիայում հայկական գաղթօջախներ կային Սիրիայում, Լիբանանում և այլուր: Առանձնապես զարգացած էին Կ. Պոլսի և Զմյուռնիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի հայկական գաղութները: Պոլսահայ գաղութը 19–20-րդ դարերում դարձավ արևմտահայության տնտեսական և մշակութային կենտրոնը:
2. Շնորհիվ տեղական իշխանությունների հովանավորության՝ բարվոք էր եգիպտահայ գաղութի վիճակը:
3. Ռուսաստանի խոշոր հայկական գաղթօջախներից էին Ղրիմի, Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի, Նոր Նախիջևանի, Մոսկվայի, Պետերբուրգի հայկական համայնքները: Ներքին կյանքում հայկական գաղթօջախներն ունեին որոշակի ինքնավարություն: Հայերն իրենց եռանդուն տնտեսական գործունեությամբ նպաստում էին մերձսևծովյան շրջանների և Հյուսիսային Կովկասի տնտեսական կյանքի զարգացմանը: Հայկական գաղթավայրերը սերտորեն կապված էին Հայաստանի հետ:
4. Հայկական գաղթավայրեր գոյություն ունեին նաև Բուլղարիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Անգլիայում: Այստեղ ևս հայերի հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն էր, արհեստագործությունը և առևտուրը: Մի շարք երկրներում հայերը զբաղվում էին քաղաքական աշխույժ գործունեությամբ՝ մասնակցելով հյուրընկալած երկրների քաղաքական կյանքին: Եվրոպական գաղթավայրերը ևս հայ մշակույթի զարգացման կարևոր կենտրոններ էին:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1659-1711թթ. – Իսրայել Օրի:

1677թ – Էջմիածնի ժողովի գումարումը Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ:

1699թ. – Անգեղակոթի ժողովը:

1717թ. – Մխիթարյան միաբանության հիմնադրումը:

1722թ. – Սպահանի գրավումը աֆղանների կողմից:

1722թ. – ռուսական զորքերի Կասպիական արշավանքը:

1722-30թթ. – ազատագրական պայքարը Սյունիքում:

1724թ. գարուն – թուրքական զորքերի ներխուժումը Արարատյան դաշտ:

1724թ. հունիս-սեպտեմբեր – Երևանի հերոսական պաշտպանությունը:

1724թ. հունիսի 12 – Կ. Պոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև պայմանագրի կնքումը:

1725թ. մարտ – թուրքական զորքերի ներխուժումը Արցախի Վարանդա գավառ:

1723-1799թթ. – Շահամիր Շահամիրյան:

1726-1809թթ. – Հովսեփ Էմին:

1726թ. – թուրքական զորքերի հարձակումը Շուշիի վրա:

1726թ. – թուրքական զորքերի ներխուժումը Սյունիք:

1727թ. մարտ – Հալիձորի ճակատամարտը:

1728թ. – Դավիթ-Բեկի և Եսայի Հասան-Ջալալյանի մահը:

1729-31թթ. – Գյուլիստանի սղնախի պայքարը թուրք նվաճողների դեմ:

1735թ. – Եղվարդի ճակատամարտը:

1736թ. – Էրզրումի պայմանագիրը, Արևելյան Հայաստանում և Վրաստանում Պարսկաստանի տիրապետության ճանաչումը Թուրքիայի կողմից:

1736թ. – Արցախի անկախ հայտարարվելը Գանձակից, Խամսայի մելիքություններ:

1765թ. – «Աստրախանի հայոց դատաստանագրքի» ստեղծումը:

1769թ. հունիս – Մովսես Սարաֆյանի ծրագիրը:

1770թ. – Հ. Էմինի վերադարձը Հնդկաստան:

1771թ. – հայկական տպարանների հիմնումը Մադրասում և Էջմիածնում:

1772թ. – «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գրքի հրատարակումը:

1776թ. – թղթի գործարանի հիմնումը Էջմիածնում:

1779թ. – Նոր Նախիջևանի գաղութի հիմնադրումը:

1783թ. – Գեորգիևյան դաշնագիրը:

1784–86թթ. – Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց» աշխատության հրատարակումը:

1794–96թթ. – հայ առաջին պարբերականի՝ «Ազդարար»-ի հրատարակումը Մադրասում:

1801թ. – Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին:

1804–13թթ. – ռուս-պարսկական պատերազմը:

1806–12թթ. – ռուս-թուրքական պատերազմը:

1807թ. հունիս – Գյումրիի ճակատամարտը:

1808թ. – ռուսական զորքերի երևանյան երկրորդ արշավանքը:

1812թ. – Բուխարեստի հաշտության պայմանագիրը:

1813թ. հոկտեմբերի 12 – Գյուլիստանի հաշտության պայմանագիրը:

1815թ. – Լազարյան ճեմարանի բացումը Մոսկվայում:

1816թ. – ռուսահայ առաջին պարբերականի՝ «Արևելյան ծանուցմունք»-ի հրատարակումը Աստրախանում:

1824թ. – Ներսիսյան դպրոցի բացումը Թիֆլիսում:

1826–28թթ. – ռուս-պարսկական պատերազմը:

1826թ. հուլիս – Շուշիի պաշարումը պարսկական զորքի կողմից:

1826թ. սեպտեմբերի 3 – Շամխորի ճակատամարտը:

1826թ. սեպտեմբեր – Գանձակի ճակատամարտը:

1827թ. գարուն – հայկական կամավորական ջոկատների կազմակերպումը Թիֆլիսում:

1827թ. օգոստոսի 17 – Օշականի ճակատամարտը:

1827թ. հոկտեմբերի 1 – Երևանի բերդի գրավումը ռուսական զորքերի կողմից:

1828թ. փետրվարի 10 – Թուրքմենչայի պայմանագիրը: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

1828թ. մարտ – Հայկական մարզի ստեղծումը:

1828թ. գարուն – պարսկահայերի գաղթը:

1828–29թթ. – ռուս-թուրքական պատերազմը:

1828թ. հունիս – Կարսի գրավումը:

1829թ. հունիս – Էրզրումի գրավումը:

1829թ. սեպտեմբերի 2 – Ադրիանապոլսի պայմանագիրը:

1829-30թթ. – արևմտահայերի գաղթը:

1836թ. մարտի 11 – հայ եկեղեցու կանոնադրությունը:

1837թ. – Երևանի թեմական դպրոցի հիմնադրումը:

1839թ. – բարենորոգումների ծրագրերի հրապարակումը Թուրքիայում:

1839թ. – Արմավիրի հայկական գաղութի հիմնադրումը:

1840թ. – Հայկական մարզի վերացումը:

1844թ. – Կովկասի փոխարքայության հիմնումը:

1849թ. – Երևանի նահանգի կազմակերպումը:

1856թ. – բարենորոգումների ծրագրերի հրապարակումը Թուրքիայում:

1860թ. մայիսի 24 – «Ազգային սահմանադրության» ընդունումը Կ. Պոլսի Ազգային ընդհանուր ժողովի կողմից:

1862թ. հուլիս–օգոստոս – Զեյթունի ինքնապաշտպանությունը:

1863թ. մարտի 17 – Ազգային սահմանադրության հաստատումը թուրքական կառավարության կողմից:

1864–99թթ. – Աղբյուր Սերոբ:

1864–1904թթ. – Հրայր Դժոխք:

1865–1927թթ. – Անդրանիկ:

1868թ. – հայ թատրոնի հիմնադրումը Կ. Պոլսում: Հայ օպերային արվեստի սկզբնավորումը:

1869թ. – «Բարենպատակ ընկերություն» խմբակի ստեղծումը:

1870–1907թթ. – Գևորգ Չավուշ:

1870թ. մայիսի 14 – ցարական կանոնադրությունը Արևելյան Հայաստանում գյուղացիական բարենորոգում անցկացնելու մասին:

1870թ. – Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի կազմակերպումը Վենետիկում:

1874թ. – Գևորգյան ճեմարանի բացումը Էջմիածնում:

1877–78թթ. – ռուս-թուրքական պատերազմը:

1877թ. հունիս – Բայազետի պաշտպանությունը:

1877թ. նոյեմբեր – Կարսի գրավումը ռուսական զորքերի կողմից:

1878թ. փետրվարի 19 – Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումը (16-րդ հոդված):

1878թ. հունիս – Բեռլինի վեհաժողովը: Հայկական հարցի միջազգայնացումը:

1879թ. – «Սև խաչ» ընկերության ստեղծումը Վանում:

1881թ. – «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը Էրզրումում:

1882թ. – «Հայրենասերների միություն» կազմակերպության հիմնադրումը Մոսկվայում:

1885թ. – Անդրկովկասի հայկական դպրոցների փակումը:

1885թ. – Արմենական կուսակցության հիմնադրումը Վանում:

1887–1907թթ. – «Արմենիա» ամսագրի հրատարակումը Հունգարիայում:

1887թ. – Հնչակյան կուսակցության հիմնադրումը Ժնևում:

1890թ. – Հայ հեղափոխականների դաշնակցություն կուսակցության հիմնադրումը Թիֆլիսում:

1894թ. ամառ – Սասունի ապստամբությունը:

1894–96թթ. – արևմտահայերի զանգվածային կոտորածները:

1895թ. մայիսի 11 – մայիսյան բարենորոգումների ծրագիրը:

1895թ. սեպտեմբեր – Բաբ Ալիի ցույցը:

1895թ. հոկտեմբեր – Մալաթիայի ինքնապաշտպանությունը:

1895թ. – Զեյթունի ապստամբությունը:

1896թ. հունվարի 30 – Հալեպի պայմանագիրը:

1896թ. հունիս – Վանի ինքնապաշտպանությունը:

1896թ. հոկտեմբեր – Ուրֆայի ինքնապաշտպանությունը:

1899թ. – Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղու գործարկումը:

1901թ. – Ալեքսանդրապոլ–Երևան երկաթուղու շահագործումը:

1901թ. նոյեմբեր – Առաքելոց վանքի կռիվը:

1903թ. հունիսի 12 – հայ եկեղեցու գույքի բռնագրավման հրամանագիրը:

1904թ. ապրիլ–հուլիս – Սասունի ինքնապաշտպանությունը:

1905–07թթ. – ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունը:

1905 փետրվար–1906թ. սեպտեմբեր – հայ-թաթարական ընդհարումները:

1905թ. օգոստոսի 1 – ցարական հրովարտակով 1903թ. հունիսի 12-ի հրամանագրի վերացումը:

1905թ. հոկտեմբերի 17 – ցարական մանիֆեստի հրապարակումը:

1906թ. օգոստոսի 17–30 – Էջմիածնի Հայոց կենտրոնական ազգային ժողովը:

1906թ. – Հայ բարեգործական ընդհանուր միության հիմնադրումը:

1908թ. հուլիս – երիտթուրքերի հեղաշրջումը:

1909թ. ապրիլ – Ադանայի կոտորածը:

1910–11թթ. – երիտթուրքերի կուսակցության գաղտնի ժողովները Սալոնիկում:

1912թ. հունվար–մարտ – «Դաշնակցական գործի» քննությունը և դատավճիռը:

1912թ. աշուն – Հայկական հարցի վերաբացումը:

1912թ. – 4-րդ պետական դումայի հրավիրումը:

1913թ. հունիսի 4 – հայկական բարենորոգումների ռուսական ծրագիրը:

1914թ. հունվարի 26 – ռուս-թուրքական համաձայնագիրը Արևմտյան Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ:

1914թ. օգոստոս–1918թ. նոյեմբեր – Առաջին համաշխարհային պատերազմը:

1914թ. աշուն – հայկական կամավորական ջոկատների կազմակերպումը;

1914թ. դեկտեմբեր–1915թ. հունվար – Սարիղամիշի ճակատամարտը:

1915–16թթ. – հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում:

1915թ. ապրիլի 24 – Կ. Պոլսի հայ մտավորականության ձերբակալումը և աքսորը:

1915թ. ապրիլ–մայիս – Վանի ինքնապաշտպանությունը:

1915թ. մայիսի 11 – Անտանտի տերությունների հայտարարությունը ցեղասպանության գործում երիտթուրքական կառավարության պատասխանատվության մասին:

1915թ. հունիս – Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը:

1915թ. օգոստոս–սեպտեմբեր – Մուսա լեռան ինքնապաշտպանությունը:

1915թ. սեպտեմբեր–նոյեմբեր – Ուրֆայի ինքնապաշտպանությունը:

1916թ. փետրվար – Էրզրումի գրավումը ռուսական զորքերի կողմից:

1917թ. փետրվար – ինքնակալության տապալումը Ռուսաստանում:

1917թ. մարտ – ՕզաԿոմ-ի ստեղծումը:

1917թ. ապրիլ – Հայ ժողովրդական կուսակցության ստեղծումը;

1917թ. մայիս – Արևմտահայերի առաջին համագումարը Երևանում:

1917թ. սեպտեմբեր–հոկտեմբեր – Արևելահայերի առաջին համագումարը Թիֆլիսում:

1917թ. հոկտեմբերի 25 – զինված հեղաշրջումը Պետրոգրադում բոլշևիկների գլխավորությամբ;

1917թ. նոյեմբերի 15 – Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը:

1917թ. դեկտեմբերի 5 – Երզնկայի զինադադարի ստորագրումը:

1917թ. դեկտեմբեր – «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը:

1918թ. հունվար – թուրքական զորքերի կողմից ռազմական գործողությունների վերսկսումը Արևմտյան Հայաստանում:

1918թ. մարտ – Հայկական առանձին բանակային կորպուսի կազմավորումը:

1918թ. մարտ – Տրապիզոնի բանակցությունները:

1918թ. մարտի 3 – Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը:

1918թ. փետրվար – Անդրկովկասյան սեյմի ստեղծումը:

1918թ. ապրիլ – Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից:

1918թ. ապրիլ – Կարսի գրավումը թուրքերի կողմից:

1918թ. ապրիլ – հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը Ալեքսանդրապոլում:

1918թ. մայիսի 15 – Ալեքսանդրապոլի գրավումը թուրքերի կողմից:

1918թ. մայիսի 22–30 – Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԲԱԺԻՆ 1 ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ 6

ԹԵՄԱ 1 ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII ԴԱՐՈՒՄ 6

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ 6
2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ 11
3. ՍՅՈՒՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 16
4. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ 22

ԹԵՄԱ 2 ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 30

1. ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 30
2. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ 1826–1828 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ 32
3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ 1830–1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 38

ԹԵՄԱ 3 ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 43

ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 43

ԹԵՄԱ 4 ՄՇԱԿՈՒՅԹԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 49

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 49
2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՎԵՍՏ 52
3. ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 55

ԲԱԺԻՆ 2 ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX-Ի ՍԿԶԲԻՆ 60

ԹԵՄԱ 5 ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԵՐՈՒՄ 60

1. ՏԵՂԱՇԱՐԺԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 60
2. ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 63

ԹԵՄԱ 6 ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 68
1. ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 68
2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԶԵՅԹՈՒՆԻ 1862 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 71

ԹԵՄԱ 7 1877–78 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 77
1. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ 1877–1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ 77
2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 79

ԹԵՄԱ 8 ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XIX ԴԱՐԻ 70–90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 83
1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԹԵՎԱԿՈՒՄԸ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՓՈՒԼ 83
2. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 85
3. ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ 88

ԹԵՄԱ 9 ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 92
1. ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 92
2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 98

ԹԵՄԱ 10 ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 103
1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 103

ԹԵՄԱ 11 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 108
1-2. ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 108
3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1907-1912 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 112
4. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 115
5. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 117

ԹԵՄԱ 12 ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ 122
1. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 122
2. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ 125

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԱԴԵՄ ՀԱՍԱՐԱԿԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ 130
4. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ 133

ԹԵՄԱ 13 ՀԱՅԱՍՏԱՆԸ 1917ԹՎԱԿԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 139
ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 139

ԹԵՄԱ 14 ԹՈՒՐՔ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ: ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ 145
1. ԹՈՒՐՔ-ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1917 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ 145
2. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ: ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ 148

ԹԵՄԱ 15 ՄՇԱԿՈՒՅԹԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 155
1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 155
2. ՄԱՄՈՒԼ: ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 160
3. ԱՐՎԵՍՏ 163

ԲԱԺԻՆ 3 ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ ՆՈՐ ՇՐՋԱՆՈՒՄ..... 167

1. ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ 167
2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ 173
3. ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ 178

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ..... 183

Վլադիմիր Բարխուդարյան, Պավել Չոբանյան,
Ալբերտ Խառատյան, Էմմա Կոստանդյան, Ռուբեն
Գասպարյան, Ռուբեն Սահակյան, Արարատ Հակոբյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նոր շրջան

8

8-րդ դասարանի դասագիրք

Շապիկի ձևավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Համակարգչային էջկապը՝ Միքայել Աբրահամյանի

Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ
Ղ. Փարպեցի 9, բն. 7, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@arminco.com
www.manmar.am